ಸಮಾಜಶಾಸ್ತ್ರದ ಪರಿಚಯ

ಸಮಾಜಶಾಸ್ತ್ರೀಯ ಚಿಂತನೆ

THE MURDER OF ROGER ACKROYD

Translated into Armenian by
Albert Khachatrian

Yerevan · Luys · 1990

ԳՄԴ 84.4ՄՐ—4
Ք934

Քրիստի, Ա.
Ք 934 Ռոջեր Աքրոյդի սպանությունը; Սպանություն գոլֆի խաղադաշտում: Վեպեր/ Ագաթա Քրիստի; [Անգլ. թարգմ. Ա. Ո. Խաչատրյանը].— Եր.: Լույս, 1990.— 479 էջ.

Առաջին անգամ ընթերցողի ուշադրությանը ներկայացվող երկու վեպերն էլ հեղինակի լավագույն գործերից են: Ինչպես Քրիստիի գրեթե բոլոր գործերում, այս վեպերում ևս սպանությունները կատարվում են առեղծվածային հանգամանքներում, սակայն, մասնավոր խուզարկու Պուարոն փայլուն կերպով բացահայտում է հանցագործներին:

4700000000 (31) 196. 1990
Ք ——————————
702 (01) 1990

Кристи А.
УБИЙСТВО РОДЖЕР АКРОЙДА
УБИЙСТВО НА ПЛОЩАДИ ДЛЯ ИГРЫ В ГОЛЬФ
(на армянском языке)
Ереван «Луйс» 1990

ISBN 5—545—00537—4

© Անգլիերենից թարգմանեց Ալբերտ Խաչատրյանը, 1990

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ

ՄԱՐՏԻՐՈՍԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Տպագրվում է Հայաստանի Գրողների Միության հրատարակչության «Լույս» տպարանի 1990

ՈՐՋԻՐ ԱՔՐՈՅԻՆ ԱՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ 1

ԲԺԻՇԿ ՇԵՓԱՐԴԸ ՆԱԽԱՃԱՇՈՒՄ Է

Պիսիս Ֆերարը մահացավ սեպտեմբերի 16-ի լույս 17-ի գիշերը, հինգշաբթի օրը։ Ինձ կանչեցին 17-ի առավոտյան ժամը ութին, ուրբաթ օրը։ Այլևս ոչնչով չէի կարող օգնել. նա մահացել էր մի քանի ժամ առաջ։

Իննից մի քանի րոպե անց կրկին տանն էի։ Բացեցի շքամուտքի դուռը և դիտավորյալ մի քանի րոպե հապաղեցի միջանցքում. կախեցի գլխարկս ու թեթև վերարկուս, որ խոհեմություն էի համարել հագնել՝ պաշտպանվելու համար աշնանային վաղորդյան ցրտից։ Ճիշտն ասած, բավական հուզված ու անհանգստացած էի։ Հավակնություն չունեմ ասելու, թե այդ պահին կանխատեսում էի հաջորդ մի քանի շաբաթների իրադարձությունները։ Հիրավի, այդպիսի բան մտքովս չէր անցնում։ Սակայն բնազդաբար զգում էի, որ իրադարձություններով լի ժամանակներ էին սպասվում։

Ճաշասենյակից լսվում էին թեյի գավաթների աղմուկն ու րոպե՝ կարուհիի ընդհատ ու չոր հազի ձայնը։

— Այդ դո՞ւ ես, Ջեյմս,— ձայն տվեց նա։

Անտեղի հարց, քանզի էլ ո՞վ կարող էր լինել։ Ճիշտն ասած, հենց քույրս՝ կարուհինն էր, որ մի քանի րոպե հապաղելուս պատճառը դարձավ։ Ինչպես վկայում է պարոն Քիփլինգը, մանգուստների նշանաբանն է՝ «Գնա՛ և գտի՛ր»։ Եթե կարուհինը երբևէ զինանշանի վահանակի վերնագարդ ընտրի, ամենայն հավանականությամբ կառաջարկեմ հետին թաթերին

կանգնած մանգուստի պատկերը։ Կարելի էր անտեսել նշանաբանի առաջին մասը։ Տանը հանգիստ նստած՝ Կարոլինը կարող էր ամեն ինչ իմանալ։ Չգիտեմ, թե ինչպես է դա հաջողվում նրան, բայց այդպես է։ Ինձ թվում է, սպասավորներն ու առևտրականները հետախուզական գործակալության դեր են կատարում նրա համար։ Իսկ երբ դուրս է գալիս տնից, դուրս է գալիս ոչ թե տեղեկություններ ստանալու, այլ տարածելու համար։ Այդ գործում էլ զարմանալիորեն հմուտ է։

Իրականում նրա բնավորության այդ գիծն էր, որ տանապալի անվճռականություն էր պատճառում ինձ։ Արդ, ինչ էլ որ ասեի նրան Միսիս Ֆերարի մահվան մասին, մի ժամ հետո կիմանար ամբողջ գյուղը։ Որպես մասնագետ, բնականաբար աշխատում եմ ողջախոհ լինել և հնարավորին չափ ոչ մի տեղեկություն չհաղորդել նրան։ Սովորաբար նա իմանում է ճիշտ նույն բանը, ինչ ես չեմ ասում նրան, բայց գոհանում եմ նրանով, որ դա իմ մեղքը չէ։

Միսիս Ֆերարի ամուսինը մահացել էր մի տարի առաջ, և Կարոլինը առանց որևէ հիմք ունենալու շարունակ պնդում էր, թե կինն էր թունավորել նրան։

Նա անտեսում է իմ մշտական առարկություններն այն մասին, թե միստր Ֆերարը մահացել է սուր ստամոքսաբորբից, որին նպաստել էր նաև ալկոհոլային խմիչքների տևական չարաշահումը։ Ստամոքսաբորբի և մկնդեղից թունավորվելու ախտանշանները, չեմ առարկում, հազիվ թե իրար նման լինեն, սակայն Կարոլինն իր մեղադրանքները բոլորովին այլ կերպ է հիմնավորում։

— Միայն նրա տեսքին նայիր,— ասում էր նա։

Միսիս Ֆերարը, թեև բավական տարիքն առած էր, բայց շատ գրավիչ կին էր, և, չնայած պարզ էր հագնվում, հագուստները շատ էին սազում նրան։ Շատ կանայք են հագուստները գնում Փարիզից, բայց և այնպես այդ պատճառով անպայման չեն թունավորում իրենց ամուսիններին։

Մինչ այս մտքերով տարված անվճռական կանգնել էի միջանցքում, կրկին լսվեց Կարոլինի ձայնը, որն այս անգամ ավելի սուր հնչեց։

— Ի՞նչ ես անում այդտեղ, Ջեյմս։ Ինչո՞ւ չես գալիս նախաճաշելու։

— Հիմա, հոգյակս,— փութով ասացի ես,— վերարկուս եմ կախում։

— Այսքան ժամանակում կես դյուժին վերարկու կարող էիր կախել։

Միանգամայն իրավացի էր։ Կարող էի։

Մտա ճաշասենյակ, ինչպես միշտ, թեթևակի համբուրեցի Կարոլինի այտը և նստեցի՝ բեկոնով ձվածեղ ուտելու։ Բավական սառն էր։

— Առավոտյան այցի՞ էիր գնացել,— հարցրեց Կարոլինը։

— Այո՛,— պատասխանեցի ես։— գնացել էի Քինգս փադք, մխիս Ֆերարի մոտ։

— Գիտեմ,— ասաց քույրս։

— Որտեղի՞ց գիտես։

— Էննին ասաց։

Էննին մեր աղախինն է։ Հիանալի աղջիկ է, բայց շատ շաղակրատն է։

Տիրեց կարճատև լռություն։ Ես շարունակեցի ուտել։ Քրոջս երկար ու բարակ քթի ծայրը փոքր-ինչ դողդողաց ինչպես միշտ, երբ որևէ բան էր հետաքրքրում կամ հուզում նրան։

— Դե՛, ի՞նչ կասես,— հարցրեց քույրս։

— Ցավալի դեպք է։ Ոչինչ հնարավոր չէ անել։ Հավանաբար մահացել է քնած ժամանակ։

— Գիտեմ,— կրկին ասաց քույրս։

— Ինչպե՞ս կարող ես իմանալ,— բորբոքված ասացի ես,— երբ ինքս էլ չգիտեի մինչև այնտեղ գնալս։ Դեռ ոչ ոքի չեմ ասել։ Թե այդ Էննին գիտե, ուրեմն պայծառատես է։

— Էննին չի ասել ինձ։ Կաթնավաճառն է ասել։ Իսկ նա իմացել է Ֆերարների խոհարարից։

Ինչպես ասացի, հարկ չկար, որ Կարոլինը դուրս գար տնից՝ տեղեկություններ ստանալու։ Նա նստում էր տանը և ստանում էր դրանք։

Քույրս շարունակեց.

— Ինչի՞ց է մահացել։ Սրտի կաթվածի՞ց։

— Կաթնավաճառը չասա՞ց,— խայթող տոնով հարցրի

ես։ Հեգնանքը չէր ազդում Կարոլինի վրա։ Նա լրջորեն էր ընդունում այն և պատասխանում էր նույն կերպ։

— Նա չգիտեր։

Վերջիվերջո, Կարոլինը վաղ թե ուշ լսելու էր։ Նա կարող էր նույն հաջողությամբ լսել ինձնից։

— Նա մահացել էր վերոնալի չափից մեծ դոզայից։ Վերջերս ընդունում էր անքնության դեմ։ Հավանաբար շատ-շատ էր ընդունել։

— Հիմարություն,— իսկույն ասաց Կարոլինը։— Դիտավորյալ ընդունել։ Չե՞ս ասի։

Սակայն տարօրինակ է, երբ ներքուստ հավատում ես մի բանի, որ չես ուզում խոստովանել, և երբ որևէ մեկը բարձրաձայն ասում է այդ մասին, մոլեգնորեն փորձում ես ժխտել այն։ Ես իսկույն զայրույթից բռնկվեցի.

— Նորից քոնն ես կրկնում։ Շտապ անմիտ եզրակացություններ ես անում։ Հանուն ինչի՞ միսիս Ֆերարը պիտի ինքնասպանություն գործեր։ Այրի, բավական երիտասարդ, բավական ունևոր, առողջ մի կին։ Կյանքը վայելելուց ուրիշ բան չէր մնում։ Անհեթեթություն է։

— Ամենևին էլ ոչ։ Նույնիսկ ինքդ նկատած կլինես, թե ինչքան էր նա փոխվել վերջերս։ Դա երևում էր վերջին վեց ամիսների ընթացքում։ Նա բառացիորեն մղձավանջներից տանջահար տեսք ուներ։ Քիչ առաջ գոնում էիր, որ միսիս Ֆերարը ի վիճակի չէր քնել։

— Իսկ ո՞րն է քո դիագնոզը,— սառը տոնով հարցրի ես։

— Թերևս դժբախտ սե՞րն էր պատճառը։

Քույրս օրորեց գլուխը։

— Խղճի խայթը,— ասաց նա մեծ զոհունակությամբ։

— Խղճի խա՞յթը։

— Այո՛։ Երբեք չէիր հավատա, եթե ասեի, որ նա թունավորել է ամուսնուն։ Այժմ, ավելի քան, համոզված եմ դրանում։

— Չեմ կարծում, որ ասածդ խիստ տրամաբանական է,— առարկեցի ես։— Անտարակույս, եթե մի կին այնպիսի հանցանք է գործում, ինչպիսին է սպանությունը, ապա պետք է

որ բավական սառնասիրտ լինի՝ վայելելու դրա արդյունքն առանց խղճի խայթի։

Կարոլինն օրորեց գլուխը։

— Հավանաբար այդպիսի կանայք կան, սակայն միսիս Ֆերարը այդպիսիներից չէր։ Նա շատ դյուրագրգիռ էր։ Անհաղթահարելի ներքին մի մղում դրդեց նրան ազատվելու ամուսնուց, քանզի նա այնպիսի անձնավորություն էր, որ պարզապես չէր կարող տանել որևէ տառապանք, իսկ Աշլի Ֆերարի պես մի մարդու կին պիտի որ շատ տառապած լիներ...

Ես գլխով հավանության նշան արեցի։

— Եվ այն ժամանակից ի վեր իր հանցանքի գիտակցությունը հանգիստ չէր տալիս նրան,— շարունակեց Կարոլինը։— Ես ոչ մի կերպ չեմ կարողանում չխղճալ նրան։

Չեմ կարծում, որ Կարոլինը խղճում էր միսիս Ֆերարին, քանի դեռ նա ողջ էր։ Իսկ հիմա, երբ նա մեկնել էր մի տեղ, ուր ամենայն հավանականությամբ այլևս փարիզյան շրջագեստների կարիք չէր զգալու, Կարոլինը պատրաստ էր ավելի քնքուշ զգացմունքներ դրսևորել նրա նկատմամբ։

Ես վճռականապես ասացի նրան, որ հիմարություններ են այդ ամենը։ Աստիճանաբար ավելի էի պնդում իմ ասածը, քանզի ներքուստ որոշ չափով համաձայն էի նրա հետ։ Սակայն միանգամայն այն կարծիքին չէի, թե Կարոլինը կարող էր ճշմարտությունն իմանալ մի տեսակ ոգեշունչ ենթադրություններ անելով։ Բոլորովին էլ մտադիր չէի խրախուսել նման բան։ Այլապես նա կարող էր շրջել գյուղում և տարածել իր կարծիքը, և ամեն ոք կարծելու էր, թե տեղեկությունները ես եմ տվել։ Իսկ կյանքը լի է անակնկալներով։

— Հիմարություն,— ասաց Կարոլինը՝ ի պատասխան իմ խիստ քննադատության։ — Կտեսնես։ Գրեթե անտարակուսելի է, որ նա նամակ է թողել ու խոստովանել է ամեն ինչ։

— Նա ոչ մի նամակ էլ չի թողել,— կտրուկ ասացի ես՝ չնկատելով, թե որտեղից էր խոստովանությունը նեղելու ինձ։

— Օ,— ասաց Կարոլինը,— ուրեմն հարցուփորձ ես արե՞ր, այնպես չէ՞։ Հավատացած եմ, Չեյմս, որ հոգուդ խորքում նույնն ես մտածում, ինչ ես։ Դու անուղղելի սոփող ես։

— Մարդ միշտ էլ պետք է նկատի ունենա ինքնապահպա-

ֆյուն գործելու հնարավորությունը,— ասացի ես ճնշիլ տոնավ։

— Հետաքննություն լինելու՞ է։

— Հնարավոր է։ Ամեն ինչ կախված է հանգամանքներից։ Եթե հայտարարեմ, որ միանգամայն բավարարված եմ այն հանգամանքով, որ դեղորայքի մեծ դոզան հանգուցյալն ընդունել է պատահաբար, հնարավոր է գործն ավարտվի առանց հետաքննության։

— Իսկ դու լիովին բավարարվա՞ծ ես դրանով,— հարցրեց քույրս։

Չպատասխանեցի և վեր կացա։

Գլուխ 2

ՈՎ ՈՎ Է ՔԻՆԳՍ ԱԲԲՈԹՈՒՄ

Նախքան շարունակելը, թե հետո ինչ ասացի Կարոլինին և ինչ ասաց ինձ Կարոլինը, թերևս լավ կլինի որոշ պատկերացում տալ մեր շրջանի մասին։ Մեր գյուղը՝ Քինգս Աբբոթը, շատ նման է ամեն մի այլ գյուղի։ Մեզ մոտիկ միակ քաղաքը Քրանչեսթրն է, որ ինը մղոն հեռու է մեր գյուղից։ Ունենք երկաթգծի մեծ կայարան, փոքրիկ փոստատուն և երկու մրցակից «Հանրախանութ»։ Մեր ամրակազմ տղամարդիկ հակված են երիտասարդ տարիքում հեռանալ այստեղից, բայց մյուս կողմից՝ մեզ մոտ շատ կան չամուսնացած լեդիներ ու թոշակառու սպաներ։ Մեր սիրած զբաղմունքն ու զվարճությունը կարելի է արտահայտել մի բառով՝ «բամբասանք»։

Քինգս Աբբոթում կա միայն երկու քիչ թե շատ նշանակալի տուն։ Մեկը Քինգս փադոքն է, որ միսիս Ֆերարին թողեց նրա հանգուցյալ ամուսինը, մյուսը՝ Ֆերնլի փարքը՝ Ռաջեր Աքրոյդի սեփականությունը։ Աքրոյդը միշտ էլ ինձ հետաքրքրել է, որպես շատ ավելի անհավանական գավառական սկվայր, քան գավառական որևէ այլ սկվայր կարող էր իրականում լինել։ Նա հիշեցնում է մեկն այն կարմրադեմ որ-

սրդներից, որ միշտ առաջինն էր հայտնվում գյուղական բնապատկերով դեկորացիաներով հնաոճ երաժշտական կոմեդիայի առաջին գործողություններում։ Այդ պերսոնաժները սովորաբար երգում էին Լոնդոն գնալու մասին մի երգ։ Հիմա տարածվել է ունյուն, և գյուղական սկվայրն անհետացել է երաժշտական ստեղծագործություններից։

Աքրոյդն, իհարկե, իսկական գավառական սկվայր չէ։ Իմ կարծիքով, նա ապրանքատար վագոնների անիվներ արտադրող ֆաբրիկայի տեր է և մեծ հաջողություններ ունի այդ գործում։ Մոտ հիսուն տարեկան է, կարմրադեմ, խառնվածքով՝ բարեհոգի։ Սերտ կապի մեջ է փոխերեցի հետ, մեծահոգաբար նվիրատվություններ է անում ծխական հիմնադրամին (չնայած լուրեր են պտտվում, թե չափազանց համեստ է անձնական ծախսերում)։ Օժանդակում է կրիկետի մրցություններ կազմակերպելուն, օգնություն ցույց տալիս «Պատանիների ակումբին», «Պատերազմի հաշմանդամների ընկերությանը»։ Փաստորեն մեր խաղաղ գյուղի՝ Քինգս Աբբոթի կյանքն ու ոգին է։

Երբ Ռոջեր Աքրոյդը քսանմեկ տարեկան էր, սիրահարվեց իրենից մոտ վեց տարի մեծ մի գեղեցիկ կնոջ ու ամուսնացավ։ Կարճ ու ցավալի է այդ ամուսնության պատմությունը։ Ուղղակի ասած, միսիս Աքրոյդը մոլի հարբեցող էր։ Ամուսնանալուց չորս տարի հետո հարբեցողությունը գերեզմանի իջեցրեց նրան։

Հետագա տարիներին Աքրոյդը նորից ամուսնանալու ոչ մի հակում չցուցաբերեց։ Առաջին ամուսնուց ունեցած նրա կնոջ երեխան յոթը տարեկան էր, երբ մայրը մահացավ։ Հիմա նա քսանհինգ տարեկան է։ Աքրոյդը միշտ էլ հարազատ որդու պես էր վարվում նրա հետ, տվել էր համապատասխան կրթության, բայց նա անկարգ երեխա էր և մշտապես անհանգստություն ու հոգս էր պատճառում խորթ հորը։ Այդուհանդերձ, ինչպես Աբբոթում բոլորս էլ սիրում էինք Ռալֆ Փեյթընին, թեկուզև այն պատճառով որ շատ բարեհոս երիտասարդ էր։

Ինչպես ասացի, մեր գյուղում պատրաստ ենք բամբասելու։ Սկզբից ևեթ բոլորն էլ նկատել էին, որ Աքրոյդն ու

միսիս Ֆերարը շատ լավ են իրար հետ։ Ամուսնու մահից հետո նրանց մտերմությունն ավելի նկատելի դարձավ. նրանց, միշտ միասին էին տեսնում, և դժվար չէր կռահել, որ սգի ժամանակն անցնելուց հետո միսիս Ֆերարը դառնալու էր միսիս Աքրոյդ։ Ննթադրում էին, որ որոշակի կապ կար այդ ամենում։ Ոմանք Աքրոյդի կինը հիրավի մահացել էր խմելուց։ Աշլի Ֆերարը տարիներ շարունակ հարբեցող էր եղել։ Ծայրահեղ ալկոհոլիզմի այս երկու զոհերը միայն պիտի հատուցեին այն ամենի համար, որ պատճառել էին իրենց կողակիցներին։

Ֆերարներն ապրելու եկան այստեղ շուրջ տարի ու կես առաջ, սակայն բամբասանքի ոստայնը տարիներ շարունակ պատել էր Աքրոյդին։ Մինչև Ռալֆ Փեյթլնի երիտասարդ դառնալը, մի շարք տնտեսուհիներ կառավարեցին Աքրոյդի տունը, և ամեն մեկն իր հերթին խիստ կասկածի ենթարկվեց Կարոլինի ու նրա վաղեմի բարեկամների կողմից։ Չափազանցություն չի լինի ասել, թե առնվազն տասնհինգ տարի ամբողջ գյուղը համոզված սպասում էր, որ Աքրոյդն ամուսնանալու է իր տնտեսուհիներից մեկի հետ։ Նրանցից վերջինը, միսիս Ռասելը, «սոսկալի» մի լեդի, հինգ տարի անառարկելիորեն իշխեց այդ տանը, երկու անգամ ավելի, քան իր նախորդներից որևէ մեկը։ Ննթադրում էին նաև, որ միսիս Ֆերարի գալն անխուսափելի էր եղել Աքրոյդի համար։ Մի այլ հանգամանք ևս՝ անապասելիորեն Կանադայից եկել էր նրա եղբոր այրին՝ աղջկա հետ։ Կրասեր եղբոր այրին՝ միսիս Սեսիլ Աքրոյդը բնակություն էր հաստատել Ֆերնլի փարքում և, ինչպես Կարոլինն էր ասում, հաջողեցրել էր իր իսկական տեղը դնել միսս Ռասելին։

Ես ճշգրիտ չգիտեմ, թե ինչ է նշանակում «իսկական տեղը» (դա սառն ու տհաճ է հնչում), սակայն գիտեմ, որ միսս Ռասելը շրջում է շրթունքները սեղմած, դառը ժպիտը դեմքին, և մեծ համակրանքով խոսում «իր ամուսնու ողորմածությունից կախում ունեցող խեղճ միսիս Աքրոյդի» մասին։ «Ողորմածությամբ տված հացը շատ դառն է, այնպես չէ՞,— ասում էր նա։— Ես շատ ողորմելի կհամարեի ինձ, եթե ապրուստս աշխատանքովս չվաստակեի»։

Չգիտեմ, թե ինչ էր մտածում միսիս Սեսիլ Աքրոյդը Ֆերարների գործի մասին, երբ այն քննարկվեց, բայց մի բան պարզ էր, որ նրա համար ձեռնտու էր, որ Աքրոյդն ամուրի մնար։ Նրանց հանդիպումները միշտ էլ սիրալիր էին, եթե չասենք սրտագեղ։ Իսկ Կարոլինն ասում էր, թե դա դեռ ոչինչ չի նշանակում։

Այդպիսիք էին մեր հոգսերը Քինգս Աբբոթում վերջին մի քանի տարիների ընթացքում։ Քննարկում էինք Աքրոյդին և նրա գործերին վերաբերող խնդիրներն ամեն տեսակետից։ Միսիս Ֆերարն իր տեղն ուներ այդ բանաարկություններում։

Այժմ վերակարգավորում էր կատարվում այդ կալեյդոսկոպում։ Սկսելով հավանական հարսանիքի նվերների քննարկումից, մխրճվում էինք մինչև ողբերգության խորքը։

Կշռադատելով այս և տարբեր տեսակի այլ խնդիրներ, ինքնաբերաբար գնացի այցելությունների, թեև հատուկ հիվանդներ չունեի, որ իմ կարիքն զգային, այնպես որ մոքերս կրկին ու դարձյալ դառնում էին Ֆերարի մահվան գաղտնիքին։ Ինքնասպա՞ն էր եղել արդյոք։ Եթե իրոք այդպես էր, ապա մի քանի տող գրած կլիներ իր մտադրության մասին։ Կյանքի փորձից գիտեմ, եթե որոշում են կանայք ինքնասպան լինել, ապա ցանկություն են ունենում արտահայտել այն հոգեվիճակը, որն իրենց հասցրել է այդ ճակատագրական գործողությանը։ Նրանք ծարավի են ուշադրության կենտրոնում լինելու։

Վերջին անգամ ե՞րբ էի տեսել նրան։ Մի շաբաթից ավելի չէր լինի։ Եթե հաշվի առնենք ամեն ինչ, նա բավական լավ էր պահել իրեն։

Բայց հանկարծ հիշեցի, որ հենց երեկ էի տեսել նրան, թեև չէի խոսել հետը։ Ռալֆ Փեյթընի հետ էր, և ինձ կարմանք էր պատճառել, որ Ռալֆը Քինգս Աբբոթում էր, քանզի մոքսվս անգամ չէր անցել, որ նա կարող էր այստեղ լինել։ Եվ ինձ թվացել էր, թե վերջնականապես գժտվել էր խորթ հոր հետ։ Մոտ վեց ամիս Քինգս Աբբոթում չէր երևացել։ Նրանք քայլում էին կողք կողքի, գլուխ գլխի տված, և միսիս Ֆերարը խոսում էր միանգամայն լուրջ։

Կասկած եմ սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ հենց

այդ պահին առաջին անգամ ինչ-որ չարագուշակ բան համակեց ինձ ապագայի նկատմամբ։ Թեև շրշափելի ոչինչ չկար, բայց ազոտ մի կանխազգուշացում ունեցա իրադարձությունների ընթացքի վերաբերյալ։ Նախորդ օրվա այդ tête-a-tête-ն անսպասելի սարսուռ պատճառեց ինձ։

Տարված էի այդ մտքերով, երբ դեմ առ դեմ հանդիպեցի Ռոջեր Ակրոյդին։

— Շեփա՛րդ,— գոչեց նա։— Ես էլ ձեզ էի ուզում տեսնել։ Շոսկալի է։

— Ուրեմն լսե՞լ եք։

Նա գլխով արեց։ Զգացվեց, որ այդ հարվածը խոր ազդեցություն էր թողել նրա վրա։ Նրա խոշոր, կարմիր այտերը փոս էին ընկել, ասես նրա սովորական հաճելի ու առողջ տեսքից ոչինչ չէր մնացել։

— Ավելի վատ բան, քան պատկերացնում եք,— հանգիստ ասաց նա։— Լսե՛ք, Շեփա՛րդ, խոսելիք ունեմ ձեզ հետ։ Կարո՞ղ եք գալ ինձ հետ։

— Հազիվ թե։ Դեռ երեք հիվանդ ունեմ նայելու, մինչև տասներկուսը պիտի ընդունեմ նաև վիրաբուժական հիվանդներիս։

— Ուրեմն, կեսօրին՝ ոչ, թերևս ավելի լավ է ընթրիքին գաք։ Յոթն անց կեսին։ Հարմա՞ր է։

— Այո, միանգամայն։ Ի՞նչ է պատահել։ Որևէ բա՞ն կա Ռալֆի հետ կապված։

Զգիտեմ, թե ինչու այդ հարցը տվեցի, թերևս այն պատճառով, որ շատ հաճախ Ռալֆն էր եղել մեր հանդիպման առիթը։

Ակրոյդը շվարած նայեց ինձ, կարծես չէր հասկանում, թե խոսքն ումն էր վերաբերում։ Սկսեցի հասկանալ, որ ինչ-որ վատ բան է կատարվել, քանզի երբեք այդքան այլայլված չէի տեսել նրան։

— Ռալֆի՞, օ՜, ոչ,— ասաց նա թույլ ձայնով։— Ռալֆը Լոնդոնում է... Գրո՜ղը տանի։ Ահա գալիս է այդ միսս Գաննեթը։ Ջեմ ուզում ստիպված խոսել նրա հետ այդ սոսկալի դեպքի մասին։ Մինչև երեկո, Շեփարդ։ Յոթն անց կեսին։

Ես գլխով համաձայնության նշան արեցի, և նա շտապե-

լով հեռացավ Ռալֆը Լոնդոնում, զարմացած մտածեցի ես։ Բայց չէ՞ որ նախորդ օրը Քինգս Աբբոթում էր։ Նա քաղաք գնացած պիտի լիներ անցած գիշեր կամ այսօր առավոտյան վաղ, չնայած Աքրոյդի ասածը բոլորովին այլ տպավորություն էր թողնում։ Այնպես ասաց, կարծես Ռալֆը ամիսներ շարունակ բացակայել էր։

Ժամանակ չունեի ավելի խորանալու այդ խնդրում։ Միսս Գանեթը մոտեցավ ինձ, խիստ ցանկություն ունենալով տեղեկություն ստանալ ինձնից։ Նա ուներ քրոջս բնավորության բոլոր գծերը, սակայն նրան պակասում էր եզրակացություններ անելու այն թռիչքը, որ որոշակի երանգ էր հաղորդում Կարոլինի հրաշալի մանևրերին։ Միսս Գանեթը համակ հարցասիրություն էր։

Այդ ի՞նչ ցավալի բան պատահեց խեղճ միսիս Ֆերարին։ Շատերն էին ասում, որ նա տարիներ շարունակ մոլի թմրադեղ օգտագործող էր եղել։ Ինչպիսի՜ չարակամություն։ Չնայած ամենավատն այն է, որ սովորաբար ճշմարտության որոշ հատիկ է լինում այդ վայրիվերո կարծիքներում։ Չկա՜ ծուխ առանց կրակի։ Ասում էին նաև, որ միստր Աքրոյդն իմացել է այդ մասին և նշանը չեղյալ է համարել, քանի որ նշանադրությունը եղել է։ Ինքը՝ միսս Գանեթը համոզված էր դրանում։ Ես, իհարկե, պետք է որ տեղյակ լինեի այդ ամենից. բժիշկները միշտ էլ տեղյակ են, բայց երբեք չեն ասում։

Ասելով այս ամենը, նա իր խորամանկ, մանր ու փայլուն աչքերը հառեց ինձ՝ տեսնելու համար, թե ինչպես եմ պատասխանելու իր ակնարկներին։ Բարեբախտաբար, երկար ժամանակ հաղորդակցվելով Կարոլինի հետ, սովորել էի պահպանել անտարբերություն և պատրաստ լինել խուսափողական պատասխաններ տալու։

Օգտագործելով այդ առիթը, շնորհավորեցի միսս Գանեթին, որ չի խառնվում այդ չարամիտ բամբասանքներին։ «Բավական ճարպիկ հակահարված»— մտածեցի ես։ Նա շփոթվեց և մինչ ուշքի կգար, շարունակեցի ճանապարհս։

Մտախոհ գնացի տուն։ Ընդունարանում մի քանի հոգի սպասում էին ինձ։

Վերջին հիվանդին ճանապարհ դնելուց հետո՝ ճաշից առաջ որոշեցի մի քանի րոպե շրջել այգում, երբ նկատեցի, որ մի հիվանդ էլ է սպասում ինձ։ Նա վեր կացավ և մոտեցավ ինձ, մինչ ես փոքր-ինչ շվարած կանգնել էի։

Չգիտեմ թե ինչու, բայց այն տպավորությունը առացա, թե ինչ-որ թուջային բան կար միսս Ռասելի կերպարանքում, մի բան, որ ասես վեր էր մարմնական թուլություններից։

Աքրոյդի տնտեսուհին բարձրահասակ էր, գեղեցիկ, բայց արտաքինով՝ վանող։ Հայացքը խիստ էր, շրթունքները՝ կիպ սեղմած, և այնպիսի զգացողություն ունեցա, ասես մի կրոնավեր սպասուհի կամ խոհարարուհի լիներ, որ պարտավոր էի վազել, երբ լսեի նրա ոտնաձայները։

— Բարի լույս, բժիշկ Շեփարդ,— ասաց նա։— Շատ երախտապարտ կլինեի, եթե զննեիք ծունկս։

Զննեցի, բայց, ճիշտն ասած, այնքան էլ խոհեմ չգտնվեցի։ Բութ ցավերի մասին արած միսս Ռասելի բողոքներն այնքան անհամոզիչ էին, որ պակաս շիտակ բնավորություն ունեցող մի կին կասկած կարող էր հարուցել, որ հնարովի են այդ ցավերը։ Մի պահ մտքովս անցավ, թե միսս Ռասելը դիտավորյալ էր մոգոնել ծնկի հիվանդության մասին այդ պատմությունը, որպեսզի խոսք քաշեր ինձնից միսիս Ցերարի մահվան մասին, բայց շուտով հասկացա, որ սխալվել էի։ Նա միայն համառոտ մի ակնարկ արեց այդ ողբերգության մասին և ուրիշ ոչինչ։ Այնուամենայնիվ ինձ թվաց, թե մտադիր էր մնալ ու շատախոսել։

— Դե՛, շատ շնորհակալություն քսուքի այս շշի համար, բժիշկ,— վերջապես ասաց նա։— Չեմ կարծում, որ այն շատ կօգնի։

Ոչ էլ ես էի կարծում, սակայն առարկեցի՝ պարտականությունից մղված։ Համենայն դեպս վնաս չէր տա, և մարդ պետք է պաշտպանի իր մասնագիտությունը։

— Չեմ հավատում այս ամեն տեսակի դեղերին,— ասաց միսս Ռասելը՝ արհամարհանքով լի մի հայացք գցելով շշերի շարանին։— Դեղերը միշտ էլ մեծ վնաս են պատճառում, ինչպես, օրինակ, կոկաինը։

— Դե՛, քանի որ...

— Շատ է տարածված բարձր հասարակությունում։

Համոզված եմ, որ միսս Ռասելը շատ ավելի քան գիտեր բարձր հասարակության մասին, քան ես։ Ով չփորձեցի առարկել։

— Պարզապես ասացեք, բժիշկ,— շարունակեց միսս Ռասելը,— ենթադրենք դուք իրոք թմրադեղեր օգտագործելու մոլի սովորություն ունեք։ Կա՞ արդյոք որևէ բուժում։

Այդպիսի հարցի հնարավոր չէր պատասխանել հանպատրաստից։ Ես մի հակիրճ դասախոսություն կարդացի այդ թեմայի շուրջ, և նա ուշադրությամբ լսեց։ Ես դեռ կասկածում էի, որ նա տեղեկություններ էր ուզում իմանալ միսիս Ֆեբարի մասին։

— Օրինակ, վերոնալը...— ասացի ես։

Սակայն նա տարօրինակ կերպով ոչ մի հետաքրքրություն չցուցաբերեց վերոնալի նկատմամբ։ Ընդհակառակը, փոխեց թեման և հարցրեց՝ ճի՞շտ է արդյոք, որ կան որոշ թույներ, որ հազվադեպ են հայտնաբերվում։

— Ա՛, դեռևս պատմություննե՞ր եք կարդացել,— ասացի ես։

Նա համաձայնեց։

— Դեռևս պատմությունների էությունն այն է,— ասացի ես,— որ ներկայացվում է հազվագյուտ թույն. եթե հնարավոր է Հարավային Ամերիկայից, որի մասին ոչ ոք չի լսել, մի բան, որ վայրենիների անհայտ մի ցեղ օգտագործում է նետերը թունավորելու համար։ Մահը վրա է հասնում մի ակնթարթում, և արևմտյան գիտությունը անզոր է հայտնաբերելու այն։ Դուք այդպիսի՞ թույն նկատի ունեք։

— Այո՛։ Իրականում կա՞ այդպիսի բան։

Ես տխուր օրորեցի գլուխս։

— Կարծում եմ, չկա։ Իհարկե, կա կուրարե։

Ես բավական շատ խոսեցի կուրարեի մասին, բայց նա ասես կրկին հետաքրքրություն չցուցաբերեց։ Հարցրեց, թե այդպիսի բան ունե՞մ թույների իմ պահարանում, և երբ բացասական պատասխան տվեցի, թվաց, թե հարցանքը կորցրեց իմ նկատմամբ։

Ասաց, որ պետք է վերադառնա, և երբ դուրս էր գալիս, նախաճաշի կոչնազանգը հնչեց։

Երեք մոքով չէր անցել, թե միսս Ռասելը դեռևս պատմություններ է սիրում։ Ինձ անչափ գոհացնում էր այն միտքը, որ նա դուրս եկավ տնտեսուհու սենյակից՝ կշտամբելու զանցառու մի սպասուհու, և վերադառնալու՝ հանգիստ ընթերցելու համար «Յոթերորդ մահվան գաղտնիքը» կամ նման մի բան։

Գլուխ 3

ԴԴՄԻԿՆԵՐ ԱՃԵՑՆՈՂ ՄԱՐԴԸ

Սախաճաշին Կարոլինին ասացի, որ ընթրելու եմ Ֆերըն-լիում։ Նա չառարկեց, ընդհակառակը.

— Հիանալի է,— ասաց նա։— Ամեն ինչ կլսես ի միջի այլոց, ի՞նչ տհաճ բան է պատահել Ռալֆին։

— Ռալֆի՞ն,— ասացի ես զարմացած,— ոչ մի բան։

— Այդ դեպքում ինչո՞ւ է իջևանել «Երեք վարազներում», Ֆերնլի փարքի փոխարեն։

Մի պահ ես կասկածանք չունեցա Կարոլինի այն հայտարարության նկատմամբ, թե ինչու Ռալֆ Փեյթընը իջևանել է տեղական պանդոկում։ Կարոլինի ասածը բավական էր ինձ համար։

— Աքրոյդն ասաց, որ նա Լոնդոնում է,— ասացի ես։ Ջարմանքի պահին մոռացել էի այն արժեքավոր կանոնը, ըստ որի՝ երբեք չպիտի տեղեկություններս կիսեի մեկի հետ։

— Օ՜,— ասաց Կարոլինը։ Ես նկատեցի, թե ինչպես ջղաձգորեն ցնցվեց նրա քիթը։

— Երեկ առավոտյան է ժամանել «Երեք վարազներ»,— ասաց նա,— և դեռ այնտեղ է։ Անցած երեկոյան ժամադրված է եղել մի աղջկա հետ։

Դա ամենևին էլ չզարմացրեց ինձ։ Պիտի ասեմ, որ Ռալֆը շատ աղջիկների հետ է հանդիպել իր կյանքի ընթացքում։ Սակայն ինձ մեծ զարմանք պատճառեց, որ նա հաճելի ժա-

մանակ անցկացնելու համար ուրախ մայրաքաղաքի փոխադրեն ընտրել էր Քինգս Աբբոթը։

— Մասուցողուհիների՞ց էր,— հարցրի ես։

— Ո՛չ։ Բանն էլ հենց այդ է։ Նա դուրս էր եկել հանդիպելու նրան։ Չգիտեմ, թե ով է նա։

Դառն էր Կարոլինի համար այդպիսի բան լիմանալը։

— Բայց ես կուահում եմ,— շարունակեց անխոնջ քույրս։ Ես համբերությամբ սպասում էի։

— Իր զարմուհին։

— Ֆլորա Աքրո՞յդը,— զարմացած գոչեցի ես։

Ֆլորա Աքրոյդը, իհարկե, իրականում ոչ մի ազգակցական կապ չուներ Ռալֆ Փեյթընի հետ, սակայն Ռալֆին փաստորեն ընդունում էինք որպես Աքրոյդի որդի և ազգակցությունը համարում որպես ճշմարտություն։

— Ֆլորա Աքրոյդը,— ասաց քույրս։

— Բայց ինչո՞ւ չգնաց Ֆերնլի, եթե Ռալֆն ուզում էր տեսնել նրան։

— Գաղտնի նշանվել են,— ասաց Կարոլինն ամենայն հաճույքով։— Ծերունի Աքրոյդը լսել անգամ չի ուզում այդ մասին, և նրանք ստիպված են այդ կերպ հանդիպել։

Ես բազմաթիվ թերություններ նկատեցի Կարոլինի տեսության մեջ, բայց զգուշացա նշել դրանք։ Մի աննշան ակնարկ մեր նոր հարևանի մասին շեղեց նրա ուշադրությունը։

Մեր տանը կից «Կուեննիներ» կոչվող քոթեջը վերջերս զբաղեցրել էր մի օտարական։ Քույրս շատ էր վրդովվել, որ չէր կարողացել որևէ բան իմանալ նրա մասին, բացի այն, որ օտարերկրացի էր։ Նրա «տեղեկատու գործակալությունը» անհուսալի էր գտնել նրան։ Ինչպես բոլորը, այդ մարդ էլ էր սնվում կաթով, մսով ու բանջարեղենով, բայց մատակարարներից ոչ մեկը ոչինչ չէր կարողացել հայտնել նրա մասին։ Նրա անունը Պորտո էր, մի անուն, որ տարօրինակ կերպով անորոշ տպավորություն էր թողնում։ Միակ բանը, որ գիտեինք նրա մասին այն էր, որ դոմիկներ էր աճեցնում։

Սակայն դա այն տեղեկությունը չէր, որ հետաքրքրում էր Կարոլինին։ Նա ուզում էր իմանալ՝ որտեղի՞ց էր եկել, ինչո՞վ էր զբաղված, ամուսնացա՞ծ էր, ո՞վ էր կինը, կամ

ինչպիսի՞ն էր, երեխաներ ունե՞ր, ինչ էր մոր օրիորդական անունը և այլն։ Կարծում եմ, որ Կարոլինին շատ նման ինչ-որ մեկը պետք է եղած լիներ անձնագրային տվյալներ հոլրինողը։

— Սիրելի Կարոլին,— ասացի ես,— ամենևին էլ կասկած չկա, թե ինչ է եղել այդ մարդու մասնագիտությունը։ Նախկին մի վարսավիր է։ Նայիր նրա ընչացքներին։

Կարոլինն այլ կարծիքի էր։ Ասաց, որ, եթե նա վարսավիր է եղել, ապա գանգուր մազեր կունենար, ոչ թե ուղիղ։ Բոլոր վարսավիրներն էլ գանգրացնում են իրենց մազերը։

Ես վկայակոչեցի անձամբ ծանոթ բազմաթիվ վարսավիրների, ովքեր ուղիղ մազեր ունեին, բայց Կարոլինը ոչ մի կերպ չհամոզվեց։

— Ես չեմ կարողանում պարզել, թե ով է նա,— տխուր ձայնով ասաց նա։— Անցյալ օրը պարտեզի մի քանի գործիք վերցրի նրանից։ Շատ քաղաքավարի էր, բայց չկարողացա որևէ բան դուրս քաշել նրանից։ Կորուկ հարցրի նրան՝ Ֆրանսիայից չէ՞ր արդյոք, և նա պատասխանեց՝ ոչ, և չուզեցա այլևս հարց տալ նրան։

Սկսեցի ավելի հետաքրքրվել մեր խորհրդավոր հարևանով։ Մի մարդ, որ կարողացել էր Կարոլինի բերանը փակել և, Սեբայի թագուհու նման, ուղարկել նրան դատարկաձեռն, պետք է որ անհատականություն լիներ։

— Ինձ թվում է,— ասաց Կարոլինը,— որ նա այդ նոր փոշեծծիչներից է ձեռք բերել։

Նրա աչքերի առկայծումներից զգացի, որ պատրաստվում է նոր իրեր փոխառնել և դրանով հնարավորություն ստեղծել իր հարցասիրությունը բավարարելու։ Խուսափելու համար՝ ուժեղ գտա գնալու այգի։ Շատ եմ սիրում այգեգործությունը։ Մեծ եռանդով ոչնչացնում էի խաղողի արմատապտուղները, երբ մոտիկից մի զգուշացնող աղաղակ լսվեց և մի ծանր առարկա, ականջիս մոտ՝ սուլոցով ճեղքելով օդը, սարսափելի շմփոցով ընկավ ոտքերիս մոտ։ Դղմիկ էր։

Զայրացած նայեցի վեր։ Պատի վրա, ձախ կողմում, մի դեմք հայտնվեց։ Զվաձև մի գլուխ, մասամբ ծածկված կաս-

լուծելի ան մաղերով, հակայական ընչացքներ, մի զույգ խոթաթափանց աչքեր։ Մեր խորհրդավոր հարևան Պորտոն էր։

— Հազար ներողություն, մայր,— իսկույն ասաց նա։— Արդարանալու բան չունեմ։ Մի քանի ամիս է, ինչ դմիկներ եմ աճեցնում։ Այսօր առավոտյան դրանք անսպասելիորեն կատաղության հասցրին ինձ։ Ով վերցրի ամենամեծն ու թափով նետեցի պատից այն կողմ... մայր, ներող կլինեք, աղաչո՛ւմ եմ։

Նրա խոսքերը մեղմացրին զայրույթս։ Վերջիվերջո այդ չարաբաստիկ դդմիկը չէր դիպել ինձ։ Հուսով էի, որ պատի վրայով դդմիկներ նետելը նոր հարևանիս սիրած զբաղմունքը չէր։ Նման սովորությունը հազիվ թե հարգանք ներշնչեր մեզ իր նկատմամբ՝ որպես հարևանի։

Տարօրինակ փոքրիկ մարդն ասես կարդաց մտքերս։

— Ա՛խ, ո՛չ, մի՛ անհանգստացեք,— բացականչեց նա,— ես այդ սովորությունը չունեմ։ Բայց պատկերացնո՞ւմ եք, մայր, մարդ որոշակի աշխատանք ունի, և հանկարծ ուզում է անցնել հանգստի ու զբաղվել որևէ բանով, բայց, վերջիվերջո, պարզվում է, որ կարոտն է զգում նախկին աշխատանքի, որը թվում է, թե մեծ սիրով էր թողել։

— Այո՛, պատկերացնում եմ,— հանգիստ ասացի ես։— Դա բավական սովորական երևույթ է։ Թերևս դրա մի օրինակն էլ ես եմ։ Մի տարի առաջ ժառանգություն ստացա, որ կբավականացներ իրականացնելու երազանքս։ Միշտ էլ ցանկություն եմ ունեցել ճանապարհորդել, աշխարհ տեսնել։ Ով, ինչպես ասացի, դա մի տարի առաջ էր, իսկ ես դեռ այստեղ եմ։

Փոքրիկ հարևանս գլխով հավանության նշան արեց։

— Սովորույթի կապանքներ են։ Զգում ենք հասնել մի նպատակի և հասնելով դրան՝ գտնում ենք, որ մեր կորցրածը սոսկ ամենօրյա ծանր աշխատանքն է, որին ձգտել ենք։ Ըկատի ունեցեք, մայր, որ իմ աշխատանքը հետաքրքիր էր, թերևս աշխարհում ամենահետաքրքիր աշխատանքը։

— Իսկապե՞ս,— խրախուսական տոնով ասացի ես, քանզի այդ պահին Կարոլինի ոգին էր իշխում ինձ վրա։

— Ես զբաղվում էի մարդկային բնությունն ուսումնասիրելով, ասյու։

— Ամենայն հավանականությամբ,— բարեհոգաբար ասացի ես։

Իրաք որ պաշտոնաթող վարսավիր էր, քանզի վարսավիրից բացի էլ ո՞վ լավ գիտի մարդկային բնության գաղտնիքները։

— Ընդ որում, մի ընկեր ունեի, որ տարիներ շարունակ չէր հեռանում ինձնից։ Թեև նրա բթամտությունը երբեմն սոսկալի էր, այնուամենայնիվ նա շատ թանկ էր ինձ համար։ Պատկերացրեք, որ կարոտում եմ նույնիսկ նրա հիմար արարքները։ Նրա միամտությունը, համեստ պատկերացումները, իմ ընդունակությունների առավելություններով նրան գոհացնելու և զարմանք պատճառելու հաճույքը՝ այդ ամենի պակասը շատ ավելի եմ զգում, քան կարող եմ հաղորդել ձեզ։

— Մահացե՞լ է,— կարեկցանքով հարցրի ես։

— Ո՛չ։ Ապրում և բարգավաճում է, բայց աշխարհի մյուս կողմում։ Հիմա Արգենտինայում է ապրում։

— Արգենտինայո՜ւմ,— կրկնեցի ես նախանձով։

Միշտ էլ ցանկություն եմ ունեցել գնալ Հարավային Ամերիկա։ Հառաչեցի և երբ աչքերս բարձրացրի, տեսա, որ մյուս Պորտը կարեկցանքով ինձ է նայում։ Հասկացող մարդ էր երևում։

— Ամերիկա գնալո՞ւ եք,— հարցրեց նա։

Մի հառաչ արձակելով՝ օրորեցի գլուխս։

— Կարող էի գնալ,— ասացի ես,— մի տարի առաջ։ Բայց հիմարություն արեցի, ավելին՝ ընչաքաղցություն։ Իրականը վտանգի ենթարկեցի հանուն անիրականի։

— Հասկանում եմ,— ասաց մյուս Պորտը,— զբաղվեցիք արժույթների սպեկուլյացիայո՞վ։

Տխուր գլխով արեցի, սակայն անկախ ինձնից, ներքուստ ընդունեցի նրա ասածը։ Այդ ծիծաղելի փոքրիկ մարդը շատ լուրջ անձնավորություն էր։

— Օրևի նավթահորերի՞,— անսպասելիորեն հարցրեց նա։

Զարմացած նայեցի նրան։

— Այդ մասին մտածել էի, սակայն ի վերջո նախընտրեցի Արևմտյան Ավստրալիայի մի ոսկու հանք։

Հարևանս ինձ նայեց՝ դեմքին տարօրինակ մի արտահայտություն, որ հասկանալ չկարողացա։

— Ճակատագիր է,— վերջապես ասաց նա։

— Ի՞նչ ճակատագիր,— գրգռված հարցրի ես։

— Որ պետք է ապրեի մի մարդու հարևանությամբ, ով լրջորեն խորհում է նավթահորերի և Արևմտյան Ավստրալիայի ոսկու հանքերի մասին։ Ասացեք, դուք հակում ունե՞ք շանակագույն մազերի նկատմամբ։

Ես, բերանս բաց, հայացքս սևեռել էին նրան, իսկ նա բարձրաձայն ծիծաղեց։

— Ո՛չ, ո՛չ, դա այն մոքի խանգարումը չէ, որից տառապում եմ։ Անհոգ եղեք։ Հիմար հարց տվեցի ձեզ, քանզի, հասկանում եք, բարեկամս, ում մասին ասացի, մի երիտասարդ էր, որի կարծիքով բոլոր կանայք էլ լավն են, և նրանցից շատերը՝ գեղեցիկ։ Դուք միջին տարիքի տղամարդ եք, բժիշկ, մարդ, որ գիտե մեր կյանքի անմտություններն ու ունայնությունը։ Դե՛, մենք հարևաններ ենք, ուստի խնդրում եմ ընդունել և նվիրել ձեր հրաշալի քրոջը իմ լավագույն դիմիկը։

Նա կոացավ և հանդիսավորությամբ հանեց դիմիկի հրակայական մի նմուշ, և ես նույնպիսի հաճույքով ընդունեցի այն, ինչպիսի հաճույքով որ առաջարկվել էր։

— Իհարկե,— ասաց փոքրիկ մարդը զվարթ,— զուր չանցավ այս առավոտ։ Ծանոթացա մի մարդու հետ, ով ինչ-որ կերպ հիշեցնում է հեռավոր բարեկամիս։ Ի միջի այլոց, մի հարց կցանկանայի տալ ձեզ։ Դուք հարկավ, գիտեք այս փոքրիկ գյուղում ապրող ամեն մեկին։ Ո՞վ է այդ թուխ մազերով, մուգ աչքերով և գեղեցիկ դեմքով երիտասարդը։ Նա շրջում է գլուխը ետ գցած, շրթունքներին՝ թեթևակի ժպիտ։

Նկարագրությունը ոչ մի կասկած չթողեց։

— Դա երևի կապիտան Ռալֆ Փեյթընն է,— ասացի ես։

— Առաջներում այստեղ չե՞մ տեսել նրան։

— Ո՛չ, որոշ ժամանակ նա այստեղ չի եղել։ Նա Ֆերնլի վարքի միասր Աքրոյդի որդին է, խորթ որդին։

Հարևանս անհամբեր մի շարժում արեց։

— Անշուշտ, ես պետք է կռահեի։ Պարոն Աքրոյդը բազմից խոսել է նրա մասին։

— Դուք ճանաչո՞ւմ եք պարոն Աքրոյդին,— փոքր-ինչ շփոթված հարցրի ես։

— Պարոն Աքրոյդը Լոնդոնից գիտի ինձ, երբ այնտեղ էի աշխատում։ Ես խնդրել եմ նրան, որ այստեղ ոչ մի բան չասի իմ մասնագիտության վերաբերյալ։

— Հասկանում եմ,— ասացի ես, զարմացած նրա, ինչպես ինձ թվաց, ակնհայտ պարծենկոտությունից։

Սակայն փոքրիկ մարդը ինքնագոհ ժպտալով շարունակեց.

— Մարդ կա, որ նախընտրում է ծպտյալ մնալ։ Ես փառքի չեմ ձգտում։ Նույնիսկ նեղություն չկրեցի ճշգրտել անվանս տեղական տարբերակը։

— Հարկավ,— ասացի ես, չիմանալով ինչ ասել։

— Կապիտան Ռալֆ Փեյթըն,— ասաց Պորտը մտազբաղ։— Այսպիսով, նա նշանված է Աքրոյդի զարմուհու, համալիշ միսս Ֆլորայի հետ։

— Ո՞վ ասաց,— զարմացած հարցրի ես։

— Պարոն Աքրոյդը, մի շաբաթ առաջ։ Նա շատ գոհ է դրանից, վաղուց էր փափագել, որ այդպիսի բան տեղի ունենա, ինչպես հասկացա նրա ասածից։ Ես նույնիսկ կարծում եմ, որ նա ճնշում է գործադրել երիտասարդի վրա։ Դա անխոհեմություն է։ Երիտասարդ մեկը պետք է ամուսնանա իր հաճույս իրեն, ոչ թե՝ խորթ հոր, որից սպասելիքներ ունի։

Մտահղացումներս լրիվ տակնուվրա եղան։ Ինձ թվաց, թե Աքրոյդը չէր կարող վստահել մի վարսավիրի և նրա հետ քննարկել իր զարմուհու ու խորթ տղայի ամուսնության գործը։ Աքրոյդը ստորին խավի ջերմ պաշտպան էր, բայց սեփական արժանապատվության գիտակցությունը շատ բարձր էր նրա մեջ։ Սկսեցի մտածել, որ Պորտը վերջիվերջո չէր կարող վարսավիր լինել։

Շփոթմունքս թաքցնելու համար ասացի առաջին բանը, որ եկավ միտքս.

— Ի՞նչն ստիպեց ձեզ նկատելու Փեյթընին։ Նրա բարեուսությո՞ւնը։

— Ո՛չ, ոչ միայն դա, թեև նա անգլիացու համար անսովոր բարեսիրտ է, ինչպես ձեր վիպասանուհիները կասեին հունական աստծո նման գեղեցիկ։ Ո՛չ, ինչ-որ անհասկանալի բան կա այդ երիտասարդի մեջ։

Վերջին նախադասությունն ասաց մտախոհ, մի բան, որ անորոշ տպավորություն թողեց վրաս։ Ասես ներքին մի համոզվածությամբ եզրակացություն էր անում այդ տղայի մասին, մի բան, որին համաձայն չէի։ Դեռ այդ տպավորության ազդեցության տակ էի, երբ քույրս կանչեց ինձ։

Ներս մտա։ Կարոլինը գլխարկը դեռ չէր հանել և ակնհայտ էր, որ հենց նոր էր եկել գյուղից։ Նա սկսեց առանց նախաբանի.

— Հանդիպեցի պարոն Աքրոյդին։

— Իսկապե՞ս,— ասացի ես։

— Իհարկե, առաջը կտրեցի, բայց երևում էր շատ էր շտապում ու ուզում էր հեռանալ։

Ես չէի կասկածում, որ այդպես էլ եղել էր։ Կարոլինը կարող էր ավելի վրդոված լիներ նրան, քան միսիս Գաներթը՝ վաղ առավոտյան, թերևս ավելի։ Կարոլինից ավելի դժվար էր գլուխն ազատել։

— Ես իսկույն հարցրի Ռալֆի մասին։ Նա պարզապես ապշել էր։ Նա պատկերացում անգամ չուներ, որ տղան այստեղ է։ Ի դեպ, ասացի, որ թերևս սխալվում եմ։ Ե՞ս։ Սխալվե՞մ։

— Միծաղելի է,— ասացի ես։— Նա պիտի որ ավելի լավ ճանաչեր քեզ։

— Հետո շարունակ պնդում էր, որ Ռալֆն ու Ջլորան նշանված են։

— Դա էլ գիտեմ,— զուսպ հպարտությամբ ընդհատեցի ես։

— Ո՞վ ասաց քեզ։

— Մեր նոր հարևանը։

Կարոլինն ակնհայտորեն մի պահ ցնցվեց, ինչպես ուլեսակայի գնդիկն է տատանվում երկու թվերի միջև։ Հետո հրաժարվեց ուշադրություն շեղելու գայթակղիչ մտքից։

— Աքրոյդին ասացի, որ Ռալֆն իջևանել է «Երեք վարազներում»։

— Կարոլին,— ասացի ես,— երբևէ մտածե՞լ ես, որ ա-ռանց խորութ յան ամեն ինչ պատմելու քո սովորությամբ մեծ չարիք կարող ես պատճառել։

— Հիմարութ յուն,— ասաց քույրս։— Մարդիկ սովոր պիտի լինեն։ Ով պարտքս եմ համարում տեղյակ պահել նրանց։ Պարոն Աքրոյդը շատ շնորհակալ էր ինձնից։

— Լավ,— համաձայնեցի ես, քանզի, հավանաբար, դեռ շատ բան էր կատարվելու։

— Ինձ թվում է, նա ուղիղ դնաց «Երեք վարազներ», բայց երևի Ռալֆին այնտեղ չգտավ։

— Ո՞չ։

— Ոչ, որովհետև, երբ վերադառնում էի անտառով...

— Անտառո՞վ,— ընդհատեցի ես։

Կարոլինը կարմրելու հատկութ յուն ուներ։

— Այնպիսի՜ հրաշալի օր է,— բացականչեց նա։— Որոշեցի փոքր-ինչ զբոսնել։ Անտառն իր նուրբ գույներով այնքան կատարյալ է տարվա այս եղանակին։

Կարոլինի հոգն էլ չէր, թե ինչպիսին է անտառը տարվա որևէ եղանակին։ Սովորաբար նա անտառը համարում է մի վայր, ուր մարդ թրջում է ոտքերը, և որտեղ ամեն տեսակի տհաճ բան կարող է ընկնել գլխիդ։ Ոչ, մանգուստի խնամքն էր բերել նրան անտառ։ Դա ինգս Աբբոթին մերձակա միակ վայրն էր, ուր կարելի էր խոսել երիտասարդ կնոջ հետ, առանց ամբողջ գյուղի կողմից նկատվելու։ Այն սահմանակից էր Ֆերնլի փարքին։

— Լավ, շարունակի՛ր։

— Ինչպես ասացի, անտառով վերադառնում էի, երբ ձայներ լսեցի։

Կարոլինը մի պահ լռեց։

— Հետո՞։

— Ձայներից մեկը Ռալֆ Փեյթընինն էր, միանգամից ճանաչեցի։ Ս'յուսը՝ աղջկա։ Իհարկե, չէի ուզում թաքուն ականջ դնել...

— Անշուշտ,— նկատեցի ես հեգնանքով, որին Կարոլինն ուշադրություն չդարձրեց։

— Բայց պարզապես չէի կարող չլսել։ Աղջիկն ինչ-որ բան

էր ասում, որ ամենևին չհասկացա, Ռալֆը՝ պատասխանում։ Ռալֆը շատ զայրացած էր երևում և ասում էր. «Հոգյակս, չե՞ս հասկանում, որ բախտս խաղաքարտի վրա է դրված և ծերուկը կարող է ժառանգությունից զրկել ինձ։ Վերջին մի քանի տարին բավական զզվեցրել եմ նրան։ Մի քիչ էլ և կզրկի։ Իսկ մենք փողի կարիք ունենք, սիրելիս։ Ես շատ հարուստ կդառնամ, երբ ծերուկը ոտքերը ձգի։ Նա ժլատ է, բայց իրականում լողում է ոսկու մեջ։ Չեմ ուզում, որ փոխի իր մտադրությունը։ Դա թող ինձ և մի անհանգստանա»։ Դրանք նրա բառերն են։ Շատ լավ եմ հիշում։ Դժբախտաբար, այդ պահին ոտքս պատահաբար դրեցի մի չոր ճյուղի, և նրանք ձայներն իջեցրին ու հեռացան։ Իհարկե, ես չէի կարող ընկնել նրանց եռևից, այնպես որ չկարողացա տեսնել աղջկան։

— Երևի ամենազայրացուցիչը դա էր,— ասացի ես։— Եվ, կարծում եմ շտապեցիր «Երեք վարազներ», վատ զգացիր քեզ, մտար բար մի բաժակ բրենդի խմելու և տեսնելու՝ արդյո՞ք երկու մատուցողուհիներն էլ տեղում են։

— Նա մատուցողուհի չէր,— պատասխանեց Կարոլինն առանց տատանվելու։— Համոզված եմ, որ դա Ջլորա Աբբոթն էր, միայն թե...

— Անմատչելի է,— ավելացրի ես։

— Սակայն, եթե Ջլորան չէր, ո՞վ կարող էր լինել։

Քույրս սկսեց թվարկել մեր շրջանում ապրող աղջիկների անուններն ու, հիմնավոր ապացույցներ փնտրելով, թե նրանցից ով կարող էր լինել։

Երբ նա մի պահ լռեց, ինչ-որ բան փնթփնթացի մի հիվանդի մասին և աննկատ դուրս եկա։ Մտադիր էի գնալ «Երեք վարազներ»։ Շատ հավանական էր, որ Ռալֆ Փեյթընը միևչ այդ վերադարձել էր այնտեղ։

Շատ լավ էի ճանաչում Ռալֆին, թերևս ավելի լավ, քան որևէ մեկը Քինգս Աբբոթում, քանզի ճանաչում էի նրա մորը շատ ավելի վաղ, քան իրենն, այդ իսկ պատճառով էլ հասկանում էի, թե ինչ է կատարվում նրա հոգում, մի բան, որ տարակուսանքի էր պատճառում ժյուաններին։ Նա որոշ իմաստով ժառանգականության զոհ էր։ Իհարկե, չէր ժառանգել մոր համար ճակատագրական հակումը խմիչքի նկատմամբ, բայց և

այնպես թուլություններ ուներ։ Ինչպես նոր բարեկամս էր իրավացիորեն նկատել, արտակարգ գեղեցիկ էր։ Վեց ֆուտ հասակով, կատարյալ կազմվածքով, ատլետի ճկուն շարժումներով, մորպես թուխ, գեղեցիկ արևահար դեմքով, որն ասես պատրաստ էր միշտ ժպտալուն Ռալֆ Փեյթընը մեկն էր այն տղամարդկանցից, ովքեր ծնվել են հեշտությամբ ու առանց ջանքերի ճմայելու։ Նա ննջարկվում էր իր թուլություններին ու վատնող էր, աշխարհում հարգանք չուներ ոչ մի բանի նկատմամբ, բայց գրավիչ էր, ու ընկերները բոլորն էլ նվիրված էին նրան։

Կարո՞ղ էի լեզու գտնել նրա հետ։ Կարծում եմ, կարող էի։

«Երեք վարագներում» հարցուփորձ անելով իմացա, որ կապիտան Փեյթընը հենց նոր էր մտել այնտեղ։ Բարձրացա նրա սենյակը և, առանց նրան նախապես տեղյակ պահելու, ներս մտա։

Մի պահ հիշելով, թե ինչ էի լսել ու տեսել, կասկածեցի, որ կընդունի ինձ, բայց ոչ մի վատ կանխազգացում չունեի։

— Օ՜, Շեփարդ։ Ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ։

Նա առաջ եկավ ձեռքը մեկնած՝ բարևելու ինձ, արևաշող մի ժպիտ դեմքին։— Միակ մարդը, որին ուրախ եմ տեսնել այս անիծյալ վայրում։

Ես վեր քաշեցի հոնքերս։

— Ի՞նչն է քեզ հիասթափեցրել այստեղ։

Նա դառնացած ծիծաղեց։

— Երկար պատմություն է։ Գործերս լավ չեն, բժիշկ։ Բայց մի բան կխմե՞ք։

— Շնորհակալ եմ, չեմ առարկում։

Նա սեղմեց զանգը և վերադառնալով, փլվեց բազկաթոռին։

— Ողղակի ասած, տհաճ վիճակում եմ,— ասաց նա մռայլ։— Փաստորեն պատկերացում անգամ չունեմ, թե հետո ինչ եմ անելու։

— Ի՞նչ է պատահել,— հարցրի ես կարեկցանքով։

— Մոտրված խորթ հորս գործերն են։

— Ի՞նչ է պես։

— Ես չե՞մ արել է, այլ, երևի, անելու է։

Ներս մտավ ապաւավորը, բերելով խմիչքը։ Երբ ապաւավորը հեռացավ, նա կրկին փլվեց բազկաթոռին և, մոայլվելով, կռնչ եկավ։

— Դա իրո՞ք լուրջ բան է,— հարցրի ես։

Նա գլխով արեց։

— Այս անգամ լրիվ դեմ եմ դրան,— սթափ ասաց նա։

Չայնի անսովոր լուրջ տոնը վկայեց, որ ճշմարտությունն էր ասում։ Իսկ մոայլվելու համար շատ հիմնավոր պատճառներ պիտի որ ունենար։

— Փաստորեն,— շարունակեց նա,— չգիտեմ, թե ինչ է ապասվում ինձ... Թող անիծյալ լինեմ, եթե գիտեմ։

— Եթե կարող եմ որևէ բանով օգտակար լինել...— անվճռականորեն ասացի ես։

Նա կտրականապես շարժեց գլուխն ու ասաց.

— Դուք շատ սիրալիր եք, բժիշկ։ Բայց չեմ կարող թույլ տալ, որ խառնվեք այս գործին։ Ես մենակ պիտի գլուխ հանեմ դրանից։

Նա մի պահ լռեց և քիչ անց փորր-ինչ այլ տոնով կրկնեց.

— Այո՛, մենակ։

Գլուխ 4

ԸՆԹՐԻՔ ՖԵՐՆԼԻՈՒՄ

Ձոթն անց կեսին մի քանի րոպե պակաս էր, երբ սեղմեցի Ֆերնլի փարքի շքամուտքի դռան զանգի կոճակը։ Դուռը իսկույն բացեց ծառայապետ Փարքըրը։

Այնքան գեղեցիկ երեկո էր, որ նախընտրելի էր ոտքով գալ։ Մոա մեծ ու քառակուսի նախասրահ, Փարքըրը վերցրեց վերարկուս։ Հենց այդ պահին նախասրահ մտավ Աքրոյդի քարտուղարը, Ռայմոնդ անունով հաճելի մի երիտասարդ, ձեռքին բազմաթիվ թղթեր։

— Բարի երեկո, բժիշկ։ Ընթրիքի՞ եք եկել, թե մասնագիտական այց է։

Վերջին խոսքերն ակնարկում էին պայուսակս, որ դրել էի կաղնեփայտե գգրոցին։

Բացատրեցի, որ ամեն վայրկյան սպասում էի ծննդաբերության դեպքի, այնպես, որ նախապես պատրաստվել էի դրա համար։ Ռայմոնդը գլխով արեց և գնաց, ուսի վրայով ասելով.

— Գնացեք հյուրասենյակ։ Գիտեք ինչպես։ Հիմա լեդիները ներքև կիջնեն։ Այս թղթերը միստր Աքրոյդին պետք է տամ, կասեմ, որ այստեղ եք։

Երբ հայտնվել էր Ռայմոնդը, Փարքերը դուրս էր եկել, այնպես որ նախասրահում մնացի միայն ես։ Ուղեցի փողկապս, նայեցի մեծ հայելու մեջ ու գնացի դեպի դիմացի դուռը, որն, ինչպես գիտեի, հյուրասենյակի դուռն էր։

Երբ պատում էի դռան բռնակը, ներսից լսվեց շրխկոցով փակվող լուսամուտի ձայնը։ Դա, կարելի է ասել, ինքնաբերաբար տպավորվեց իմ մեջ, բայց այդ պահին ոչ մի կարեվորություն չտվեցի այդ ձայնին։

Դուռը բացեցի ու ներս մտա, գրեթե բախվելով միստր Ռաթելին, որն այդ պահին դուրս էր գալիս սենյակից։ Երկուսս էլ ներողություն խնդրեցինք։

Զգացի, որ առաջին անգամ գնահատող հայացքով եմ նայում նրան և մտածեցի, թե ժամանակին երևի շատ գեղեցիկ կին է եղել, քանզի մինչ այդ չէր կորցրել իր գեղեցկությունը։ Թուխ մազերն ալեխառն չէին, և երբ շպարված էր լինում, ինչպես այդ պահին, մարդկությունն այնքան էլ աչքի չէր զարնում։

Միանգամայն ենթագիտակցաբար ինձ հետաքրքրեց՝ ըրուսում չէ՞ր եղել արդյոք, քանզի այնպես էր շնչակտուր լինում, ասես վազել էր։

— Երևի մի քիչ շուտ եմ եկել,— ասացի ես։

— Օ՛, ո՛չ, արդեն յոթն անց կես է, բժիշկ։

Նա մի պահ լռեց, հետո շարունակեց.

— Չգիտեի, որ երեկոյան ճաշի եք հրավիրված։ Միստր Աքրոյդը ոչինչ չի ասել։

Այն տպավորությունը ստացա, որ այցելությունս որոշ չափով հաճելի չէր նրան, չհասկացա, թե ինչու։

— Ինչպե՞ս է ձեր ծոնկը,— հետաքրքրվեցի ես։

— Չթեթև փոփոխություն չկա, շնորհակալություն, բժիշկ։ Պետք է գնամ։ Միխա Աքրոյդը հիմա կիջնի։ Ես... ես եկա միայն ստուգելու սկահակների ծաղիկները։

Ես արագ դուրս եկավ սենյակից։ Մոտեցա լուսամուտին։ Իր ներկայությունը սենյակում արդարացնելու նրա ակնհայտ ցանկությունը զարմանք էր պատճառում ինձ։ Այդ կերպ վարվելով, տեսա, թե ինչ կարող էի իմացած լինել, եթե ուշադիր եղած լինեի, այսինքն, որ դեպի սանդղավանդ բացվող լուսամուտները ֆրանսիական երկար լուսամուտներ էին։ Ուստի, ձայնը, որ լսել էի, չէր կարող փակվող լուսամուտի ձայն լինել։

Ամենայն ծուլությամբ, ավելի շատ տանջալից մտքերս ցրելու, քան որևէ այլ պատճառով, փորձեցի կռահել, թե ինչը կարող էր լինել այդ ձայնի պատճառը։ Բուխարու ածուխների ճայթյո՞ւնը։ Ո՛չ, ամենևին էլ այդպիսի ձայն չէր։ Փակվող դրասեղանի դարա՞կը։ Ո՛չ։

Հետո ուշադրությունս գրավեց ապակե կափարիչով փոքրիկ սեղանը, որի կափարիչը բացվում էր և ապակու միջից կարելի էր տեսնել պարունակությունը։ Զբաղվեցի դրանով, ուսումնասիրելով բովանդակությունը։ Այնտեղ կար մի եռկու արծաթե հին դրամ, Կարլոս Առաջինին պատկանող մանկական մի կոշիկ, մի քանի չինական նեֆրիտե արձանիկ և աֆրիկյան բազմաթիվ հին ու արժեքավոր իրեր։ Կամենալով ավելի մոտիկից զննելու նեֆրիտե արձանիկներից մեկը, բարձրացրի կափարիչը։ Այն սահեց մատներիս արանքից և ընկավ։ Իսկույն ճանաչեցի այն ձայնը, որ լսել էի։ Դա նույն սեղանի կափարիչն էր, որ զգույշ փակել էին։ Ծրկու անգամ կրկնեցի նույն բանը՝ համոզվելու համար։ Հետո բարձրացրի կափարիչն ավելի ուշադիր զննելու համար։

Ես դեռ հակված էի բաց սեղանի վրա, երբ Ֆլորա Աքրոյդը ներս մտավ։

Շատերը չէին սիրում Ֆլորա Աքրոյդին, բայց նրանով հիանում էին բոլորը։ Իր բարեկամների համար նա շատ համակիր կին էր։ Առաջին բանը, որ աչքի էր ընկնում, դա նրա արտակարգ գեղեցկությունն էր։ Նա իսկական սկանդինավյան բաց

ոսկեգույն մազեր ուներ, ինչպես նորվեգական ֆյորդների ջրերը, կապույտ աչքեր, նուրբ վարդագույն մաշկ։ Ուսերը, ինչպես տղաների մոտ, քառակուսի էին, շրթունքները՝ նուրբ։ Հոգնատանջ մի բժիշկի համար թարմացուցիչ էր հանդիպել այդպիսի կատարյալ առողջության տեր մի կնոջ։ Պարզ ու ուղղամիտ մի անգլուհի էր նա։ Գուցեև հնամիտ թվամ, բայց իմ կարծիքով, միշտ արժանավորն է հարվածի տակ ընկնում։

Ֆլորան մոտեցավ սեղանին և հերետիկոսական տարակուսանք հայտնեց այն մասին, թե Կարլոս Առաջինը երբևէ կարող է հագած լինել այդ մանկական կոշիկը։

— Այնուամենայնիվ,— շարունակեց միսս Ֆլորան,— հիմարություն է ուշադրություն դարձնել, թե ինչ-որ մեկը օգտագործել կամ հագել է այս կամ այն իրը։ Այն գրիչը, որով Ջորջ Էլիոթը գրեց «Ջրաղացը առվակի վրա» ստեղծագործությունը, վերջիվերջո մնում է գրիչ։ Եվ եթե իրոք Ջորջ Էլիոթը շատ է հետաքրքրում ձեզ, ինչո՞ւ չեք ճարում այդ գրքի թեկուզ էժանագին հրատարակությունը ու կարդում։

— Կարծում եմ, նման հնացած անհեթեթություններ չեք կարդում, չէ՞, միսս Ֆլորա։

— Սխալվում եք, բժիշկ, ինձ դուր է գալիս այդ գիրքը։

Ինձ բավական հաճելի էր լսել այդ բանը։ Մեր օրերում, երբ երիտասարդ կանայք ընթերցում և բացահայտորեն խոստովանում են, որ հաճույք են ստանում որոշ գրքերի ընթեցանությունից, սարսափեցնում է ինձ։

— Դուք չշնորհավորեցիք ինձ, բժիշկ,— ասաց Ֆլորան,— մի՞թե չեք լսել։

Նա պարզեց ձախ ձեռքը։ Միջնամատին մի հրաշալի մարգարիտով մատանի կար։

— Գիտեք, որ ամուսնանալու եմ Ռալֆի հետ,— շարունակեց նա։— Հորեղբայրը շատ գոհ է։ Դրանով նրա ընտանիքի անդամ կդառնամ։

— Հոգյակս,— ասացի ես՝ բռնելով նրա ձեռքերը։— Երջանկություն եմ ցանկանում։

— Մոտ մի ամիս է, որ նշանվել ենք,— շարունակեց նա,— բայց այդ մասին հայտարարվեց երեկ։ Հորեղբայրն ուզում է նորոգել Քրոսթոունզը և տալ մեզ ապրելու։ Իսկապես, ամ-

բողջ ձմեռ որսորդությամբ կզբաղվենք, ամռանը կգնանք քաղաք, հետո գրասանավով կգրոնենք։ Ես սիրում եմ ծովը։ Իհարկե, մեծ հետաքրքրություն կցուցաբերեմ ծխական գործերի նկատմամբ, կմասնակցեմ «Մայրերի խորհրդի» նիստերին։

Այդ պահին ներս մտավ միսիս Աքրոյդը և ներողություն խնդրեց ուշանալու համար։

Ցավոք սրտի, տանել չէի կարողանում միսիս Աքրոյդին։ Շատ տհաճ կին էր։ Աչքերը փոքրիկ էին, դժգույն կապտավուն, և որքան էլ լացակումած ձայնով խոսեր, միևնույն է, դաժան հայացքը մնում էր սառն ու անտարբեր։

Ես մոտեցա նրան՝ Ֆլորային թողնելով լուսամուտի մոտ։ Նա մեկնեց մատանիներով զարդարված ոսկրոտ ձեռքն ու սկսեց շատախոսել.

— Լսե՞լ եք, որ Ֆլորան նշանվել է։ Ամեն տեսակետից շատ հարմար զույգ է։ Առաջին հայացքից են սիրահարվել։ Կատարյալ զույգ է։ Նա՝ այդքան թուխ, աղջիկը՝ սպիտակամաշկ։ Հարգելի բժիշկ, չեք կարող պատկերացնել, թե դա ինչպիսի սփոփանք է մոր համար։

Միսիս Աքրոյդը հառաչեց (մի տուրք իր մայրական սրտին), խորաթափանց հայացքը չկտրելով ինձնից։

— Ինձ մի բան է հետաքրքրում... Դուք հարգարժան Ռոջերի վաղեմի բարեկամն եք։ Մեզ հայտնի է, թե որքան է նա հաշվի առնում ձեր կարծիքը։ Որպես խեղճ Սեսիլի այրի, ինձ համար շատ դժվար է այս վիճակում խոսել ինչ-որ բանի մասին։ Բայց այնքան բաներ կան վիճելու, հասկանում եր։ Իհարկե, չեմ կասկածում, որ Ռոջերը մտադիր է ամեն ինչ անել հօգուտ Ֆլորայի, բայց ինչպես գիտեք, Ռոջերը փոքի հարցում մի տեսակ է պահում իրեն։ Որքան գիտեմ, դա շատ սովորական երևույթ է արդյունաբերական ավազանու շրջանում։ Պարզապես ուզում եմ ասել, որ մի երկու խոսք չէի՞ք ասի նրան այդ մասին։ Ֆլորան շատ է հարգում ձեզ։ Մենք մեր վաղեմի բարեկամն ենք համարում ձեզ, թեև իրականում երկու տարի է, որ ճանաչում ենք։

Միսիս Աքրոյդի պերճախոսությունն ընդհատվեց. կրկին բացվեց հյուրասենյակի դուռը։ Դա գոհունակություն պատ-

ճառեց ինձ, քանզի չէի սիրում խառնվել ուրիշների գործերին և ամենևին էլ մտադիր չէի խոսել Աքրոյդի հետ Ֆլորայի օժիտի շուրջ։ Եվս մի պահ, և ես ստիպված պիտի լինեի շատ բան ասել միսիս Աքրոյդին։

— Մայոր Բլանթին ճանաչո՞ւմ եք, բժիշկ։

— Այո՛, իհարկե։

Շատերն էին ճանաչում Հեկտոր Բլանթին, համենայն դեպս համբավով։ Երևի նա շատ ավելի վայրի կենդանիներ էր որսացել քիչ հավանական վայրերում, քան որևէ մեկն այս աշխարհում։ Երբ խոսք էր լինում նրա մասին, ասում էին. «Բլա՞նթը, խոշոր կենդանիներ որսացող այդ մարդո՞ն նկատի ունեք»։

Նրա բարեկամությունն Աքրոյդի հետ միշտ էլ փոքր-ինչ տարակուսելի էր թվացել ինձ։ Այդ երկու այրերն էլ ամեն ինչով տարբերվում էին իրարից։ Հեկտոր Բլանթը հինգ տարով փոքր էր Աքրոյդից։ Նրանք բարեկամացել էին վաղուց, և չնայած նրանց ճանապարհները շեղվել էին, բայց բարեկամությունը դեռ շարունակվում էր։ Մոտ երկու տարին մեկ Բլանթը երկու շաբաթ անց էր կացնում Ֆերնլիում։ Բազմաթիվ եղջյուրներով կենդանու մի վիթխարի գլուխ, որ ապշեցնում էր մարդու շքամուտքից ներս մտնելիս, այդ բարեկամության մշտական վկան էր։ Բլանթը ներս մտավ իրեն հատուկ դանդաղ ու հանգիստ քայլերով։ Նա միջահասակ տղամարդ էր, բավական ամուր կազմվածքով։ Դեմքը կարմրավուն էր, սովորականից ավելի անարտահայտիչ։ Մոխրագույն աչքերն այն տպավորությունն էին թողնում, ասես միշտ նայում էին շատ հեռվում կատարվող ինչ-որ բանի։ Սակավախոս էր, և ինչ էլ որ ասում էր, ասում էր ընդհատ-ընդհատ, կարծես բառերն, իր կամքին հակառակ, զոռով էին դուրս գալիս բերանից։

— Ինչպե՞ս եք Շեփարդ,— հարցրեց Բլանթն իր սովորական կտրուկ տոնով և կանգնեց ուղիղ բուխարու առջև՝ մեր գլուխների վրայով նայելով դիմացը, կարծես թիմբուքթումում կատարվող շատ հետաքրքիր մի բան էր տեսնում։

— Մայոր Բլանթ,— ասաց Ֆլորան,— ուզում եմ, որ պատմեք աֆրիկյան այս իրերի մասին։ Համոզված եմ, որ գիտեք, թե ինչ են դրանք։

Լսել էի, որ Հեկտոր Բլանթը կնատյաց մարդ էր, բայց նըկատեցի, որ Ֆլորային մոտեցավ պատրաստակամությամբ, և երկուսով հակվեցին սեղանին։

Վախենում էի, որ միսիս Աքրոյդը դարձյալ կսկսի խոսել օժիտի մասին, և շտապեցի մի քանի ակնարկ անել նոր հոտավետ ոլոռի վերաբերյալ։ Ես գիտեի այդպիսի հոտավետ ոլոռի գոյության մասին, քանի որ առավոտյան այդ մասին տեղեկացել էի «Դեյլի մեյլից»։ Միսիս Աքրոյդը այգեգործությունից անտեղյակ էր, բայց նա այն կանանցից էր, ովքեր միրում են քաջատեղյակ լինել օրվա նյութերից, և նույնպես կարդում էր «Դեյլի մեյլը»։ Մենք հնարավորություն ունեինք միանգամայն խելամտորեն զրուցելու, մինչև որ Աքրոյդն ու իր քարտուղարը միացան մեզ, որից անմիջապես հետո Փարքերը հայտնեց, որ ճաշը պատրաստ է։

Ես նստեցի միսիս Աքրոյդի և Ֆլորայի միջև, միսիս Աքրոյդի մյուս կողքին՝ Բլանթը, իսկ Ջեոֆրի Ռայմոնդը՝ Բլանթի։

Ճաշն ուրախ չանցավ։ Աքրոյդն ակնհայտորեն մտահոգ էր երևում։ Դժբախտ տեսք ուներ և գրեթե ոչինչ չէր ուտում։ Ամբողջ ժամանակ խոսում էինք մենք՝ միսիս Աքրոյդը, Ռայմոնդն ու ես։ Հորեղբոր ընկճվածությունը հավանաբար ազդել էր Ֆլորայի վրա, իսկ Բլանթը սովորականի պես սահկավախոս էր։

Ճաշից անմիջապես հետո Աքրոյդը թևանցուկ արեց ինձ և առաջնորդեց աշխատասենյակ։

— Սուրճ խմելուց հետո ոչ ոք չպետք է անհանգստացնի մեզ,— ասաց նա։— Ռայմոնդին ասել եմ հետևի, որ ոչ ոք չխանգարի մեզ։

Ես լուռ զննում էի նրան։ Խիստ հուզված էր երևում։ Մի քանի րոպե ետ ու առաջ արեց սենյակում և հետո, երբ Փարքերը ներս մտավ սուրճի մատուցարանը ձեռքին, Աքրոյդը փլվից բուխարու առջևի բազկաթոռին։

Աշխատասենյակը հարմարավետ էր։ Գրադարակները բըռաղեցրել էին մի պատը։ Աթոռները մեծ էին ու երեսպատված մուգ կապույտ գույնի կաշվով։ Լուսամուտի մոտ դրված էր մի մեծ գրասեղան՝ վրան խնամքով ցուցակագրված ու կարված

թղթեր։ Մի կող սեղանի վրա կային տարբեր ամսագրեր ու թերթեր։

— Վերջերս ուսելուց հետո նույն ցավը կրկնվեց,— ասաց Աքրոյդն անփույթ, վերցնելով սուրճի գավաթը։— Ձեր այդ հաբերից մի քանի հատ էլ տվեք։

Ինձ թվաց, թե նա ջանում էր այն տպավորությունը ստեղծել, որ մեր զրույցը բժշկության վերաբերյալ է։ Ես վարվեցի նույն կերպ։

— Մտածել եմ այդ մասին։ Մի քանի հատ բերել եմ։

— Դուք բարի մարդ եք։ Տվեք, խնդրեմ։

— Նախասրահում պայուսակիս մեջ են։ Հիմա կբերեմ։

Աքրոյդը պահեց ինձ։

— Մի անհանգստացեք։ Փարքըրը կբերի։ Փարքըր, բե՛ր բժշկի պայուսակը։

— Շատ լավ, սըր։

Փարքըրը դուրս եկավ։ Հենց այն է, ուզում էի խոսել, Աքրոյդն արագ մի շարժումով բարձրացրեց ձեռքն ու ասաց.

— Դեռ ոչ։ Սպասեք։ Չե՞ք տեսնում, ես այնպիսի նյարդային վիճակում եմ, որ հազիվ եմ զսպում ինձ։

Ես դա տեսնում էի բավական պարզորոշ և շատ անհանգիստ էի զգում։ Ամեն տեսակի վատ կանխազգացումները համակեցին ինձ։

— Չէի՞ք նայի լուսամուտը փակ է, թե ոչ,— ասաց նա։

Փոքր-ինչ զարմացած նման հարցից՝ վեր կացա ու մոտեցա լուսամուտին։ Դա ֆրանսիական լուսամուտ չէր, այլ սովորական, բարձրացնովի։ Կապույտ թավշյա ծանր վարագույրները քաշված էին, սակայն լուսամուտը լրիվ բաց էր։

Փարքըրը նորից մոտավ սենյակ, պայուսակը ձեռքին, երբ ես դեռ լուսամուտի մոտ էի։

— Ամեն ինչ կարգին է,— ասացի ես, վերադառնալով նրա մոտ։

— Սողնակը գցեցի՞ր։

— Այո՛, այո՛։ Ձեզ ի՞նչ է պատահել, Աքրոյդ։

Դուռն արդեն փակվել էր Փարքըրի ետևից, այլապես այդ հարցը չէի տա։

Նախքան պատասխանելը, Աքրոյդը մի պահ հապաղեց։

— Դժոխային վիճակում եմ,— դանդաղ ասաց նա։— Ոչ, խոսքս այդ անիծյալ հաբերին չի վերաբերում, այլ Փարքըրին։ Սպասավորները շատ հետաքրքրասեր են։ Եկեք այստեղ և նստեք։ Դուռն էլ է փակ, չէ՞։

— Այո՛։ Մի անհանգստացեք, ոչ ոք չի կարող ականջ դնել մեր խոսակցությանը։

— Շեփարդ, ոչ ոք չգիտե, թե ինչ ապրումներ եմ ունեցել վերջին քսանչորս ժամում։ Եթե երբևէ մեկի տունը փլվել է իր գլխին, ապա դա իմ տունն է։ Դալֆի այդ քայլը վերջին շյուղն էր։ Բայց չխոսենք այդ մասին։ Այլ... այլ... Չգիտեմ ինչ անել։ Ընդ որում արագ պետք է կողմնորոշվեմ։

— Բանն ի՞նչ է։

Աքրոյդը մի պահ լռեց։ Թվաց, թե չէր ուզում խոսել։ Իսկ երբ սկսեց խոսել, հարցը, որ նա տվեց, շատ զարմանալի էր և միանդամայն անսպասելի ինձ համար։

— Շեփարդ, դուք այցելել եք Աշլի Ցերարին նրա հիվանդության վերջին շրջանում, այնպես չէ՞։

— Այո՛, իհարկե։

Թվաց, թե նա ավելի մեծ դժվարությամբ կազմեց իր հաջորդ հարցը։

— Չե՞ք կասկածել... Ձեր մտքով չի անցել, որ նրան... դե, ասենք, որ թունավորել են։

Մի պահ լռեցի։ Հետո որոշեցի, թե ինչ պիտի ասեմ։ Ոչեր Աքրոյդը Կարոլինը չէր։

— Ճշմարտությունը կասեմ ձեզ,— պատասխանեցի ես։— Այն ժամանակ ամենևին էլ չէի կասկածում, բայց դրանից հետո քրոջս զուտ անմիտ մի խոսքն էր պատճառը, որ առաջին անգամ այդպիսի միտք առաջացավ իմ մեջ։ Եվ մինչև հիմա ոչ մի կերպ չեմ կարողանում ազատվել այդ մտքից։ Սակայն, նկատի ունեցեք, ես ոչ մի հիմք չունեմ կասկածելու։

— Նրան թունավորել էին,— տխուր ասաց Աքրոյդը։

— Ո՞վ։

— Կինը։

— Որտեղի՞ց գիտեք։

— Կինն ասաց։

— Ե՞րբ։

— Երեկ։ Տե՛ր աստված, երե՛կ։ Թվում է, թե տասը տարի առաջ էր։

Նա մի պահ լռեց, հետո շարունակեց.

— Հասկանո՞ւմ եք, Շեփարդ, ես սա ասում եմ գաղտնի, և ոչ ոք չպիտի իմանա։ Ձեր խորհրդի կարիքն եմ զգում, այդ ծանրությունն ի վիճակի չեմ մենակ տանել։ Ինչպես քիչ առաջ ասացի, չգիտեմ ինչ անել։

— Կարո՞ղ եք պատմել ինձ ամեն ինչ,— հարցրի ես։— Ես դեռ անտեղյակ եմ։ Ինչպե՞ս, միսիս Ֆերարը խոստովանե՞ց ձեզ։

— Այսպես. երեք ամիս առաջ միսիս Ֆերարին առաջարկեցի ամուսնանալ ինձ հետ։ Մերժեց։ Նորից առաջարկություն արեցի և նա համաձայնվեց, բայց թույլ չտվեց, որ նշանադրության մասին հայտարարվի, մինչև որ սուգ պահելու տարին լրանա։ Երեկ այցելեցի նրան և ասացի, որ ամուսնու մահից անցել է մի տարի երեք ամիս, և այլևս առարկություն չի կարող լինել նշանագրության վերաբերյալ հայտնելու մասին։ Ակնարկեցի նաև, որ վերջերս շատ տարօրինակ է պահում իրեն։ Նա իսկույն, առանց զգուշացնելու, կտրականապես մերժեց և... և ամեն ինչ պատմեց։ Կոպիտ ու հիմար ամուսնու նկատմամբ ունեցած իր ատելության, իմ նկատմամբ տածած աճող սիրո և ...և իր կատարած սոսկալի քայլի մասին։ Թո՛ւյն։ Տե՛ր աստված։ Դա սառնասրտորեն կատարված սպանություն է։

Ես արգահատանք ու սարսափ նկատեցի Աքրոյդի դեմքին։ Այդ բանը հավանաբար նկատել էր և միսիս Ֆերարը։ Աքրոյդն այն սիրահարներից չէր, որ ամեն ինչ ներեր հանուն սիրո։ Նա սկզբունքորեն լավ քաղաքացի էր։ Եվ, լինելով ուղղամիտ, մաքուր ու օրինապահ անձնավորություն, պետք է որ երես դարձներ այդ կնոջից։

— Այո՛,— շարունակեց նա ցածր ու միապաղաղ ձայնով,— նա ամեն ինչ խոստովանեց։ Ինձ թվում է, որ կամեկը, որ ամեն ինչից տեղյակ է եղել և, շանտաժի ենթարկելով նրան, մեծ գումար է շորթել։ Այդ լարված վիճակն էր, որ գրեթե խելագարության հասցրեց նրան։

— Ո՞վ է այդ մարդը։

Անապատելիորեն աչքերիս առջև պատկերացան Ռալֆ Փեյթընն ու միսիս Ֆերարը։ Վայրկենական մի ուազնապ համակեց ինձ, ծնթադրենք... Օ՜, ո՛չ, դա անհնարին է։ Հիշեցի Ռալֆի անկեղծ ողջույնը նույն առավոտյան։ Անհեթեթություն՛ն։

— Միսիս Ֆերարը նրա անունը չտվեց,— ասաց Աքրոյդը դանդաղ։— Փաստորեն նա չասաց, որ դա տղամարդ է եղել։ Բայց իհարկե...

— Իհարկե,— համաձայնեցի ես,— դա պիտի որ տղամարդ եղած լիներ։ Ով դուք ոչ մեկին չկասկածեցի՞ք։

Պատասխանելու փոխարեն Աքրոյդը հառաչեց ու գլուխն առավ ձեռքերի մեջ։

— Անհնարին է,— ասաց նա։— Ես չեմ համարձակվում նույնիսկ այդպիսի բան մտածել։ Ոչ, նույնիսկ թույլ չեմ տա, որ այդպիսի սոսկալի կասկած անցնի ձեր մտքով, ինչպես իմ, չնայած շատ բան եմ ասելու ձեզ։ Նա ինչ-որ բան ասաց, որ ստիպեց ինձ մտածել, թե այդ մարդը կարող էր ընտանիքիս անդամներից լինել։ Բայց դա հնարավոր չէ։ Երևի սխալ եմ հասկացել նրան։

— Իսկ դուք ի՞նչ ասացիք։

— Ի՞նչ կարող էի ասել։ Նա տեսնում էր, թե ինչ սոսկալի հարված էր դա ինձ համար։ Այնուհետև հարց ուուջացավ, թե որն է իմ պարտականությունն այդ գործում։ Հասկանում եք, նա անուղղակի մեղադիր դարձրեց ինձ։ Այդ ամենը նա ավելի արագ նկատեց, քան ես։ Ես շշմել էի, հասկանում եք։ Նա խնդրեց քանիորս ժամ ժամանակ տալ իրեն, ստիպեց խոստովանել, որ ոչինչ չեմ անի այդ ընթացքում։ Ով վճռակատաբեր մերժեց տալ այն արիկայի անունը, ով շանտաժի էր ենթարկում իրեն։ Ինձ թվում է, վախենում էր, որ իսկույն կգնամ և աղմուկ կհանեմ, և տականքը նույնքան կրակը կընկնի, որքան ինքը։ Միսիս Ֆերարն ասաց, որ նախքան քանիորս ժամը լրանալը կլսեմ իր մասին։ Տե՛ր աստված։ Երդվում եմ, Շեփարդ, մտքովս անգամ չանցավ, թե ինչ մտադրություն ուներ։ Ինքնասպանությո՞ւն։ Ով ես մղեցի նրան այդ քայլին։

— Ո՛չ, ո՛չ,— ասացի ես,— չափազանցություններ մեջ մի ընկեք։ Նրա մահվան պատասխանատվությունը ձեր վրա չի ընկնում։

— Բանն այն է, թե ինչ պետք է անեմ հիմա։ Խեղճ լիդին մահացել է։ Եվ ինչո՞ւ փորփրել այդ տհաճ գործը։

— Իրավացի եք,— ասացի ես։

— Սակայն կա մի այլ բան։ Ինչպես բոնեմ այդ սրիկային, որ մահվան շեմին հասցրեց նրան։ Նա գիտեր առաջին հանցագործության մասին և կաուչեց դրանից, ինչպես գիշատիչ։ Միսիս Ֆերարն իր պատիժը կրեց։ Մի՞թե այդ մարդը չի հատուցելու ըստ արժանվույն։

— Համկանում եմ,— ասացի ես,— ուզում եք հետամուտ լինել նրան։ Իսկ դա մեծ աղմուկ կհանի, հասկանո՞ւմ եք։

— Այո՛, մտածել եմ այդ մասին և լավ կշռադատել։

— Ես էլ եմ գտնում, որ ոճրագործը պետք է պատժվի, բայց բոլոր հանգամանքները պետք է հաշվի առնել։

Աքրոյդը վեր կացավ և սկսեց անհանգիստ քայլել սենյակում։ Քիչ հետո փլվեց բազկաթոռին։

— Լսե՛ք, Շեփարդ, եկեք դա թողնենք այդպես։ Թեև ոչ մի խոսք չլինի միսիս Ֆերարի կողմից, մենք ամեն ինչ կթողնենք այնպես, ինչպես որ կա։

— Ի՞նչ նկատի ունեք,— զարմացած հարցրի ես։

— Հաստատ համոզված եմ, որ ինչ-որ տեղ, ինչ-որ ձևով նա պետք է որ մի գրություն թողած լինի։ Ես դրա համար ապացույցներ չունեմ, բայց այդպես է թվում։

Ես տարակուսանքով օրորեցի գլուխս։

— Նա որևէ նամակ կամ երկտող չի՞ թողել։

— Շեփարդ, ես համոզված եմ, որ թողել է։ Եվ ավելին, ինձ թվում է, մտածված կերպով ընտրելով մահը, նա ցանկացել է, որ ամեն ինչ բացահայտվի, միայն թե վրեժ լուծի մի մարդուց, ով հուսահատության հասցրեց իրեն։ Համոզված եմ, եթե այդ ժամանակ ես կարողանայի տեսնել նրան, կասեր նրա անունը և կխնդրեր ինձ ամեն ինչ անել նրան բռնելու համար։

Նա նայեց ինձ։

— Ենթադրությունների չե՞ք հավատում։

— Օ՜, իհարկե, հավատում եմ, որոշ իմաստով։ Թեև, ինչպես ասացիք, եթե որևէ երկտող լինի թողած...

Նա ընդհատեցի խոսքս։ Դուռն անաղմուկ բացվեց և ներս մտավ Փարքըրը՝ մատուցարանը ձեռքին, որի վրա նամակներ կային։

— Երեկոյան փոստը, սըր,— ասաց նա, մատուցարանը մեկնելով Աքրոյդին։

Հետո, վերցնելով սուրճի բաժակները, դուրս եկավ։ Զարմանքից քարացած, նա աչքերը հառել էր երկարավուն, կապույտ մի ծրարի։ Մյուս նամակները վայր գցեց։

— Նրա երկտողն է,— շշնջաց Աքրոյդը։— Նա դուրս է եկել և անցյալ գիշեր ուղարկել փոստով, նախքան... նախքան...

Նա բացեց ծրարն ու հանեց նամակը։ Հետո կտրուկ վեր նայեց ու հարցրեց.

— Համոզվա՞ծ եք, որ փակել եք լուսամուտը։

— Լիովին,— պատասխանեցի ես զարմացած։— Ինչո՞ւ եք հարցնում։

— Ամբողջ երեկո տարօրինակ մի զգացողություն ունեմ, որ ինձ հետևում են, լրտեսում։ Այդ ի՞նչ էր...

Նա կտրուկ շրջվեց, ես՝ նույնպես։ Երկուսիս էլ թվաց, թե դռան փականքը թեթևակի շարժվեց։ Մոտեցա և բացեցի այն։ Ոչ ոք չկար։

— Նյարդերս են,— մրմնջաց Աքրոյդը, և, բացելով ծալված թերթերը, ցածրաձայն կարդաց.

«Թանկագին, շատ թանկագին Ռոջեր, կյանքը կյանք է պահանջում։ Ես դա հասկանում եմ... Այսօր կեսօրին այդ բանը նկատեցի և քո դեմքին։ Այնպես որ, ընտրում եմ ինձ համար միակ ճանապարհը։ Քեզ եմ թողնում պատժել մի մարդու, ով վերջին մի տարվա ընթացքում դժոխքի վերածեց իմ կյանքը։ Մեր հանդիպման ժամանակ չասացի նրա անունը, բայց հիմա կասեմ։ Երեխաներ չունեմ, ոչ էլ մերձավորներ՝ ինձ խնայելու համար, այնպես որ մի վախենա հրապարակայնությունից։ Եթե կարող ես, Ռոջեր, Թանկագին Ռոջեր, ների՛ր, որ ուզում էի չարիք պատճառել քեզ, քանզի, երբ ժամանակը եկավ, չկարողացա կատարել...

Աքրոյդը, հենց այն է ուզում էր շրջել էջը, բայց հապաղեց։

— Կներեք, Շեփարդ, շարունակությունը մենակ պիտի կարդամ, քանի որ այն գրված է միայն ու միայն ինձ համար։

Նա նամակը ծրարեց և դրեց սեղանին։

— Հետո կկարդամ, երբ մենակ մնամ։

— Ո՛չ,— հանկարծական մի մղումով գոչեցի ես,— հիմա՛ կարդացեք։

Աքրոյդը փոքր-ինչ զարմանքով աչքերը հառեց վրաս։

— Ներողություն եմ խնդրում,— ասացի ես շիկնելով։— Ես նկատի չունեի, որ բարձրաձայն կարդաք։ Սակայն կարդացեք քանի այստեղ եմ։

Աքրոյդը բացասաբար շարժեց գլուխը։

— Ո՛չ, ավելի լավ է սպասեմ։

Բայց, ինձ համար անհասկանալի պատճառով, շարունակեցի առարկել։

— Գոնե կարդացեք այդ մարդու անունը,— ասաց ես։

Աքրոյդը համառում էր։ Որքան ավելի շատ էի պնդում, այնքան ավելի էր համառում։ Բոլոր փաստարկներս զուր էին։

Նամակը բերել էին իննին քսան պակաս։ Երբ հեռացա նրա մոտից, իննին տաս էր պակաս, և նամակը մինչև վերջ չէր ընթերցվել։ Ձեռքս դռան բռնակին դրած, մի պահ հապաղեցի, ետ նայեցի՝ համոզվելու, թե որևէ չկատարված բան հո չի մնացել։ Ոչինչ չէի կարողանում մտածել։ Գլուխս օրորելով դուրս եկա և դուռը փակեցի իմ ետևից։

Ծնցվեցի՝ տեսնելով Փարքըրին կողքիս։ Նա շփոթված էր երևում, և ինձ թվաց, թե դռան մոտ կանգնած լսել էր մեզ։

Ինչպիսի՞ ճարպոտ, ինքնագոհ, քաղցր-մեղցր մուխ ու ջարժուն աչքեր ուներ այդ մարդը։

— Պարոն Աքրոյդը չի ուզում, որ իրեն անհանգստացնեն,— ասացի ես սառնորեն։— Խնդրեց, որ հաղորդեմ ձեզ։

— Ճիշտ այդպես, սըր։ Ինձ թվաց, թե կանչեցին։

Դա այնպիսի բացահայտ սուտ էր, որ նեղություն չկրեցի պատասխանել։ Առաջնորդելով ինձ նախասենյակ, Փարքըրը

օգնեց հագնելու վերարկուս, և ես դուրս եկա։ Ամպերը ծածկել էին լուսինը, և ամեն ինչ թաղվել էր անդորր խավարում։

Երբ անցնում էի պահառնակի մոտքով, գյուղի եկեղեցու ժամացույցը խփեց ժամը ինը։ Շրջվեցի ձախ՝ գյուղի ուղղությամբ և գրեթե բախվեցի դիմացից եկող մի մարդու։

— Սա՞ է Ֆերնլի փարք տանող ճանապարհը, միստր,— հարցրեց անծանոթը խռպոտ ձայնով։

Նայեցի նրան։ Գլխարկը քաշել էր մինչև աչքերը, վերարկուի օձիքը բարձրացրել։ Գրեթե չտեսա նրա դեմքը, բայց երիտասարդ թվաց ինձ։ Ձայնը կոպիտ էր ու անտաշ։

— Պահառնակի մոտքն է սա,— ասացի ես։

— Շնորհակալություն, միստր։

Նա լռեց մի պահ, հետո բավական անտեղի ավելացրեց.

— Ես օտարական եմ այս վայրերում։

Երբ շրջվեցի նայելու նրա ետևից, անցնում էր պահառնակի մոտքով։

Տարօրինակն այն էր, որ նրա ձայնը ինչ- որ մեկի ձայնն էր հիշեցնում, ում ճանաչում էի, բայց այդպես էլ չկարողացա կռահել, թե՝ ում։

Տասը րոպե հետո տանն էի։ Կարոլինին շատ էր հետաքրքրում, թե ինչու այդքան շուտ վերադարձա։ Ստիպված փորձին շինծու բաներ ասացի երեկոյի վերաբերյալ, որպեսզի գոհացնեմ նրան, բայց այնպիսի տհաճ զգացողություն ունեցա, ասես նա տեսնում էր կեղծիքը։

Ժամը տասին վեր կացա, հորանջեցի և առաջարկեցի քնել։ Կարոլինը լուռ համաձայնվեց։ Ուրբաթ գիշեր էր, և ուրբաթ գիշեր ես լարում եմ ժամացույցները։ Լարեցի ինչպես սովորաբար, մինչ Կարոլինը կատուներ՝ սպասավորները ինչպես հարկն է փակե՞լ էին դռները։

Տասն անց տասնհինգ էր, երբ ներքևում՝ նախասրահում հնչեց հեռախոսը։

— Միսիս Բեյքեն է,— իսկույն ասաց Կարոլինը։

— Հավանաբար,— ասացի ես տրտում։

Վազեցի ներքև և վերցրի լսափողը։

— Ի՞նչ... ի՞նչ։ Իհարկե։ Իսկույն կգամ։

Աստիճաններով վազեցի վերև, վերցրի պայուսակս և մի քանի լրացուցիչ վիրակապ իցևեցի մեջը։

— Փարքըրն էր զանգահարում Ֆերնլիից,— բղավեցի ես,— հենց նոր Ռաջեր Աքրոյդին գտել են սպանված։

Գլուխ 5

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրեթե մի ակնթարթում հանեցի մեքենան և արագ քշեցի Ֆերնլի։ Մեքենայից դուրս ցատկելով, անհամբեր սեղմեցի զանգի կոճակը։ Պատասխանը փոքր-ինչ ուշացավ, նորից զանգը տվեցի։

Լավեց դռան շղթայի աղմուկը և, իր անվրդով ու սառը կերպարանքով, շեմքին հայտնվեց Փարքըրը։

Հրելով նրան՝ մտա նախասրահ։

— Որտե՞ղ է նա,— արագ հարցրի։

— Ներողություն, սըր, ո՞վ։

— Ձեր տերը։ Պարոն Աքրոյդը։ Ինչ ես տնկվել ու աչքերդ չռել վրաս, մարդուկ։ Ոստիկանությանը հայտնե՞լ ես։

— Ոստիկանությա՞նը, սըր։ Ասացիք՝ ոստիկանությա՞նը։

Փարքըրը ապշած ինձ էր նայում, ասես ուրվական լինեի։

— Քեզ ի՞նչ է պատահել, Փարքըր։ Ինչպես ասացիր, եթե տերդ սպանված է...

— Տե՛ր ս, սպանվա՛ծ,— պոռթկած Փարքըրը խեղդվող ձայնով։— Անհնարի՛ն է, սըր։

Հիմա ապշելու իմ հերթն էր։

— Դու չզանգահարեցի՞ր ինձ, մոտ հինգ րոպե առաջ, և ասացիր, որ պարոն Աքրոյդին գտել են սպանված։

— Ե՞ս, սըր։ Օ՛, իհարկե ո՛չ, սըր։ Մոքսվս անգամ չի անցել։

— Ուզում եք ասել, որ խաբեությո՞ւն է, որ Աքրոյդին ոչինչ չի՞ պատահել։

— Ներեցեք, սըր, զանգահարողը ի՞մ անունը տվեց։

— Ես բառացիորեն կարող եմ ասել, ինչ լսեցի. «Բժիշկ

Շեփո՞րդն է։ Փարքըրը, Ֆերնլիի ծառայապետն է խոսում, Չե՞ք կարող իսկույն գալ, սըր։ Միստր Աքրոյդը սպանված է»։

Փարքըրն ու ես զարմացած իրար նայեցինք։

— Շատ չար կատակ է, սըր,— վերջապես ասաց նա վրդովված։— Ինչպե՞ս կարելի է այդպիսի բան ասել, պատկերացնել անգամ հնարավոր չէ։

— Որտե՞ղ է պարոն Աքրոյդը,— անսպասելիորեն հարցրի ես։

— Ինձ թվում է, դեռ աշխատասենյակում է, սըր։ Կանչ պատկել են, իսկ մայոր Բլանթն ու պարոն Ռայմոնդը բիլիարդի սենյակում են։

— Ըստ երևույթին հարկադրված պիտի ներս նայեմ և տեսնեմ նրան,— ասացի ես։— Գիտեմ, չէր ուզում, որ անհանգստացնեին իրեն, բայց այդ տարօրինակ կատակը անհանգստացնում է ինձ։ Ուզում եմ համոզվել, որ ամեն ինչ կարգին է։

— Ճիշտ այդպես, սըր։ Դա ինձ էլ է շատ անհանգստացնում։ Սթեն չեք առարկի, որ ուղեկցեմ ձեզ մինչև դուռը, սըր...

— Ամենևին,— ասացի ես։— Գնա՛նք։

Աջ կողմի դռնից ներս մտա, Փարքըրը հետևեց ինձ։ Անցա փոքրիկ միջանցքով, որտեղ կարճ մի սանդղաշարք տանում էր Աքրոյդի ննջասենյակ, և բախեցի աշխատասենյակի դուռը։

Պատասխան չեղավ։ Ստեցի բռնակը, բայց դուռը փակ էր։

— Թույլ տվեք, սըր,— ասաց Փարքըրը։

Ջնայած իր կազմվածքին, բավական թեթևությամբ ծնկի եկավ և աչքը հպեց բանալու անցքին։

— Բանալին փականքի մեջ է, սըր,— ասաց նա վեր կենալով,— միստր Աքրոյդը երևի փակվել է և, հավանաբար, այդպես էլ քնել։

Կռացա և ստուգեցի։

— Թվում է, թե ամեն ինչ կարգին է, բայց միևնույն է, Փարքըր, ուզում եմ արթնացնել տիրոջդ։ Ես գոհ տուն կգնամ միայն այն դեպքում, երբ նրա բերանից լսեմ, որ ամեն ինչ կարգին է։

Վերջացնելով խոսքս, ուժեղ շարժեցի բռնակն ու ձայն տվեցի.

— Աքրո՛յդ, Աքրո՛յդ, մի րոպեով բաց արեք։

Բայց նորից պատասխան չեղավ։ Ուսիս վրայով մի հայացք գցեցի շուրջս։

— Չեմ ուզում անհանգստացնել տնեցիներին։

Փարքըրը գնաց և փակեց մեծ սրահի դուռը, որով եկել էինք։

— Կարծում եմ, հիմա ամեն ինչ կարգին է, ինչպես և խոհանոցն ու լեռիների ննջասենյակները։

Ես ըմբռնումով շարժեցի գլուխս։ Մի անգամ էլ ուժգին թախեցի դուռը և, կռանալով, բանալու անցքից մեղմ ձայն տվեցի.

— Աքրո՛յդ, Աքրո՛յդ։ Շեփարդն է։ Ներս թողեք ինձ։

Ոչ մի ձայն։ Կյանքի ոչ մի նշույլ փակ սենյակից։ Փարքըրն ու ես նայեցինք իրար։

— Լսի՛ր, Փարքըր,— ասացի ես,— ուզում եմ կոտրել դուռը կամ... ավելի լավ է միասին։ Պատասխանատվությունն ինձ վրա եմ վերցնում։

— Թեև այդպես եք գոնում, սըր...— ասաց Փարքըրը բավական տարակուսանքով։

Նայեցի շուրջս և վերցրի կաղնեփայտե մի ծանր աթոռ։ Փարքըրն ու ես այն բռնեցինք երկուսիս միջև և անցանք հարձակման։ Մեկ, երկու, երեք անգամ դրանով հարվածեցինք փականքին։ Երրորդ հարվածին այն տեղիք տվեց և մենք, օրորվելով, ներս ընկանք։

Աքրոյդը նստած էր բուխարու առջև դրված բազկաթոռին նույն դիրքով, ինչպես իմ հեռանալու պահին։ Գլուխը թեքվել էր մի կողմ, և վերարկուի օձիքի հենց ներքևում պարզ երևում էր մետաղե փայլուն մի առարկա։

Փարքըրն ու ես մոտեցանք բազկաթոռին մեկնված մարմնին։ Լավեց ծառայապետի ծանր շնչառության ձայնը։

— Դաշույնի հարված թիկունքից,— մրմնջաց նա։— Սարսափելի է։

Նա թաշկինակով սրբեց խոնավ ճակատը, հետո դողդոջուն ձեռքը երկարեց՝ բռնելու դաշույնի երախակալը։

— Ձեռք չտա՛ք,— վրա տվեցի ես։— Իսկույն գնացեք և

զանգահարեք ոստիկանատուն։ Տեղեկացրեք պատահարի մասին։ Հետո այդ մասին ասեք պարոն Ռայմոնդին ու մայոր Բլանթին։

— Շատ լավ, սըր։

Փարքըրը փութկոտ հեռացավ, շարունակելով սրբել քրտնաթոր ճակատը։

Ես արեցի այն աննշան բանը, որ անհրաժեշտ էր կատարել. հոգացի, որ մարմնի դիրքը չփոխեն, դաշույնին, որևէ առարկայի ձեռք չտան։ Աքրոյդը, հավանաբար մահացել էր հարվածից որոշ ժամանակ անց։

Հետո լսեցի Ռայմոնդի սարսափահար ձայնը.

— Ի՜նչ եք ասում։ Օ՜, անհնարին է։ Որտե՞ղ է բժիշկը։

Նա հայտնվեց դռան շեմին, քարացավ տեղում, դեմքը՝ գունատ։ Հնկատեր Բլանթը, մի կողմ հրելով նրան, հայտնվեց սենյակում։

— Աստվա՜ծ իմ,— գոչեց Ռայմոնդը,— ուրեմն ճիշտ է։

Բլանթն առաջ եկավ և մոտեցավ բազկաթոռին։ Կռացավ մարմնի վրա, և ինձ թվաց, թե Փարքըրի նման, նա էլ էր ուզում ձեռք տալ դաշույնի երախակալին։ Մի ձեռքով ետ քաշեցի նրան։

— Ոչ մի բանի չպետք է ձեռք տալ,— բացատրեցի ես։— Ոստիկանությունը պետք է տեսնի նրան ճիշտ այնպիսի դիրքում, ինչպես որ կա։

Բլանթը վայրկենական ըմբռնումով գլխով համաձայնության նշան արեց։ Նրա դեմքը անթափանցիկ էր, ինչպես միշտ, սակայն ինձ թվաց, թե սառը դիմակի տակ հուզմունքի նշաններ նկատեցի։ Ջեոֆրի Ռայմոնդը մոտեցել էր մեզ և Բլանթի ուսի վրայով ուշադիր նայում էր սպանվածի մարմնին։

— Սարսափե՜լի է,— ասաց նա թույլ ձայնով։

Նա նորից սառնասիրտ էր դարձել, բայց երբ հանեց պենսնեն, որ սովորաբար կրում էր, և սրբեց այն, նկատեցի, որ ձեռքերը դողում էին։

— Կարծում եմ, կողոպուտ է,— ասաց նա։— Ինչպե՞ս են ներս մտել։ Լուսամուտի՞ց։ Որևէ բան տարե՞լ են։

Նա մոտեցավ գրասեղանին։

— Կարծում եք գողությո՞ւն է կատարվել՝ կոտրելու միջոցով,— հարցրի ես։

— Էլ ի՞նչ կարող է լինել։ Ինձ թվում է ինքնասպանության մասին խոսք անգամ չի կարող լինել։

— Ոչ ոք չի կարող դանակահարել իրեն թիկունքից,— ասացի ես վստահ։— Դա իսկական սպանություն է։ Բայց ի՞նչ նպատակով։

— Ոսկերը ոչ մի թշնամի չուներ,— ասաց Բլանթը հանգիստ։— Կողոպտիչներն են արել։ Բայց ի՞նչ նպատակով։ Թվում է, թե ոչ մի բանի ձեռք չեն տվել։

Նա նայեց շուրջը։ Ռայմոնդը դեռ զբաղված էր գրասեղանի թղթերը զննելով։

— Կարծես ոչ մի բան չի կորել, և դարակները բացելու փորձ չի կատարվել,— վերջապես ասաց քարտուղարը։— Շատ տարօրինակ է։

Բլանթը թեթևակի շարժեց գլուխը։

— Հատակին ինչ-որ նամակներ կան,— ասաց նա։

Ես նայեցի հատակին։ Երեք, թե չորս նամակ դեռ ընկած էին այնտեղ, որ Աքրոյդը գցել էր երեկոյան դեմ։

Սակայն միսիս Ֆերրարի կապույտ ծրարով նամակն անհետացել էր։ Ես այն է, ուզում էի խոսել, երբ այդ պահին տնով մեկ հնչեց զանգի ձայնը։ Նախասենյակից լսվեցին անորոշ խոսակցության ձայներ, և քիչ անց երևաց Փարքերը մեր տեղական տեսուչի ու ոստիկանի հետ։

— Բարի երեկո, ջենտլմեններ,— ասաց տեսուչը։— Անչափ ցավում եմ պատահածի համար։ Հրաշալի ջենտլմեն էր միստր Աքրոյդը։ Ծառայապետն ասում է, որ դա սպանություն է։ Հավանակա՞ն է, որ դա պատահար կամ ինքնասպանություն լինի, քժիշկ։

— Ո՛չ,— պատասխանեցի ես։

— Ա՛, վատ գործ է։

Նա մոտեցավ և կանգնեց սպանվածի գլխավերևում։

— Տեղից շարժե՞լ եք,— հարցրեց կտրուկ։

— Բացի համոզվելու համար մահացել է, թե ոչ, մարմնին ձեռք չեմ տվել։

— Ա՛, բոլոր նշանները վկայում են, որ մարդասպանը

գլուխը պրծացրել է, առաջմ, իհարկե։ Իսկ հիմա, թույլ տվեք մանրամասն լսել այդ մասին։ Ո՞վ է գտել մարմինը։

Ես մանրամասն բացատրեցի իրողությունը։

— Հեռախոսա՞յն լուր, ասում եք, ծառայապետի՞ց։

— Մի լուր, որ ես երբեք չեմ հաղորդել,— լրջորեն հայտարարեց Փարքըրը։— Հեռախոսի մոտ չեմ եղել ամբողջ երեկո։ Ուրիշները կարող են հաստատել, որ չեմ եղել։

— Շատ տարօրինակ է։ Դա նման էր Փարքըրի ձայնին, բժիշկ։

— Դե՛... ժխվարանում եմ ասել։ Ես ամենևին չկասկածեցի, հասկանո՞ւմ եք։

— Միանգամայն բնական է։ Լավ, եկաք այստեղ, կտրեցիք դուռը և խեղճ Աքրոյդին գտաք այս վիճակում։ Բժիշկ, ձեր կարծիքով, ինչքա՞ն ժամանակ էր անցել նրա մահից։

— Թերևս կես ժամ, գուցե ավելի,— պատասխանեցի ես։

— Ասում եք, դուռը ներսից փակվա՞ծ էր։ Իսկ ի՞նչ կասեք լուսամուտի մասին։

— Պարոն Աքրոյդի խնդրանքով երեկոյան ինքս փակեցի և ողնակը գցեցի։

Տեսուչը խոշոր քայլերով մոտեցավ լուսամուտին և հետ քաշեց վարագույրները։

— Համենայն դեպս հիմա բաց է,— ասաց նա։

Հիրավի, լուսամուտը բաց էր, ներքևի փեղկը մինչև վերջ քաշված էր վեր։

Տեսուչը հանեց գրպանի լապտերը և լուսավորեց դրսի լուսամուտագոգը։

— Այստեղից է հաջողությամբ անցել ու ներս մտել,— ասաց նա։— Տեսե՛ք։

Լապտերի ուժեղ լույսի տակ պարզորոշ երևում էին մի քանի ոտնահետքեր։ Դրանք, հավանաբար, ներքաններին ոտքին գամերով կոշիկներ էին եղել։ Հետքերից հատկապես մեկը տանում էր դեպի ներս, մյուսը, որ փոքր-ինչ ծածկել էր այն, տանում էր դեպի դուրս։

— Օրվա պես պարզ է,— ասաց տեսուչը։— Որևէ արժեքավոր բան կորե՞լ է։

Ջեոֆրի Ռայմոնդը բացասաբար շարժեց գլուխը։

— Ոչ մի այնպիսի բան, որ հայտնի է մեզ։ Պարոն Աքրոյդը որևէ արժեքավոր բան չէր պահում սենյակում։

— Հը՛մ,— ասաց տեսուչը,— մարդը լուսամուտը բաց է գտել, թափանցել է ներս, տեսել է պարոն Աքրոյդին նստած (թերևս նա քնած է եղել), դաշունահարել է թիկունքից, հետո վախեցել է ու ծլկել։ Բայց բավական պարզ հետքեր է թողել։ Առանց մեծ դժվարության կբռնենք նրան։ Որևէ կասկածելի անծանոթ չի՞ թափառում այս կողմերում։

— Օ՛,— ակամա բացականչեցի ես։

— Ի՞նչ է պատահել, բժիշկ։

— Այսօր երեկոյան մի մարդու հանդիպեցի, երբ դուրս էի գալիս պահատնակից։ Հարցրեց, թե ինչպես կարելի է գնալ Ֆերնլի փարք։

— Ժամը քանի՞սը կլիներ։

— Ուղիղ ժամը ինը։ Ես լսեցի, թե ինչպես ժամացույցը խփեց ժամը ինը, երբ դուրս էի գալիս դարպասից։

— Կարո՞ղ եք նկարագրել նրան։

Աշխատեցի հնարավորին չափ նկարագրել անծանոթին։

Տեսուչը դիմեց ծառայապետին.

— Այդպիսի մարդ մոտեցե՞լ է ջրամուտքին։

— Ո՛չ, սըր։ Այս երեկո ոչ ոք չի մոտեցել տանը։

— Իսկ ետնամուտքի՞ն։

— Չեմ կարծում, սըր, բայց կհետաքրքրվեմ։

Փարքըրը շարժվեց դեպի դուռը, սակայն տեսուչը կանգնեցրեց նրան։

— Ո՛չ, շնորհակալություն։ Ինքս հարցուփորձ կանեմ։ Բայց նախ կուզեի մի փոքր ավելի ճշգրտել ժամանակը։ Ե՞րբ և ո՞վ է վերջին անգամ ողջ տեսել Աքրոյդին։

— Հավանաբար՝ ես,— ասացի ես,— երբ հեռացա նրա մոտից իննին մոտ տասը պակաս։ Նա ասաց՝ չի ուզում, որ անհանգստացնեն իրեն, և ես այդ ցանկությունը հաղորդեցի Փարքըրին։

— Ճիշտ այդպես, սըր,— ասաց Փարքըրը։

— Միստր Աքրոյդը ութն անց կեսին ողջ էր, անշուշտ,— միջամտեց Ռայմոնդը,— քանի որ լսեցի այստեղից եկող նրա խոսակցության ձայնը։

— Ո՞ւմ հետ էր խոսում։

— Այդ ես չգիտեմ։ Իհարկե, այդ պահին ես դա միանգամայն հասկանալի գտա, քանի որ բժիշկ Շեփարդն այնտեղ էր։ Ուզում էր մի բան հարցնել ինձ հետ կապված որոշ թղթերի մասին, բայց երբ լսեցի այդ ձայները, հիշեցի, որ ասել էր, թե ուզում է խոսել բժիշկ Շեփարդի հետ, և ապսպրել էր, որ չանհանգստացնեն իրեն։ Ով ես նորից դուրս եկա։ Բայց հիմա թվում է, թե բժիշկն արդեն գնացել էր։

Ես գլխով համաձայնության նշան արեցի ու ասացի.

— Ինն անց տասնհինգին տանն եմ եղել և դուրս չեմ եկել մինչև հեռախոսազանգը։

— Ո՞վ կարող էր եղած լինել նրա մոտ,— հարցրեց տեսուչը։— Դուք չե՞ք եղել, մայոր...

— Մայոր Բլանթ,— ասացի ես։

— Մայոր Հեկտոր Բլա՞նթ,— հարցալից տոնով հարցրեց տեսուչը։

Բլանթը դրականորեն շարժեց գլուխը։

— Ինձ թվում է, սըր, առաջ էլ եք եղել այստեղ։ Մի պահ չճանաչեցի։ Կարծես մի տարի առաջ էր, մայիսին, միստր Աքրոյդի հյուրն էիք։

— Հունիսին,— ուղղեց Բլանթը։

— Թող լինի հունիսին։ Իսկ հիմա, ասացեք, այդ դո՞ւք եք եղել միստր Աքրոյդի մոտ այսօր երեկոյան ժամը ինն անց կեսին։

— Ճաշից հետո չեմ տեսել նրան։

Տեսուչը կրկին դիմեց Ռայմոնդին.

— Պատահաբար որևէ խոսակցություն չե՞ք լսել։

— Մի ինչ-որ պատառիկ միայն,— պատասխանեց քարտուղարը։— Ննջասրեցի, որ բժիշկ Շեփարդն էր նրա մոտ, և ինչ լսեցի շատ տարօրինակ թվաց ինձ։ Որքան հիշում եմ, միայն Աքրոյդը բառացիորեն ասում էր. «Վերջերս այնքան հաճախ են դիմում ինձ դրամի հարցով (հենց այդպես էլ ասաց՝ «վերջերս»), որ դժվար է բավարարել ձեր խնդրանքը»։ Ինկույն հեռացա, այնպես որ այլևս ոչինչ չլսեցի։ Բայց ինձ զարմացրեց մի բան, որ բժիշկ Շեփարդը...

— Դրամ չէր խնդրում իր կամ ուրիշի համար,— ավելացրի ես։

— Փողի պահանջ,— մտախոհ ասաց տեսուչը։— Հնարավոր է, որ այստեղ գործ ունենք առեղծվածի լուծման համար շատ կարևոր մի հանգամանքի հետ։

Նա դիմեց ծառայապետին.

— Փարքըր, ասում եք այսօր երեկոյան ոչ ոքի շքամուտքից ներս չե՞ք թողել։

— Ո՛չ, սըր։

— Ուրեմն շատ հնարավոր է, որ Աքրոյդն ինքն է ընդունել այդ անծանոթին։ Թեև այնքան էլ համոզված չեմ...

Մի պահ տեսուչը լռեց, ասես տարվելով մտքերով։

— Մի բան պարզ է— վերջապես սթափվելով ասաց նա։— Ժամը ինն անց կեսին միստր Աքրոյդը ողջ ու առողջ է եղել։

Փարքըրը ներողություն հայցող տոնով հազաց, որ իսկույն գրավեց տեսուչի ուշադրությունը։

— Ինչ-որ բա՞ն էիք ուզում ասել,— վրա բերեց տեսուչը։

— Կներեք, սըր, միսս Ֆլորան տեսել է նրան դրանից հետո։

— Միսս Ֆլորա՞ն։

— Այո՛, սըր։ Մոտ տասին տասնհինգ պակաս։ Դրանից հետո էր, որ Ֆլորան ասաց ինձ, թե միստր Աքրոյդը չի ուզում, որ անհանգստացնեն իրեն։

— Այդպիսի հանձնարարությամբ Աքրո՞յդն էր ուղարկել Ֆլորային։

— Ոչ բոլորովին այդպես, սըր։ Մատուցարանով սոդա և վիսկի էի բերում, երբ միսս Ֆլորան, որ այդ պահին դուրս էր գալիս այնտեղից, կանգնեցրեց ինձ և ասաց, որ միստր Աքրոյդը չի ուզում, որ անհանգստացնեն իրեն։

Տեսուչը ավելի ուշադիր նայեց ծառայապետին, քան մինչ այդ։

— Ձեզ արդեն ասել էին, թե միստր Աքրոյդը չի ուզում, որ անհանգստացնեն իրեն, այնպես չէ՞։

Փարքըրն սկսեց կմկմալ։ Նրա ձեռքերը դողում էին։

— Այո՛, սըր։ Այո՛, ճիշտ է, սըր։

— Բայց մտադի՞ր էիր այդպես վարվել։

— Մոռացել էի, սըր։ Համենայն դեպս ուզում եմ ասել, որ մոտավորապես այդ ժամին միշտ էլ սոդա ու վիսկի էի բերում նրան և հարցնում՝ այլ բան պետք է, թե ոչ։ Ինձ թվաց... դե՛, իմ սովորական պարտականությունն էի կատարում առանց մոռածելու։

Այդ պահին ինձ թվաց, թե Փարքըրը հուզված էր, որ կասկած առաջացրեց իմ մեջ։ Նա ամբողջ մարմնով դողում էր։

— Հը՛մ,— ասաց տեսուչը,— իսկույն պետք է տեսնեմ միսս Աքրոյդին։ Առայժմ ամեն ինչ սենյակում թող մնա այնպես, ինչպես որ կա։ Կվերադառնամ միսս Աքրոյդին լսելուց հետո միայն։ Նախազգուշանալու համար պետք է փակեմ լուսամուտը և գցեմ սողնակը։

Վերջացնելով այդ գործը, նա ուղղվեց դեպի նախասրահ. գոլորս հետևեցինք նրան։ Մի պահ կանգնեց, նայեց փոքրիկ սանդուղքին և ուսի վրայով դիմեց ոստիկանին.

— Ջոնս, ավելի լավ է մնաք այստեղ և ոչ ոքի ներս չթողնեք։

— Կներեք, սըր,— հարգալից տոնով նկատեց Փարքըրը,— եթե բարի լինեիք կողպել գլխավոր սրահ տանող դուռը, ոչ ոք մուտք չէր գործի այս հարկաբաժին։ Այդ աստիճանները տանում են միայն միստր Աքրոյդի ննջասենյակ ու լողասենյակ։ Ոչ մի կապ չկա տան մյուս մասի հետ։ Մի ժամանակ մուտքի մի դուռ կար, բայց միստր Աքրոյդը փակել տվեց։ Ուզում էր, որ լրիվ առանձին լինի իր հարկաբաժինը։

Ամեն ինչ հասկանալի և տեղադրությունը պարզ դարձնելու նպատակով գծել էի տան աջ թևի ուրվապատկերը։ Փոքր սանդուղքը, ինչպես բացատրեց Փարքըրը, տանում էր մեծ ննջասենյակ (նախկին երկու սենյակը միացրել դարձրել էին մի մեծ սենյակ) և կից՝ լոգարան ու զուգարան։

Առաջին իսկ հայացքից տեսուչը հասկացավ տեղադրությունը։ Մոտը ընդարձակ սրահ, և նա կողպեց դուռն ու բանալին դրեց գրպանը։ Հետո ցածրաձայն որոշ հրահանգներ տվեց ոստիկանին և սա պատրաստվեց հեռանալ։

— Պետք է զբաղվենք այդ ոտնահետքերով, բայց ամենից առաջ պետք է խոսեմ միսս Աքրոյդի հետ։ Վերջին անգամ նա է ողջ տեսել Աքրոյդին։ Իսկ նա գիտի՞ ապանության մասին։

Ռայմոնդն օրորեց գլուխը։

— Դե լավ, կարիք չկա ավելորդ ժամանակ կորցնելու։ Իմ հարցերին այդպես ավելի լավ կպատասխանի, քան թե հուզվելով՝ լամանալով միայր Աքրոյդի ապտնության մասին։ Սատցեք նրան, որ գողություն է կատարվել և խնդրեք, որ ներքև իջնի մի քանի հարցերի պատասխանելու։

Ռայմոնդը գնաց կատարելու այդ հանձնարարությունը։

— Մեկ րոպեից միստր Աքրոյդը կիջնի,— վերադառնալով ասաց քարտուղարը։— Ես նրան հաղորդեցի ձեր խնդրանքը։

Հինգ րոպե էլ չէր անցել, երբ Ֆլորան երևաց աստիճանների վրա։ Նա բաց վարդագույն կիմոնոյով էր։ Անհանգստացած ու հուզված էր երևում։

Տեսուչն ընդառաջ գնաց նրան։

— Բարի երեկո, միստր Աքրոյդ,— քաղաքավարությամբ ասաց նա։— Մեր կարծիքով գողություն փորձ է կատարվել և ուզում ենք, որ օգնեք մեզ։ Ա՞ռ ինչ սենյակ է, բիլիարդի՞։ Ներս մտեք և նստեք։

Ֆլորան հանգիստ նստեց պատի երկայնքով մեկ դրված մեծ բազմոցին և նայեց տեսուչին։

— Ինձ համար այնքան էլ պարզ չէ։ Ի՞նչ են գողացել, և ի՞նչ եք ուզում, որ ասեմ։

— Բանն այն է, միստր Աքրոյդ, որ Փարքերն ասում է, թե դուք դուրս եք եկել ձեր հորեղբոր աշխատասենյակից մոտ տասին, տաճնհինգ պակաս, ճի՞շտ է։

— Միանգամայն։ Գնացել էի բարի գիշեր մաղթելու նրան։

— Իսկ ժամանակը ճի՞շտ է։

— Դե՛, ինչ ասեմ, երևի տասին մոտ էր, ճիշտը չեմ կարող ասել, դուցե ուշ։

— Միստր Աքրոյդը մենա՞կ էր, թե մարդ կար մոտը։

— Մենակ էր։ Բժիշկ Շեփարդը գնացել էր։

— Պատահաբար չնկատեցի՞ք, լուսամուտը փա՞կ էր, թե բաց։ Ֆլորան օրորեց գլուխը։

— Չեմ կարող ասել։ Վարագույրները քաշված էին։

— Միանգամայն ճիշտ է։ Իսկ միստր Աքրոյդը սովորականի պե՞ս էր զգում իրեն։

— Կարծում եմ՝ այո։

— Կարո՞ղ եք ճշգրիտ ասել, թե ինչ տեղի ունեցավ ձեր միջև։

Ֆլորան մի պահ լռեց, ասես հավաքելու իր մտքերը։

— Ներս մտա ու ասացի. «Բարի գիշեր, Հորեղբայր, գնում եմ քնելու։ Շատ հոգնած եմ»։ Նա մի տեսակ փնթփնթաց, և ես մոտեցա ու համբուրեցի նրան։ Մի ակնարկ արեց զգեստս ինձ սազելու վերաբերյալ և ասաց, որ գնամ, քանի որ զբաղված էր։ Ես էլ դուրս եկա։

— Հատկապես խնդրե՞ց, որ չանհանգստացնեք իրեն։

— Օ՛, հա՛, մոռացել էի։ Ասաց. «Փարքըրին ասա, որ այլևս ոչինչ պետք չէ, որ չանհանգստացնի ինձ»։ Փարքըրին հանդիպեցի ուղղակի դռնից դուրս գալիս և հաղորդեցի նրան հորեղբոր կարգադրությունը։

— Շատ լավ,— ասաց տեսուչը։

—Չէի՞ք ասի, թե ի՞նչ են դողացել։

— Լրիվ համոզված չենք,— վարանելով պատասխանեց տեսուչը։

Տագնապ զգացվեց աղջկա աչքերում, և նա սևեռուն նայեց տեսուչին։

— Ի՞նչ է։ Որևէ բա՞ն եք թաքցնում ինձնից։

Հեկտոր Բլանթը, իրեն բնորոշ հանգիստ շարժուձևով, մոտեցավ Ֆլորային, բռնեց նրա ձեռքն ու շոյեց, ասես նա շատ փոքրիկ մի երեխա լիներ։ Աղջիկը դա ընդունեց այնպես, կարծես Բլանթի հանգստությունն ու անսասան կամքը հանգստավետություն ու ապահովություն էին խոստանում իրեն։

— Խուր լուր է, Ֆլորա,— անվրդով ասաց նա,— սխուր բոլորիս համար։ Ձեր Հորեղբայր Ռոջերը...

— Իսկապե՞ս։

— Դա մեծ հարված է ձեզ համար, արիացե՛ք։ Նեղճ Ռոջերը մահացել է։

Ֆլորան սոսկումով ետ քաշվեց։

— Ե՞րբ,— շշնջաց նա,— ե՞րբ։

— Ինձ թվում է, հենց ձեր հեռանալուց հետո,— պատասխանեց Բլանթը։

Ֆլորան ձեռքը տարավ կոկորդին, ճչաց։ Ես շտապեցի բռնել նրան, որ չընկնի։ Գիտակցությունը կորցրել էր։ Բլանթի

հետ տարանք վերև ու պատկերինք անկողնում։ Հետո սասցի նրան, որ արթնացնի միսիս Աքրոյդին և հաղորդի այդ լուրը։ Շուտով Ֆլորան ուշքի եկավ, և ես մորը տարա աղջկա մոտ ու ասացի, թե ինչ պետք է անել։ Որից հետո շտապեցի ներքև։

Գլուխ 6

ԹՈՒՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՈՒՅՆԸ

Տեսուչն հանդիպեցի խոհանոցի հարկաբաժնի դռնից դուրս գալիս։

— Ինչպե՞ս է երիտասարդ լեդին, բժիշկ։

— Լավ է, ուշքի է գալիս։ Մայրը հետն է։

— Դե լավ է։ Հարցաքննեցի սպասավորներին։ Բոլորը միաբերան հայտարարում են, որ եռնամուտքի դռանը ոչ ոք չի մոտեցել։ Անծանոթի ձեր նկարագրությունը բավական անորոշ էր։ Չե՞ք կարող ավելի որոշակի բան ասել։

— Վախենում եմ, որ՝ ոչ,— ասացի ես։— Մութ գիշեր էր, հասկանում եք, և նա վերարկուի օձիքը բարձրացրել էր ու գլխարկը քաշել մինչև աչքերը։

— Հ՛ըմ,— ասաց տեսուչը,— երևում է թաքցրել է դեմքը։ Համոզվա՞ծ եք, որ նա ձեր ճանաչած մարդկանցից մեկը չէր։

Ես ժխտական պատասխան տվեցի, բայց ոչ այնքան համոզված։ Հիշեցի, որ այդ անծանոթի ձայնը այնքան էլ անծանոթ չէր ինձ։ Ով տեսուչին բացատրեց այդ բանը բավական կմկմալով։

— Ասում եք, այդ ձայնը կոպի՞տ էր։

— Այո՛— հաստատեցի ես։— Բայց այդ կոպտությունը բավական կեղծ թվաց ինձ։ Ինչպես դուք եք ասում, որ նա թաքցրել է իր դեմքը, նույն հաջողությամբ կարող էր կեղծել նաև իր ձայնը։

— Կգա՞ք նորից գնանք աշխատասենյակ, բժիշկ։ Որոշ բաներ պիտի հարցնեմ ձեզ։

Լուռ համաձայնվեցի։ Տեսուչ Դեյվիսը բացեց նախասենյակի դուռը, ներս մտանք, և կրկին կողպեց այն։

— Ջեմ ուզում, որ խանգարեն մեզ,— մռայլ ասաց նա,— ոչ էլ ականջ դնեն։ Ի՞նչ եք կարծում, շանտաժ չէ այս ամենը։

— Շանտա՞ժ,— ապշահար գոչեցի ես։

— Փարքըրի երևակայության ծնունդ չէ՞ դա արդյոք, թե ինչ-որ այլ բան կա թաքնված դրանում։

— Եթե Փարքըրը որևէ բան է լսել շանտաժի մասին,— ասացի ես,— ապա պետք է լսած լինի այս դռանետևից՝ ականջը հպած բանալու անցքին։

Դեյվիսը գլխով արեց։

— Շատ հավանական է։ Ես որոշ հարցուփորձ արեցի այն մասին, թե ինչով է զբաղված եղել Փարքըրը երեկոյան։ Ճիշտն ասած, նրա վարքագիծն այնքան էլ դուրս չեկավ։ Նա ինչ-որ բան գիտի։ Երբ սկսեցի հարցեր տալ նրան, վախեցավ և ինչ-որ աղավաղված պատմություն մոգոնեց շանտաժի մասին։

Ես վայրկենական մի վճիռ կայացրի և ասացի.

— Շատ ուրախ եմ, որ առաջ եք քաշել այդ խնդիրը։ Ինքս էլ աշխատում էի որոշել՝ անկեղծորեն ասե՞մ ամեն ինչի մասին, թե ոչ։ Արդեն փաստորեն որոշել էի ամեն ինչ ասել ձեզ, բայց ուզում էի սպասել ավելի բարենպաստ առիթի։ Բայց հիմա էլ կարող եմ ասել։

Ես անմիջապես պատմեցի այն ամենն, ինչ կատարվել էր երեկոյան։ Տեսուչը հափշտակված լսում էր, մերթ ընդ մերթ միջանկյալ հարցեր տալով։

— Նման արտառոց պատմություն երբեք չեմ լսել,— ասաց նա, երբ վերջացրի իմ պատմությունը։— Ասում եք նամակն անհետացե՞լ էր։ Դրանից վատ հոտ է գալիս... Շատ վատ։ Նամակը կտար մեզ այն, ինչ փնտրում էինք՝ սպանության շարժառիթը։

— Պատկերացնում եմ,— ասացի ես։

— Ասում եք, պարոն Աքրոյդն ակնարկեց, թե կասկածում է, որ տնեցիներից ինչ-որ մեկի հե՞տ է կապված այդ գործը։

«Տնեցիները» բավական առաձգական հասկացողություն է։

— Ձե՞ք կարծում, որ Փարքըրը կարող է լինել այն մարդը, ում փնտրում ենք,— հարցրեցի ես։

— Շատ հավանական է։ Նա ակնհայտորեն լսում էր դռան

եսևում։ Հետո միսս Աքրոյդը պատահաբար հանդիպեց նրան այն պահին, երբ նա ուզում էր մտնել աշխատասենյակ։ Ննջարանը նա նորից փորձեց, երբ միսս Աքրոյդը գնացել էր արդեն։ Դաշունահարեց Աքրոյդին, ներսից կողպեց դուռը, բացեց լուսամուտը, դուրս եկավ այնտեղից, շրջվեց դեպի կողքի դուռը, որ նախօրոք բաց էր թողել։ Ի՞նչ կասեք։

— Դրան հակառակ միայն մի բան կա,— ասացի ես։— Թեև իմ հեռանալուց հետո Աքրոյդը շարունակեց կարդալ այդ նամակը, ինչպես մտադիր էր, ապա, չեմ հասկանում, ինչո՞ւ պիտի շարունակեր նստել այնտեղ ու մի ժամ մտքում ծանր ու թեթև աներ ամեն ինչ։ Նա անմիջապես կբռներ Փարքըրին, իսկույն կմեղադրեր, և մեծ աղմուկ կբարձրանար։ Մի մոռացեք, որ Աքրոյդը դյուրաբորբոք մարդ էր։

— Հնարավոր է, որ ժամանակ չունեցավ շարունակելու նամակը կարդալ հենց այդ ժամանակ,— ակնարկեց տեսուչը։— Մեզ հայտնի է, որ ինչ-որ մեկը եղել է նրա հետ ինն անց կեսին։ Թեև այդ այցելուն անսպասելիորեն հայտնվել էր ձեր գնալուց հետո, և նրա հեռանալուց հետո միսս Աքրոյդը ներս էր մտել բարի գիշեր ասելու, ուրեմն նա հնարավորություն չէր ունենա շարունակել նամակը կարդալու մինչև ժամի տասը։

— Իսկ հեռախոսազա՞նգը։

— Փարքըրը զանգահարեց թերևս նախքան փակված դուռն և բաց լուսամուտի մասին մտածելը։ Հետո միտքը փոխեց կամ խուճապի մատնվեց և որոշեց ժխտել այդ ամենը։ Հավատացած եղեք, որ այդպես էլ եղել է։

— Այո՛,— ասացի ես տարակուսանքով։

— Համենայն դեպս, հեռախոսազանգի վերաբերյալ ստույգ կարող ենք իմանալ հեռախոսակայանից։ Թեև զանգահարել են այստեղից, բացի Փարքըրից էլ ով կարող էր լինել։ Հավատացած եղեք, որ նա մեր ձեռքում է։ Բայց ոչ մի խոսք այդ մասին. չենք ուզում առայժմ անհանգստացնել նրան, մինչև որ բոլոր ապացույցներն ունենանք։ Ես հեռևելու եմ, որ նա խույս չտա մեզնից։ Համենայն հավանականությամբ մեր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնելու ենք ձեր այդ խորհրդավոր անծանոթի վրա։

Նա վեր կացավ գրասեղանի մոտի աթոռից, որտեղ ոտքե-
րը չոած նստել էր, և նստեց բազկաթոռին։

— Դաշույնը պիտի որ տա մեզ առեղծվածի լուծման բա-
նալին,— նկատեց նա վեր նայելով։— Դա միանգամայն
եզակի բան է, հազվագյուտ մի իր՝ տեսքից դատելով։

Նա կռացավ, ուշադիր զննեց դաշույնի երախակալը և զո-
հունակությամբ ինչ-որ բան փնթփնթաց։ Հետո ամենայն
զգուշությամբ բռնեց երախակալի ներքևի մասից ու դաշույնը
հանեց վերքից։ Աշխատելով չդիպչել երախակալին, այն դրեց
բուխարու վերևի դարակը զարդարող չինական լայն գավաթի
մեջ։

— Այո՛,— ասաց նա, գլխի շարժումով ցույց տալով դա-
շույնը,— իսկական արվեստի գործ է։ Դրանցից շատ չի կա-
րող լինել այս կողմերում։

Դա հիրավի հրաշալի դաշույն էր, նեղ ու նուրբ շեղբով,
տարբեր մետաղներից հմտորեն միահյուսված երախակալով։
Նա մատով զգուշությամբ շոշափեց շեղբը, ստուգելով սրու-
թյունը, և բարձր գնահատական տալու մի դիմախաղ արեց։

— Ասովա՜ծ իմ, ինչքան սուր է ծայրը,— բացականչեց
նա։— Երեխան անգամ այնպիսի հեշտությամբ կարող էր մը-
խըրճել մարդու մարմին, ինչպես կարագի մեջ։ Վտանգավոր
խաղալիք է։

— Հիմա կարո՞ղ եմ քննել մարմինն ինչպես հարկն է,—
հարցրի ես։

Նա գլխով արեց.

— Սկսե՛ք։

Ես հանգամանորեն զննեցի մարմինը։

— Դե, ի՞նչ կասեք,— հարցրեց տեսուչը, երբ վերջացրի։

— Ես կազատեմ ձեզ տեխնիկական լեզվից,— ասացի
ես։— Դա թողնենք հետաքննությանը։ Հարվածը հասցվել է
աջ ձեռքով, թիկունքից, և մահը եղել է վայրկենական։ Հան-
գուցյալի դեմքի արտահայտությունից դատելով կարելի է
ասել, որ հարվածը միանգամայն անսպասելի է եղել։ Հա-
վանաբար նա մահացել է, առանց իմանալու, թե ով էր իրեն
հարվածողը։

— Սառայապետերը կարող են նույնքան անաղմուկ մտնել, ինչպես կատուները,— ասաց Դեյվիսը։— Այնքան էլ առեղծվածային չի կարող լինել այդ գործը։ Նայեցեք դաշույնի երախակալին։

Նայեցի։

— Համարձակվում եմ ասել, որ դուք չեք նկատում, բայց ես լավ տեսնում եմ դրանք։— Նա իջեցրեց ձայնը.— մատնահետքե՛ր։

Նա մի քայլ ետ գնաց՝ տեսնելու, թե ինչ տպավորություն թողեց։

— Այո՛,— մեղմ ասացի ես,— կռահում էի։

Չեմ հասկանում, թե ինչից ելնելով են կարծում, որ ոչինչ չեմ հասկանում նման բաներից։ Վերջիվերջո, դետեկտիվ պատմություններ, թերթեր եմ կարդում, և սովորական ընդունակություններից ես։ Եթե դաշույնի երախակալին մատնահետքեր լինեին, այլ բան էր. այդ դեպքում զարմանք ու հիացմունք կարտահայտեի։

Ինձ թվում է, տեսուչը սրտնեղում էր այն պատճառով, որ սառնասրտորեն էի ընդունում իր ասածները։ Նա վերցրեց չինական զավաթն ու առաջարկեց ինձ ուղեկցել իրեն բիլիարդի սենյակ։

— Ուզում եմ տեսնել, միստր Ռայմոնդը կարո՞ղ է որևէ բան ասել դաշույնի մասին,— բացատրեց նա։

Կրկին դրսի դուռը փակելով մեր ետևից, գնացինք բիլիարդի սենյակ, որտեղ գտանք Ռայմոնդին։ Տեսուչը ցույց տվեց նրան իրեղեն ապացույցը։

— Առաջներում տեսե՞լ եք սա, միստր Ռայմոնդ։

— Դե իհարկե... ինձ թվում է... գրեթե համոզված եմ, որ այդ հազվագյուտ իրը մայոր Բլանթն էր տվել միստր Աքրոյդին։ Մարոկոական է... ոչ, թունիսական։ Ուրեմն հանցագործությունը դրանո՞վ է կատարվել։ Ինչպիսի արտառոց բան։ Գրեթե անհնարին է թվում, բայց և այնպես հազիվ թե երկու դաշույնը միևնույնը լինեն։ Կարո՞ղ եմ գնալ մայոր Բլանթի ետևից։

Առանց պատասխանի սպասելու, նա արագ հեռացավ։

— Հրաշալի տղա է,— ասաց տեսուչը։— Ինչ-որ համեստ ու անկեղծ բան կա նրանում։

Ես համաձայնեցի։ Երկու տարվա ընթացքում, ինչ Ջեոֆրի Ռայմոնդը եղել էր Աքրոյդի քարտուղարը, երբեք չէի տեսել, որ համբերությունից դուրս գար կամ զայրանար։ Ով նա եղել էր, ինչպես գիտեմ, ամենապատրաստված քարտուղարներից մեկը։

Մի երկու րոպեից հետո Ռայմոնդը վերադարձավ Բլանթի հետ։

— Ես ճիշտ էի,— ասաց Ռայմոնդը հուզված։— Թունավական դաշույն է։

— Մայոր Բլանթը դեռ չի տեսել դա,— ասաց տեսուչը։

— Տեսել եմ, երբ աշխատասենյակ մտա, իսկույն ճանաչեցի,— պատասխանեց անվրդով մարդը։

— Ով դուք ոչինչ չասացի՞ք այդ մասին,— նկատեց տեսուչը կասկածանքով։

— Պահն էր անպատեհ,— ասաց Բլանթը։— Շատ չարիք կատարվում է այն պատճառով, որ մարդիկ անպատեհ պահի են դուրս տալիս ամեն ինչ։

Տեսուչի սևեռուն հայացքին նա պատասխանեց նույն կերպ։ Վերջինս վերջապես ինչ-որ բան փնթփնթաց ու շրջվեց։ Նա Բլանթի ուշադրությունն իր կողմը հրավիրեց ու ասաց.

— Դուք լիովին համոզվա՞ծ եք, սըր։ Դուք հաստատո՞ւմ եք, որ սա նույն դաշույնն է։

— Լիովին։ Ոչ մի կասկած լինել չի կարող։

— Այս հազվագյուտ իրը սովորաբար որտե՞ղ է պահվել, կարո՞ղ եք ասել, սըր։

Քարտուղարը պատասխանեց.

— Հյուրասենյակում, հազվագյուտ իրերի կափարիչով սեղանի մեջ։

— Ի՞նչ,— գոչեցի ես։

Բոլորը նայեցին ինձ։

— Իրո՞ք, բժիշկ,— հարցրեց տեսուչը խրախուսանքով։

— Դատարկ բան,— ասաց տեսուչը կրկին, էլ ավելի խրախուսանքով։

— Դա շատ սովորական բան է,— ասացի ես հաշտվողա-

կան տոնով։— Միայն թե, երբ անցած երեկո ընթրիքի եկա, պատահաբար լսեցի, թե ինչպես հյուրասենյակում շրխկոցով փակվեց այդ սեղանի կափարիչը։

Զգացի, որ տեսուչը ամենևին էլ չհավատաց իմ խոսքերին։

— Ինչպե՞ս իմացաք, որ դա արծաթե սեղանի կափարիչի ձայնն էր։

Ստիպված էի մանրամասն բացատրել ամեն ինչ, երկարատև, տաղտկալի մի բացատրություն, որ շատ կցանկանայի չտալ։

Տեսուչը լսեց մինչև վերջ։

— Դաշույնը տեղո՞ւմ էր,— հարցրեց նա։

— Չգիտեմ։ Ոնց որ չնկատեցի, բայց երևի տեղում էր։

— Թերևս հարցնենք տնտեսուհուն,— ասաց տեսուչը և ոտից դրան զանգը։

Մի քանի րոպե հետո ներս մտավ միսս Ռասելը։

— Ինձ թվում է չմոտեցա սեղանին,— տեսուչի հարցին պատասխանեց նա։— Պարզապես ուզում էի տեսնել բոլոր ժողովներն էին թարմ, թե ոչ։ Օ՛, հա՛, հիշեցի։ Սեղանի կափարիչը բաց էր, մի բան, որ չպիտի լիներ, և մոտով անցնելիս փակեցի։

Միսս Ռասելը մարտական մի հայացք նետեց տեսուչի վրա։

— Հասկանալի է,— ասաց տեսուչը։— Իսկ կարո՞ղ եք ասել, այս դաշույնը տեղո՞ւմ էր այն ժամանակ։

Միսս Ռասելը հանգիստ նայեց դաշույնին։

— Հաստատ չեմ կարող ասել։ Ուշադրություն չդարձրի, որովհետև շտապում էի։

— Շնորհակալություն,— ասաց տեսուչը։

Նա փոքր-ինչ տատանվեց, ասես ուզում էր շարունակել հարցաքննել նրան, սակայն միսս Ռասելը նրա ասածը պարզապես ընդունեց որպես հեռանալու թույլտվություն և դուրս եկավ սենյակից։

— Պատկառելի կին է, չէ՞,— ասաց տեսուչը, նայելով նրա ետևից։— Ուրեմն այսպես. կարծեմ ասացիք, որ սեղանը լուսամուտներից մեկի մոտ էր, այնպես չէ՞, բժիշկ։

Իմ փոխարեն պատասխանեց Ռայմոնդը.

— Այո՛, ձախ կողմի լուսամուտի մոտ։

— Եվ լուսամուտը բա՞ց էր։

— Երկուսն էլ կիսաբաց էին։

— Լավ, չեմ կարծում, որ կարիք կա շարունակել հարցաքննությունը։ Ինչ-որ մեկը, հենց ինչ-որ մեկը, կասեի ես, կարող էր վերցնել այդ դաշույնը երբ կամենար, իսկ թե ճշտորեն ե՞րբ է վերցրել, ամենևին էլ նշանակություն չունի։ Պարոն Ռայմոնդ, ես առավոտյան կգամ ոստիկանապետի հետ։ Մինչ այդ, դուռն բանալին կպահեմ ինձ մոտ։ Ուզում եմ, որ գնդապետ Մելրոուզը ամեն ինչ տեսնի ճիշտ այնպես, ինչպես որ կա։

Տեսուչը վերցրեց սափորը։

— Պետք է խնամքով փաթաթեմ սա,— ասաց նա,— շատ կարևոր իրեղեն ապացույց է։

Մի քանի րոպե հետո, երբ Ռայմոնդի հետ դուրս եկանք բիլիարդի սենյակից, վերջինս քմծիծաղ տվեց ու սեղմեց ձեռքս. նայեցի նրա հայացքի ուղղությամբ։ Տեսուչ Դեյվիսը կարծես աշխատում էր Փարքըրի ուշադրությունը հրավիրել գրպանի փոքրիկ հուշատետրի վրա։

— Փոքր-ինչ տափակ է նրա արածը,— շշնջաց պրուցակից։— Փարքըրը կասկածի տակ է։ Տեսնես Դեյվիսը մեր մատնահետքերն է՞լ է վերցնելու։

Նա սեղանի վրայից վերցրեց երկու այցետոմս, սրբեց իր մետաքսե թաշկինակով և մեկը տվեց ինձ։ Այնուհետև, քմծիծաղ տալով, դրանք մեկնեց տեսուչին ու ասաց.

— Հուշանվերներ։ Համար առաջին՝ բժիշկ Շեփարդ, համար երկրորդ՝ նվաստս։ Մեկն էլ կստանաք մայոր Բլանթից, առավոտյան։

Երիտասարդությունը շատ կենսունակ է։ Նույնիսկ իր բարեկամի ու տիրոջ դաժան սպանությունը չկարողացավ երկար ժամանակ մթագնել Ջեոֆրի Ռայմոնդի ոգին։ Թերևս այդպես էլ պետք է լիներ։ Չգիտեմ։ Ինչ վերաբերում է ինձ, այդ դեպքից հետո ես մի տեսակ զրկվել էի կենսունակությունից։

Ուրեն շատ ուշ էր, երբ վերադարձա տուն, և հուսով էի, որ Կարոլինն արդեն քնել էր։ Կարող էի ավելի շրջահայաց լինել։

Տաք կակաո ինձ էր սպասում, և մինչ խմում էի, Կարոլինը դուրս կորզեց ինձնից ամբողջ պատմությունը։ Շանտաժի մասին ոչինչ չասացի նրան, սահմանափակվեցի սպանության վերաբերող փաստերով միայն։

— Ոստիկանությունը Փարքըրին է կասկածում,— ասացի ես՝ վեր կենալով տեղիցս։— Նրևի բավական հանցանշաններ կան նրա դեմ։

— Փարքըրի՞ն,— ասաց քույրս,— հիմարություն է։ Նրևի կատարյալ ապուշ է այդ տեսուչը։ Փարքըրը, չէ մի։

Եվ այդ փոքր-ինչ անորոշ հայտարարությունն անելով գնաց քնելու։

Գլուխ 7

ԵՍ ԻՄԱՆՈՒՄ ԵՄ ՀԱՐԵՎԱՆԻՍ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հաջորդ առավոտյան աններելիորեն արագ կատարեցի շրջայցը։ Իմ արդարացումը կարող էր լինել այն, որ շատ լուրջ հիվանդներ չունեի։ Երբ վերադարձա, Կարոլինը մտավ նախասենյակ՝ ողջունելու ինձ։

— Ֆլորա Աքրոյդն այստեղ է,— հայտարարեց նա հուզված։

— Ի՞նչ։

Աշխատեցի հնարավորին չափ թաքցնել զարմանքս։

— Շատ է ուզում տեսնել քեզ։ Կես ժամ կլինի, որ այստեղ է։

Կարոլինը տարավ ինձ հյուրասենյակ։

Ֆլորան նստած էր լուսամուտի մոտի բազմոցին։ Նա սև զգեստով էր և նյարդայնորեն ճմլում էր ձեռքերը։ Նրա տեսքը ցնցեց ինձ. շատ գունատ էր։ Սակայն երբ խոսում էր՝ հանգիստ էր ու վճռական։

— Բժիշկ Շեփարդ, եկել եմ խնդրելու, որ օգնեք ինձ։

— Իհարկե, նա կօգնի քեզ, հոգյակս,— ասաց Կարոլինը։

Չեմ կարծում, որ Ֆլորան իրոք ուզում էր, որ Կարոլինը ներկա գտնվեր խոսակցությանը։ Համոզված եմ, որ նա շատ

Կնախընտրեր առանձին խոսել ինձ հետ։ Բայց նա ուզում էր ևս ժամանակ չկորցնել, այնպես որ, ամեն ինչ արեց դրա համար։

— Ուզում եմ, որ ինձ հետ գաք ձեր հարևանի մոտ։

— Ինչո՞ւ,— զարմացած հարցրի ես։

— Հանդիպելու այդ ծիծաղելի փոքրիկ մարդո՞ւն,— գոչեց Կարոլինը։

— Այո՛։ Դուք ճանաչում եք նրան, այնպես չէ՞։

— Մենք կարծում էինք, որ նա թոշակի անցած վարսավիր է։

Ցլորայի կապույտ աչքերը լայն բացվեցին։

— Ի՞նչ, նա Հերքյուլ[1] Պուարոն է։ Գիտեք ում նկատի ունեմ՝ մասնավոր խուզարկուին։ Ասում են, որ նա հրաշքներ է գործել, ինչպես խուզարկուները՝ վեպերում։ Մի տարի առաջ թողել է աշխատանքն ու եկել է ապրելու այստեղ։ Աքրոյդը պիտեր, թե նա ով է, բայց խոստացել էր ոչ ոքի չասել, որովհետև այդ Պուարոն ուզում է ապրել հանգիստ, այնպես, որ իրեն չանհանգստացնեն։

— Ահա թե ով է նա,— ասացի ես։

— Անշուշտ, դուք նրա մասին լսել եք։

— Ինչպես Կարոլինն է ասում, տարիքի հետ բթանում եմ,— ասացի ես,— բայց և այնպես լսել եմ նրա մասին։

— Զարմանալի է,— ասաց Կարոլինը։

Չգիտեմ, թե ինչ նկատի ուներ Կարոլինը, թերևս ճշմարտությունը գտնելու իր անհաջողությո՞ւնը։

— Ուզում եք գնալ և տեսնե՞լ նրան,— հարցրեցի ես մեղմ։— Իսկ ինչո՞ւ։

— Իհարկե, համոզելու նրան, որ հետաքննի այս սպանության գործը,— կտրուկ ասաց Կարոլինը։— Այդքան հիմար մի լինի, Ջեյմս։

Իրականում ես հիմար չէի։ Կարոլինը միշտ չէ, որ հասկանում էր, թե ինչ էի ակնարկում։

— Դուք չե՞ք վստահում տեսուչ Դեյվիսին,— շարունակեցի ես։

---

1 *Հեղինակն իր փոքրամարմին հերոսին Հերքյուլ (անգլ. Hercule-Hercules— Հերկուլես) է անվանում (ծ. թ.)։*

— Իհարկե չի վատահում,— ասաց Կարոլինը։— Ոչ էլ ես կարելի էր կարծել, թե Կարոլինի հորեղբայրն էր սպանվողը։

—Իսկ որտեղի՞ց գիտեք, որ նա կզբաղվի այդ գործով,— հարցրի ես։— Մի մոտացեք, որ նա թողել է գործնական աշխատանքը։

— Հենց բանն էլ այդ է,— ասաց Ջլորան։— Այնպես որ ուզում եմ համոզել նրան։

— Համոզվա՞ծ եք, որ ճիշտ եք վարվում,— հարցրի ես։

— Իհարկե,— ասաց Կարոլինը։— Եթե Ջլորան չի առարկում, կգամ իր հետ։

— Ավելի լավ կլիներ, որ բժիշկը գար, եթե չեք առարկում, միսս Շեփարդ,— ասաց Ջլորան։ Նա գիտեր որոշակի դեպքերում հատակ պատկերացում ունենալու արժեքը։ Կարոլինը ոչ մի ակնարկ չէր ընդունում։— Հասկանում եք,— բացատրեց նա շիտակ ու պատշաճորեն,— լինելով բժիշկ և զբաղնելով սպանվածի մարմինը, Շեփարդը կարող է մյո Պուարոյին ներկայացնել բոլոր մանրամասները։

—Այո՛,— ասաց Կարոլինը դժկամությամբ,— հասկանում եմ։

Մի երկու անգամ ես ու առաջ արեցի սենյակում։

— Ջլորա, —ազդեցիկ տոնով ասացի ես,— կուզեկցեմ ձեզ, բայց խորհուրդ եմ տալիս այդ խուզարկուին չներգրավել գործի մեջ։

Ջլորան վեր ցատկեց տեղից։ Այտերը կարմրեցին։

— Գիտեմ, թե ինչու եք դա ասում,— գոչեց նա։— Բայց դա ոտնկայն պատճառով, որ շատ եմ ուզում գնալ։ Դուք վախենում եք, իսկ ես՝ ոչ։ Ռալֆին ես ավելի լավ գիտեմ, քան դուք։

— Ռալֆն ի՞նչ գործ ունի դրա հետ,— ասաց Կարոլինը։ Ոչ մեկս էլ ուշադրություն չդարձրինք նրա վրա։

— Հնարավոր է, որ Ռալֆն անվճռական է,— շարունակեց Ջլորան,— հնարավոր է, որ անցյալում հիմարություններ, նույնիսկ վատ բաներ է արել, բայց նա չէր կարող մարդ սպանել։

— Ո՛չ, ո՛չ,— վրա բերեցի ես,— այդպիսի բան երբեք մտքովս չի անցել։

— Հապա ինչո՞ւ երեկ երեկոյան, Աքրոյդին սպանված գտնելուց հետո, տուն վերադառնալիս մտաք «Երեք վարազներ»,— հարցրեց Ֆլորան։

Իսկույն շփոթվեցի, չէ որ հույս ունեի, որ այդ այցելությունը կմնար աննկատ։

— Ինչպե՞ս իմացաք այդ մասին,— հարցրի ես։

— Այսօր առավոտյան գնացի այնտեղ։ Սպասավորներից լսեցի, որ Ռալֆն իջևանել էր այնտեղ...

Ես ընդհատեցի նրան.

— Իսկ չգիտեի՞ք, որ նա Քինգս Աբբոթում է։

— Ո՛չ։ Ես ապշել էի։ Ես դա չէի կարողանում պատկերացնել։ Գնացի այնտեղ և հարցրեցի նրան։ Ինձ ասացին, կարծում եմ, նույն բանը, ինչ ասել էին ձեզ անցած երեկոյան, որ դուրս էր եկել երեկոյան մոտավորապես ժամը իննին և... և չէր վերադարձել։

Նա արհամարհանքով աչքերը հառեց վրաս և, ասես ի պատասխան իմ հայացքին, պոռթկաց.

— Իսկ ինչո՞ւ ոչ։ Նա կարող է գնացել էր որևէ տեղ, գուցե վերադարձել էր Լոնդոն։

— Իրերը թողնելո՞վ։

Ֆլորան ոտքերը խփեց գետնին։

— Հետո ինչ։ Դա պետք է պարզապես բացատրել։

— Դրա՞ համար եք ուզում գնալ Հերքյուլ Պուարոյի մոտ։ Ավելի լավ չէ՞ ամեն ինչ թողնել այնպես, ինչպես որ կա։ Մի մոտացեք, որ ոստիկանությունը բնավ կասկածներ չունի Ռալֆի նկատմամբ, բոլորովին այլ ուղղությամբ է աշխատում։

— Ընդհակառակը,— ճչաց աղջիկը,— նրանք կասկածում են Ռալֆին։ Այսօր առավոտյան քրանչեսթրից անսպասելի կերպով հայտնվել է գազրելի ու վտանգավոր մի մարդ։ Ես իմացա, որ ինձնից առաջ առավոտյան եկել է «Երեք վարազներում»։ Ինձ ամեն ինչ ասացին նրա այնտեղ լինելու և այն հարցերի մասին, որ նա տվել էր։ Նա կմտածի, որ Ռալֆն է սպանել։

— Եթե այդպես է, ուրեմն երեկվանից փոփոխություններ են կատարվել,— ասացի ես հանգիստ։— Ուրեմն նա չի հավատում Դեյվիսի այն տեսակետին, թե դա Փարքըրն է եղել։

— Փարքըրն է, անշուշտ,— ասաց քույրս քմծիծաղով։

Ջլորան մոտեցավ և բռնեց ձեռքս։

— Օ՜, բժիշկ Շեփարդ, եկեք իսկույն գնանք այդ մայո Պուարոյի մոտ։ Նա կգտնի ճշմարտությունը։

— Սիրելի Ջլորա,— ասացի ես մեղմ, շոյելով նրա ձեռքը,— լիովին համոզվա՞ծ եք, որ մեզ ճշմարտություն է պետք։

Նա նայեց ինձ՝ գլխի մի լուրջ շարժում անելով։

— Դուք համոզված չեք,— ասաց նա,— իսկ ես համոզված եմ, քանի որ Ռալֆին ավելի լավ գիտեմ, քան դուք։

— Իհարկե նա չի սպանել,— ասաց Կարոլինը, որ հավիվ էր զապում իրեն, որ չխոսի։— Միգուցե Ռալֆը խեղթություններ է անում, բայց շատ համակրելի ու դաստիարակված տղա է։

Ուզում էի Կարոլինին ասել, որ մարդասպանների մեծամասնությունը շատ համակրելի ու դաստիարակված տղաներ են եղել, բայց Ջլորայի ներկայությունը զսպեց ինձ։ Քանի որ Ջլորան անդրդվելի էր, ստիպված ընդառաջեցի նրան և իսկույն գնացինք Հարևանիս մոտ։

Բրեսոնյան հսկայական թաթակով մի ծեր կին բացեց դուռը։ Մայո Պուարոն տանն էր։

Մեզ ուղեկցեցին մաքուր մի հյուրասենյակ, և քիչ հետո հայտնվեց իմ նոր ծանոթը։

— Մայո բժի՜շկ,— ասաց նա ժպտալով,— մադմուազե՛լ։

Նա գլուխ տվեց Ջլորային։

— Հավանաբար դուք լսել եք երեկ գիշեր տեղի ունեցած ողբերգության մասին,— սկսեցի ես։

Նրա դեմքը լուրջ արտահայտություն ընդունեց։

— Հարկավ, լսել եմ։ Սարսափելի է։ Մադմուազել, անչափ կարեկցում եմ։ Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել։

— Միսս Աքրոյդն ուզում է, որ... որ...

— Դուք մարդասպանին,— խոսքս վերջացրեց Ջլորան հատակ ձայնով։

— Համակրում եմ,— ասաց փոքրիկ մարդը։— Բայց դա ատելության գործն է, այնպես չէ՞։

— Նրանք կարող են սխալ թույլ տալ,— ասաց Ֆլորան։— Իմ կարծիքով, նրանք արդեն սխալ ճանապարհի վրա են։ Ենդրում եմ, մայո Պուարո, չէի՞ք օգնի մեզ։ Թեև... եթե հարցը վիզային է վերաբերում...

Պուարոն ձեռքի շարժումով ընդհատեց նրան։

— Ենդրը փողը չէ, մադմուազել։ Ոչ թե նրա համար, որ փողն ինձ չի հետաքրքրում։— Մի ակնթարթ շող երևաց նրա աչքերում։— Փողը շատ նշանակություն ունի ինձ համար։ Ով միշտ էլ ունեցել է։ Բայց մի բան պետք է պարզ հասկանաք. եթե զբաղվեմ այս գործի հետաքննությամբ, հետաքննելու եմ մինչև վերջ։ Լավ շունը սխալ հետքով չի գնում, հիշեցեք։ Ով վերջիվերջո, կարող է զղջաք, որ տեղի ստիկանությանը չեք ապավինել։

— Ես ճշմարտությունն եմ ուզում,— ասաց Ֆլորան՝ ուղիղ նրա աչքերի մեջ նայելով։

— Ճշմարտությո՞ւնը։

— Ճշմարտությունը։

— Այդ դեպքում համաձայն եմ,— հանդիսատ ասաց փոքրիկ մարդը։— Ով հուսով եմ, որ ձեր խոսքերի համար չեք զղջա։ Այժմ մանրամասն պատմեք ինձ ամեն ինչ։

— Ավելի լավ է բժիշկ Շեպարդը պատմի,— ասաց Ֆլորան։— Նա ավելի շատ բան գիտի, քան ես։

Ստիպված պատմեցի այն ամենն, ինչ մինչ այդ կատարվել էր։ Պուարոն ուշադիր լսում էր ինձ, մերթ ընդ մերթ հարց տալով՝ ճշգրտելու այս կամ այն բանը, բայց հիմնականում՝ լուռ նստած, հայացքը հառած առաստաղին։

Խոսքս վերջացրի նրանով, թե ինչպես անցած գիշեր տեսուչն ու ես մեկնեցինք Ֆերնլի փարքից։

— Իսկ հիմա,— ասաց Ֆլորան,— պատմեք նրան ամեն ինչ Ռալֆի մասին։

Ես տատանվեցի, բայց նրա տիրական հայացքը հարկադրեց ինձ շարունակել։

— Դուք մտա՞ք այդ պանդոկը՝ «Երեք վարազներ», երև-

կոյան տուն վերադառնալիս,— հարցրեց Պուարոն, երբ վերջացրիւ— Եվ ինչո՞ւ։

Մի պահ լռեցի՝ զգուշութեամբ ընտրելու բառերը։

— Ինձ թվում էր, թե ինչ-որ մեկը պիտի որ հայտներ երիտասարդին մեծ Աքրոյդի մահվան մասին։ Ջերմլիից հեռանալուց հետո մտածեցի, որ բացի ինձանից ու Աքրոյդից, հավանաբար, ոչ ոք չգիտեր, որ նա եկել էր Լոնդոնից։

Պուարոն գլխով արեց։

— Միանգամայն ճիշտ է։ Այնտեղ գալու ձեր միակ դրդապատճառը դա՞ էր։

— Միակ դրդապատճառը,— պատասխանեցի ես սառը տոնով։

—Գուցե այլ բան. ասենք, համոզվելու համար այդ երիտասարդն այստեղ է, թե ոչ։

— Համոզվելո՞ւ։

— Ինձ թվում է, մսյո բժիշկ, որ դուք շատ լավ գիտեք, թե ինչ նկատի ունեմ, թեև ձևացնում եք հակառակը։ Հնարավոր է, որ սխոփանք կլիներ ձեզ համար, եթե պարզեիք, որ կապիտան Փեյթընն ամբողջ երեկո պանդոկում էր եղել։

— Սմենևին էլ ոչ,— կտրուկ ասացի ես։

Փոքրիկ խուզարկուն լրջորեն օրորեց գլուխը։

— Դուք չեք վստահում ինձ, ինչպես միսս Ֆլորան,— ասաց նա։ —Բայց հոգ չէ։ Այն, ինչին պիտի ուշադրություն դարձնենք հետևյալն է՝ կապիտան Փեյթընը բացակայում է տվյալ պարագայում, մի բան, որ բացատրության կարիք է զգում։ Ջեմ թաքցնի ձեզնից, հարցը լուրջ է։ Թեև բացառված չէ, որ դա միանգամայն պարզ պատճառ ունի։

— Հենց դա էլ շարունակ ասում եմ,— բացականչեց Ֆլորան ավյունով։

Պուարոն այլևս չանդրադարձավ այդ թեմային։ Դրա փոխարեն առաջարկեց իսկույն գնալ տեղական ոստիկանություն։ Նրա կարծիքով լավ կլիներ, որ Ֆլորան տուն գնար, իսկ ես ուղեկցեի իրեն ոստիկանություն և ծանոթացնեի հետաքննությունը ղեկավարող սպայի հետ։

Մենք իսկույն իրագործեցինք այդ պլանը։ Տխուր Դեյվիսին գտանք ոստիկանատան մոտ, շատ մռայլ։ Նրա հետ էին

աստիկանապետը՝ գնդապետ Մելրոուզը և մեկն էլ, Ֆլորայի քնորոշմամբ «վտանգավոր մարդը»՝ տեսուչ Ռագլանը Քրանչեսթրից, որին դժվար չէր ճանաչել։

Բավական լավ էի ճանաչում Մելրոուզին, և Պուարոյին ներկայացրի նրան և բացատրեցի իրավիճակը։ Ոստիկանապետը զայրացած էր երևում, իսկ տեսուչ Ռագլանը՝ մոայլ էր Քուխակից էլ ավելի։ Սակայն, ավագ սպայի զայրույթը, հավանաբար, փոքր-ինչ հրճվանք էր պատճառում Դեյվիսին։

— Գործը գնալով պարզ է դառնում,— ասաց Ռագլանը։— Ոչ մի կարիք չկա, որ դիլետանտները խառնվեն դրան։ Իմ կարծիքով, յուրաքանչյուր հիմար էլ կհասկանար, թե ինչ էր կատարվել նախորդ գիշեր, հետևաբար տանտերկու ժամ շպետք է կորցնեինք։

Նա մի քինոտ հայացք գցեց խեղճ Դեյվիսի վրա, որ նա քնդունեց կատարյալ սառնասրտությամբ։

— Միստր Աքրոյդի ընտանիքն, իհարկե, պետք է վարվի այնպես, ինչպես վայել է,— ասաց գնդապետ Մելրոուզը։— Բայց բոլոր դեպքերում չենք կարող արդելք հանդիսանալ պաշտոնական հետաքննության։ Գիտեմ, անշուշտ, որ մսյո Պուարոն մեծ համբավ ունի,— քաղաքավարությամբ ավելացրեց նա։

—Ոստիկանությունը, դժբախտաբար, պարծենալու բան չունի,— ասաց Ռագլանը։

Պուարոն փրկեց դրությունը։

— Ճիշտ է, որ ես մեկուսի կյանք եմ վարում,— ասաց նա։— Ով այլևս մտադիր չէի կրկին որևէ գործով զբաղվել։ Ամենից շատ վախենում եմ հայտնի դառնալուց։ Պիտի խընդրեմ, որ այս գաղտնիքի լուծմանը որևէ քանով նպաստելու դեպքում, անունս չհիշատակվի։

Տեսուչ Ռագլանի դեմքը փոքր-ինչ պայծառացավ։

—Ես լսել եմ ձեր մի քանի շատ նշանակալից հաջողությունների մասին,— մեղմանալով նկատեց գնդապետը։

— Ես կյանքի մեծ փորձ ունեմ,— հանդիսատ ասաց Պուարոն։— Սակայն հաջողություններիս մեծ մասը ձեռք է բերվել ոստիկանության աջակցությամբ։ Անշափ հիացած եմ

անգլիական ոստիկանությամբ։ Եթե տեսուչ Ռագլանը թույլ տա օգնել իրեն, շատ շոյված կզգամ ինձ։

Ավելի սիրալիր մի արտահայտություն երևաց տեսուչի կերպարանքին։

Գնդապետ Մելրոուզը մի կողմ տարավ ինձ։

— Ամեն ինչ վկայում է, որ այս փոքրիկ մարդը հիրավի նշանակալի գործեր է արել,— շշնջաց նա։— Բնականաբար մենք շահագրգռված չենք դիմելու Սքոթլանդ Յարդին։ Ռագլանը շատ ինքնավստահ է երևում, բայց ես հաստատ համոզված չեմ, որ նա իրավացի է։ Հասկանում եք, ես գործին առնչվող կողմերին ավելի լավ գիտեմ, քան նա։ Երևում է, այդ մարդը փառքի եռևից չի ընկնում, ճիշտ չէ՞։ Մեզ հետ կաշխատի առանց ավելորդ միջամտությունների ու համաձայնեցված, այնպես չէ՞։

— Ի փառս Ռագլանի, — ասացի ես հանդիսավոր տոնով։

— Լա՛վ, լա՛վ,— աշխուժորեն ասաց գնդապետ Մելրոուզը, ավելի բարձրաձայն,— մենք ձեզ տեղյակ կպահենք վերջին նորությունների մասին, մսյո Պուարո։

— Շնորհակալություն,— ասաց Պուարոն։— Բարեկամս, բժիշկ Շեփարդն ինչ-որ բան ասաց ծառայապետին կասկածելու վերաբերյալ։

— Դատարկաբանություններ են,— վրա բերեց Ռագլանը։— Այդ բարձրադաս սպաները այնքան են վախենում, որ աշխատում են ոչ մի կասկածի տեղիք չտալ։

— Իսկ մատնահետքի՞ը,— ակնարկեցի ես։

— Ոչ մի նմանություն Փարքերի մատնահետքերին,— ասաց նա թեթևակի ժպտալով, և ավելացրեց,— ոչ էլ ձեր ու միստր Ռայմոնդի, բժիշկ։

— Իսկ ի՞նչ կասեիք կապիտան Ռալֆ Փեյթընի մասին,— հարցրեց Պուարոն։

Ես նկատում էի ցուլի հենց կոտոշներից բռնելու նրա վարվելաձևով։ Թաքուն մի հարգանք նշմարվեց տեսուչի հայացքում։

— Տեսնում եմ զուր ժամանակ չեք վատնում, մսյո Պուարո։ Համոզված եմ, որ հաճելի կլինի ձեզ հետ աշխատել։

Մտադիր ենք վերցնել այդ երիտասարդ ջենտլմենի մատնահետքերը, հենց որ բունենք։

— Ինձ թվում է, թե սխալվում եք, տեսուչ,— ասաց գընդապետ Մելրոուզը ջերմորեն։— Ռալֆ Փեյթընին ճանաչում եմ երեխա հասակից։ Նա երբեք մարդ սպանելու աստիճան չէր բարոյալքվի։

— Թերևս,— ոչինչ չարտահայտող ձայնով ասաց տեսուչը։

— Ի՞նչ ունեք նրա դեմ,— հարցրի ես։

— Անցած գիշեր ուղիղ ժամը իննին է դուրս եկել։ Նրան տեսել են Ցերնլի փարքի մերձակայքում մոտ իննն անց կեսին։ Դրանից հետո չի երևացել։ Ասում են, որ դրամի կարիքի մեջ է։ Այստեղ գտել եմ ռետինե գամերով նրա կոշիկները։ Նա երկու զույգ ունի, գրեթե ճիշտ միանման։ Այժմ մտադիր եմ գնալ և համեմատել պատուհանի գոգի ոտնահետքերի հետ։

— Գնանք առանց հապաղելու,— ասաց գնդապետ Մելրոուզը։— Դուք և մայո Պուարոն կուղեկցեք մեզ, այնպես չէ՞։

Համաձայնվեցինք, և գնդապետի մեքենայով գնացինք դեպքի վայրը։ Տեսուչը ուղում էր իսկույն սկսել ոտնահետքերից, և խնդրեց իջնել պահատան մոտ։ Դեպի տուն տանող ծառուղու մոտ մեջտեղից, դեպի աջ, մի արահետ էր ճյուղավորվում, որը տանում էր դեպի սանդղավանդն ու Աքրոյդի աշխատասենյակի լուսամուտը։

— Տեսուչի հե՞տ եք ուզում գնալ, մայո Պուարո,— հարցրեց ոստիկանապետը,— թե՝ ուղիղ աշխատասենյակ։

Պուարոն ընտրեց վերջինը։ Փարքըրը բացեց դուռը։ Նա ինքնադոհ ու հարգալից էր պահում իրեն, և թվում էր, թե նախորդ գիշերվա խուճապից ուշքի էր եկել։

Գնդապետ Մելրոուզը մի բանալի հանեց գրպանից և, բացելով նախասենյակի դուռը, առաջնորդեց մեզ աշխատասենյակ։

— Բացի մարմինը տեղափոխելուց, մայո Պուարո, սենյակը մնացել է այնպես, ինչպես անցած գիշեր։

— Իսկ մարմինը որտե՞ղ էր։

Հնարավորին չափ ճշգրտորեն նկարագրեց Աքրոյդի դիրքը։ Բազկաթոռը դեռ գտնվում էր կրակարանի մոտ։

Պուարոն գնաց ու նստեց բազկաթոռին։

— Կապույտ թղթի վրա գրված նամակը, որի մասին ասում եք, որտե՞ղ էր, երբ դուրս եկաք սենյակից։

— Միստր Աքրոյդը դրեց իր ձախ կողմի այս փոքրիկ սեղանին։

— Բացի դրանից, ամեն ինչ տեղո՞ւմ էր։

— Ինձ թվում է այո։

— Գնդապետ Մելրոուզ, մի րոպե չէի՞ք նստի այս բազկաթոռին։ Շնորհակալություն։ Այժմ, մսյո բժիշկ, բարի եղեք ցույց տալ ինձ դաշույնի ճշգրիտ դիրքը։

Նա կատարեցի նրա խնդրանքը։ Փոքրիկ մարդը կանգնեց դռան շեմքին։

— Ուրեմն դռնից պարզ երևում էր դաշույնի երախակալը։ Դուք և Փարքերն իսկո՞ւյն տեսաք։

— Այո՛։

Այնուհետև Պուարոն մոտեցավ լուսամուտին։

— Լույսը վառված էր, իհարկե, երբ հայտնաբերեցիք մարմինը,— հարցրեց նա ուսի վրայով։

Նա հատատեցի նրա ասածն ու մոտեցա նրան. նա զննում էր պատուհանի գոգի հետքերը։

— Ոեսինե գամերը նույն ձևն ունեն, ինչ-որ կապիտան Փեյթընի կոշիկների վրայիններըը,— անխռով ասաց նա։

Հետո մի անգամ ևս վերադարձավ սենյակի կենտրոն։ Նա արագ, զննական մի հայացք գցեց շուրջը, ստուգելով ամեն ինչ։

— Դուք լա՞վ դիտողունակություն ունեք, բժիշկ Շեփարդ,— հարցրեց նա վերջապես։

— Կարծում եմ, այո՛,— պատասխանեցի ես զարմացած։

— Ինչպես տեսնում եմ, բուխարում կրակ է վառվել։ Երբ դուռը կոտրեցիք ու Աքրոյդին մեռած գտաք, ինչպիսի՞ն էր կրակը, թո՞ւյլ էր, թե ուժեղ։

Ես սրտնեղած ծիծաղեցի։

— Ես... դժվարանում եմ ասել։ Չնկատեցի։ Թերևս պարոն Ռայմոնդը կամ մսյոր Բլանշը...

Դիմացս կանգնած փոքրիկ մարդը մեղմ ժպտալով օրորեց գլուխը։

— Մարդը միշտ էլ պետք է նորովի մեթոդներով գործի

ես սխալ թույլ տվեցի՝ որոշելով այդ հարցը տալ ձեզ։ Ամեն ոք իր գիտելիքն ունի։ Դուք կարող էիք ասել ինձ հիվանդի արտաքին մանրամասները, այստեղ ոչինչ չէր վրիպի ձեզնից։ Սթեն ուզենայի տեղեկություն ստանալ գրասեղանի վրայի թղթերի մասին, պարոն Ռայմոնդը նկատած կլիներ ամեն ինչ։ Նրակի մասին իմանալու համար, ես պետք է հարցնեմ մեկին, ում գործն է նկատել այդպիսի բաները։ Թույլ տվեք...

Նա արագ մոտեցավ բուխարուն և զանգը տվեց։

Քիչ անց հայտնվեց Փարքըրը։

— Կանչե՞լ եք, սըր,— հարցրեց նա։

— Ներս եկեք, Փարքըր,— ասաց գնդապետ Մելրոուզը։— Այս պարոնն ուզում է ինչ-որ բան հարցնել ձեզ։

Փարքըրը հարցական նայեց Պուարոյին։

— Փարքըր,— ասաց փոքրիկ մարդը,— անցած գիշեր, երբ բժիշկ Շեփարդի հետ կոտրեցիք դուռը և ձեր տիրոջը գտաք մեռած, ի՞նչ վիճակում էր կրակը։

Փարքըրն իսկույն պատասխանեց.

— Շատ թույլ էր վառվում։ Գրեթե հանգել էր։

— Ա՜,— բացականչեց Պուարոն, որ գրեթե հաղթական հնչեց։— Իսկ հիմա նայեցեք ձեր շուրջը, բարեկամս։ Ճիշտ նույն տե՞սքն ունի այս սենյակը, ինչպես այն ժամանակ։

Մատյապետը նայեց շուրջը։ Նրա հայացքը կանգ առավ լուսամուտների վրա։

— Վարագույրները քաշված էին, սըր, և էլեկտրական լույսը վառվում էր։

Պուարոն խրախուսանքով գլխով արեց։

— Ուրի՞շ։

— Այո՛, սըր, այս աթոռը փոքր-ինչ այս կողմ էր քաշված։

Նա մատնացույց արեց դռան ձախ կողմում և լուսամուտի միջև դրված մեծ բազկաթոռը։ Գրառումներիս կցել էի սենյակի պլանը, որտեղ խնդրո առարկա բազկաթոռը նշված էր X-ով։

— Ավելի լավ է ցույց տվեք ինձ,— ասաց Պուարոն։

Մատյապետը ամբողջ երկու ոտնաչափ վերահիշյալ բազկաթոռը ետ քաշեց պատից և նստատեղով շրջեց դեպի դուռը։

— Volia ce qui est curieux[1]!,— ասաց Պուարոն։— Ինձ թվում է, ոչ ոք չէր ուզենա նստել այդպիսի դիրքով դրված բազկաթոռին։ Ուստի, հետաքրքիր է, ո՞վ է կրկին իր տեղը հրել։ Դո՞ւք, բարեկամս։

— Ո՛չ, սըր։ Ես շատ էի հուզվել, տեսնելով տիրոջս ու այս ամենը։

Պուարոն նայեց ինձ։

— Դո՞ւք, բժիշկ։

Ես բացասաբար շարժեցի գլուխս։

— Այն նորից իր տեղում էր, սըր, երբ ոստիկանի հետ եկա,— ավելացրեց Փարքըրը։— Ես համոզված եմ դրանում։

— Զարմանալի է,— ասաց Պուարոն։

— Երևի Ռայմոնդը կամ Բլանթն են ետ հրել,— ասացի ես։— Թերևս դա այնքան էլ կարևոր չէ։

— Շատ կարևոր է,— ասաց Պուարոն։— Այդ իսկ պատճառով էլ՝ շատ հետաքրքիր,— ավելացրեց նա։

— Կներեք, մի րոպե,— ասաց գնդապետ Մելրոուզը և Փարքըրի հետ դուրս եկավ սենյակից։

— Կարծում եք Փարքըրը ճի՞շտ է խոսում,— հարցրի ես։

— Բազկաթոռի մասին, այո՛։ Այլ կերպ չգիտեմ։ Մյո բժիշկ, եթե այսպիսի գործերի շատ առնչված լինեիք, կըլոնեիք, որ բոլորն էլ մի բանում նման են իրար։

— Ինչո՞ւմ,— հետաքրքրվեցի ես։

— Դրանց առնչվող ամեն ոք ինչ-որ բան ունի թաքցնելու։

— Ես ունե՞մ,— ժպտալով հարցրի ես։

Պուարոն ուշադիր նայեց ինձ։

— Կարծում եմ, այո,— ասաց նա անխռով։

— Բայց...

— Դուք ձեզ հայտնի ամեն ինչ ասացի՞ք ինձ այդ երիտասարդ Փեյթընի մասին,— ժպտալով հարցրեց նա։ Ես կարմրեցի։— Ո, մի վախեցեք։ Ես չեմ նեղի ձեզ։ Կիմանամ ժամանակին։

— Ուզում եմ որևէ բան ասեք ձեր մեթոդների մասին,—

---

[1] Այ դա հետաքրքի՛ր է (Ֆր.)։

ասացի ես փութկոտությամբ, թաքցնելու համար շփոթմունքըս։— Օրինակ կրակի հարցի մասին։

— Օ, դա շատ պարզ բան է։ Դուք Աքրոյդի մոտից հեռացաք իննին տաս պակաս, այդպես չէ՞։

— Այո՛։

— Այն ժամանակ լուսամուտը փակ էր և սողնակը գցված, իսկ դուռը՝ բաց։ Տասն անց տասնհինգին, երբ մարմինը հայտնաբերվեց, դուռը փակ էր, իսկ լուսամուտը՝ բաց։ Ո՞վ բացեց լուսամուտը։ Հասկանալի է, որ միայն Աքրոյդը կարող էր բացել այն, երկուսից միայն մի դեպքում։ Կամ սենյակը անտանելի շոգ դառնալու պատճառով (բայց քանի որ կրակը գրեթե հանգել էր և անցած գիշեր ջերմաստիճանը հանկարծակի իջել էր, դա պատճառ լինել չէր կարող), կամ էլ ինչ-որ մեկը ներս էր մտել այդ ճանապարհով։ Եվ եթե ինչ-որ մեկը այդ ճանապարհով էր ներս մտել, ապա նրան լավ էր ճանաչել, քանի որ Աքրոյդը նախքան այդ անհանդստացել էր այդ նույն լուսամուտի կապակցությամբ։

— Դա շատ պարզ է թվում,— ասացի ես։

— Ամենի՛ն էլ պարզ է, եթե մեթոդիկորեն փաստերն ի մի ես բերում։ Այժմ մենք գործ ունենք մի անձնավորության հետ, ով նրա հետ է եղել անցած գիշեր։ Ամեն ինչ վկայում է, որ այդ անձը ներս է մտել լուսամուտից, և չնայած հետո միսս Ֆլորան Աքրոյդին տեսել է ողջ, չենք կարող այդ գաղտնիքի բացատրությունը տալ, մինչև որ իմանանք ով է եղել այդ այցելուն։ Լուսամուտը, հավանաբար, բաց է մնացել նրա հեռանալուց հետո։ Դրանով իսկ հնարավորություն է տրվել մարդասպանին ներս մտնելու, կամ նույն անձնավորությունը վերադարձել է երկրորդ անգամ։ Ահա՛ և գնդապետը, վերադառնում է։

Գնդապետ Մելրոուզը աշխույժ ներս մտավ։

— Վերջապես այդ հեռախոսազանգի հետքը գտնվեց,— ասաց նա։— Այն այստեղից չի եղել։ Անցյալ գիշեր ժամը 10.15-ին բժիշկ Շեփարդին զանգահարել են Քինգս Աբբոթի կայարանի ավտոմատից։ Իսկ գիշերային փոստատար գնացքը Լիվերպուլ է մեկնում 10.23։

Գլուխ 8

ՏԵՍՈՒՉ ՌԱԳԼԱՆԸ ԻՆՔՆԱՎՍՏԱՀ Է

Մենք նայեցինք իրար։

— Դուք, իհարկե, տեղեկություններ եք հավաքել կայսրանում,— ասացի ես։

— Բնականաբար, բայց ես այնքան էլ լավատես չեմ արդյունքի նկատմամբ։ Գիտեք, թե ինչի է նման այդ կայսրանը։

Այո, ես գիտեի։ Քինգս Աբբոթը սոսկ գյուղ էր, բայց նրա կայսրանը դիպվածի բերումով դարձել էր երկաթուղային կարևոր հանգույց։ Մեծ ճեպընթացների մեծամասնությունը կանգ էր առնում այստեղ, վագոնները տեղափոխվում էին պահեստային գիծ, վերադասավորվում և համալրվում։ Ուներ երկու թե երեք հեռախոսախցիկ։ Գիշերվա այդ ժամին, տեղական երեք գնացք իրար եռևից մոնում էին կայսրան, որոնց չվերթը համաձայնեցված էր հյուսիս մեկնող ճեպընթացին, որը ժամանում էր 10.19-ին և մեկնում 10.23-ին։ Ամբողջ կայսրանը եռուզեռի մեջ էր, և դրեթե անհնար էր նկատել զանգահարող կամ ճեպընթաց նստող մասնավոր մի անձի։

— Բայց, այնուամենայնիվ, ինչո՞ւ են զանգահարել,— հարցրեց Մելրոուզը։— Ահա թե ինչն է այդքան արտառոց։ Անբացատրելի է թվում այդ քայլը։

Պուարոն խնամքով ուղղեց գրապահարանների մեկի վրա դրված չինական զարդարանքը։

— Համաձայնեք, որ անիմաստ չէ,— ասաց նա ուսի վրայով։

— Բայց ի՞նչ իմաստ կարող է լինել։

— Երբ իմանանք դա, կիմանանք ամեն ինչ։ Այդ գործը շատ տարօրինակ ու հետաքրքիր է։

Նա վերջին բառերն արտասանեց ինչ-որ աննկարագրելի ձևով։ Ես զգացի, որ նա գործին նայում էր ինչ-որ անսովոր, իր սեփական տեսանկյունից, իսկ թե ինչ էր տեսնում, չգիտեի։

Նա մոտեցավ լուսամուտին և, կանգնելով այնտեղ, դուրս նայեց։

— Ասում եք ժամը ի՞նն էր, բժիշկ Շեփարդ, երբ հանդիպեցիք այդ անծանոթին,— հարցրեց նա առանց շրջվելու։

— Այո՛։ Լսեցի, թե ինչպես եկեղեցու զանգը խփեց ժամը ինը։

— Ինչքան ժամանակ էր պետք, որ նա հասներ տուն, այս լուսամուտին, օրինակ։

— Դրսից՝ հինգ րոպե։ Երկու կամ երեք րոպե, եթե նա ընտրել էր ծառուղու այդ արահետը և եկել ուղիղ այստեղ։

— Բայց դրա համար, նա պիտի իմանար ճանապարհը։ Դա կնշանակեր, թե նա, առաջ էլ էր այստեղ եղել, և ծանոթ էր շրջապատին։

— Ճիշտ է,— ասաց գնդապետ Մելրոուզը։

— Կարող ենք պարզել, իհարկե, եթե Աքրոյդն անցած շաբաթվա ընթացքում որևէ անծանոթ է ընդունել։

— Երիտասարդ Ռայմոնդը կարող էր ասել մեզ այդ մասին,— նկատեցի ես։

— Կամ էլ Փարքըրը,— ավելացրեց գնդապետը։

— Ou tous les deux[1]— ժպտալով վրա բերեց Պուարոն։

Գնդապետ Մելրոուզը գնաց փնտրելու Ռայմոնդին, իսկ ես նորից զանգը տվեցի՝ Փարքըրին կանչելու։

Գնդապետ Մելրոուզը գրեթե իսկույն վերադարձավ, ուղեկցությամբ երիտասարդ քարտուղարի, որին և ներկայացրեց Պուարոյին։ Ջեֆրի Ռայմոնդն ուրախ ու զվարթ էր, ինչպես միշտ։ Նա կարծես շշմել ու հիացել էր, որ ծանոթանում էր Պուարոյի հետ։

— Չէի պատկերացնում, որ գաղտնի ապրում եք մեր շրջանում, մսյո Պուարո,— ասաց նա։— Բացառիկ բավականություն կլիներ տեսնել ձեզ աշխատելիս... Ի՞նչ է պատահել։

Պուարոն կանգնել էր դուռն հենց ձախ կողմում։ Նա անսպասելիորեն մի կողմ քաշվեց. հավանաբար մինչ թիկունքս կդարձնեի, նա արագ քաշել էր բազկաթոռն այնտեղ, ուր Փարքըրն էր ցույց տվել։

— Ուզում եք, որ նստեմ բազկաթոռին մինչև արյան անալի՞զ վերցնեք,— հարցրեց Ռայմոնդը բարեհաճորեն։— Ինչո՞ւ

---

1 Կամ էլ երկուսով (Ֆր.)։

— Միստր Ռայմոնդ, այս բազկաթոռը տեղից շարժել են անցած գիշեր, երբ Աքրոյդին գտել են սպանված։ Ինչ-որ մեկը նորից հրել է իր տեղը։ Դո՞ւք եք հրել։

Քարտուղարը առանց տատանվելու իսկույն պատասխանեց.

— Ո՛չ, իրոք ես ձեռք չեմ տվել։ Նույնիսկ չեմ հիշում, որ դա այդ դիրքով է եղել, բայց հավանաբար այդպես է, եթե ասում եք։ Համենայն դեպս, ինչ-որ մեկը հրել է իր իսկական տեղը։ Այդպես վարվելով վերացրե՞լ են հանցանշանները։ Շատ վատ է։

— Դա կարևոր չէ,— ասաց խուզարկուն։— Ամենևին էլ կարևոր չէ։ Այն, ինչ իրոք ուզում եմ հարցնել ձեզ, միստր Ռայմոնդ, հետևյալն է. այս շաբաթվա ընթացքում որևէ անծանոթ եկե՞լ է Աքրոյդին տեսության։

Քարտուղարը մի պահ մտածեց, խոժոռելով հոնքերը։ Այդ ընթացքում հայտնվեց Փարքըրը։

— Ո՛չ,— պատասխանեց Ռայմոնդը վերջապես։— Ոչ ոքի չեմ կարող հիշել։ Կարո՞ղ եք, Փարքըր։

— Ներողություն, սըր, ինչի՞ մասին է խոսքը։

— Այս շաբաթվա ընթացքում որևէ անծանոթ եկե՞լ է Աքրոյդին տեսության։

Ծառայապետը մի պահ մտածեց։

— Չորեքշաբթի մի երիտասարդ եկավ, սըր,— ասաց նա վերջապես։— կարծեմ «Քուրթիս ու Թրոութից» էր։

Ռայմոնդն անհամբերությամբ փորձեց ուղղել իր սխալը։

— Օ՛, այո՛, հիշեցի, բայց դա այն անծանոթը չէ, որին նկատի ունի այս ջենտլմենը։

Նա դիմեց Պուարոյին.

— Միստր Աքրոյդը միտք ուներ մի դիկտոֆոն ձեռք բերել։ Դա հնարավորություն կտար մեզ սեղմ ժամկետում շատ ավելի աշխատանք կատարելու։ Ֆիրման իր ներկայացուցիչն ուղարկեց, բայց ոչինչ չստացվեց։ Պարոն Աքրոյդը չորոշեց գնել։

Պուարոն դիմեց ծառայապետին.

— Կարո՞ղ եք նկարագրել այդ երիտասարդին, իմ բարի Փարքըր։

— Շիկահեր էր, սըր, կարճահասակ, կապույտ սերժե շատ կոկիկ կոստյումով։ Շատ ներկայանալի մի երիտասարդ։

Պուարոն դիմեց ինձ.

— Դարպասի մոտ ձեզ հանդիպած մարդը բարձրահասակ էր, այնպես չէ՞, բժիշկ։

— Այո՛։ Մոտավորապես վեց ոտք հասակ ուներ։

— Ուրեմն նա չէ,— հայտարարեց բելգիացին։— Շնորհակալություն, Փարքըր։

— Պարոն Համոնդը հենց նոր ժամանեց, սըր,— ասաց ծառայապետը Ռայմոնդին։— Նա շատ է ուզում իմանալ, թե ինչով կարող է օգտակար լինել և հաճույքով մի երկու խոսք կփոխանակի ձեզ հետ։

— Չալիս եմ,— պատասխանեց երիտասարդը և արագ դուրս եկավ։ Պուարոն հարցականորեն նայեց ոստիկանապետին։

— Ընտանիքի փաստաբանն է, մսյո Պուարո,— ասաց վերջինը։

— Աշխատանքի ժամ է այդ երիտասարդ Ռայմոնդի համար,— մրմնջաց Պուարոն։— Իր գործը երևի լավ գիտե այդ տղան։

— Որքան գիտեմ, Աքրոյդը շատ ընդունակ քարտուղար էր համարում նրան։

— Ինչքա՞ն ժամանակ է նա այստեղ։

— Կարծեմ երկու տարի։

— Իր պարտականությունները կատարում է ամենայն ճշտությամբ։ Դրանում ես համոզված եմ։ Իսկ ազատ ժամանակն ինչպե՞ս է անցկացնում։ Սպորտով հետաքրքրվո՞ւմ է։

— Անձնական քարտուղարներն առանձնապես ժամանակ չունեն նման բաներով զբաղվելու,— ժպտալով ասաց գնդապետ Մելրոուզը։— Կարծեմ Ռայմոնդը խաղում է գոլֆ և թենիս։

— Նա չի՞ հաճախում, ասենք, ձիավարության կուրսեր։

— Ձիարշավների՞։ Ո՛չ, չեմ կարծում, որ նա հետաքրքրվում է ձիարշավով։

Պուարոն գլխով արեց և կարծես հետաքրքրությունը կորց-

բեց դրա նկատմամբ։ Նա դանդաղ նայեց աշխատասենյակի շուրջը։

— Ինձ թվում է տեսա այն ամենն, ինչ կարելի էր տեսնել այստեղ։

Ես նույնպես նայեցի շուրջս։

— Եթե այդ պատերը խոսել իմանային,— շշնջաց ես Պուարոն օրորեց գլուխը։

— Միայն լեզուն բավական չէ,— ասաց նա։— Դրանք աչքեր ու ականջներ էլ պիտի ունենային։ Բայց այնքան էլ մի կարծեք, որ այս անշունչ առարկաները,— նա բոնեց գրապահարանի վերևի մասը,— մեզ համր են։ Ինձ հետ երբեմն խոսում են դրանք՝ բազկաթոռները, սեղանները, դրանք իրենց տեղեկություններն ունեն։

Նա շրջվեց դեպի դուռը։

— Ի՞նչ տեղեկություն,— հարցրի ես։— Ի՞նչ են ասել ձեզ այսօր։

Նա նայեց ուսի վրայով և ծաղրականորեն բարձրացրեց մի հոնքը։

— Բաց պատուհանի և փակ դռան մասին, մի բազկաթոռի մասին, որն ակնհայտորեն ինքն իրեն տեղից շարժվել էր։ Օրեքին էլ հարցնում եմ՝ «ինչո՞ւ» և պատասխան չեմ գտնում։

Նա օրորեց գլուխը, փքեց կուրծքն ու աչքերը թարթելով՝ նայեց մեզ։ Նա ծիծաղելիորեն ինքնագոհ տեսք ուներ։ Գլխովս մի միտք անցավ. արդյո՞ք նա ունէ արժեք էր ներկայացնում որպես խուզարկու։ Մի շարք երջանիկ պատահականությունների վրա չէ՞ր հիմնված արդյոք նրա մեծ համբավը։

Ինձ թվում է, նույն միտքն անցավ գնդապետ Մելրոուզի գլխով, քանզի մոայլվեց։

— Էլ ի՞նչ եք ուզում տեսնել, մսյո Պուարո,— հարցրեց նա։

— Թերևս հաճեք ցույց տալ ինձ այն սեղանը, որտեղից վերցրել են դաշույնը։ Դրանից հետո այլևս չեմ չարաշահի ձեր բարյացակամությունը։

Գնացինք հյուրասենյակ, բայց ճանապարհին ոստիկանը մի պահ ետ պահեց գնդապետին և ցածրաձայն նրան ինչ-որ բան ասելուց հետո վերջինս ներողություն խնդրեց ու հեռացավ։

Ես Պուարոյին ցույց տվեցի սեղանը. մի երկու անգամ կափարիչը բարձրացնելուց ու թողնելուց հետո, նա հրելով բացեց լուսամուտը և դուրս եկավ սանդղավանդ։ Ես հետևեցի նրան։

Տեսուչ Ռագլանը նոր էր շրջանցել տան անկյունը և գալիս էր մեր կողմը։ Նա մոայլ ու զոհ էր երևում։

— Ահա թե որտեղ եք դուք, մսյո Պուարո,— ասաց նա։— Դե, սա էլ գրեթե ապացույց չէ։ Ես ևս շատ եմ ցավում։ Բավական հաճելի մի երիտասարդ շեղվել է ճանապարհից։

Պուարոյի դեմքը երկարեց, և նա խոսեց շատ մեղմ.

— Այդ դեպքում, ինձ թվում է, առանձնապես օգտակար չեմ կարող լինել ձեզ։

— Թերևս մի ուրիշ անգամ,— ասաց տեսուչը սփոփանքով։— Թեև ամեն օր սպանություններ չեն լինում աշխարհի այս փոքրիկ, խաղաղ անկյունում։

Պուարոյի սևեռուն հայացքը հրաշալի մի առանձնահատկություն ստացավ։

— Դուք մեծ ճարպկություն դրսևորեցիք,— նկատեց նա։— Հատկապես ինչպե՞ս եք աշխատելու, թույլ տվեք հարցնել։

— Խնդրեմ,— ասաց տեսուչը։ Սկսել... մեթոդով։ Ես միշտ էլ ասել եմ՝ մեթոդ։

— Ա՛,— գոչեց բելգիացին։— Իմ նշանաբանն է դա։ Մեթոդ, կարգ ու կանոն և փոքրիկ բջիջներ։

— Բջիջնե՞ր,— ասաց տեսուչը ապշահար։

— Ուղեղի փոքրիկ, գորշ բջիջները,— բացատրեց բելգիացին։

— Օ, խ՛հարկե։ Մենք բոլորս էլ օգտվում ենք դրանից։

— Ավելի կամ պակաս չափով,— մրմնջաց Պուարոն։— Եվ որակով էլ տարբեր։ Հետևապես գոյություն ունի հանցագործության նաև հոգեբանական կողմը։ Պետք է ուսումնասիրել դա։

— Ա՛, դուք տարվել եք հոգեվերլուծական ամեն տեսակի անմիտ գաղափարներով։ Իսկ ես հասարակ մարդ եմ։

— Համոզված եմ, որ տիկին Ռագլանը չէր համաձայնի դրան,— ասաց Պուարոն թեթևակի գլուխ տալով։

Տեսուչ Ռագլանը, փոքր-ինչ հանկարծակիի գալով, գլուխ տվեց։

— Չեք հասկանում,— ասաց նա՝ քմծիծաղ տալով։— Տե՛ր աստված, ինչպիսի՛ տարբերություններ է ստեղծում լեզուն։ Ես ձեզ ասում եմ, թե ինչպես եմ սկսել գործել։ Ամենից կարևորը մեթոդն է։ Պարոն Աքրոյդին վերջինը ողջ է տեսել նրա զարմուհի Ֆլորա Աքրոյդը, տասին տասնհինգ պակաս։ Դա համար առաջին փաստն է, այնպես չէ՞։

— Եթե ասում եք։

— Դե, այդպես է։ Տասն անց կեսին, ինչպես բժիշկն է վկայում, Աքրոյդն առնվազն կես ժամ մեռած է եղել։ Դուք հաստատո՞ւմ եք դա, բժիշկ։

— Անշուշտ,— պատասխանեցի ես։— Կես ժամ կամ ավելի։

—Շատ լավ։ Դա մեզ տալիս է ուղիղ քառորդ ժամ, որի ընթացքում հանցագործությունը պետք է, որ կատարված լիներ։ Ես կազմել եմ տանը գտնվող բոլոր անձանց ցուցակը և աշխատում եմ դրանով, անուններին դիմաց նշելով, թե 9.45-ից մինչ 10-ը որտեղ են եղել և ինչով են զբաղվել։

Նա թղթի մի թերթ մեկնեց Պուարոյին։ Ես այն կարդացի նրա ուսի վրայով։ Այնտեղ հատակ ձեռագրով գրված էր հետևյալը.

Մայոր Բլանթ. բիլիարդի սենյակում, պ–ր Ռայմոնդի հետ (վերջինը հաստատում է այդ)։
Միստր Ռայմոնդ. բիլիարդի սենյակ (տես վերևում)։
Միսիս Աբրոյդ. 9.45–ին դիտել է բիլիարդի մրցումը։ Վերև է բարձրացել fենելու 9.55–ին (Ռայմոնդն ու Բլանթը տեսել են նրան սանդուղքով վեր բարձրանալիս)։
Միսս Աբրոյդ. միստր Աբրոյդի սենյակից ուղիղ վերև է բարձրացել (հաստատված է Փարֆըրի, ինչպես և սպասուհի Էլսի Դեյլի կողմից)։
Սպասավորներ՝
Փարֆըր. ուղիղ գնացել է ծառայասենի սենյակ (հաստատված է տնտեսուհի միսիս Ռասելի կողմից, որ 9.47–ին ներքև էր իջել ինչ–որ բան ասելու նրան և մնացել շուրջ 10 րոպե)։
Միսս Ռասել. ինչպես վերևում։ Խոսել է սպասուհի Էլսի Դեյլի հետ, վերևի սենյակում, 9.45–ին։

Ուրսուլա Բորճ (աղախին). իր սենյակում է եղել մինչև 9.55-ը, հետո՝ ապասավորճերի սենյակում:

Միսիս Կուպեր (խոհարարուհի). եղել է ապասավորճերի սենյակում:

Գենդիս Ջոնս (երկրորդ ապասուհի). եղել է ապասավորճերի սենյակում:

Էլսի Դեյլ. եղել է վերևում, ննջասենյակում: Նրան տեսել են այնտեղ միսս Թասելն ու Ֆլորա Ակրոյդը:

Մերի Թրիփ (ամաճ լվացող կին). եղել է ապասավորճերի սենյակում:

— Խոհարարն այստեղ է յոթ տարի, խոհարարուհին՝ տասնութ ամիս, Փարքըրը՝ մի տարուց ավելի: Մյուսները նոր են: Բացի Փարքըրին վերաբերող ինչ-որ կասկածանքից, բոլորն էլ միանգամայն վստահելի են:

— Կատարյալ ցուցակ,— ասաց Պուարոն, վերադարձնելով այն տիրոջը:— Ես լիովին համոզված եմ, որ Փարքըրը չի կատարել սպանությունը,— ավելացրեց նա լուրջ տեսքով:

— Նույն կարծիքին է և քույրս,— միջամտեցի ես:— Բացի այդ, նա սովորաբար իրավացի է լինում:

Ոչ ոք ուշադրություն չդարձրեց իմ ընդմիջարկությանը:

— Դա բավական ազատում է ընտանիքի անդամներին կասկածանքից,— շարունակեց տեսուչը:— Այժմ հասել ենք մի շատ կարևոր կետի: Անցած գիշեր, սպասուհի Մերի Բլաքը վարպուհրները քաշելիս տեսել էր, թե ինչպես Ռալֆ Փեյթընը ներս էր մտել դարպասից և գնացել դեպի տան կողմը:

— Նա համոզվա՞ծ է դրանում,— հարցրի ես:

— Միանգամայն: Մերին արտաքինով լավ է ճանաչում նրան: Նա շատ արագ է անցել այն կողմ և արահետով շրջվել դեպի աջ, որ սանդղավանդ տանող ամենակարճ ճանապարհն է:

— Եվ դա ժամը քանիսի՞ն էր,— հարցրեց Պուարոն, որ նստել էր անխոով արտահայտությունը դեմքին:

— Ուղիղ իննն անց քսանհինգ րոպեին,— լուրջ պատասխանեց տեսուչը: Մի պահ լռություն տիրեց: Հետո տեսուչը շարունակեց.

— Սրանն ինչ պարզ է: Եվ ամեն ինչ անսխալ համընկնում է:

Ինն անց քսանհինգ րոպեին կապիտան Փեյթընին տեսել են պահատնակով անցնելիս։ Մոտավորապես ինն անց կեսին պարոն Ջեոֆրի Ռայմոնդը լսել է, թե ինչպես այստեղ ինչ-որ մեկը փող է խնդրել, իսկ Աքրոյդը՝ մերժել։ Ի՞նչ է տեղի ունեցել հետո։ Կապիտան Փեյթընը հեռացել է նույն ճանապարհով՝ լուսամուտով։ Գնացել է սանդղավանդի երկայնքով՝ զայրացած ու մլորված։ Մոտեցել է հյուրասենյակի բաց պատուհանին, դա եղել է տասին տասնհինգ պակաս։ Այդ պահին Ֆլորա Աքրոյդը բարի գիշեր է մաղթել միստր Աքրոյդին։ Մայոր Բլանթը, Ռայմոնդը և միսիս Աքրոյդը եղել են բիլիարդի սենյակում, հյուրասենյակում մարդ չի եղել։ Փեյթընը նեղս է թափանցել, սեղանից վերցրել է դաշույնը և վերադարձել է աշխատասենյակի լուսամուտի մոտ։ Հանել է կոշիկները, նեղս մտել և... ես չեմ ուզում մանրամասների մեջ մտնել։ Այնուհետև դուրս է սահել և ծլկել։ Ապիկարը չի վերադարձել պանդոկ, այլ գնացել է կայարան և զանգահարել այնտեղից...

— Ինչո՞ւ,— հարցրեց Պուարոն։

Ես ինքնաբերաբար վեր ցատկեցի։ Փոքր մարդը կռացավ առաջ։ Նրա աչքերում տարօրինակ կանաչավուն փայլ երևաց։

Մի պահ այդ անսպասելի հարցը շփոթմունք պատճառեց նաև Ռազլանին։

— Դժվար է ասույգ ասել, թե ինչու զանգահարեց,— ասաց նա վերջապես։— Սակայն մարդասպանները տարօրինակ բաներ են անում։ Դա կիմանայիք, եթե ծառայեիք ոստիկանությունում։ Նրանցից ամենախելացիներն անգամ երբեմն թույլ են տալիս անհեթեթ սխալներ։ Բայց գնանք և ես ցույց կտամ ոտնահետքերը։

Մենք հետևեցինք նրան մինչև աշխատասենյակի լուսամուտ տանող սանդղավանդի անկյուն։ Ռազլանի սպահանջով մի ոստիկան հանեց կոշիկները, որ գտել էին տեղական պանդոկում։

Տեսուչը դրանք դրեց հետքերի վրա։

— Նույնն են,— ասաց նա վստահ։— Այսինքն, սա նույն զույգը չէ, որ իրականում հետքեր է թողել։ Նա հեռացել է մյուս զույգը հագած։ Այս զույգը նման է մյուսին, բայց ավելի հին է։ Տեսեք, թե որքան մաշված են ներբանները։

— Հիրավի՞ շատ մարդիկ են կրում ոտինե գամերով կոշիկներ,— հարցրեց Պուարոն։

— Իհարկե,— ասաց տեսուչը։— Ես այդքան նշանակություն չէի տա ոտնահետքերին, եթե դա այդպես չլիներ։

— Շատ հիմար ուղա է այդ Ռալֆ Փեյթընը,— մտախոհ ասաց Պուարոն։— Այդքան շատ հանցանշաններ թողնել, անհասկանալի է։

— Դե՛, հասկանում եք, չոր եղանակ էր, գեղեցիկ գիշեր,— ասաց տեսուչը։— Նա ոչ մի հետք չի թողել սանդղավանդին կամ խճապատ արահետին։ Բայց, ի դժբախտություն իրեն, մի ուվակ է հոսել մերձակա ծառուղուց բաժանվող արահետի վերջում։ Տեսեք։ Մի քանի քայլ այն կողմ փոքրիկ մի խճապատ արահետ միանում է սանդղավանդին։ Մի տեղում, արահետի վերջից մի քանի յարդ այս կողմ, գետինը խոնավ էր ու ճահճոտ։ Այդ խոնավ մասում նորից ոտնահետքեր էին երևում, որոնց մեջ՝ և ոտինե գամերով կոշիկների հետքեր։

Պուարոն տեսուչի հետ փոքր-ինչ առաջացավ արահետով։

— Կանանց ոտնահետքեր նկատեցի՞ր,— անսպասելիորեն հարցրեց նա։

Տեսուչը ծիծաղեց։

— Բնականաբար։ Բայց բազմաթիվ տարբեր կանայք են անցել այստեղով, տղամարդիկ՝ նույնպես։ Սա տան ամենակարճ ճանապարհն է։ Անհնարին է ջոկել բոլոր ոտնահետքերը։ Վերջիվերջո, կարևորը լուսամուտի գոգին եղած հետքերն են։

Պուարոն գլխով արեց։

— Կարիք չկա ավելի հեռու գնալ,— ասաց տեսուչը, երբ երևաց մերձակա ծառուղին։— Այստեղ էլ է խճապատ։

Պուարոն կրկին գլխով համաձայնության նշան արեց, թեև հայացքը հառել էր պարտեզի փոքր մի տնակի, որ հրաշալի ամառանոց էր հիշեցնում։ Տնակը գտնվում էր մեր աջակի արահետից փոքր-ինչ ձախ։ Խճապատ նեղ ճանապարհը տանում էր դեպի այն։

Պուարոն ոտը կախ գցեց, մինչև որ տեսուչը գնաց տան ուղղությամբ։ Հետո նայեց ինձ և, աչքերը թարթելով, ասաց.

—Երևի բարեգութ աստված ձեզ ուղարկել է փոխարինելու իմ բացեկաս Հաստինգսին։ Ինչպես տեսնում եմ, կողքից

չեք հեռանում։ Ի՞նչ կարծիքի եք, բժիշկ, չհետազոտե՞նք այդ ամառանոցը։ Դա հետաքրքրեց ինձ։

Նա մոտեցավ դռանը և բացեց այն։ Ներսում գրեթե մութ էր։ Այնտեղ կային մի երկու գեղջկական նստարան, կրոկետի պարագաներ, և մի քանի ծալովի շեզլոնգ։

Նա ապշել էի, դիտելով նոր բարեկամիս։ Նա ծնկի էր եկել և սողում էր հատակով մեկ։ Մերթ ընդ մերթ օրորում էր գլուխը, ասես դժգոհում էր ինչ-որ բանից։ Վերջապես ուղղվեց և ցածրաձայն ասաց.

— Ոչ մի բան։— Դե, թերևս դա պետք չէր ակնկալել։ Բայց դա շատ բան կնշանակեր...

Անսպասելիորեն ընդհատելով խոսքս, նա ամբողջովին քարացավ տեղում։ Հետո ձեռքը մեկնեց գեղջկական աթոռներից մեկին և ինչ-որ բան պոկեց կողից։

— Դա ի՞նչ է,— հարցրի ես։— Ի՞նչ եք գտել։

Նա ժպտաց, բացեց ձեռքն այնպես, որ կարողանայի տեսնել ափում եղած իրը։ Դա խիստ ճերմակ բաստիսի մի կտոր էր։

Ես վերցրի այն, ուշադիր զննեցի և վերադարձրի։

— Հը՛, ի՞նչ կարծիքի եք, բարեկամս,— հարցրեց նա, խորաթափանց հայացքը հառելով վրաս։

— Թաշկինակի պատռված մի կտոր,— պատասխանեցի ես, թոթվելով ուսերս։

Նա ևս մի արագ շարժումով հատակից բարձրացրեց փոքրիկ մի փետուր, տեսքից դատելով, սագի փետուր։

— Եվ ի՞նչ,— զոչեց նա հաղթականորեն։— Հիմա ի՞նչ կասեք։

Ես ապշած նայում էի միայն։

Նա փետուրը դրեց գրպանը և նորից նայեց սպիտակ կտորին։

— Թաշկինակի պատառի՞կ,— ասաց նա մտախոհ։— Թերևս իրավացի եք։ Սակայն հիշեցեք. լավ լվացքատունը թաշկինակը չի օսլայում։

Նա հաղթականորեն գլխով արեց ինձ և թաշկինակի կտորը խնամքով դրեց իր ծոցատետրի մեջ։

Գլուխ 9

ՈՍԿԵ ՋԿՆԻԿՆԵՐԻ ԼՃԱԿԸ

Տուն վերադարձանք միասին։ Տեսուչը չէր երևում։ Սանդղավանդի մոտ Պուարոն մի պահ կանգնեց՝ թեկունքը դարձրած դեպի տունը, դանդաղ գլուխը շրջելով այս ու այն կողմ։

— Une belle propriété![1]— *ասաց նա վերջապես, պատշաճ ձևով գնահատելով այն։— Ո՞վ է ժառանգելու։*

Նրա բառերը զրնգեն շփոթեցրին ինձ։ Տարօրինակ է, մինչ այդ ժառանգության խնդիրը երբեք մտքովս չէր անցել։ Պուարոն խորաթափանց հայացքը հառել էր ինձ։

— *Նոր միտք է ձեզ համար, անշուշտ,— ասաց նա վերջապես։— Առաջ այդ մասին չեք մտածել, չէ՞։*

— *Ոչ, անկեղծորեն պատասխանեցի ես։— Ափսոս, որ մտքովս չի անցել։*

Նա կրկին հետաքրքրությամբ նայեց ինձ։

— *Հետաքրքիր է դրանով ի՞նչ եք ուզում ասել,— մտախոհ ասաց նա։— Ա՛հ, ո՛չ, անօգուտ է,— ավելացրեց նա, երբ պատրաստվում էի խոսել։— Միևնույն է, դուք չէիք հայտնի ինձ ձեր իսկական միտքը։*

— *Ամեն ոք ինչ-որ թաքցնելու բան ունի,— ժպտալով ասացի ես։*

— *Միանգամայն ճիշտ է։*

— *Դուք դեռ հավատո՞ւմ եք դրան։*

— *Ավելի, քան երբևէ, բարեկամս։ Բայց հեշտ չէ որևէ բան թաքցնել Հերքյուլ Պուարոյից։ Նա հայտնաբերելու ձիրք ունի։*

Նա իջնում էր հոլանդական պարտեզի աստիճաններով։

— *Եկեք մի քիչ զբոսանենք,— ասաց նա ուսի վրայով։— Հաճելի եղանակ է այսօր։*

Ես հետևեցի նրան։ Նա առաջնորդեց ինձ դեպի ձախ տանող մի արահետով, որ շրջապատված էր կարմրածառի դարբ ցանկապատով։ Մի կածան առնում էր ներքև՝ միջնամաս, որի երկու կողմերը եզրապատված էին կանոնավոր ծաղկաթմբերով, վերջում գտնվում էր մի կլորավուն սալարկ-

---

1 *Հրաշալի՛ դաստակերտ է (Ֆր.)։*

ված խաղաղ անկյուն, որտեղ կար նստարան և ոսկե ձկնիկների լճակ։ Արահետով մինչև վերջ գնալու փոխարեն Ռուարոն գնաց մի այլ ճանապարհով, որ վերջանում էր ծառաշատ մի գառիթափի մոտ։ Մի տեղ ծառերից մաքրված էր և նստարան էր դրված։ Նստելով այնտեղ, կարելի էր տեսնել գյուղական հրաշալի մի բնապատկեր, իսկ ուղիղ ներքևում երևում էին սալարկված խաղաղ անկյունն ու ոսկե ձկնիկների լճակը։

— Անգլիան շատ գեղեցիկ է,— ասաց Ռուարոն, նայելով համայնապատկերին։ Հետո ժպտաց և ցածրաձայն ավելացրեց.

— Այդպիսին են և անգլիացի աղջիկները։ Լռություն, բարեկամս, նայեցեք ներքև, այն գրավիչ պատկերին։

Այդ ժամանակ նոր նկատեցի Ֆլորային։ Նա գնում էր այն արահետով, որով հենց նոր էինք անցել, քթի տակ մմռալով երգի մի հատված։ Նա ավելի շատ պարային շարժումներ էր անում, քան քայլում էր։ Եվ, չնայած սև հագուստին, որը խությունից բացի ոչինչ չկար նրա ամբողջ կեցվածքում։ Անապատելիորեն մի պիրուետ արեց, և զգեստի սև ծայրագարդերը լայն բացվեցին։ Միաժամանակ նա գլուխն արագետ գցեց ու լուրթոք ծիծաղեց։

Այդ պահին մի մարդ դուրս եկավ ծառերի միջից։ Հեկտոր Բլանթն էր։

Աղջիկը ցնցվեց։

— Ինչպես վախեցրիք ինձ... Ձեզ չտեսա...

Բլանթը ոչինչ չասաց, մի պահ լուռ կանգնած նայեց նրան։

— Ինձ դուր է գալիս ուրախ զրույցներ վարելու ձեր հատկությունը,— ասաց Ֆլորան փոքր-ինչ ոխակալությամբ։

Կարծում եմ Բլանթը, չնայած իր արևահար դեմքին, շիկնեց։ Եվ երբ խոսեց, ձայնը բոլորովին այլ կերպ հնչեց. զարմանալի խոնարհություն զգացվեց դրանում։

— Զրուցախրությամբ երբեք աչքի չեմ ընկել, նույնիսկ երիտասարդ տարիքում։

— Ինձ թվում է, դա շատ վաղուց է եղել,— լրջորեն ասաց Ֆլորան։

Ես անորսալի ծաղր զգացի նրա ձայնում, իսկ Բլանթը՝ չեմ կարծում։

— Այո,— ասաց նա,— շատ վաղուց։

— Ինչպես է զգացվում, որ Մաթուսաղայի տարիքին է,— ասաց Ջլորան։

Այս անգամ հեգնանքն ավելի ակնհայտ էր, բայց Բլանթը համառորեն շարունակում էր իր միտքը։

— Հիշո՞ւմ եք այն կնամոլին, որ հոգին ծախեց սատանային և փոխարենը նորից երիտասարդ դարձավ։ Այդ մասին օպերա էլ կա։

— «Ֆաու՞ստը» նկատի ունեք։

— Այո՛։ Հրաշալի պատմություն է։ Մեզանից ոմանք էլ այդպես կվարվեին, եթե իհարկե, ի վիճակի լինեին։

— Կարելի է կարծել, որ ինքներդ նույն բանը չէիք ուզենա անել,— կես զայրույթով, կես հրճվանքով գոչեց Ջլորան։

Բլանթը մի պահ ոչինչ չասաց։ Հետո, հայացքը կտրելով Ջլորայից, տարտամորեն նայեց մերձակա մի ծառի բնի, ասես զգում էր, որ ժամանակն էր վերադառնալու Աֆրիկա։

— Մտադի՞ր եք նոր արշավանքի գնալու... ուզում եմ ասել՝ կենդանիներ որսալու։

— Հավանաբար։ Դա իմ զբաղմունքն է։

Դո՞ւք եք սպանել այն կենդանուն, որի գլուխը կախված է նախասենյակում։

Բլանթը դրակամորեն շարժեց գլուխը և կարմրելով ասաց.

— Ձեզ երբևէ իսկական մորթիներ դուր եկե՞լ են։ Եթե ուզում եք, կարող եմ ճարել ձեզ համար։

— Օ՛, խնդրում եմ, եթե հնարավոր է,— գոչեց Ջլորան։— Իսկապե՞ս, կճարե՞ք։ Չե՞ք մոռանա։

— Չեմ մոռանա,— ասաց Հեկտոր Բլանթը։

Այնուհետև, զրուցասիրության անսպասելի մի դրսևորումով, ավելացրեց.

— Գնալու ժամանակն է։ Ես պիտանի չեմ այսպիսի կյանքի։ Համապատասխան վարվելակերպ չունեմ։ Կոպիտ եմ, հասարակությանը ոչ պիտանի։ Երբեք չեմ հիշում այն բաները, որ պիտի ասեմ։ Այո՛, ժամանակն է, որ գնամ։

— Բայց դուք մտադիր չեք չե՞ք, իսկույն մեկնելու,— ասաց Ջլորան։— Ո՛չ, ո՛չ, քանի դեռ այս հոգսերի մեջ ենք։ Օ՛, խնդրում եմ։ Եթե գնաք...

Ջլորան փոքր-ինչ շրջվեց։

— Ուզո՞ւմ եք, որ մնամ,— հարցրեց Բլանթը։

Նա խոսում էր հանգիստ ու միանգամայն պարզ։

— Բոլորս էլ...

— Ես նկատի ունեի անձամբ ձեզ,— անկեղծորեն ասաց Բլանթը։

Ֆլորան նորից դանդաղ ետ շրջվեց, և նրանց հայացքները հանդիպեցին։

— Ուզում եմ, որ մնաք,— ասաց Ֆլորան,— եթե... եթե կարևոր է։

— Շատ կարևոր է,— ասաց Բլանթը։

Մի պահ լռություն տիրեց։ Նրանք նստեցին ոսկե ձկնիկների լճակի մոտ դրված քարե նստարանին։ Թվում էր, թե նրանցից ոչ մեկը չգիտեր էլ ինչ ասի։

— Ինչ... ինչ հրաշալի առավոտ է,— ասաց Ֆլորան վերջապես։— Ես չեմ կարող երջանիկ չզգալ ինձ, չնայած... չնայած այս ամենի։ Սարսափելի է, այնպես չէ՞։

— Միանգամայն բնական է,— ասաց Բլանթը։— Երկու տարի առաջ եք միայն տեսել ձեր հորեղբորը, ճիշտ չէ՞։ Այնպես, որ շատ վշտանալու հարկ չկա։ Ավելի լավ է կեղծավորություն չանել։

— Ինչ-որ սարսափելի սփոփիչ բան կա ձեր մեջ,— ասաց Ֆլորան։— Ամեն ինչ այնքան եք հասարակացնում։

— Որպես կանոն, ամեն ինչ էլ հասարակ է,— ասաց խոշոր կենդանիների որսորդը։

— Ոչ միշտ,— ասաց Ֆլորան։

Ֆլորայի ձայնը ինքնաբերաբար ցածրացավ, և նկատեցի, թե ինչպես Բլանթը շրջվեց ու նայեց նրան, այնպես, ասես մինչ այդ նա տեսնում էր Աֆրիկայի ափերը։ Հավանաբար Ֆլորայի ձայնի փոփոխությունը ստիպեց նրան ամբողջ մարմնով կռանալ դեպի նա, քանի-որ, մի պահ անց, բավական կցկտուր ասաց.

— Գիտեք, ըստ իս, դուք չպետք է անհանգստանաք։ Ես այդ երիտասարդին նկատի ունեմ։ Տեսուչը ավանակի մեկն է։ Բոլորն էլ գիտեն, որ կատարյալ անմտություն է մտածել, թե նա է սպանել։ Օտարի գործ է։ Դող է եղել։ Դա է միակ հավանական բացատրությունը։

Ֆլորան շրջվեց դեպի Բլանթը։

— Իրո՞ք այդպես եք կարծում։

— Իսկ դո՞ւք,— վրա բերեց Բլանթը։

— Ես... Օ, այո՛, իհարկե։

Նորից լուռթյուն, իսկ հետո Ֆլորան բացականչեց.

— Ես կասեմ ձեզ, թե ինչու եմ այսքան երջանիկ այսօր։ Որքան էլ որ անսիրտ համարեք ինձ, ավելի լավ է ասեմ։ Այն պատճառով, որ փաստաբանը պարոն Համոնդն է։ Նա մեզ ասաց կտակի մասին։ Հորեղբայր Ռոջերը քսան հազար ֆունտ է թողել ինձ։ Պատկերացնո՞ւմ եք, քսա՜ն հազար ֆունտ։

Բլանթը ապշել էր։

— Մի՞թե դա այդքան մեծ նշանակություն ունի ձեզ համար։

— Շատ նշանակություն... Ինչպես չէ, դա ամեն ինչ է։ Ազատություն... կյանք... այլևս ոչ մի բանասարկություն, տհաճություններ ու ստախոսություն...

— Ստախոսությո՞ւն,— հարցրեց Բլանթն՝ ընդհատելով նրան։

Ֆլորան մի պահ շփոթվեց։

— Հասկանո՞ւմ եք, թե ինչի մասին է խոսքը,— ասաց Ֆլորան անվճռականորեն։— Չնայած, իբրև թե շնորհակալ ես այն բոլոր անպետք բաների համար, որ հարուստ ազգականներդ տալիս են քեզ՝ անցած տարվա վերարկուները, շրջազգեստներն ու գլխարկները, զզվելի է։

— Շատ բան չեմ հասկանում կանացի հագուստներից, բայց պետք է ասեմ, որ միշտ էլ շատ լավ եք հագնվել։

— Չնայած դա ինձ վրա էժան չէր նստում,— ասաց Ֆլորան ցածրաձայն։— Եկեք չխոսենք խիստ տհաճ բաների մասին։ Ես շատ երջանիկ եմ։ Ես ազատ եմ։ Ազատ, անելու ինչ ուզում եմ։ Ազատ չանելու...

Նա անհանգստությունն լռեց։

— Ազատ չանելու... ի՞նչ,— հարցրեց Բլանթը։

— Մոռացա։ Առանձնապես կարևոր բան չէ։

Բլանթը մի ձողիկ ուներ ձեռքին և այն խրեց լճակի մեջ և ինչ-որ բան հրեց։

— Ի՞նչ եք անում, մայոր Բլանթ։

— Ինչ-որ փայլուն բան կա այնտեղ։ Հետաքրքրից... երևում է ոսկե բրոշ էր։ Երևի տիկոջ խառնեցի, կորավ։

— Գուցե թաղ էր,— ասաց Ֆլորան,— նման այն թաղին, որ Մելիսանդան տեսավ ջրում։

— Մելիսանդա՞ն,— ասաց Բլանթը մտախոհ։ Նա ինչ-որ օպերայից է, չէ՞։

— Այո՛։ Երևում է շատ բան գիտեք օպերաների մասին։

—Երբեմն ինձ օպերա են տանում,— ասաց Բլանթը։— Բալականություն ստանալու զավեշտական միջոց է, խաբկալի, քան բնիկների թոմ-թոմները։

Ֆլորան ծիծաղեց.

— Ես հիշում եմ Մելիսանդային,— շարունակեց Բլանթը,— որ ամուսնացավ մի ծերունու հետ, որն իրեն հայր կանչեր։

Նա մի փոքր քար գցեց լճակի մեջ։ Հետո, փոքր-ինչ տոնը փոխելով, դիմեց Ֆլորային.

— Միսս Աքրոյդ, կարո՞ղ եմ որևէ բան անել ձեզ համար։ Փեյթընին նկատի ունեմ։ Գիտեմ, որ դա շատ է մտահոգում ձեզ։

— Շնորհակալություն,— ասաց Ֆլորան սառը։— Իրականում անելու բան չկա։ Ոստիկանին անհանգստանալու ոչինչ չունի։ Ես գտել եմ աշխարհի լավագույն խուզարկուին, և նա կպարզի այդ ամենը։

Որոշ ժամանակ անհանգիստ էի զգում ինձ, քանի որ այնպիսի դիրքում էինք գտնվում, որ իրականում իսկապես լսում էինք նրանց խոսակցությունը, և բավական էր, որ բարձրացնեին իրենց ղլուխները, կտեսնեին մեզ։ Մինչ այդ էլ ես գրաված կլինեի նրանց ուշադրությունը, եթե ընկերակից ձեռքս սեղմելով չզգուշացներ ինձ։ Նա ակնհայտորեն ուզում էր, որ լուռ մնամ։ Այդուհանդերձ, ինքը վարվեց այլ կերպ։ Արագ վեր կացավ և, կոկորդը մաքրելով, բարձրաձայն ասաց.

— Ներողություն եմ խնդրում։ Ես չեմ կարող թույլ տալ, որ մադմուազելն այդքան շռայլորեն հաճոյախոսի իմ մասին, ամենևին ուշադրություն չդարձնելով իմ ներկայությանը։ Ասում են, մարդու հետևից լավ բան չեն խոսում, սակայն

ավյալ դեպքում այլ էր։ Խնայելու համար համեստությունս, ալիսի միանամայն ձեզ ու ներողություն խնդրեմ։

— Մայոր Հերբյուլ Պուարոն է,— ասաց Ֆլորան,— կարծում եմ, լսել եք նրա մասին։

Պուարոն գլուխ տվեց։

— Գիտեմ, որ մայոր Բլանթը մեծ համբավ ունի,— ասաց նա քաղաքավարությամբ։— Ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ, մայոր։ Ձեր տեղեկությունների կարիքն եմ զգում։

Բլանթը հարցականորեն նայեց նրան։

— Աքրոյդին ողջ ե՞րբ եք տեսել վերջին անգամ։

— Ճաշի ժամանակ։

— Եվ դրանից հետո ոչ տեսել եք նրան, ոչ էլ որևէ բա՞ն լսել նրա մասին։

— Նրան չեմ տեսել, բայց ձայնը լսել եմ։

— Ինչպե՞ս։

— Զբոսնում էի սանդղավանդի մոտ...

— Ներեցեք, ժամը քանիսի՞ն։

— Մոտավորապես ինն անց կեսին։ Ծխելով մաս էի գալիս հյուրասենյակի լուսամուտի մոտ։ Լսեցի աշխատասենյակից եկող Աքրոյդի խոսակցության ձայնը...

Պուարոն կռացավ ու պոկեց մի մոլախոտ։

— Անտարակուսելի է, որ դուք չէիք կարող սանդղավանդի այդ մասից լսել աշխատասենյակում տեղի ունեցող խոսակցությունը,— ասաց նա ցածրաձայն։

Նա Բլանթին չէր նայում, իսկ ես նայում էի, և, ի զարմանս ինձ, նկատեցի, որ կարմրեց։

— Հասա մինչև անկյունը...— բացատրեց նա դժկամությամբ։

— Ա, իհարկե,— ընդհատեց նրան Պուարոն։

Նրա ամենաանշան շարժումն իսկ մեծ տպավորություն էր թողնում։

— Եվ տեսա... թփերի մեջ անհետացող մի կնոջ։ Մի ակնթարթ ինչ-որ սպիտակ բան փայլեց։ Գուցե սխալմունք է, բայց նկատեցի այն ժամանակ, երբ սանդղավանդի անկյունում կանգնած լսեցի իր քարտուղարի հետ խոսող Աքրոյդի ձայնը։

— Ջեոֆրի Ռայմոնդի՞։

— Այո՛, ինչպես ինձ թվաց այդ պահին։ Երևի սխալվում եմ։

— Աքրոյդը անունո՞վ դիմեց նրան։

— Օ, ոչ։

— Այդ դեպքում, եթե թույլ կտաք հարցնել, ինչո՞ւ ձեզ թվաց...

— Ենթադրեցի, որ դա Ռայմոնդն է, քանզի հենց իմ դուրս գալուց առաջ ասաց, որ ինչ-որ թղթեր է տանում Աքրոյդին։ Մտքովս անգամ չանցավ, որ կարող էր ուրիշ մեկը լինել։

— Կարո՞ղ եք հիշել, թե ինչ խոսքեր էին դրանք։

— Դժվար թե։ Ինչ-որ միանգամայն սովորական և ոչ կարևոր։ Միայն աննշան բան ինձ հասավ։ Այդ պահին միտքս ուրիշ բանով էր զբաղված։

— Դա կարևոր չէ,— փնթփնթաց Պուարոն։— Մարմինը հայտնաբերվելուց հետո, երբ աշխատասենյակ մտաք, բազկաթոռը հրե՞լ եք դեպի պատը։

— Բազկաթո՞ռը։ Ո՛չ, ինչո՞ւ պիտի այդպիսի բան անեի։

Պուարոն թոթվեց ուսերը, բայց չպատասխանեց։ Հետո դիմեց Ֆլորային.

— Մի բան կուզենայի իմանալ, մադմուազել։ Երբ բժիշկ Շեփարդի հետ զննում էիք սեղանի իրերը, դաշույնն իր տեղո՞ւմ էր, թե ոչ։

Ֆլորայի ծնոտը փքվեց։

— Ոստիկանն արդեն հարցրել է այդ մասին,— վրդովված ասաց Ֆլորան։— Նրան պատասխանել եմ, ձեզ էլ կպատասխանեմ։ Միանգամայն համոզված եմ, որ դաշույնն այնտեղ չէր։ Նա կարծում է, որ դաշույնն այնտեղ է եղել, բայց հետո երեկոյան Ռալֆը թողրել է։ Ով... և չի հավատում ինձ։ Նա կարծում է, թե այդպես եմ ասում՝ Ռալֆին պաշտպանելու համար։

— Գուցե դուք,— հարցրի ես անխռով։

Ֆլորան ատքը խփեց գետնին։

— Դուք, ևս, բժիշկ։ Օ՛, շատ վատ է։

Պուարոն տակտով փոխեց թեման.

— Մայոր Բլանթ, ինչ որ ասացիք, ճի՞շտ է։ Ինչ-որ վայ-

լուն բան կա լճակում։ Նկեք տեսնենք, եթե կարողանանք հանել։

Թևը քշտելով մինչև արմունկը, նա չոքեց լճակի եզրին և այն դանդաղ մտցրեց ջրի մեջ այնպես, որ չխաոնի հատակը։ Բայց, չնայած ամենայն զգուշությանը, տիղմը խառնվեց ջրին, և նա ստիպված ձեռքը դուրս հանեց։

Հիասթափված նայեց ձեռքի տիղմին։ Առաջարկեցի թաշկինակս, որը վերցրեց մեծ դժվարությամբ։ Բլանթը նայեց ժամացույցին։

— Նախաճաշի ժամն է,— ասաց նա։— Ավելի լավ կլինի վերադառնանք տուն։

— Մե՞զ հետ եք նախաճաշելու, մսյո Պուարո,— հարցրեց Ջլորան։— Շատ կուզենայի, որ ծանոթանայիք մայրիկի հետ։ Նա շատ է սիրում Ռալֆին։

Փոքրիկ մարդը գլուխ տվեց։

— Հաճույքով, մադմուազել։

— Դուք նույնպես կմնաք չէ՞, բժիշկ։

— Տատանվեցի։

— Օ, մնացեք։

Ես էլ էի ուզում, այնպես որ հրավերն ընդունեցի առանց ավելորդ ձևականությունների։

Գնացինք դեպի տուն. Ջլորան ու Բլանթը քայլում էին առջևից։

— Ինչպիսի՞ մարդ,— ասաց Պուարոն, ցածրաձայն դիմելով ինձ,— իսկական ոսկի։ Նրանք գեղեցիկ զույգ կլինեն, նա և թխահեր, գեղեցիկ Փեյթլոնն, այնպես չէ՞։

Ես հարցականորեն նայեցի խուզարկուին, սակայն նա տարվեց վերարկուի վրայի ջրի կաթիլները մաքրելով։ Կանաչավուն աչքերով ու քմահաճ հակումներով այդ մարդը, որոշ իմաստով կատվիկ էր հիշեցնում ինձ։

— Եվ այդ ամենը նույնպես զուր էր,— ասացի ես։— Հետաքրքիր է, ի՞նչ կար լճակում։

— Կուզենայի՞ք տեսնել,— հարցրեց Պուարոն։

Ես գարնանջից աչքերս չռել էի նրա վրա։ Նա գլխով արեց։

— Հարցնել բարեկամ,— ասաց նա մեղմ նախատինքով,— Հնդկյուլ Պուարոն իր հագուստը փչացնելու ռիսկի չի դի-

մում, առանց վատահ լինելու, որ կհասնի իր նպատակին։ Այդ կերպ վարվելը ծիծաղելի ու անհեթեթ կլիներ։

— Բայց դուք ձեր ձեռքը դուրս հանեցիք դատարկ,— առարկեցի ես։

— Երբեմն անհրաժեշտ է շրջահայաց լինել։ Ձեր հիվանդներին բառացիորեն ամեն ինչ ասո՞ւմ եք, բժիշկ։ Կարծում եմ, որ՝ ոչ։ Ոչ էլ ձեր հրաշալի քրոջն եք ասում, ճիշտ չէ՞։ Նախքան դատարկ ձեռքս ցույց տալը, դրա պարունակությունը արագ գցեցի մյուս ձեռքիս մեջ։ Կարող եք տեսնել, թե ինչ էր դա։

Նա մեկնեց ձախ ձեռքը։ Ափին կար ոսկե փոքրիկ մի մատանի։ Կանացի նշանի մի մատանի։

Վերցրեցի։

— Նայիր ներսի կողմը։

Նայեցի։ Ներսի կողմում մի գեղեցիկ մակագրություն կար.

Ո–ից, 13 մարտի

Նայեցի Պուարոյին, բայց նա զբաղված էր գրպանի փոքրիկ մի հայելու մեջ իրեն դիտելով։ Պուարոն ակնհայտորեն ուշադրությունը կենտրոնացրել էր իր ընչացքներին և մոռացել ինձ։ Նկատեցի, որ նա զրուցելու մտադրություն չուներ։

Գլուխ 10

ԱՂԱԽԻՆԸ

Միսիս Աքրոյդին գտանք նախասենյակում։ Նրա հետ էր նիհար փոքրիկ մի մարդ, մարտական տեսքով ու սրաթափանց գորշավուն աչքերով։ Նրա ամբողջ կերպարանքն արտահայտում էր մի բան՝ փաստաբան։

— Պարոն Համոնդը մնում է նախաճաշելու մեզ հետ,— ասաց միսիս Աքրոյդը։— Ճանաչո՞ւմ եք մայոր Բլանթին, պարոն Համոնդ, հարգելի բժիշկ Շեփարդը նույնպես խեղճ Ռոջերի մոտիկ բարեկամն է։ Եվ, թույլ տվեք...

Նա լռեց մի պահ, փոքր-ինչ շփոթված նայելով Հերքյուլ Պուարոյին։

— Մսյո Պուարոն է, մայրիկ,— ասաց Ֆլորան։— Առավոտյան քեզ պատմել եմ նրա մասին։

— Օ, այո,— ասաց միսիս Աքրոյդը։— Հարկավ, հոգյակս, հարկավ։ Նա գոնելու է Րալֆին, այնպես չէ՞։

— Նա պիտի գտնի հորեղբորը սպանողին,— ասաց Ֆլորան։

— Ա՛խ, հոգյակս,— բացականչեց մայրը։— Ներող կլինեք, նյարդերս են։ Հալից ընկել եմ, պարզապես էլ ուժ չի մնացել։ Ի՞նչ սոսկալի բան պատահեց։ Չեմ կարողանում չհավատալ, որ դա դժբախտ պատահար էր։ Ոոջերն այնքան էր սիրում ձեռք տալ հազվագյուտ ու անսովոր իրերի։ Օրևի ձեռքից դուրս է պրծել, կամ ինչ-որ նման մի բան։

Այս վարկածն ընդունվեց լուռ քաղաքավարությամբ։ Նրկատեցի, որ Պուարոն կողքանց մոտեցավ փաստաբանին և ցածրաձայն առանձին խոսեց հետը։ Նրանք քաշվեցին լուսամուտի որմանցք։ Միացա նրանց և վարանելով ասացի.

— Չե՞մ խանգարում։

— Ամենևին,— բացականչեց Պուարոն։— Դուք և ես, մսյո բժիշկ, հետաքննում ենք այս գործը միասին։ Առանց ձեզ ես կորած եմ։ Ուզում եմ մի քիչ տեղեկություն ստանալ պարոն Համոնդից։

— Դուք գործում եք կապիտան Րալֆ Փեյթընի օգտին, որքան գիտեմ,— ասաց փաստաբանը շրջահայաց կերպով։

Պուարոն գլխով ժխտական մի շարժում արեց։

— Ո՛չ։ Ես գործում եմ հանուն արդարության։ Միսս Աքրոյդը խնդրել է ինձ հետաքննել իր հորեղբոր մահվան հետ կապված գործը։

Պարոն Համոնդը փոքր-ինչ շփոթվեց։

— Չեմ կարող լրջորեն հավատալ, որ կապիտան Փեյթընը կապ ունի այս հանցագործության հետ,— ասաց նա,— թեև անուղղակի փաստ նրա դեմ կարող է լինել։ Միակ փաստը, որ նա քիչ վող ուներ...

— Քի՞չ վող ուներ,— արագ ընդմիջարկեց Պուարոն։

Փաստաբանը թոթվեց ուսերը և չոր տոնով ասաց.

— Ռալֆ Փեյթընը միշտ այդ վաճակում էր։ Փողը նրա ձեռքից հոսում էր ջրի պես։ Նա միշտ խորթ հոր օգնությանն էր դիմում։

— Այդպես էր անում մինչև վերջե՞րս։ Օրինակ, վերջին տարվա ընթացքում։

— Չեմ կարող ասել։ Միստր Աքրոյդը այդպիսի փաստ չի նշել։

— Հասկանում եմ։ Միստր Համոնդ, կարծում եմ, որ ծանոթ եք Աքրոյդի կտակի պայմաններին։

— Անշուշտ։ Հենց դրա համար էլ այսօր եկել եմ այստեղ։

— Ուստի տեսնելով, որ ես գործում եմ միսս Աքրոյդի օգտին, չե՞ք կամենա ծանոթացնել ինձ այդ կտակի պայմաններին։

— Դրանք միանգամայն պարզ են։ Որոշակի ժառանգություն թողնելուց և հետահոս նվիրատվություններ անելուց հետո...

— Օրինակ...— ընդհատեց նրան Պուարոն։

Միստր Համոնդը փոքր-ինչ զարմացավ։

— Հազար ֆունտ կտակել է տնտեսուհուն՝ միսս Ռասելին, հիսուն ֆունտ խոհարարուհուն՝ էմմա Կուպերին, հինգ հարյուր ֆունտ քարտուղարին՝ Ջեոֆրի Ռայմոնդին։ Հետո տարբեր հիվանդանոցների...

Պուարոն բարձրացրեց ձեռքը։

— Է՛, այդ բարեգործական նպատակներով արված նվիրատվությունները չեն հետաքրքրում ինձ։

— Հասկանալի է։ Տասը հազար ֆունտի տարեկան եկամտի մի մասը ցմահ պիտի վճարվի միսիս Սեսիլ Աքրոյդին. Միսս Ֆլորա Աքրոյդը միանգամից ժառանգություն է ստանում քսան հազար ֆունտ։ Պարտքերից ու հարկերից զերծ ժառանգությունը, ներառյալ այս կալվածքն ու «Աքրոյդ և որդի» ֆիրմայի եկամտի մի մասը ստանում է նրա խորթ որդի Ռալֆ Փեյթընը։

— Միստր Աքրոյդը մե՞ծ կարողության տեր էր։

— Շատ մեծ։ Կապիտան Փեյթընը դառնում է հսկայական կալվածության տեր մի երիտասարդ։

Տիրոց լուռթյուն։ Պուարոն ու փաստաբանը նայեցին իրար։

— Միստր Համոնդ,— բուխարու մոտից լսվեց միսիս Աքրոյդի սրտաճմլիկ ձայնը։

Փաստաբանը պատասխանից կանչին։

Պուարոն թևանցուկ արեց ինձ և տարավ լուսամուտի մոտ։

— Նայիր հիրիկներին,— նկատեց նա բավական բարձրաձայն։— Հրաշալի են, չէ՞։ Պարզապես աչք են շոյում։

Միաժամանակ զգացի, թե ինչպես սեղմեց ձեռքս ու ցածրաձայն ասաց.

— Իրո՞ք ուզում եք օգնել ինձ, մասնակցել այս հետաքննությանը։

— Այո՛, իհարկե՛,— պատասխանեցի ես եռանդով։— Սվիլի հաճելի բան չի կարող լինել։ Ջեք պատկերացնում, թե ինչքան ձանձրալի, հետամնաց մարդու կյանք եմ վարում։ Ոչ մի արտակարգ բան։

— Բարի, այդ դեպքում կոլեգաներ կլինենք։ Ինձ թվում է, մի երկու րոպեից մայոր Բլանթը կմիանա մեզ։ Նա իրեն այնքան էլ լավ չի զգում այդ սիրալիր մայրիկի հետ։ Այժմ ուզում եմ որոշ բաներ իմանալ, բայց չեմ ուզում, որ նկատվի դա։ Հասկանո՞ւմ եք։ Այնպես, որ հարցեր տալու ձեր հերթըն է։

— Ի՞նչ հարցեր եք ուզում, որ տամ,— հարցրի ես։

— Ուզում եմ, որ խոսք բացեք միսիս Ֆերարի մասին։

— Ինչպե՞ս։

— Խոսեք նրա մասին շատ բնական ձևով։ Հարցրեք նրան, այսո՞ր էր նա, երբ ամուսինը մահացավ։ Դուք հասկանում եք, թե ինչ նկատի ունեմ։ Եվ պատասխանելիս նայեք նրա դեմքին այնպես, որ չթվա թե ուշադրություն եք դարձնում դրան։

Այլևս ժամանակ չկար, քանզի, ինչպես կանխատեսել էր Պուարոն, այդ պահին, իրեն հատուկ կորուկ շարժումով, Բլանթը հեռացավ նրանից ու մոտեցավ մեզ։

Սուաջարկեցի զբոսնել սանդղավանդի մոտ, նա դժկամությամբ համաձայնվեց։ Պուարոն ետ մնաց։

Կանգնեցի՝ դիտելու մի թառամած վարդ։

— Ինչպես է ամեն ինչ փոխվում մեկ կամ երկու օրվա ընթացքում,— նկատեցի ես։— Անցած շորեքշաբթի այստեղ նույն սանդղավանդով ես ու առաջ էի քայլում։ Աքրոյդն ինձ հետ էր, ողջ ու առողջ։ Իսկ հիմա, երեք օր հետո, Աքրոյդը մեռած է, խեղճ միսիս Ֆերարը մեռած է, ճանաչում էիք նրան, չէ՞։

Բլանթը գլխով արեց։

— Որանից հետո տեսե՞լ եք նրան։

— Աքրոյդի հետ գնացինք կանչելու։ Ոնց որ անցած երեքշաբթի էր։ Համային կին էր, բայց ինչ-որ տարօրինակ բան կար նրանում։ Խորհրդավոր... երբեք չէիր իմանա, թե ինչ էր մտածում։

Նայեցի նրա անշարժ գորշավուն աչքերին։ Դրանք ոչինչ չէին արտահայտում։ Ով շարունակեցի.

— Կարծում եմ, առաջ հանդիպել եք նրան։

— Վերջին անգամ, երբ այստեղ էի, նա իր ամուսնու հետ նոր էր եկել այստեղ ապրելու։

Նա մի պահ լռեց, հետո ավելացրեց.

— Տարօրինակ բան, այդ ընթացքում նա փոխվել էր։

— Ինչպես թե՝ փոխվել էր,— հարցրի ես։

— Տասը տարով ծերացած էր երևում։

— Այստե՞ղ էիք, երբ նրա ամուսինը մահացավ,— հարցրի ես, աշխատելով հարցը տալ հնարավորին չափ սովորական տոնով։

— Ո՛չ։ Բայց այն ամենն, ինչ լսեցի այդ մասին, ինչ-որ տհաճ բանից ազատվել է թվում։ Դաժանություն է, բայց այդպես է։

Ես համաձայնվեցի։

— Աշլի Ֆերարը ամենևին էլ օրինակելի ամուսին չէր,— ասացի ես շրջահայաց կերպով։

— Ինձ թվում է սինլթորի մեկն էր,— ասաց Բլանթը։

— Ոչ,— ասացի ես,— սոսկ մի մարդ, որ ավելի փող ուներ, քան պետք էր։

— Օ՛, փող։ Աշխարհի բոլոր տհաճությունները կարելի է վերագրել փողին կամ դրա կարիքին։

— Իսկ ի՞նչն էր մասնավորապես ձեզ անհանդստացնում։

— Ես այնքան վոտք ունեմ, որ ինձ հերիք է։ Ես քիչ երջանիկներից մեկն եմ։

— Հիրավի՞։

— Ճիշտն ասած, հիմա այնքան էլ հաջողության մեջ չեմ։ Մի տարի առաջ ժառանգություն ստացա և հիմարի պես համոզեցին ինձ ներդնել այն վտանգավոր մի ձեռնարկման մեջ։

Հայտնեցի նրան իմ կարեկցանքը, և նմանատիպ մի բան պատմեցի իմ մասին։

Կոչնապանդը հնչեց, և բոլորս նեղս մտանք նախաճաշելու։ Պուարոն փոքր-ինչ ետ պահեց ինձ։

— Eh bien?[1]

— Նա կասկածից դուրս է,— ասացի ես,— համոզված եմ։

— Անհանգստացնող ոչ մի բա՞ն։

— Մի տարի առաջ ժառանգություն է ստացել։ Իսկ ինչո՞ւ չպիտի ստանար։ Կարող եմ երդվել, որ նա միանգամայն ազնիվ է ու կասկածից դուրս։

— Հարկավ, հարկավ։ Մի վշտացեք,— ասաց նա այնպիսի տոնով, ասես քմահաճ երեխայի հետ էր խոսում։

Բոլորս գնացինք ճաշասենյակ։ Քանշորս ժամ կլիներ, որ ոչինչ չէի կերել։

Նախաճաշից հետո միսիս Աքրոյդը մի կողմ տարավ ինձ. նստեցինք բազմոցին։

— Ես փոքր-ինչ վիրավորված եմ զգում ինձ,— մրմնջաց նա, հանելով մի թաշկինակ, որ բոլորովին նախատեսված չէր լաց լինելու համար։— Ուզում եմ ասել, որ Ռոջերը չէր վստահում ինձ։ Այդ քան հազար ֆունտը ինձ պիտի թողներ, ոչ թե Ֆլորային։ Կարելի էր ապավինել մորը՝ հանուն նրա երեխայի շահերի։ Ես դա վստահության պակաս եմ համարում։

— Դուք մոռանում եք, միսիս Աքրոյդ,— ասացի ես,— որ Ֆլորան Աքրոյդի զարմուհին է, արյունակիցը։ Այլ բան է, եթե դուք լինեիք նրա քույրը, ոչ թե հարսը։

— Որպես խեղճ Սևիլի այրի, ինձ թվում է, պարտավոր էին հաշվի նստել իմ զգացմունքների հետ,— ասաց լեդին, խոհեմաբար թաշկինակն աչքերին տանելով։— Բայց փողի

[1] Այսպիսո՞վ (Ֆր.)։

հարցերում Ռոջերը միշտ էլ եսամոլ էր, եթե չասենք ժլատ։ Դա ամենածանր վիճակն է եղել ինձ ու Ֆլորայի համար։ Նա խեղճ երեխային նույնիսկ գրպանի փող չէր տալիս։ Ինքն էր վճարում նրա հաշիվները, հասկանում եք, և հարցնում էր, թե ինչի են պետք այդ ամեն տեսակի փայլփլուն զարդարանքները։ Այդպիսի մարդ էր, բայց... մոռացա, թե ինչ էի ուզում ասել։ Ա՛խ, հա՛, ոչ մի պենսի մերը չէինք կարող համարել։ Ֆլորան վրդովված էր, այո՛, շատ էր վրդովված, թեև նվիրված էր հոր հիշատակը։ Ցուրաքանչյուր աղջիկ կվրդովվեր։ Այո՛, պետք է ասեմ, որ Ռոջերը շատ տարօրինակ պատկերացում ուներ փողի մասին։ Նա նույնիսկ երեսարբիշներ չէր ուզում դնել, թեև ասում էի նրան, որ հներն արդեն ծակվել են։ Ով այդքանից հետո,— շարունակեց միսիս Աքրոյդը, անսպասելիորեն բարձրացնելով ձայնը, մի բան, որ շատ հատուկ էր իրեն,— ամբողջ փողը, հազար ֆունտ, պատկերացնում եք, հազար ֆունտ թողնել այդ կնոջը։

— Ո՞ր կնոջը։

— Այդ Ռասելին։ Ինչ-որ շատ տարօրինակ կին է, այդ մասին միշտ էլ ասել եմ։ Բայց Ռոջերը նրա դեմ ուղղված որևէ խոսք անգամ չէր ուզում լսել։ Ասում էր, թե նա ուժեղ բնավորություն ունի, և հիանում էր նրանով ու հարգում էր։ Համատեղն միշտ պնդում էր, թե նա ազնիվ է, ինքնուրույն և բարոյական մեծ արժանիքների տեր։ Ինձ թվում է, ինչ-որ կասկածելի բան կա նրանում։ Ամեն ինչ անում էր Ռոջերի հետ ամուսնանալու համար։ Բայց ես իսկույն դրա աուաջն առա։ Նա միշտ էլ ատելի է եղել ինձ։ Բնական է, որովհետև նրա ամբողջ էությունը գիտեմ։

Ես սկսեցի պատրվակ փնտրել, ազատվելու միսիս Աքրոյդի պերճախոսությունից։ Միստր Համոնդը հնարավորություն տվեց ստանալու այդ հաճույքը. նա մոտեցավ մեզ հրաժեշտ տալու։ Օգտվեցի այդ առիթից և վեր կացա։

— Իսկ ի՞նչ կասեք հետաքննության մասին,— հարցրի ես։— Որտե՞ղ եք մտադիր ացնկացնել, այստե՞ղ, թե «Երեք վարագներում»։

Միսիս Աքրոյդը աչքերը հառեց վրաս։

— Հետաքննությո՞ւնը,— հարցրեց նա, սարսափից քարա-

նալով։— Բայց համոզված էինք, որ հետաքննություն չէր լինելու։

Միսար Համոնդը չոր հազաց ու թույլ ձայնով ասաց.

— Անխուսափելի է։ Հանգամանքներն են ստիպում։

— Բայց բժիշկ Շեփարդը կարող է կարգավորել...

— Դա իմ ուժերից վեր է,— ասացի ես սառը տոնով։

— Եթե նրա մահը դժբախտ պատահար էր...

— Նրան սպանել են, միսիս Աքրոյդ,— ասացի ես։

Նա ճչաց։

— Դժբախտ պատահարի վերաբերյալ ոչ մի տեսակետ մի վայրկյան էլ քննադատության չի դիմանա։

Միսիս Աքրոյդը հուսահատ մի հայացք գցեց վրաս։ Համբերությունից դուրս էի գալիս, մտածելով, թե ինչու էր այդքան հիմարաբար վախենում տհաճություններից։

— Եթե հետաքննություն լինի, ոչ մի հարցի պարտավոր չեմ պատասխանել, ճիշտ չէ՞,— հարցրեց նա։

— Չգիտեմ, թե ինչ անհրաժեշտություն կլինի,— պատասխանեցի ես։— Իմ կարծիքով, միստր Ռայմոնդը հիմնական հարվածից կազատի ձեզ։ Նա ծանոթ է բոլոր հանգամանքներին և կարող է անձը հաստատելու վերաբերյալ համապատասխան վկայություն տալ։

Փաստաբանը համաձայնեց՝ թեթևակի գլուխ տալով։

— Իրոք, չեմ կարծում, որ վախենալու որևէ բան կա, միսիս Աքրոյդ,— ասաց նա։— Բոլոր տհաճություններից կազատվեք։ Անդրադառնանք փողի խնդրին. ներկայումս ամեն ինչ ունե՞ք ձեր կարիքները հոգալու համար,— ավելացրեց նա, քանի որ միսիս Աքրոյդը հարցականորեն նայեց նրան,— առձեռն փող նկատի ունեմ։ Եթե ոչ, կարող եմ պայմանավորվել, որ ձեզ տրամադրվի, որքան անհրաժեշտ է։

— Այդ հարցը պիտի որ լուծված լինի, ասաց մեր կողքին կանգնած Ռայմոնդը։— Երեկ միստր Աքրոյդը հարյուր ֆունտ է տվել։

— Հարյուր ֆո՞ւնտ։

— Այո՛։ Ապրուստի և այսօրվա ծախսերի համար անհրաժեշտ մի գումար։ Մինչև հիմա ձեռք չեն տվել։

— Որտե՞ղ է փողը։ Նրա գրասեղանի՞ն։

— Ո՛չ, նա միշտ փողը պահում էր իր ննջասենյակում։ Ավելի ճիշտ, մանյակների մի հին տուփի մեջ։ Տարօրինակ է, չէ՞։

— Կարծում եմ,— ասաց փաստաբանը,— որ նախքան դնալս պետք է համոզվել՝ փողն այնտեղ է, թե ոչ։

— Իհարկե,— համաձայնվեց քարտուղարը,— ես կուղեկցեմ ձեզ... Հա, մոռացա, որ դուռը փակ է։

Փարքըրից ստացած տեղեկության համաձայն, տեսուչ Ռաթլանը զոնվում էր տնտեսուհու սենյակում՝ մի քանի լրացուցիչ հարցեր տալու կապակցությամբ։ Մի քանի րոպե հետո տեսուչը միացավ նախասենյակում գտնվող խմբին, բեթլով բանալին։ Նա բացեց դուռը, և մենք անցանք սրահ ու փոքր սանդուղքով բարձրացանք վերև։ Աքրոյդի ննջասենյակի դուռը բաց էր։ Ներսում մութ էր, վարագույրները քաշված էին, մահճակալը՝ թեքված ճիշտ այնպես, ինչպես անցած գիշեր։ Տեսուչը բացեց վարագույրները, արևից լուսավորվեց սենյակը, և Ջեոֆրի Ռայմոնդը մոտեցավ պատուհանին վերին դարակին։

— Նա իր փողը պահում էր բաց դարակում, պատկերացնո՞ւմ եք,— նկատեց տեսուչը։

Քարտուղարը թեթևակի կարմրեց։

— Միստր Աքրոյդը շատ էր վստահում բոլոր սպասավորներին,— եռանդով ասաց նա։

— Օ՛, այո՛ միանգամայն ճիշտ է,— վրա բերեց տեսուչը։

Ռայմոնդը քաշեց դարակը, հանեց կաշվե մի կլոր տուփ, և, բացելով այն, մի հաստ քսակ հանեց։

— Ահա՛ դրամը,— ասաց նա, հանելով թղթադրամների մի հաստ կապոց։— Կտեսնեք, որ այդ հարյուր ֆունտին ձեռք չի դիպչել, համոզված եմ, քանզի միստր Աքրոյդը տուփի մեջ դրեց իմ ներկայությամբ անցած գիշեր, երբ հագնվում էր ճաշից առաջ, և այն մնացել է անձեռնմխելի։

Միստր Համոնդը վերցրեց կապոցն ու հաշվեց։ Նա շեշտակի վեր նայեց։

— Ասացիք՝ հարյուր ֆունտ, բայց այստեղ կա միայն վաթսուն։

Ռայմոնդը զարմացած նայեց նրան։

— Անհնարին է,— գոչեց նա, առաջ նետվելով։ Վերցնելով դրամը, նա բարձրաձայն հաշվեց։

Միստր Համոնդը իրավացի էր. վաթսուն ֆունտ էր։

— Բայց... չեմ հասկանում...— գոչեց քարտուղարը շվարած։

Պուարոն հարցրեց.

— Դուք տեսա՞ք, թե ինչպես Աքրոյդն այս փողը դրեց դարակը, երբ հագնվում էր ճաշից առաջ։ Համոզվա՞ծ եք, որ դրա մի մասը արդեն չէր վճարել։

— Համոզված եմ, որովհետև նա նույնիսկ ասաց. «Չեմ ուզում հարյուր ֆունտն ինձ հետ վերցնել։ Շատ է ուռուցիկ»։

—Այս դեպքում գործը շատ պարզ է,— նկատեց Պուարոն։— Այդ քառասուն ֆունտը կամ վճարել էր նախորդ երեկոյան դեմ, կամ էլ գողացել են։

— Կարճ ասած, կարևորը դա է,— համաձայնվեց տեսուչը և դիմեց միստր Աքրոյդին.— Սպասավորներից ո՞վ կարող էր գալ այստեղ երեկ երեկոյան։

— Երևի սպասուհին է հավաքել անկողինը։

— Ո՞վ է նա։ Ի՞նչ գիտեք նրա մասին։

— Նա երկար ժամանակ այստեղ չի եղել,— ասաց միստր Աքրոյդը։— Բայց նա մի լավ, օրինավոր գեղջկուհի է։

— Ինձ թվում է, պետք է պարզել այս գործը,— ասաց տեսուչը։— Եթե միստր Աքրոյդն ինքն է վճարել փողը, դա կարող է առնչվել հանցագործության գաղտնիքին։ Իսկ այս սպասավորները կարգի՞ն մարդիկ են։

— Օ, չեմ կասկածում։

— Առաջներում որևէ բան չի՞ կորել։

— Ո՛չ։

— Նրանցից ոչ ոք չի՞ հեռացել։

— Աղախինը։

— Ե՞րբ։

— Կարծեմ երեկ է խնդրել, որ ազատեն իրեն։

— Ջե՞զ։

— Օ, ո՛չ։ Ես ոչ մի առնչություն չունեմ սպասավորների հետ։ Միսս Ռասելն է զբաղվում տան գործերով։

Տեսուչը մի պահ տարվեց մոքերով։ Հետո գլուխն օրորեց ու նկատեց.

— Կարծում եմ, լավ կլինի, որ մի քիչ զրուցեմ միսս Ռասելի հետ, Դեյլի հետ նույնպես։

Պուարոն ու ես ուղեկցեցինք նրան տնտեսուհու սենյակ։ Միսս Ռասելն ընդունեց մեզ իրեն հատուկ սառնությամբ։

— Էլսի Դեյլը Ֆերնլիում է հինգ ամիս։ Հրաշալի աղջիկ է, պարտականությունների կատարման մեջ՝ արագաշարժ, շատ հարգալից։ Լավ հանձնարարականներ ունի։ Միակ աղջիկն է աշխարհում, որ ձեռք չի տա իրեն չպատկանող որևէ բանի,— ասաց միսս Ռասելը։

— Իսկ ի՞նչ կասեք աղախնի մասին։

— Նա նույնպես հրաշալի աղջիկ է, հանգիստ ու կիրթ։ Հոյակապ աշխատող։

— Այդ դեպքում, ինչո՞ւ է հեռանում,— հարցրեց տեսուչը։

Միսս Ռասելը հավաքեց շրթունքները։

— Դա ինձ չի վերաբերում։ Գիտեմ, որ երեկ կեսօրին միստըր Աբրոյդը զանգատվում էր նրանից։ Նրա պարտականությունն էր՝ կարգի բերել աշխատասենյակը, և նա խառնել էր գրասեղանի որոշ թղթեր։ Միստր Աբրոյդը շատ էր վրդովվել, և Ուրսուլան նախազգուշացրեց իր հեռանալու մասին։ Համենայն դեպս, այդպես հասկացա նրա ասածներից, բայց գուցե ինքնե՞րդ տեսնեիք նրան։

Տեսուչը համաձայնվեց։ Արդեն նկատել էի այդ աղջկան, երբ նախաճաշին սպասարկում էր մեզ։ Բարձրահասակ մի աղջիկ, ծոծրակին կիպ ոլորած խիտ շագանակագույն մազերով, գորշավուն լուրջ աչքերով։ Նա ներս մտավ և կանգնեց ուղիղ, աչքերը հառելով մեզ վրա։

— Դո՞ւք եք Ուրսուլա Բորնը,— հարցրեց տեսուչը։

— Այո՛, սըր։

— Որքան գիտեմ, հեռանո՞ւմ եք։

— Այո, սըր։

— Ինչո՞ւ։

— Խառնեցի միստր Աբրոյդի սեղանի թղթերը, և նա շատ պայրացավ։ Ես էլ ասացի, որ ավելի լավ է հեռանամ։ Իսկ նա ասաց՝ որքան շուտ, այնքան լավ։

— Անցած դիշեր եղե՞լ եք միատր Աքրոյդի ննջասենյակում։ Հարդարե՞լ եք սենյակը կամ նման բան արե՞լ եք։

— Ո՛չ, սըր։ Դա էլսիի գործն է։ Ներեք չեմ մոտեցել այդ հարկաբաժնին։

— Պետք է ասեմ, աղջիկս, որ մեծ գումար է կորել միատր Աքրոյդի սենյակից։

Վերջապես տեսա, թե ինչպես նա զայրույթից գունատվեց։

— Ես ոչինչ չգիտեմ ինչ-որ փողի մասին։ Եթե կարծում եք ես եմ վերցրել, և դրա համար է միատր Աքրոյդը վռնդել ինձ, սխալվում եք։

— Ես չեմ մեղադրում ձեզ փող վերցնելու մեջ, աղջիկս,— ասաց տեսուչը։— Այդքան մի բորբոքվեք։

Աղջիկը սառը մի հայացք ձգեց նրա վրա։

— Եթե ուզում եք, կարող եք սուտգել իրերս,— ասաց նա արհամարհանքով։— Ոչինչ չեք գտնի։

Պուարոն, անապատելիորեն միջամտելով, հարցրեց.

— Երեկ կեսօրի՞ն էր, որ միատր Աքրոյդը հեռացրեց ձեզ, կամ ինքներդ ազատվեցիք աշխատանքից, միևնույն է։

Աղջիկը գլխով համաձայնության նշան արեց։

— Որքա՞ն տևեց զրույցը։

— Չո՞ւյցը։

— Այո՛, զրույցը, աշխատասենյակում, ձեր և միատր Աքրոյդի միջև։

— Ես... չգիտեմ։

— Քսա՞ն րոպե։ Կես ժամ։

— Մոտավորապես այդքան։

— Ո՞չ, ավելի։

— Ոչ ավելի, քան կես ժամ։

— Շնորհակալություն մադմուազել։

Ես զարմացած նայում էի նրան։ Նա վերադասավորում էր սեղանի վրայի որոշ առարկաներ, խնամքով ուղղելով դրանք։ Աչքերը փայլում էին։

— Բավական է,— ասաց տեսուչը։

Ուրսուլա Բորնը անհետացավ։ Տեսուչը դիմեց միս Ռասելին.

— Ինչքա՞ն ժամանակ է այստեղ։ Ունե՞ք նրան տված հանձնարարականը։

Առանց պատասխանելու միսս Ռասելը մոտեցավ կողքի դրասեղանին, բացեց դարակներից մեկը և հանեց սեղմիչով ամրացված մի քանի նամակներ և, ընտրելով դրանցից մեկը, տվեց տեսուչին։

— Հը՛մ, լավ է հնչում։ Միսիս Ռիչարդ Ֆուլթի, Մերթի Գրենջ։ Մերթի։ Ո՞վ է այդ կինը։

— Կոմսության շատ հարգարժան կանանցից մեկը,— ասաց միսս Ռասելը։

— Լավ,— ասաց տեսուչը, վերադարձնելով հանձնարարականը,— հիմա դառնանք մյուսին՝ էլսի Դեյլին։

Էլսի Դեյլը խոշորակազմ, շիկահեր մի աղջիկ էր, հաճելի, բայց փոքր-ինչ հիմարավուն աչքերով։ Նա պատրաստակամությամբ էր պատասխանում մեր հարցերին և շատ էր ափսոսում ու մտահոգվում, որ փողը կորել էր։

— Չեմ կարծում, որ նա որևէ բանում մեղավոր է,— նկատեց տեսուչը, աղջկան բաց թողնելուց հետո։

— Իսկ ի՞նչ կասեք Փարքըրի մասին։

Միսս Ռասելը փքեց շրթունքները և չպատասխանեց։

— Ես այն կարծիքին եմ, որ ինչ-որ բան է կապված այդ մարդու հետ,— մտախոհ ասաց տեսուչը։— Բանն այն է, որ բոլորովին չեմ հասկանում, թե երբ է նա պատեհ առիթ գտել։ Ճաշից անմիջապես հետո զբաղված է եղել իր պարտականությունները կատարելով և բավական լավ ալիբի ունի ամբողջ երեկոյի համար։ Գիտեմ, քանի որ հատուկ ուշադրություն էի դարձնում դրան։ Լավ, շնորհակալություն միսս Ռասել։ Առայժմ թողնենք ամեն ինչ այնպես, ինչպես որ կա։ Շատ հավանական է, որ այդ փողերը վճարել է Աքրոյդը։

Տնտեսուհին բավական սառը հրաժեշտ տվեց մեզ, և մենք հեռացանք։

Տնից դուրս եկա Պուարոյի հետ։

— Հետաքրքիր է,— ասացի ես, խզելով լռությունը։— Ի՞նչ արժեք կարող էին ունենալ այդ թղթերը Աքրոյդի համար, որ նա այդպիսի վիճակի մեջ ընկավ։ Հետաքրքիր է, որևէ կապ ունի՞ դա այդ գաղտնիքի հետ։

— Քարտուղարն ասաց, որ կարևոր թղթեր չեն եղել գրասեղանի վրա,— հանգիստ պատասխանեց Պուարոն։

— Այո, բայց...

— Չեղ շատ տարօրինակ է թվում, որ այդպիսի չնչին բանի համար Աքրոյդը խիստ զայրացա՞վ։

— Այո՛, բավական տարօրինակ։

— Բայց արդյո՞ք դա չնչին բան է եղել։

— Իհարկե,— մենք չգիտենք, թե ինչ թղթեր էին դրանք, բայց Ռայմոնդը համոզված ասաց...

— Մի րոպե թողնենք մայո Ռայմոնդին։ Ի՞նչ կարծիք կազմեցիք այդ աղջկա մասին։

— Ո՞ւմ։ Ակրանի՞։

— Այո՛, աղախնի, Ուրսուլա Բորնի։

— Լավ աղջիկ է երևում,— անվճռականորեն ասացի ես։

Պուարոն կրկնեց իմ բառերը։ Ես թեթևակի շեշտել էի երրորդ բառը, իսկ նա շեշտեց՝ երկրորդը.

— Նա լավ աղջիկ է թվում։

Այնուհետև մի պահ լռելուց հետո ինչ-որ բան հանեց գրպանից ու մեկնեց ինձ։

— Տեսեք, բարեկամս, մի բան պիտի ցույց տամ ձեզ։ Նայե՛ք։

Թուղթը, որ նա մեկնեց ինձ, տետրի կազմած ցուցակն էր, որ նա տվել էր Պուարոյին այն առավոտ։ Նայելով նրա մատնացույց արած կետին, նկատեցի մատիտով արված մի փոքրիկ խաչ՝ Ուրսուլա Բորնի անվան դիմաց։

— Այն ժամանակ երևի չեք նկատել, հարգելի բարեկամ, բայց այս ցուցակում կա մեկը, ում ալիբին ոչ մի կերպ չի հաստատվում։ Այդ անձնավորությունը Ուրսուլա Բորնն է։

— Չեք կարծում...

— Բժիշկ Շեփարդ, ես համաձակվում եմ կարծել ամեն ինչ։ Հնարավոր է, որ Ուրսուլա Բորնն է սպանել միստր Աքրոյդին, բայց խոստովանում եմ, ոչ մի դրդապատճառ չեմ տեսնում դրա համար։ Դուք տեսնո՞ւմ եք։

Նա խիստ նայեց ինձ, այնքան խիստ, որ անհանգիստ զգացի ինձ։

— Տեսնո՞ւմ եք,— կրկնեց նա։

— Համենայն դեպս ոչ մի դրդապատճառ չեմ տեսնում,— պատասխանեցի ես։

Նրա խիստ հայացքը մեղմացավ։ Մոայլվեց ու ինքն իրեն մրմնջաց.

— Քանի որ շանտաժիստը տղամարդ է եղել, Ուրսուլան չի կարող նենգաշուրթիչ լինել, ուստի...

Միծաղեցի։

— Որքանով դա...— անվճռականորեն ասացի ես։

— Ի՞նչ։ Ի՞նչ եք ուզում ասել։

— Ոչինչ։ Ոչինչ։ Խիստ ասած, միայն այն, որ միսիս Ֆեռարն իր նամակում նշել էր՝ մի անձ, ոչ թե հատկապես տղամարդ էր նկատի ունեցել։ Եվ Աքրոյդն ու ես ինքներս հասկանալի համարեցինք, որ դա տղամարդ էր։

Պուարոն հավանաբար չէր լսում ինձ։ Նա քթի տակ ինչ-որ բան էր ասում կրկին։

— Բայց այնուամենայնիվ հնարավոր է... այո՛, իհարկե, հնարավոր է... Բայց մյուս կողմից։ Ես պետք է նորից կարգի բերեմ մտքերս։ Մեթոդ, կարգ, երբեք դրանց կարիքն այսքան չեմ զգացել։ Ամեն ինչ պետք է համընկնի, տեղը տեղին լինի, այլապես սխալ ճանապարհով կգնամ։

Նա անսպասելիորեն լռեց և կրկին բավական կոպտորեն դիմեց ինձ.

— Որտե՞ղ է գտնվում Մարբին։

— Քրանչեսթրից այն կողմ։

— Հեռո՞ւ է։

— Մոտ տասնչորս մղոն։

— Հնարավո՞ր է, որ գնաք այնտեղ։ Ասենք, վաղը։

— Վա՞ղը։ Թույլ տվեք մտածեմ։ Կիրակի է։ Այո՛, հնարավոր է։ Ի՞նչ եք ուզում, որ անեմ այնտեղ։

— Ուզում եմ, որ տեսնեք այդ միսիս Ֆուլրթին։ Պարզեք Ուրսուլա Բորնին վերաբերվող այն ամենն, ինչ կարող եք։

— Շատ լավ։ Բայց այդ գործն ինձ այնքան էլ չի հետաքրքրում։

— Դժվարություններ ստեղծելու ժամանակը չէ։ Մարդու կյանք կարող է կախված լինել դրանից։

— Լեղձ Ռալֆ,— հառաչելով ասացի ես։— Այնուամենայնիվ հավատո՞ւմ եք, որ նա անմեղ է։

Պուարոն շատ լուրջ մի հայացք գցեց վրաս։

— Ուզո՞ւմ եք ճշմարտությունն իմանալ։

— Անշուշտ։

— Այդ դեպքում, կիմանաք։ Բարեկամս, ամեն ինչ վկայում է այն մասին, որ նա է մեղավոր։

— Ի՞նչ,— բացականչեցի ես։

Պուարոն գլխով արեց։

— Այո՛, այդ տխմար տեսուչը, իսկ նա տխմար է, ունի այն ամենը, որ վկայում է այդ մասին։ Ես փնտրում եմ ճշմարտությունը, և ամեն անգամ այն առաջնորդում է ինձ դեպի Ռալֆ Փեյթընը։ Դրդապատճառ, առիթ, միջոցներ։ Բայց ես քարը քարին չեմ թողնի։ Մադմուազել Ցլորային խոստացել եմ։ Եվ նա համոզված է, այդ փոքրիկը։ Եվ շա՛տ է համոզված։

Գլուխ 11

ՊՈՒԱՐՈՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՏԱՐՈՒՄ

Ես փոքր-ինչ հուզված էի, երբ հաջորդ օրը տվեցի Մարբի Գրենջի զանգը։ Ինձ շատ էր հետաքրքրում, թե ինչ էր ուզում բացահայտել Պուարոն։ Այդ գործը նա հանձնարարել էր ինձ։ Ինչո՞ւ։ Մի՞թե, ինչպես մայոր Բլանթին հարցաքննելիս, ուզում էր ետին պլանում մնալ։ Այդ ցանկությունը, որ հասկանալի էր առաջին դեպքում, այստեղ միանգամայն անիմաստ էր թվում։

Մոքերս ընդհատեց եռանդուն աղախնու հայտնվելը։

Միսիս Ցոլիոթը տանն էր։ Ինձ առաջնորդեցին մի մեծ հյուրասենյակ։ Մինչ կերևար տանտիրուհին, ես հետաքրքրությամբ նայեցի շուրջս։ Դա մի մեծ ու դատարկ սենյակ էր, որտեղ կային ճենապակե մի քանի իրեր, մի քանի գեղեցիկ փորագրանկար, հնամաշ ծածկոցներ ու վարագույրներ։ Բացօթյան լեռդի սենյակ էր։

Բարտուշչիի[1] մի նկար էի դիտում, երբ միսիս Ֆոլիոթը ներս մտավ։ Նա բարձրահասակ կին էր, շազանակագույն, թափթփված մազերով, հմայիչ ժպիտը դեմքին։

— Բժիշկ Շեփա՞րդ,— անվճռականորեն հարցրեց նա։

— Այո՛,— պատասխանեցի ես։— Խնդրում եմ ներեք անսպասելի այցելությանս համար։ Որոշ տեղեկություններ էի ուզում ստանալ մի աղախնու մասին, որ նախկինում ձեզ մոտ է ծառայել։ Նոսքս վերաբերում է Ուրսուլա Բորնին։

Այդ անունը լսելուն պես ժպիտն անհետացավ նրա դեմքից, և սիրալիրությունը փոխվեց սառը վերաբերմունքի։ Անհանգստություն ու տագնապ երևաց նրա դեմքին։

— Ուրսուլա Բո՞րն,— անվճռականորեն հարցրեց նա։

— Այո՛։ Միգուցե չե՞ք հիշում այդ անունը։

— Օ՛, իհարկե, հիշում եմ։ Լավ եմ հիշում։

— Որքան գիտեմ, մի տարի առաջ է հեռացել ձեր մոտից։

— Այո՛, այո՛։ Միանգամայն ճիշտ է։

— Իսկ դուք գո՞հ էիք նրանից։ Ի դեպ, ինչքա՞ն է մնացել ձեզ մոտ։

— Մի երկու տարի։ Ճիշտ չեմ հիշում։ Շատ շնորհքով աղջիկ էր։ Համոզված եմ, միանգամայն գոհ կլինեք նրանից։ Ջգիտեի, որ հեռանում է Ֆերնլիից։ Պատկերացում անգամ չունեի։

— Կարո՞ղ եք որևէ բան ասել նրա մասին,— հարցրի ես։

— Նրա մասի՞ն։

— Այո՛։ Որտեղի՞ց էր, ովքե՞ր էին ծնողները, նման բաներ։

Միսիս Ֆոլիոթի դեմքի արտահայտությունը դարձավ ավելի սառը։

— Բոլորովին չգիտեմ։

— Ո՞ւմ մոտ էր եղել նախքան ձեզ մոտ գալը։

— Չեմ հիշում։

Այժմ ներքին զայրույթ զգացվեց նրա վրդովմունքում։ Նա գլուխը ետ գցեց մի շարժումով, որ անպարկեշտ թվաց։

---

1 Ֆրանչեսկո Բարտոլոչչի.— իտալացի փորագրիչ, ապրել է Անգլիայում (1727—1815)։

— Այս հարցերն իրո՞ք անհրաժեշտ են։

— Ամենևին,— ասացի ես զարմացած տեսք ընդունելով և փոքր-ինչ նեղսրտություն հայցող տոնով։

— Պատկերացում անգամ չունեի, որ չէիք կամենա պատասխանել այդ հարցերին։ Ներող կլինեք։

Նա հանգստացավ, բայց կրկին շփոթվեց։

— Օ՛, ես դեմ չեմ պատասխանելու այդ հարցերին։ Հաճատացած եղեք, որ դեմ չեմ։ Ինչու պիտի դեմ լինեմ։ Պարզապես մի՛ քիչ տարօրինակ է, հասկանո՞ւմ եք։ Մի քիչ տարօրինակ է և ուրիշ ոչինչ։

Պրակտիկ բժշկի առավելություններից մեկն էլ այն է, որ սովորաբար կարող է ասել, երբ ստում են։ Թեև ոչ այլ բանից, ապա միայն Ջոլիոթի վարքագծից կարող էի կռահել, որ նա չէր ուզում պատասխանել իմ հարցերին, ամենևին չէր ուզում։ Նա շատ անհանգիստ էր ու հուզված, և դրա տակ ինչ-որ գաղտնիք կար թաքնված։ Նա նրան համարում էի կեղծելու միանգամայն անընդունակ մի կին, այդ իսկ պատճառով էլ շատ խիստ վարվեցի և ստիպեցի նրան ասել։ Օրեխան նույնիսկ կարող էր տեսնել նրա ամբողջ էությունը։

Բայց պարզ էր նաև այն, որ նա մտադիր չէր որևէ լրացուցիչ բան ասել։ Որքան էլ այդ գաղտնիքը կապված լիներ Ուրսուլա Բարնի հետ, ես մտադրություն չունեի բացահայտել այն միայն Ջոլիոթի միջոցով։

Պարտվելով, ես մի անգամ էլ ներողություն խնդրեցի անհանգստացնելու համար, վերցրի գլխարկս ու հեռացա։

Գնացի մի երկու հիվանդի տեսնելու և տուն հասա մոտ ժամը վեցին։ Կարոլինը նստած էր թեյի պարագաների սեղանիկի մեջ։ Այնպիսի զսպված հրճվանք կար նրա դեմքին, որ միայն ինձ էր ծանոթ։ Դա անտարակուսելի նշան էր այն բանի, որ նա նորություն էր իմացել։ Ինձ հետաքրքրեց, թե ինչ տեղեկություն էր դա։

— Շատ հետաքրքիր օր էր ինձ համար այսօր,— սկսեց նա, երբ փլվեցի իմ հատուկ բազկաթոռին և ոտքերս երկարեցի դեպի բուխարու հաճելի կրակը։

— Մի՞թե,— ասացի ես։— Միսս Գանե՞թն անցավ թեյելու։

Միսս Գանեթը մեր հիմնական լուրեր տարածողներից մեկն էր։

— Գուշակիր,— ինքնագոհ ասաց Կարոլինը։

Ես մի քանի անգամ փորձեցի գուշակել, նկատի ունենալով Կարոլինի հետախուզական «գործակալության» բոլոր անդամներին։ Քույրս, իմ յուրաքանչյուր գուշակությունը դիմավորում էր գլխի հաղթական մի շարժումով։ Վերջում ինքը հայտնեց նորությունը։

— Մայո Պուարոն,— ասաց նա։— Հը՛, ի՞նչ կասես։

Ես շատ բան էի մտածում այդ մասին, բայց զգուշանում էի հայտնել Կարոլինին։

— Ինչո՞ւ էր եկել,— հարցրի ես։

— Ինձ տեսնելու, իհարկե։ Նա ասաց, որ լավ ճանաչելով եղբորս, հույս ուներ ծանոթանալու նրա համայիլ քրոջ հետ... քո համայի՛լ քրոջ հետ։ Ինձ կորցրել էի... հասկանո՞ւմ ես, թե ինչ նկատի ունեմ։

— Ի՞նչ ասաց նա,— հարցրի ես։

— Շատ պատմեց իր և իր գործերի մասին։ Ճանաչո՞ւմ եք այդ մավրիտանացի թագաժառանգ Պոլին, որ նոր է ամուսնացել մի պարուհու հետ։

— Այո՛։

— Վերջերս շատ հետաքրքիր մի հոդված կար «Սըսայթի Սնիփեթսում», որտեղ ակնարկ կար այն մասին, որ նա իրականում ուս մեծ դքսուհի է, ցարի աղջիկներից մեկը։ Թվում է, թե մայո Պուարոն բացահայտել է փակուղու մեջ գտնվող սպանության մի գաղտնիք, որ սպառնում է ներգրավել նրանց երկուսին էլ։ Թագաժառանգ Պոլը երախտագիտությունից իրեն կորցրել է։

— Եվ նրան նվիրել դաշտակոցարի ձվի մեծության փողկապի զմրուխտե մի գնդասեղ, այնպես չէ՞,— հեգնանքով հարցրի ես։

— Նա ոչինչ չասաց այդ մասին։ Ինչո՞ւ։

— Ոչինչ,— ասացի ես։— Կարծում եմ, միշտ էլ այդպես է եղել։ Համենայն դեպս դետեկտիվ վեպերում այդպես է։ Գե-

բազանց խուզարկուի սենյակներում միշտ էլ թափված են նրախառգետ թագավորազն հաճախորդներից ստացված տուտակներ, մարգարիտներ ու զմրուխտներ։

— Շատ հետաքրքիր է լսել այդ ամենը յուրայինից,— զոհունակությամբ ասաց քույրս։

Դա հետաքրքիր կարող էր լինել միայն Կարուլինի համար։ Ես հիացել էի Հերքյուլ Պուարոյի հնարամտությամբ, որ այլոց թվում անախալ ընտրել էր գյուղում ապրող տարիքն առած չամուսնացած մի լեդիի։

— Նա քեզ ասա՞ց, որ այդ պարուհին իրոք մեծ դքսուհին էր,— հարցրի ես։

— Նա ազատ չէր կարող արտահայտվել,— ասաց Կարուլինը լուրջ տեսքով։

Ինձ հետաքրքրում էր, թե որքան էր նա աղավաղել ճշմարտությունը Կարուլինի հետ խոսելիս, հավանաբար՝ ոչ բոլորովին։ Հավանաբար կողմնակի ակնարկներ էր արել հոնքերն ու ուսերը շարժելու միջոցով։

— Ով այդ ամենից հետո,— նկատեցի ես,— պատրաստ էիր ամբողջովին ենթարկվե՞լ նրան։

— Անտաշություն մի արա, Ջեյմս։— Ջգիտեմ, որտե՞ղ ես սովորել այդ վուլգար արտահայտությունը։

— Հավանաբար ինձ արտաքին աշխարհին կապող միակ օղակից՝ հիվանդներից։ Դժբախտաբար իմ բժշկական պրակտիկան կապ չունի թագաժառանգների և ռուս վտարանդիների հետ։

Կարուլինը ակնոցը բարձրացրեց ու նայեց ինձ։

— Շատ մոայլ ես երևում, Ջեյմս։ Երևի լյարդից է, կամ գիշերը լավ չես քնել։

— Ինձ սեփական տանը տեսնելիս, երբեք չէիք ասի, որ բժիշկ եմ։ Կարուլինն էր տնային բոլոր նշանակումներն անում, ինչպես իր, այնպես էլ ինձ համար։

— Գրողի ծոցը լյարդս,— գրգռված ասացի ես։— Սպանության մասին ընդհանրապես խոսեցի՞ք։

— Դե, իհարկե, Ջեյմս։ Էլ ինչի՞ մասին պիտի խոսեինք։ Ես կարողացա մի քանի կետեր ներկայացնել մայո Պուարոյին։ Շատ շնորհակալ եղավ ինձնից։ Ասաց, որ խուզարկուի

բնածին հատկանիշներ ունեմ և մարդու բնավորությունը ճանաչելու զարմանալի խորաթափանց միտք։

Կարոլինը յուղալի սերուցքով զայթակղված կատվիկ էր հիշեցնում։ Նա պարզապես մոլուում էր.

— Նա շատ խոսեց ուղեղի զորշավուն բջիջների և դրանց կատարած դերի մասին։ Ասաց, որ իրենը առաջին կարգի են։

— Նա այդպիսի բան կարող էր ասել,— դառնացած նկատեցի ես։— Նա, անտարակույս համեստության մարմնացում չէ։

— Ջեյմս, չէի ուզենա, որ այդքան սոսկալի ամերիկյան ձևով պահես քեզ։ Նա շատ կարևոր է համարում, որ հնարավորին չափ շուտ պետք է գտնել Ռալֆին, և ստիպել, որ գա և պատասխան տա։ Ասում էր, որ նրա անհետանալը շատ անբարենպաստ տպավորություն կարող է թողնել հետաքննության վրա։

— Իսկ դու ի՞նչ պատասխանեցիր։

— Համաձայնվեցի նրա հետ,— գոռոզաբար պատասխանեց Կարոլինը։— Եվ ես նրան ասացի, թե մարդիկ արդեն ինչ են խոսում այդ մասին։

— Կարոլին,— կտրուկ ասացի ես,— մայր Պուարոյին ասացի՞ր, թե պատահաբար ինչ լսեցիր այն օրն անտառում։

— Այո՛,— ինքնագոհ պատասխանեց Կարոլինը։

Ես վեր կացա և սկսեցի շրջել։

— Հուսով եմ, դու պատկերացնում ես, թե ինչ ես անում,— բռնկվեցի ես։— Թոկը գցում ես Ռալֆ Փեյթընի վիզը. դա նույնքան հաստատ է, որքան այն, որ դու նստած ես այդ աթոռին։

— Ամենևին՝ ոչ,— անվրդով ասաց Կարոլինը։— Ես զարմացա, որ այդ մասին չէիր ասել նրան։

— Չգուշացա ասել այդ մասին։ Ես սիրում եմ այդ տղային։

— Ես՝ նույնպես։ Ահա թե ինչու եմ ասում, որ հիմարություններ ես անում։ Չեմ հավատում, որ Ռալֆն է սպանել, այնպես որ ճշմարտությունը չի կարող վնասել նրան։ Եվ մենք պարտավոր ենք ամեն ինչով օգնել մայր Պուարոյին։ Բայց ջատ հավանական է, որ Ռալֆը այդ նույն աղջկա հետ պա-

տահաբար էր դուրս եկել սպանության գիշերը, իսկ եթե այդպես է, նա իսկական ալիբի ունի։

— Իսկական ալիբի ունի,— կրկնեցի ես նրա խոսքերը,— իսկ ինչո՞ւ չեկավ ու չասաց։

— Տհաճություն կարող էր պատճառել աղջկան,— ծանրակշիռ տոնով ասաց Կարուլինը։— Բայց եթե մյուս Պուարոն կպշի աղջկան և ասի, որ դա նրա պարտականությունն է, նա կամավոր կգա ու կարդարացնի Ռալֆին։

— Երևում է քո սեփական ռոմանտիկ հեքիաթն ես հորինել,— ասացի ես։— Չափազանց շատ ցածրորակ վեպեր ես կարդում, Կարուլին։ Միշտ էլ ասել եմ քեզ։

Ես կրկին փլվեցի իմ բազկաթոռին։

— Պուարոն ուրիշ հարցե՞ր էլ տվեց։

— Միայն այն առավոտվա քո հիվանդների մասին։

— Հիվանդների՞,— զարմացա ես, չհավատալով ականջներիս։

— Այո՛, քո վիրաբուժական հիվանդների։ Հարցրեց, թե քանի հոգի էին և ովքեր։

— Ի՞նչ դու կարողացար պատասխանել նրան,— հարցրի ես։

Կարուլինը հիրավի զարմանալի աղջիկ էր։

— Ինչու չէ,— հաղթականորեն ասաց քույրս։— Այս լուսամուտից հրաշալի երևում է քո ընդունարան տանող արահետը։ Իսկ ես գերազանց հիշողություն ունեմ, Չեյմս։ Թույլ տուր ասել, շատ ավելի լավ, քան քո հիշողությունը։

— Համոզված ես դրանում,— ինքնաբերաբար մրմնջացի ես։

Քույրս, անունները մատների վրա հաշվելով, շարունակեց։

— Միսիս Բենեթը, վնասված մատով այդ տղան՝ ֆերմայից, Դուլի Գրեյսը, որ եկավ ասեղը մատից հանելու, այդ ամերիկացի ստյուարդը՝ երթային ինքնաթիռից։ Ողավ շորս։ Ա, ծերունի Ջորջ էվանսը, որ խոց ունի։ Ով վերջապես...

Նա մի պահ բազմանշանակալից լռեց։

— Հետո՞...

Կարուլինը հաղթականորեն հայտարարեց ամենակարեվորը։ Նա ֆշշացնելով արտաբերեց այդ անունը՝ ամենայն վստահությամբ, շեշտելով ճակատագրական «ս»-երը.

— Միսս Ռասելը։

Նա հեռվից բազկաթոռի թիկնակին և բազմանշանակությից նայից ինձ, իսկ երբ Կարոլինը նայում է բազմանշանակալից, հնարավոր չէ խուսափել դրանից։

— Չգիտեմ, թե ինչ նկատի ունես,— ասացի ես, ձևացնելով, թե ոչինչ չեմ հասկանում։— Ինչո՞ւ միսս Ռասելը չպետք է խորհուրդ հարցներ ինձնից իր ծնկացավի մասին։

— Ծնկացավ,— ասաց Կարոլինը։— Անհեթեթություն։ Այնպիսի ծնկացավ, ինչպիսին ես ու դու ունենք։ Նա ուրիշ բանի համար էր եկել։

— Ինչի՞,— հարցրի ես։

Կարոլինը ստիպված էր ընդունել, որ չգիտեր։

— Հենց բանն էլ այն է, որ դա էր ուզում իմանալ մյո Պուարոն։ Ինչ-որ կասկածելի բան կա այդ կնոջ մեջ, և Պուարոն գիտի դա։

— Ճիշտ նույն բանն ասաց ինձ միսիս Աքրոյդն երեկ։

— Ա՜, միսիս Աքրոյդը։ Դա այլ բան է,— մռայլվելով ասաց Կարոլինը։

— Ի՞նչ։

Կարոլինը չկամեցավ բացատրել։ Միայն մի քանի անգամ գլխան օրորեց, հավաքեց ձեռագործն ու բարձրացավ վերև՝ հագնելու մետաքսե բաց վարդագույն բլուզն ու ոսկե մեդալիոնը, որ նա ճաշի զգեստ էր համարում։

Ես մնացի այնտեղ, հայացքս հառած կրակին, մտածելով Կարոլինի խոսքերի մասին։ Արդյո՞ք Պուարոն, իրականում եկել էր միսս Ռասելի մասին տեղեկություններ ստանալու, թե միայն Կարոլինի միտքն էր, որ ամեն ինչ մեկնաբանում էր ըստ իր սեփական գաղափարների։ Ամենայն հավանականությամբ այդ առավոտ այնպիսի բան չէր զգացվել միսս Ռասելի վարքագծում, որ կասկած հարուցեր։ Ծայրահեղ դեպքում...

Հիշեցի, թե ինչպես նա խոսակցության ժամանակ համառորեն շեշտը դնում էր թմրադեղ օգտագործելու վրա, և խոսում էր թույների ու թունավորման մասին։ Բայց ոչինչ չկար դրանում։ Աքրոյդին չէին թունավորել։ Այնուամենայնիվ տարօրինակ էր...

Սանդուղքի վերևից լսվեց Կարոլինի բավական դժգոհ ձայնը։

— Ջե՛յմս, ճաշից ուշանում ես։

Մի քանի ածուխ գցեցի կրակին ու հնազանդորեն վեր բարձրացա։

Ինչ էլ ուզում է լինի, հաճելի է, երբ տանը խաղաղություն է տիրում։

Գլուխ 12

ՍԵՂԱՆԻ ԾՈՒՐՋ

Միացյալ հետաքննությունը նշանակված էր երկուշաբթի օրը։

Ես մտադիր չեմ մանրամասն ներկայացնել այդ խորհրդակցությունը։ Այդպես վարվել, կնշանակեր նույն թեմային անդրադառնալ կրկին ու կրկին։ Ոստիկանության հետ պայմանավորվածության համաձայն, շատ քիչ բան էր ուշադրության ներկայացվել։ Ես վկայություն տվեցի Աքրոյդի մահվան պատճառի և հավանական ժամանակի վերաբերյալ։ Ռալֆ Փեյթընի բացակայությունը խիստ և իրավացի դիտողության արժանացավ գործը վարող քննիչի կողմից։

Հետո Պուարոն ու ես մի քանի խոսք փոխանակեցինք տեսուչ Ռագլանի հետ։ Տեսուչը շատ մռայլ էր։

— Լավ չէ, մսյո Պուարո,— ասաց նա,— ես աշխատում եմ գործի մասին դատել օրինականորեն ու ազնվորեն։ Ես տեղացի եմ, և կապիտան Փեյթընին բազմիցս տեսել եմ Քրանչեսթրում։ Չեմ ուզում, որ նա մեղավոր համարվի, բայց իրավիճակը վատ է, ինչպես էլ ուզում եք նայեք այդ գործին։ Եթե նա անմեղ է, ինչո՞ւ չի ներկայանում։ Հանցանշաններ կան նրա դեմ, բայց շատ հնարավոր է, դրանք կարելի էր բացատրել։ Ուստի, ինչո՞ւ բացատրություն չի ներկայացնում։

Շատ ավելի բան կար թաքնված տեսուչի խոսքերում, քան պատկերացնում էի այդ պահին։ Ռալֆի արտաքին տրվյալների մասին հաղորդվել էր Անգլիայի բոլոր նավահանգիստներ ու երկաթգծի կայարաններ։ Ամենուրեք ոստիկա-

նությունը ոտքի էր ելել։ Քաղաքի նրա տունը և բոլոր այն տները, ուր նա սովորություն ուներ հաճախել, հսկողության տակ էին։ Այդպիսի կորդոնի պայմաններում թվում էր, թե հնարավոր չէր, որ Ռալֆը կարողանար խուսափել հայտնաբերվելուց։ Նա ճամպրուկ չուներ և, որքան հայտնի էր, ոչ էլ՝ փող։

— Չեմ կարողանում գտնել մեկին, որ նրան տեսած լինի կայարանում այդ գիշեր,— շարունակեց տեսուչը։— Բայց միևնույն ժամանակ հայտնի է, որ նա այնտեղ է եղել, և այն կարծիքը կա, որ ինչ-որ մեկը նկատել է նրան։ Լիվերպուլից էլ լուր չկա։

— Կարծում եք Լիվերպո՞ւլ է գնացել,— հարցրեց Պուարոն։

— Դե, տոմսի վրա է գրված։ Բացի այդ, կայարանից տրված հեռախոսազանգը, Լիվերպուլի ճեպընթացը մեկնելուց հենց երեք րոպե առաջ՝ այդ ամենը վկայում են, որ ինչ-որ բան կա դրանում։

— Եթե ոչ հետքերը կորցնելու դիտավորություն։ Շատ հավանական է, որ հեռախոսազանգը հենց այդ նպատակով էլ եղել է։

— Հետաքրքիր միտք է,— ասաց տեսուչը ավյունով։— Դուք իրո՞ք կարծում եք, որ հեռախոսազանգը այդ նպատակն էր հետապնդում։

— Չգիտեմ, բարեկամս,— ասաց Պուարոն լրջորեն։— Բայց ահա թե ինչ կասեմ ձեզ. կարծում եմ, երբ գտնենք այդ հեռախոսազանգի պատճառը, կբացահայտենք նաև սպանության գաղտնիքը։

— Առաջ էլ ինչ-որ նման բան ասացիք, հիշում եմ,— նկատեցի ես՝ զարմացած նրան նայելով։

Պուարոն գլխով արեց։

— Միշտ էլ անդրադառնում եմ դրան,— ասաց նա լրջորեն։

— Ինձ թվում է դա բոլորովին գործին չի վերաբերում,— հայտարարեցի ես։

— Չէի ասի,— առարկեց տեսուչը։— Բայց խոստովանանք լինի, ինձ թվում է մյո Պուարոն փոքր-ինչ շատ է կըր-

կընում նույն բանը։ Առհղծված բացահայտելու ավելի լավ միջոցներ ունենք, քան դա։ Օրինակ, դաշույնի վրայի մատնահետքերը։

Պուարոն անսպասելիորեն դարձավ անտարբեր, ինչպես հաճախ էր պատահում նրա հետ, երբ որևէ բանից անհանգստացած էր լինում։

— Մսյո տեսուչ,— ասաց նա,— զգուշացեք փակ..., ...Comment dire?[1]... նեղ փողոցից, որ ելք չունի։

Տեսուչ Ռագլանը զարմացած նայեց նրան, բայց ես ավելի ճարպիկ գտնվեցի և հարցրի.

— Փակ ծառուղի՞ նկատի ունեք։

— Այո՛, նրբանցք, որ ելք չունի։ Այդպիսին կարող են լինել նաև մատնահետքերը. դրանք կարող են փակուղու մեջ գցել ձեզ։

— Ձեմ հասկանում, ինչպե՞ս կարող է դա միանգամայն հիմնավոր լինել,— ասաց ոստիկանը։— Դուք ակնարկում եք, որ դրանք կե՞ղծ են։ Ես կարդացել եմ, որ նման բաներ եղել են։ Ձեմ կարող ասել, թե իմ գործունեության ընթացքում երբևիցե հանդիպել եմ այդպիսի բանի։ Բայց կեղծն ու ճշմարիտն անպայման առաջնորդում են ինչ-որ տեղ։

Պուարոն, լայն տարածելով ձեռքերը, սոսկ թոթվեց ուսերը։

Տեսուչն այնուհետև մեզ ցույց տվեց մատնահետքերի մեծացված տարբեր լուսանկարներ և անցավ օղակների ու հանգույցների բացատրությանը։

— Ինչպե՞ս հասկանալ,— ասաց նա վերջապես, արտահայտելով Պուարոյի անկողմնակալ վերաբերմունքից,— դուք ընդունում եք, որ այդ հետքերը թողել է մի մարդ, ով այնքան եղել է Աքրոյդի տա՞նը։

— Bien entendu,[2]— ասաց Պուարոն, գլուխն օրորելով։

— Դե լավ, ես վերցրել եմ բոլոր տնեցիների մատնահետքերը, բոլորի, նկատի ունեցեք, տարեց լեդիից մինչև վերջին սպասուհին։

---

1 Այսպես ասած (Ֆր.)։

2 Անշուշտ (Ֆր.)։

Ջեմ կարծում, որ միսիս Աքրոյդին հրճվանք կպատճառեր, եթե իմանար, որ իրեն համարում են տարեց լեդի։ Ստիպված պիտի լիներ պատկառելի քանակությամբ կոմետիկա օգտագործել։

— Բոլորի,— կրկնեց տեսուչը։

— Ներառյալ իմը,— չոր տոնով ասացի ես։

— Շատ լավ։ Բայց դրանցից ոչ մեկը չի համապատասխանում թողած հետքերին։ Ուստի, մնում են Ռալֆ Փեյթընն ու բժշկի հիշատակած խորհրդավոր անծանոթը։ Երբ գտնենք նրանց...

— Շատ թանկ ժամանակ կորցնելու գնով,— միջամտեց Պուարոն։

— Ես այնքան էլ չեմ հասկանում ձեզ, մսյո Պուարո։

— Ասում եք, թե վերցրել եք բոլոր տնեցիների մատնահետքերը,— փնթփնթալով ասաց Պուարոն։— Իսկ դա իրո՞ք այդպես է, մսյո տեսուչ։

— Իհարկե։

— Առանց բացառության՞ն։

— Առանց բացառության։

— Ողջերի՞նն ու մեռածների՞նը։

Մի պահ տեսուչը շվարեց, հետո ասաց.

— Նկատի ունեք...

— Մեռածին, մսյո տեսուչ։

Հարկ եղավ մի երկու րոպե, որպեսզի տեսուչը հասկանար։

— Ես այն կարծիքին եմ,— անխռով ասաց Պուարոն,— որ դաշույնի երախակալի վրայի մատնահետքերը միասր Աքրոյդինն են։ Դա դժվար չէ հաստատել։ Նրա մարմինը դեռ ձեր տրամադրության տակ է։

— Բայց ինչո՞ւ։ Ի՞նչ իմաստ ունի։ Մի՞թե դա ինքնասպանություն եք համարում, միստր Պուարո։

— Օ՛, ո՛չ։ Ըստ իս, մարդասպանը ձեռնոցներով է եղել կամ ինչ-որ բանով փաթաթել է իր ձեռքը։ Հարվածելուց հետո բարձրացրել է զոհի ձեռքը և դրանով սեղմել դաշույնի երախակալը։

— Իսկ ինչո՞ւ։

Պուարոն կրկին թոթվեց ուսերը։

— Գործը խճճելու համար, նույնիսկ ավելին։

— Լավ,— ասաց տեսուչը,— կուսումնասիրեմ։ Նախ ինչի՞ց գաղափար կազմեցիք։

— Երբ դուք այնքան բարի եղաք, որ ցույց տվեցիք ինձ դաշույնը և ուշադրություն հրավիրեցիք մատնահետքերին։ Ես շատ քիչ բան գիտեմ մատնահետքերի օրակաների ու հանգույցների մասին, ազնվորեն խոստովանում եմ իմ տգիտությունը։ Բայց մտքովս անցավ, որ մատնահետքերը ինչ-որ անհարմար դիրքում էին։ Հարվածելու համար ես այդպես չէի բռնի դաշույնը։ Հետևաբար, թիկունքից ուսի վրայով աջ ձեռքը բերել և ճիշտ դիրքով դնել դժվար կլիներ։

Ոտգլանը զարմացած նայեց փոքրիկ մարդուն։ Պուարոն, ամենայն անտարբերությամբ վերարկուի թևքից թափ տվեց փոշեհատիկը։

— Լավ, դա գաղափար է։ Կուսումնասիրեմ ինչպես հարկն է։ Բայց չե՞ք հիասթափվի, եթե ոչինչ չստացվի դրանից։

Նա ջանաց սիրալիր և հովանավորող տոնով արտահայտել այդ ամենը։ Պուարոն հայացքով ճամփա դրեց նրան։ Հետո դարձավ ինձ՝ փայլն աչքերում։

— Մյուս անգամ,— նկատեց նա,— կաշխատեմ չմոռանալ նրա ինքնասիրության մասին։ Իվ քանի որ հիմա մնացինք ինքներս, ի՞նչ եք կարծում, հարգելի բարեկամ, ընտանեկան մի փոքր հավաքույթ չկազմակերպե՞նք։

Ինչպես Պուարոն կոչեց, «ընտանեկան մի փոքր հավաքույթը» կայացավ մոտ կես ժամ հետո։ Պուարոն նստեց սեղանի գլխին, ինչպես կոլեգիայի նախագահը նիստի ժամանակ։ Սպասավորները ներկա չէին, այնպես որ վեց հոգի էինք. միսիս Աքրոյդը, Ֆլորան, մայոր Բլանթը, Ռայմոնդը, Պուարոն ու ես։

Երբ բոլորը հավաքվեցին, Պուարոն վեր կացավ և գլուխ տվեց։

— Պարոնա՛յք և տիկնա՛յք, ես ձեզ կանչել եմ որոշակի նպատակով։— Նա մի պահ լռեց։— Նախ, ուզում եմ խնդրել մադմուազելին...

— Ի՞նձ, —հարցրեց Ֆլորան։

— Մադմուազել, դուք նշանված եք կապիտան Ռալֆ Փեյթընի հետ։ Ծե՛ք որևէ մեկի նա վստահում է, այդ դուք եք։ Շատ եմ խնդրում, ամենայն լրջությամբ, եթե գիտեք որտեղ է նա, համոզեք, որ ներկայանա։ Մի վայրկյան,— ասաց նա, տեսնելով, որ Ջլորան ուզում է խոսել,— ոչինչ մի ասեք, մինչև որ լավ կշռադատեք։ Մադմուազել, նրա դրությունը օրեցօր դառնում է ավելի վտանգավոր։ Ծե՛ք իսկույն ներկայանար, նշանակություն չէր ունենա, թե որքան մեղադրանք հարուցող են այդ փաստերը, հնարավորություն կունենար բացատրություն տալու դրանց։ Բայց ի՞նչ է նշանակում այդ լռությունը, փախուստը։ Հաստատում են մի բան, որ նա հանցավոր է համարում իրեն։ Մադմուազել, եթե դուք իրոք հավատում եք, որ նա անմեղ է, համոզեք, որ ներկայանա, քանի դեռ ուշ չէ։

Ջլորան խիստ գունատվեց։

— Շատ ուշ,— կրկնեց նա թույլ ձայնով։

Պուարոն առաջ հակվեց, նայելով նրան։

— Լավ մտածեք, մադմուազել,— ասաց նա շատ մեղմ տոնով,— հայրիկ Պուարոն է խնդրում, ծերուկ Պուարոն, նա, ով շատ բան գիտի և մեծ փորձ ունի։ Վստահեք ինձ և ասացեք, թե որտե՞ղ է Ռալֆ Ֆեյթընը։

Աղջիկը վեր կացավ ու նայեց Պուարոյին։

— Մսյո Պուարո, երդվում եմ, երդվում եմ ամենայն լրջությամբ, որ պատկերացում չունեմ, թե որտեղ է Ռալֆը, և ապանության օրից ի վեր ո՛չ տեսել եմ նրան, ո՛չ էլ լսել նրա մասին,— ասաց նա հստակ ձայնով և նորից նստեց։ Մի պահ Պուարոն լուռ հայացքը հառեց նրան, հետո ձեռքով կորուկ հարվածեց սեղանին։

— Bien![1] Ահա թե ինչ,— ասաց նա, և դեմքը խիստ արտահայտություն ստացավ։— Հիմա դիմում եմ մյուսներին՝ սեղանի շուրջը նստածներին՝ միսիս Աքրոյդին, մսյո Բլանթին, բժիշկ Շեփարդին, միստր Ռայմոնդին։ Բոլորդ էլ բարեկամներ ու մերձավորներ եք նրան, ով հիմա բացակայում է։ Ծե՛ք գիտեք, թե որտեղ է Ռալֆ Փեյթընը թաքնվել, ասացե՛ք։

---

1 Լա՛վ (Ֆր.)։

Տիրեց երկարատև լռություն։ Պուարոն հերթով նայեց բոլորին։

— Աղաչո՜ւմ եմ ձեզ,— ասաց նա ցածր ձայնով,— ասացե՛ք։

Սակայն ոչ ոք չխոսեց։ Վերջապես միսիս Աքրոյդը խզեց լռությունը։

— Պետք է ասեմ,— սկսեց նա թախծալի ձայնով,— որ Ռալֆի բացակայությունը շատ տարօրինակ է... շատ տարօրինակ, իհարկե։ Չգալ այսպիսի ժամանակ։ Գիտեք, թվում է, թե ինչ-որ բան կա թաքնված դրանում։ Ջեմ կարողանում չնտածել, Ֆլորա, հոգյակս, որ բարեբախտաբար ձեր նշանադրությունը պաշտոնապես չի հայտարարվել։

— Մայրի՞կ,— ճչաց Ֆլորան։

— Նախախնամություն,— հայտարարեց միսիս Աքրոյդը։— Ես սրտանց հավատում եմ նախախնամության, մի աստվածության, որ կերտում է մեր ճակատագիրը, ինչպես բանաստեղծական ձևով արտահայտել է Շեքսպիրը։

— Բայց չէ՞ որ դուք չեք կարծում, թե նախախնամությունն է այդ բանն արել, առանց կոմնակի միջամտության,— ծիծաղելով հարցրեց Ջեոֆրի Ռայմոնդը։

Ինձ թվաց, թե նրա ակնարկը նպատակ ուներ թուլացնելու լարվածությունը, բայց միսիս Աքրոյդը հանդիմանական մի հայացք գցեց նրա վրա և հանեց թաշկինակը։

— Ֆլորան ազատվել է բազմաթիվ վատ ու տհաճ բաներից։ Ես նկատի չունեմ, որ սիրելի Ռալֆն ինչ-որ առնչություն ունի խեղճ Ռոջերի մահվան հետ։ Այդպիսի բան չեմ մտածում։ Բայց, մյուս կողմից, միշտ էլ դյուրահավատ եմ եղել դեռ մանուկ հասակից։ Ես հակված չեմ որևէ մեկի մասին վատ բան մտածելու։ Սակայն, չպետք է մոռանալ, որ Ռալֆն այստեղ չէ։ Ասում են, երբեմն հետևանքները երկար ժամանակ հետո են երևում։ Մարդիկ ամենևին պատասխանատու չեն իրենց արարքների համար։ Անկախ իրենցից, զբրկվում են ինքնատիրապետումից, հասկանում եք։

— Մայրի՛կ,— ճչաց Ֆլորան,— մի՞թե կարծում ես Ռալֆն է սպանել։

— Դեհ, հանգստացեք, միսիս Աքրոյդ,— ասաց Բլանթը։

— Չգիտեմ ինչ մտածել,— ասաց միսիս Աքրոյդն արցունքն աչքերին,— այնքան անտանելի է այս ամենը։ Հետաքրքիր է, ի՞նչ է լինելու, եթե Ռալֆը մեղավոր ճանաչվի։

Ռայմոնդը մոլեգնորեն սեղանի մոտից ետ հրեց իր աթոռը։ Մայո Բլանթը, պահպանելով հանգստությունը, մոտիկ նայում էր միսիս Աքրոյդին։

—Շատ անսպասելի էր այս ամենը, հասկանո՞ւմ եք,— ասաց միսիս Աքրոյդը համառորեն։— Ոոջերը միշտ նրան փողի կարիքի մեջ էր պահում, իհարկե, լավագույն նկատումներով։ Տեսնում եմ, որ բոլորդ էլ ինձ դեմ եք, բայց ինձ շատ տարօրինակ չի թվում, որ Ռալֆը չերևաց, և պետք է ասեմ, որ երջանիկ եմ, որ Ջլորայի նշանադրությունը պաշտոնապես չի հայտարարվել։

— Դա կլինի վաղը,— ասաց Ջլորան հաստակ ձայնով։

— Ջլորա՜,— սարսափահար ճչաց մայրը։

— Խնդրում եմ, միստր Ռայմոնդ, հայտարարություն ուղարկեք «Մորնինգ փոստ» և «Թայմզ»,— ասաց Ջլորան, դիմելով քարտուղարին։

— Եթե համոզված եք, որ դա անխոհեմություն չի լինի, միս Աքրոյդ,— պատասխանեց քարտուղարը ծանրակշիռ տոնով։

Ջլորան ինքնաբերաբար դիմեց Բլանթին.

— Էլ ի՞նչ կարող եմ ասել։ Ես պետք է զորավիգ լինեմ Ռալֆին։ Չե՞ք տեսնում, որ ես պարտավոր եմ։

Նա խիստ զննական մի հայացք գցեց Բլանթի վրա, և, երկարատև լռությունից հետո, սա կորուկ գլխով արեց։

Միսիս Աքրոյդը բուռն կերպով բողոքեց։ Ջլորան անմասնակից մնաց։ Ուստի խոսեց Ռայմոնդը.

— Ես հասկանում եմ ձեր շարժառիթները, միս Աքրոյդ։ Բայց շատ չե՞ք շտապում արդյոք։ Մի երկու օր սպասեք։

— Վաղը,— ասաց Ջլորան հաստակ ձայնով։— Մայրիկ, լավ չէ այդպես համառելը։ Ինչպիսին էլ որ լինեմ, չեմ դավաճանի իմ բարեկամներին։

— Մայո Պուարո,— արցունքներն աչքերին դիմեց նրան միսիս Աքրոյդը,— մի՞թե ոչ մի բան չեք ուզում ասել։

— Ասելու բան չկա,— միջամտեց Բլանթը։— Ջլորան

ճիշտ է վարվում։ Ջնայած բոլոր տեսակի խոչընդոտներին, գործիդ կլինեմ նրան։

Ֆլորան նրան մեկնեց իր ձեռքերը և ասաց.

— Շնորհակալություն, մայր Բլանթ։

— Մադմուազել,— ասաց Պուարոն,— թույլ կտա՞ք մի ծերուկի շնորհավորելու ձեզ ձեր խիզախության ու անձնվիրության համար։ Եվ սխալ չե՞ք հասկանա ինձ, եթե խնդրեմ, որ հետաձգեք ձեր այդ հայտարարությունը, ծայրահեղ դեպքում, ևս երկու օր։

Ֆլորան տատանվեց։

— Մադմուազել, ես խնդրում եմ որքան Ռալֆ Փեյթընի, նույնքան և հանուն ձեզ։ Մոայլվո՞ւմ եք։ Չե՞ք հասկանում, թե դա ինչ է նշանակում։ Բայց հավատացնում եմ, այդպես է։ Գործն ինձ եք վստահել, ուստի չպետք է խանգարեք։

Նախքան պատասխանելը, Ֆլորան մի քանի րոպե լուռ էր։

— Իմ դուրը չի գալիս այս ամենը, բայց կվարվեմ ինչպես ասում եք,— վերջապես ասաց նա և նորից նստեց սեղանի մոտ։

— Իսկ հիմա, պարոնայք ու տիկնայք,— արագ ասաց Պուարոն,— կշարունակեմ։ Հասկացեք մի բան. ես ուզում եմ հարցուփորձի միջոցով իմանալ ճշմարտությունը։ Ճշմարտությունը որքան էլ սարսափելի լինի, անդիմադրելիորեն իրեն է ձգում այն մարդու միտքն ու երևակայությունը, ով ձգտում է հասնել դրան։ Ես արդեն երիտասարդ չեմ, և իմ ընդունակությունները թերևս այն չեն, ինչպես առաջ...— Նա ակնհայտորեն սպասում էր, որ դրան հետևելու էր առարկությունների պոռթկումը։— Շատ հավանական է, որ այս հետաքննությունն իմ վերջին գործն է։ Բայց Հերքյուլ Պուարոն ձախողակ չէ։ Պարոնայք ու տիկնայք, հավատացնում եմ ձեզ, ես ուզում եմ իմանալ ճշմարտությունը և կիմանամ ի հեճուկս ձեզ։

Նա վերջին բառերն ասաց զայրացուցիչ տոնով, ասես մեր երեսին շպրտելով դրանք։ Բոլորս մի տեսակ ցնցվեցինք, բացի Ջեոֆրի Ռայմոնդից, որ ինչպես միշտ, մնաց բարեհոգի ու անվրդով։

— Ի՞նչ է նշանակում «ի հեճուկս ձեզ»,— հարցրեց նա՝ փոքր-ինչ բարձրացնելով հոնքերը։

— Հենց այն, ինչ ասացի, մայր։ Այստեղ գտնվող ձեզնից յուրաքանչյուրը ինչ-որ բան թաքցնում է ինձնից։

Լավեց բողոքի թույլ մի մրմնջոց։ Պուարոն բարձրացրեց ձեռքը.

— Այո՛, այո՛, ես գիտեմ ինչ եմ ասում։ Դա կարող է ոչ կարևոր, չնչին բան լինել, որ թվում է, թե գործին չի վերաբերում, բայց այդպես է։ Ձեզանից յուրաքանչյուրն ինչ-որ բան է թաքցնում ինձնից։ Դե, ճիշտ չե՞մ։

Նրա մարտահրավեր նեոտող ու հանդիմանանքով լի հայացքը թևածեց սեղանով մեկ։ Ով բոլորը խոնարհեցին աչքերը։ Այո՛, ես՝ նույնպես։

— Պատասխան ստացա,— ասաց Պուարոն ծիծաղելով և վեր կացավ տեղից։— Դիմում եմ բոլորիդ։ Ասացեք ճշմարտություն, ողջ ճշմարտությունը։

Տիրեց լռություն։

— Ոչ ոք չի՞ ուզում խոսել։

Նա կրկին ծիծաղեց։

— C'est dommage[1],— ասաց Պուարոն և դուրս եկավ։

Գլուխ 13

ՍԱԳԻ ՓԵՏՈՒՐԻ ԿՈԹՈՒՆԸ

Այդ երեկո, Պուարոյի խնդրանքով, ճաշից հետո գնացի նրա մոտ։ Կարոլինը ճանապարհ դրեց ինձ ակնհայտ դժկամությամբ։ Թվաց, թե հաճույքով կուզենար ուղեկցել ինձ։

Պուարոն հյուրասիրաբար ողջունեց ինձ։ Փոքրիկ սեղանին դրել էր մի շիշ իտալական վիսկի (որ տանել չեմ կարող), սոդայաջրով սիֆոն ու բաժակ։ Ինքը զբաղված էր տաք

---

[1] Ափսոս (Ֆր.)։

շոկոլադ պատրաստելով։ Դա նրա սիրած խմիչքն էր, ինչպես խմացա հետագայում։

Նա քաղաքավարությամբ հարցուփորձ արեց քրոջս մասին, որին շատ հետաքրքիր կին էր համարում։

— Ինձ թվում է, մեծամտություն եք ներշնչել նրան,— ասացի ես։— Ի՞նչ նորություն կիրակի կեսօրվա մասին։

Նա ծիծաղեց ու աչքով արեց։

—Ես սիրում եմ փորձագետի հետ գործ ունենալ,— ակնարկեց նա, բայց չբացատրեց, թե ինչ նկատի ուներ։

— Այնուամենայնիվ, տեղական բոլոր ճիշտ ու կեղծ լուրերն իմացել եք,— նկատեցի ես։

— Ով բավական արժեքավոր տեղեկություններ,— ավելացրեց նա անխռով։

— Ինչպե՞ս օրինակ...

Նա օրորեց գլուխը։

— Ինչո՞ւ ճշմարտությունը չասացիք ինձ,— հակահարված տվեց նա։— Այնպիսի մի վայրում, ինչպիսին այս է, բոլոր Ռալֆ Փեյթլենների գործերն անպայման իմացվում են։ Եթե քույրդ այդ օրը պատահականորեն չանցներ անտառով, ապա մեկ ուրիշը կանցներ։

— Թերևս,— ասացի ես դժկամ։— Իսկ ինչո՞վ եք բացատրում իմ հիվանդների նկատմամբ ցուցաբերած ձեր այդ հետաքրքրությունը։

Նա կրկին աչքով արեց։

— Միայն մեկի նկատմամբ, բժիշկ, միայն մեկի։

— Վերջինի՞,— համարձակվեցի հարցնել։

— Ինձ թվում է, թե միսս Ռասելն ուսումնասիրության ամենահետաքրքիր օբյեկտն է,— ասաց նա խուսափողական տոնով։

— Դուք համաձա՞յն եք քրոջս ու միսիս Աքրոյդի հետ, որ ինչ-որ կասկածելի բան կա միսս Ռասելի մեջ,— հարցրի ես։

— Էհ, ինչպե՞ս ասացիք, կասկածելի՞։

Բացատրեցի որքան կարող էի։

—Եվ դա ասում են նրանք, այնպես չէ՞։

— Մի՞թե քույրս երեկ այդ բանը չի հաղորդել ձեզ։

— C'est possible.[1]

— *Համենայն դեպս առանց հիմք ունենալու։*

— Les femmes,[2] *ընդհանրացրեց Պուարոն։— Նրանք սքանչելի՜ են։ Նրանք մոգոնում են դիպված և հրաշքով դուրս գալիս իրավացի։ Իրականում ոչ թե նրա համար, որ դա իրոք այդպես է։ Կանայք, առանց հասկանալու, ենթագիտակցաբար նկատում են հազարավոր մանրուքներ։ Նրանց ենթագիտակցական միտքը այդ մանրուքներն իմի է բերում, և արդյունքը նրանք ինտուիցիա են համարում։ Ես հմուտ եմ հոգեբանության հարցերում։ Այդ երևույթները ծանոթ են ինձ։*

Նա փքվեց, ընդունելով կարևոր տեսք, որն այնքան ծիծաղելի թվաց ինձ, որ փոթկացի։ Նա մի կում շոկոլադ խմեց և խնամքով սրբեց բեղերը։

— *Կուզենայի իմանալ,— բռնկվեցի ես,— թե իրականում ի՞նչ եք մտածում այդ ամենի մասին։*

Նա ցած դրեց բաժակը։

— *Շա՞տ եք ուզում։*

— *Այո՛։*

— *Դուք տեսել եք այն, ինչ ես եմ տեսել։ Մի՞թե մեր մտքերը նույնը չեն։*

— *Ինձ թվում է, դուք ծաղրում եք ինձ,— վճռականորեն ասացի ես։— Իհարկե, ես նման բաների փորձ չունեմ։*

Պուարոն ներողամտաբար ժպտաց։

— *Դուք նման եք մի երեխայի, որն ուզում է իմանալ, թե ինչպես է աշխատում մեխանիզմը։ Դուք ուզում եք տեսնել գործը, բայց ոչ այնպես, ինչպես ընտանեկան բժիշկը, այլ խուզարկուի աչքերով, ով գիտակ է և անաչառ բոլորի նկատմամբ, ում համար բոլորն էլ օտար են ու հավասարապես կասկածելի։*

— *Շատ լավ եք ներկայացնում,— ասացի ես։*

— *Այսպիսով մի փոքր «լեկցիա» կարդացի ձեզ համար։ Առաջին հերթին պետք է պարզել, թե ինչ պատահեց այդ երեկո, միշտ նկատի ունենալով, որ յուրաքանչյուր վկայություն ուշով կարող է տալ։*

---

1 *Թերևս (ֆր.)։*

2 *Կանայք (ֆր.)։*

— Բավական կասկածելի դիրքորոշում։

— Բայց անհրաժեշտ, հավատացնում եմ ձեզ, բավական անհրաժեշտ։ Նախ, բժիշկ Շեպարդը տնից դուրս է գալիս իննից տաս պակաս։ Որտեղի՞ց գիտեմ։

— Քանի որ ես եմ ասել։

— Բայց դուք կարող էիք ճիշտը չասել կամ ժամացույցը կարող էր սխալ լինել։ Սակայն Փարքըրը նույնպես վկայում է, որ տնից դուրս եք եկել իննից տաս պակաս։ Այսպիսով, մենք ընդունում ենք այդ փաստարկումը և անցնում առաջ։ Ժամը իննին դուք անսպասելիորեն հանդիպում եք մի մարդու,— այստեղ մենք գործ ունենք այսպես կոչված «խորհրդավոր անծանոթի պատմության» հետ,— հենց Փարքի դարպասների մոտ։ Որտեղի՞ց է դա հայտնի։

—Ես եմ ասել,— կրկնեցի ես, բայց Պուարոն անհամբեր մի շարժումով ընդհատեց ինձ.

— Ա, դա նշանակում է, որ դուք բարեկամս, փոքր-ինչ տկարամիտ եք այսօր։ Դուք գիտեք, որ դա այդպես է, բայց ե՞ս որտեղից գիտեմ։ Սակայն կարող եմ ասել ձեզ, որ այդ խորհրդավոր անծանոթը պատրանք չի եղել, որովհետև նախքան ձեզ հանդիպելը, մի քանի րոպե առաջ հանդիպել է միսս Գանեթի սպասուհուն և նրանից էլ հարցրել Ֆերնլի փարքի ճանապարհը։ Ուստի, ընդունում ենք, որ նա իրոք գոյություն ունի և համոզված ենք երկու բանում. որ նա անծանոթ է եղել տեղանքին և գնացել է Ֆերնլի։ Դրանում ոչ մի գաղտնիք չկա, քանզի երկու անգամ հարցրել է Ֆերնլիի ճանապարհը։

— Այո՛, ճիշտ է,— ասացի ես։

— Ուստի մտադրվել եմ որքան հնարավոր է շատ բան իմանալ այդ մարդու մասին։ Նա խմել է «երեք վարազներում», ինչպես տեղեկացա, և մատուցողուհու ասելով խոսել ամերիկյան առոգանությամբ, նշել է, որ հենց նոր է եկել Նահանգներից։ Դուք նկատեցի՞ք, որ նա ամերիկյան առոգանությամբ էր խոսում։

— Այո՛, կարծես թե,— ասացի ես մի պահ մտածելուց հետո,— բայց շատ աննշան։

— Précisément[1]։ Կա նաև սա, եթե հիշում եք, գտա տա-պավարում։

Նա մեկնեց սապի փեսուրի կոթունը։ Զարմացած նայեցի դրան, և վերհիշեցի ինչ-որ բան, որ կարդացել էի։

Պուարոն, որ ուշադիր դեմքիս էր նայում, գլխով արեց։

— Այո՛, հերոինի փոշի։ Թմրամոլներն այդպիսի կոթուն-ների մեջ են պահում հերոինը և քթով են ներս քաշում։

— Դիամորֆին հիդրոքլորիդ,— ինքնաբերաբար ասացի ես։

— Թմրադեղ ընդունելու այս եղանակը շատ է տարած-ված օվկիանոսի այն կողմում։ Մի այլ ապացույց, որ այդ մարդը եկել է Կանադայից կամ Նահանգներից։

— Ի՞նչը սկզբում ձեր ուշադրությունը հրավիրեց այդ ամառանոցի վրա,— հետաքրքրվեցի ես։

— Իմ բարեկամ տեսուչը ինքնին հասկանալի համարեց, որ ամեն մեկն էլ կօգտվեր այդ արահետից որպես տուն տա-նող ամենակարճ ճանապարհ, բայց հենց որ տեսա ամառա-նոցը, իսկույն հասկացա, որ նույն արահետով կարող էր գնալ նաև ինչ-որ մեկը, տեսակցության վայր ընտրելով այդ ամառանոցը։ Այժմ միանգամայն պարզ է թվում, որ անծա-նոթը ո՛չ շքամուտքին է մոտեցել, ո՛չ էլ ետնամուտքին։ Ուստի, հարց է առաջանում, տնեցիներից որևէ մեկը ո՞րտե՞ղ է եկել հանդիպելու նրան։ Եթե այո, ապա փոքրիկ ամառա-նոցից ավելի հարմար տեղ չէր կարող լինել։ Մանրապնին ուսումնասիրեցի այդ հանգամանքն այն հույսով, որ հա-վանաբար այդ առեղծվածի բանալին գտնելու եմ ներսում։ Եվ գտա երկու բան՝ բատիստի կտորը և սապի փեսուրի կո-թունը։

— Բատիստի կտո՞րը,— զարմացած հարցրի ես։— Իսկ դա ի՞նչ կապ ունի։

Պուարոն բարձրացրեց հոնքերը։

— Գործի չեք դնում ձեր զորշավուն փոքրիկ բջիջները,— չոր տոնով նկատեց նա։— Մի՞թե բատիստի կտորը որևէ բան չի վկայում ձեզ։

---

1 Հարկավ (Ֆր.)։

— Ամենևին։ Ինչևիցե, այդ անձնավորությունը գնաց ամառանոց՝ հանդիպելու ինչ-որ մեկի։ Ո՞վ էր նա։

— Հենց դա է խնդիրը,— ասաց Պուարոն։— Մի՞թե մոռացել եք, որ միսիս Աքրոյդն ու իր աղջիկը Կանադայից են եկել այստեղ ապրելու։

— Դա՞ նկատի ունեիք, երբ այսօր մեղադրում էիք նրանց ճշմարտությունը թաքցնելու մեջ։

— Թերևս։ Մի հարց էլ։ Ի՞նչ կարծիքի եք աղախնի պատմության մասին։

— Ի՞նչ պատմություն։

— Աշխատանքից նրան հեռացնելու պատմությունը։ Մի՞թե կես ժամ է պետք մի սպասուհու հեռացնելու համար։ Մի՞թե հավանական է այդ կարևոր թղթերի պատմությունը։ Եվ հիշեք, թեև նա ասում է, որ ինն անց կեսից մինչև տասը եղել է իր ննջասենյակում, բայց ոչ ոք չի կարող հաստատել դա։

— Դուք շփոթության մեջ եք գցում ինձ,— ասացի ես։

— Դա ավելի է պարզվում ինձ համար։ Բայց այժմ ասացեք սեփական կարծիքն ու տեսակետն այդ մասին։

Մի թուղթ հանեցի գրպանիցս։

— Մի քանի վկայություններ եմ գրի առել,— ներողություն հայցող տոնով ասացի ես։

— Հիանալի է... ուրեմն դուք մեթոդ ունեք։ Ուստի լսենք։

Կարլացի փոքր-ինչ անհաստատ ձայնով։

— Նախ ասեմ, որ մարդ պետք է տրամաբանորեն նայի երևույթներին...

— Նույն բանը հաճախ կրկնում էր իմ խեղճ Հաստինգսը,— ընդհատեց Պուարոն,— բայց ավա՛ղ, երբեք այդպես չէր վարվում։

— Կետ առաջին,— կարդացի ես.— ինն անց կեսին միստր Աքրոյդը խոսել է ինչ-որ մեկի հետ։ Կետ երկրորդ. երեկոյան ինչ-որ պահի Ռալֆ Փեյթընը ներս է մտել լուսամուտից. այդ մասին վկայում են նրա ոտնահետքերը։ Կետ երրորդ. միստր Աքրոյդը նյարդայնացած էր այդ երեկո, և, հավանաբար, ընդունել է ինչ-որ մեկի։ Կետ չորրորդ. Աքրոյ-

գի հետ խոսող անձնավորությունը փող է խնդրել։ Իսկ մեզ հայտնի է, որ Ռալֆ Փեյթընը նեղ վիճակում էր։

Այս շուրս կետերը վկայում եմ, որ ժամը իմն աց կեսին միստր Աֆրոյդի մոտ գտնվող անձնավորությունը Ռալֆ Փեյթրնն է եղել։ Սակայն հայտնի է նաև, որ տասին տասնրհինգ պակաս Աֆրոյդը ողջ է եղել, հետևաբար Ռալֆը չի սպանել նրան։ Ռալֆը պատուհանը բաց էր թողել, որտեղից էլ հետո ներս է մտել մարդասպանը։

— Ո՞վ է այդ մարդասպանը,— հարցրեց Պուարոն։

— Անծանոթ ամերիկացին։ Ըստ երևույթին նա սերտ կապեր է ունեցել Փարքըրի հետ, և հնարավոր է, որ Փարքըրն էլ շանտաժի է ենթարկել միսիս Ֆերարին։ Եթե այդպես է, ուրեմն Փարքըրը շատ բան էր լսել հասկանալու համար, որ խաղն ավարտված է, և այդ մասին տեղեկացրել է մեղսակցին, իսկ սա իր հերթին կատարել է հանցագործությունը Փարքըրի տված դաշույնով։

— Դա սոսկ տեսակետ է,— ասաց Պուարոն,— թեև ըզգացվում է, որ ձեր ուղեղի բջիջներն աշխատում են։ Սակայն շատ բան հաշվի չեն առնում։

— Օրինակ։

— Հեռախոսազանգը, տեղից շարժված բազկաթոռը...

— Մի՞թե կարևոր եք համարում դրանք,— ընդհատելով նրան հարցրի ես։

— Թերևս՝ ոչ,— համաձայնվեց բարեկամս։— Հնարավոր է, որ պատահաբար էին տեղից շարժել բազկաթոռը, և Ռայմոնդը կամ Բլանթն ականատից նորից տեղն էին հրել։ Բացի այդ, քառասուն ֆունտ է կորել։

— Որ Ռալֆին էր տվել Աքրոյդը, — ավելացրի ես։— Հնարավոր է, որ Աքրոյդը փոխել էր իր միտքը։

— Մի հարց էլ է մնում չլուծված։

— Ի՞նչ հարց։

— Ինչո՞ւ էր Բլանթն այդքան համոզված, որ ինն անց կեսին Ռայմոնդն էլ էր եղել միստր Աքրոյդի մոտ։

— Նա բացատրեց,— ասացի ես։

— Կարծո՞ւմ եք։ Չէի ասի։ Ավելի լավ է, ասացեք, անհետանալու ի՞նչ պատճառներ ուներ Ռալֆ Փեյթընը։

— Դժվար է ասել։ Թերևս, որպես բժիշկ բացատրեմ։ Հավանաբար նյարդերը չեն դիմացել։ Եթե անսպասելիորեն լսել է, որ Աքրոյդին սպանել են, գուցեև իր ու հոր միջև տեղի ունեցած բուռն վեճից հետո հեռանալուց մի քանի րոպեի ընթացքում, ապա շատ հնարավոր է, որ վախեցել է ու իսկույն ծլկել։ Շատերն են մեղավոր համարվել իրենց վարքագծի պատճառով, բայց իրականում միանգամայն անմեղ են եղել։

— Ճիշտ է,— ասաց Պուարոն,— բայց մի բան չպետք է մոռանանք։

— Գիտեմ, թե ինչ եք ուզում ասել,— նկատեցի ես։— Խոսքը շարժառիթին է վերաբերում։ Աքրոյդի մահը մեծ ժառանգություն է բերում Ռալֆ Փեյթընին։

— Դա մի շարժառիթ է,— ասաց Պուարոն։

— Ինչո՞ւ մի։

— Mais oui[1], Մի՞թե չգիտեք, որ մեզ համար ակնհայտ երեք տարբեր շարժառիթներ կան։ Հավաստի է, որ ինչ-որ մեկը գողացել է կապտավուն ծրարն իր պարունակությամբ։ Սա մի շարժառիթ. թերևս շանտաժ անելու նպատակով։ Ռալֆ Փեյթընը կարող է լինել այն անձնավորությունը, ով շանտաժի ենթարկեց միսիս Ֆերարին։ Որքան Համոնդին է հայտնի, Ռալֆ Փեյթընը չի դիմել միստր Աքրոյդին օգնել իրեն։ Կարծես նա այլ տեղից էր փող ձեռք բերում։ Միաժամանակ փաստ է, որ, ինչպես դուք եք ասում, նա նեղ վիճակի մեջ էր, մի բան, որ վախենում էր Աքրոյդի ականջն ընկներ։ Եվ վերջապես կա մեկը, որին հենց նոր հիշատակեցիք։

— Տե՛ր աստված,— վրդովված գոչեցի ես,— չէ՞ որ փաստերը նրա դեմ են։

— Մի՞թե,— ասաց Պուարոն։— Հենց այդ հարցում էլ մեր կարծիքները տարբեր են։ Ես երեք շարժառիթը շատ-շատ է, բայց և այնպես համոզված եմ, որ Ռալֆ Փեյթընն անմեղ է։

---

1 Դե իհարկե (ֆր.)։

Գլուխ 14

ՄԻՍԻՍ ԱՔՐՈՅԴ

Վերը նշված երեկոյան զրույցից հետո ինձ թվաց, թե գործն այլ բնույթ ստացավ։ Ամբողջ իրադրությունը կարելի է բաժանել երկու մասի, մեկը մյուսից պարզ ու որոշակի։ Առաջին մասն ընդգրկում է ուրբաթ երեկոյան տեղի ունեցած Աքրոյդի մահից մինչև հաջորդ երկուշաբթի գիշերը։ Դա կատարված դեպքի ուղղակի նկարագրությունն է, ինչպես որ ներկայացվեց Հերքյուլ Պուարոյին։ Ամբողջ ժամանակ ես Պուարոյի կողքին էի։ Տեսա ամենը, ինչ նա էր տեսնում, և աշխատում էի կռահել նրա մտքերը։ Ինչպես պարզվեց, հաջողություն չունեցա այդ խնդրում։ Թեև Պուարոն ցույց էր տալիս այն ամենը, ինչ հայտնաբերում էր, ինչպես, օրինակ, նշանի ոսկե մատանին, բայց և այնպես թաքցնում էր այն շատ կարևոր ու տրամաբանական եզրակացությունները, որոնց նա հանգում էր։ Ինչպես հետագայում պարզվեց, ծածկամտությունը նրա բնորոշ գիծն էր։ Սովորաբար նա ակնարկներ ու առաջարկություններ էր անում, բայց ոչ ավելին։

Ինչպես ասացի, մինչև երկուշաբթի երեկո իմ պատմությունը թերևս միայն Պուարոյին էր վերաբերում։ Այդ Շերլոկի համար վաթսունի դեր էի կատարում։ Սակայն երկուշաբթի օրից մեր ճանապարհները բաժանվեցին։ Պուարոն գործում էր ինքնուրույն։ Թե ինչով էր զբաղված, հայտնի էր ինձ, քանզի Քինգս Աբբոթում ոչինչ անհայտ չէր մնում։ Սակայն նա վաղօրոք ոչինչ չէր վստահում։ Իսկ ես էլ իմ հոգսերն ունեի։

Հետադարձ մի հայացք գցելով, միակ բանը, որ ինձ ապշեցնում էր՝ դա այդ շրջանի դեպքերի անջատական բնույթն էր։ Ամեն ոք մասնակցում էր այդ գաղտնիքը բացահայտելու գործին։ Դա շատ ավելի նման էր մի կազմածո պատկերհանելուկի, որի լուծման համար յուրաքանչյուրն աշխատում էր ներդնել իր գիտցածը կամ ի հայտ բերածը։ Եվ դրանով էլ ավարտվում էր նրանց պարտականությունը։

Միայն Պուարոյին էր պատկանում այդ փաստերն ի մի բերելու և դրանք համադրելու պատիվը։

Որոշ իրադարձություններ տվյալ պահին գործին չառնչվող ու աննպատակ էին թվում։ Օրինակ, գոյություն ուներ, այսպես կոչված, սև կոշիկների խնդիրը։ Բայց այդ մասին հետո։

... Ամեն ինչ ժամանակագրական կարգով ներկայացնելու համար պետք է սկսեմ միսիս Աքրոյդին ներկայանալու հրավերից։

Նա իմ եռևից մարդ ուղարկեց երեքշաբթի օրը վաղ առավոտյան և, քանի որ հրավերն անհետաձգելի էր, շտապեցի այնտեղ, հույս ունենալով գտնել նրան։

Նա անկողնում էր։ Նա խիստ հետևում էր իրադրության էթիկական կողմին։ Միսիս Աքրոյդը ինձ երկարեց իր ոսկրոտ ձեռքը և առաջարկեց բազկաթոռը քաշել ու նստել անկողնու մոտ։

— Դե՛, միսիս Աքրոյդ, ի՞նչ է պատահել ձեզ,— հարցրի ես։

Ես այնպիսի շինծու մտերմությամբ էի խոսում, որ թվում էր, թե կարելի էր սպասել ընդհանուր պրակտիկայով զբաղվող մի բժշկից։

— Ուժասպառ եմ եղել,— ասաց միսիս Աքրոյդը թույլ ձայնով։— Լրիվ ուժասպառ եմ եղել։ Խեղճ Ռոջերի մահը շատ հուզեց ինձ։ Ասում են նման բաներ այդ պահին չես զգում, բայց հետո զգացնել է տալիս։

Ափսոս որ մասնագիտությունը խանգարում է բժշկին երբեմն ասելու այն, ինչ իրականում մտածում է։ Ամեն ինչ կտայի, որպեսզի կարողանայի ասել՝ դատարկաբանություն է։

Դրա փոխարեն մի կազդուրիչ առաջարկեցի։ Միսիս Աքրոյդն ընդունեց։ Թվաց, թե խաղում մի քայլ էլ կատարվեց։ Ամենևին էլ չէի կարծում, թե ինձ կանչել էին Աքրոյդի մահվան հետևանքով ստացած ցնցման պատճառով։ Սակայն միսիս Աքրոյդն ընդհանրապես անընդունակ էր որևէ հարցի հետամուտ լինել շիտակ ճանապարհով։ Նա միշտ էլ նենգ միջոցներով էր մոտենում իր նպատակին։ Ինձ հետաքրքրում էր, թե ինչու հատկապես նա էր կանչել ինձ։

— Եվ հետո երեկվա տեսարանը,— շարունակեց նա։ Նա մի պահ լռեց, կարծես սպասելով, թե ինչ կասեմ։

— Ի՞նչ տեսարան։

— Ինչպե՞ս, բժիշկ, մոռացե՞լ եք։ Այդ սոսկալի մարդը ֆրանսիացի էր, թե բելգիացի, միևնույն է։ Բոլորիս այնպե՞ս սպառնաց։ Դա շատ է հուզել ինձ։ Ոտջերի մահը բավական չէր, նա էլ հարձակվեց մեզ վրա։

— Շատ եմ ցավում, միսիս Աքրոյդ,— ասացի ես։

— Չգիտեմ, թե ինչ էր ուզում ասել, այդպես բղավելով մեզ վրա։ Ինձ թվում է, ես շատ լավ գիտեմ իմ պարտականությունը, որպեսզի մտքովս անգամ անցկացնեմ թաքցնել որևէ բան։ Ուժերիս ներածին չափ աջակցել եմ ոստիկանությանը։

Միսիս Աքրոյդը լռեց, ես ասացի.

— Միանգամայն ճիշտ եք։

Սկսեցի աղոտ պատկերացնել, թե այդ ամբողջ հուզմունքի պատճառն ինչ էր։

— Ոչ ոք չի կարող ասել, թե պարտականություններս չեմ կատարել,— շարունակեց միսիս Աքրոյդը։— Համոզված եմ, որ տեսուչ Ռագլանը շատ գոհ է։ Ինչո՞ւ պիտի այդ ինքնագոհ օտարականն այդքան իրարանցում առաջացնի։ Շատ էլ ծիծաղելի տեսք ունի, ինչպես զավեշտական ֆրանսիացին՝ ուկյուսն։ Չեմ պատկերացնում, թե ինչո՞ւ էր Ֆլորան այդքան պնդում, որ նա զբաղվի այդ գործով։ Ինձ ոչ մի բան չի ասել այդ մասին։ Պարզապես գնաց ու ինքնագլուխ արեց։ Ֆլորան շատ ինքնուրույն է։ Ես փորձառու կին եմ և նրա մայրը։ Նախ պետք է խորհուրդ հարցներ ինձնից։

Ես լուռ լսում էի։

— Նա ի՞նչ է մտածում։ Ահա թե ինչ է հետաքրքրում ինձ։ Իրո՞ք կարծում է, թե ինչ-որ բան եմ թաքցնում։ Նա... երեկ փաստորեն նա մեղադրեց ինձ։

Ես թոթվեցի ուսերս։

— Դա հիրավի կարևոր չէ, միսիս Աքրոյդ,— ասացի ես։— Քանի որ ոչ մի բան չեք թաքցնում, նրա ակնարկները ձեզ չէին վերաբերում։

Միսիս Աքրոյդն անապասելիորեն շեղվեց թեմայից և ասաց.

— Անչափ ձանձրալի են այդ սպասավորները։ Բամբասում են, խոսում իրենց շրջանում, հետո դա տարածվում է, և միշտ էլ ոչ մի հավանական բան չի լինում այդ լուրերում։

— Սպասավորները խոսե՞լ են,— հարցրի ես,— ինչի՞ մասին։

Միսիս Աքրոյդը խորաթափանց մի հայացք գցեց վրաս։ Դա լրիվ հավասարակշռությունից գրկեց ինձ։

— Համոզված եմ, բժիշկ, որ դուք տեղյակ պիտի լինեք, եթե որևէ մեկը ինչ-որ բան է ասել։ Ամբողջ ժամանակ մյո Պուարոյի հետ եք եղել, այնպես չէ՞։

— Այո՛։

— Ուստի գիտեք։ Այդ աղջիկն էր, չէ՞, Ուրսուլա Բոնը։ Բնական է, չէ որ ազատվել է աշխատանքից։ Նա կուզենար տհաճություններ պատճառել, որքան կարող էր։ Ջարամիտներ են դրանք, բոլորն էլ իրար նման։ Քանի որ այնտեղ եք եղել, բժիշկ, պետք է որ ճիշտ իմանաք, թե ինչ ասաց։ Ինձ ամենից շատ մտահոգում է այն բանը, որ կեղծ տպավորություն կստեղծվի։ Վերջիվերջո ամեն մանրամաս չես կարող ասել ոստիկանությանը, ճիշտ չէ՞։ Երբեմն ընտանեկան բաներ կան... որ ոչ մի առնչություն չունեն սպանությանը։ Իսկ եթե չարամիտ է այդ աղջիկը, ամեն տեսակի հերյուրանքներ կարող է մոգոնել։

Նա բավական խորաթափանց էի, որպեսզի այդ զեղումների հետևում տեսնեի շատ իրական մի անհանգստություն։ Պուարոն իրավացի էր հայցախնդրի իր հավաստիացումներում։ Երեկ սեղանի շուրջ նստած վեցը հոգու մեջ թերևս միայն միսիս Աքրոյդն էր թաքցնելու բան ունեցել։ Ինձ էր մնում բացահայտել, թե ինչ կարող էր լինել դա։

— Եթե ձեր տեղը լինեի, միսիս Աքրոյդ,— կոպտորեն ասացի ես,— անկեղծորեն կխոստովանեի ամեն ինչ։

Միսիս Աքրոյդը մի սուր ճիչ արձակեց։

— Ա՛խ, բժիշկ, ինչպե՞ս կարող եք այդքան կտրուկ լինել։ Այն տպավորությունն է ստեղծվում, կարծես... կարծես... Ես ամեն ինչ կարող եմ բացատրել շատ պարզ։

— Ուրեմն ինչու՞ չվարվել այդպես,— ասացի ես։

Միսիս Աքրոյդը հանեց բոլորածալերով մի թաշկինակ և բուն արտասվեց։

— Ինձ թվում էր, բժիշկ, մայր Պուարոյին կարող էիք բացատրել այդ ամենը։ Գիտեք, օտարերկրացու համար շատ դժվար է հասկանալ մեզ։ Ձեք պատկերացնում, ոչ ոք էլ չի պատկերացնում, թե ինչքեր եմ տարել։ Իմ կյանքը մարտիրոսություն է եղել, տևական մի մարտիրոսություն։ Չեմ ուզում չարախոսել մեռածի մասին, բայց լավ բան չեմ տեսել։ Ամեն առաջին հաշիվն անգամ չէր ուզում փակել, կարծես տարին հարյուր ֆունտից ավելի չէր վաստակում, մինչդեռ (ինչպես երեկ միստր Համոնդն ասաց) այս կողմերի ամենահարուստ մարդկանցից մեկն էր։

Միսիս Աքրոյդը լուեց և թաշկինակը տարավ աչքերին։

— Հետո՞,— խրախուսանքով ասացի ես։— Դուք ինչ-որ հաշիվների մասին էիք խոսում։

— Ա՜խ, այդ չարաբաստիկ հաշիվները։ Դրանց մի մասը ամենևին էլ ցույց չէի ուզում տալ Ռոջերին, որովհետև բաներ կան, որ տղամարդը չի կարող հասկանալ։ Ասելու էր, որ ամեն անպետք բանի փող ենք տալիս։ Եվ այդ հաշիվներս աստիճանաբար մեծանում էին, և ստացվող պարտամուրհակներն այդպես էլ մնում չվճարված...

Նա աղերսական մի հայացք գցեց վրաս, ասես խնդրում էր կարեկցել իրեն։

— Նրանք բոլորն էլ այդպես են,— ասացի ես։

— Հավատացնում եմ ձեզ, բժիշկ, դարձել էի նյարդային, գիշերները չէի կարողանում քնել, սրտի սարսափելի խփոցներ էի ունենում,— շարունակեց նա միանգամայն կշտամբական տոնով։— Շուտով մի նամակ ստացա շոտլանդացի մի ջենտլմենից... փաստորեն երկուսը... երկուսն էլ շոտլանդացի ջենտլմենից, մեկը՝ Բրյուս Մակֆերսոնից, մյուսը՝ Քոլի Մակդոնալդից։

— Դժվար թե շոտլանդացի են եղել,— չոր տոնով ասացի ես։— Սովորաբար նրանք ներկայանում են որպես շոտլանդացի, բայց կասկածում եմ, որ սեմիտական ծագում ունեն։

— Նրանցից մեկին գրեցի...

Միսիս Աքրոյդը լուեց։

Զգացի, որ հասել ենք հարցի նուրբ կողմին։ Կյանքում քնավ չէի հանդիպել մեկին, որին այդքան դժվար լիներ հրաժարել ըստ էության արտահայտվելու։

— Հասկանում եք,— մրմնջաց միսիս Աքրոյդը,— ժառանգության խնդիր է այս ամենը, ճիշտ չէ՞։ Կտակով ժառանգություն ստանալու խնդիր։ Եվ չնայած ենթադրում էի, որ Ռոջերը ժառանգություն կթողնի ինձ, բայց համոզված չէի։ Մտածեցի, գուցե կարողանամ տեսնել այդ կտակը, ոչ թե պարզապես հետաքրքրությունից դրդված, այլ որպեսզի կարողանայի կարգավորել գործերս։

Նա շեշտակի նայեց ինձ։ Կացությունն, իհարկե, դժվարին էր։ Սակայն, բարեբախտաբար, հմուտ խոսքը միշտ էլ կարող է թաքցնել այլանդակ փաստերը։

— Միայն ձեզ կարող էի պատմել այս ամենը, սիրելի բժիշկ,— արագ վրա բերեց միսիս Աքրոյդը։— Համոզված եմ, որ սխալ չեք հասկանա ինձ, և գործը պատշաճ ձևով կներկայացնեք մայոր Պուարոյին։ Ուրբաթ կեսօրին...

Նա վարանեց մի պահ ու խոսքը կիսատ թողեց։

— Ուրբաթ կեսօրին,— խրախուսանքով կրկնեցի ես։— Հետո՞։

— Կարծելով, որ բոլորը դուրս են եկել, մտա Ռոջերի աշխատասենյակ... ռեալ պատճառ ունեի այնտեղ գնալու համար... ուզում եմ ասել, որ թաքցնելու բան չկա այդտեղ։ Եվ երբ տեսա գրասեղանին կուտակված թղթերը, իսկույն մի միտք հղացա. «Տեսնես Ռոջերը կտակը չի՞ պահել գրասեղանի դարակներից մեկում»։ Ես շատ իմպուլսիվ խառնվածք ունեմ, միշտ էլ այդպես եմ եղել, դեռ մանկուց։ Վարվում եմ պահի ազդեցության տակ։ Ռոջերը բանալիները թողել էր վերևի դարակի մեջ, որ մեծ անզգուշություն էր նրա կողմից։

— Հասկանալի է,— ասացի ես։— Եվ դուք տակնուվրա արեցիք սեղանը։ Կտակը գտա՞ք։

Միսիս Աքրոյդը մի ճիչ արձակեց. հասկացա, որ բավական դիպլոմատիկորեն չվարվեցի։

— Սոսկալի է հնչում դա։ Բայց իրականում ամենևին էլ այդպես չէ։

— Հարկավ,— փութով ասացի ես։— Կներեք անհաջող հարցիս համար։

— Տղամարդիկ շատ տարօրինակ են։ Ոտջերի տեղը լինեի, ցույց կտայի կտակը։ Սակայն տղամարդիկ շատ պաղատնապահ են։ Իր իրավունքները պաշտպանելու համար մարդ ստիպված է փոքրիկ խորամանկություններին։

— Եվ ինչպիսի՞ն են այդ փոքրիկ խորամանկությունների արդյունքները։

— Հենց դա էլ պատմում եմ ձեզ։ Ոտջերը ներս մտավ։ Շատ անհարմար դրություն էր։ Ես, իհարկե, փակեցի դարակն ու վեր կացա, և նրա ուշադրությունը հրավիրեցի սեղանի վրայի փոշու բծերի վրա։ Նրա տեսքը դուր չեկավ ինձ... Վարմունքով միանգամայն հարգալից էր, բայց անտանելի, գրեթե արհամարհական մի փայլ կար նրա աչքերում։ Այդ աղջիկը միշտ էլ դուր չի եկել ինձ։ Նա լավ սպասուհի է, չի հրաժարվում գլխադիր, գոգնոց կրելուց, մի բան, որ մեր օրերում շատերն են անում, և առանց մի վայրկյան իսկ տատանվելու ասում է՝ «Տանը չեն», երբ ստիպված է լինում պատասխանել Փարքըրի փոխարեն, և աղմուկ չի հանում շատ ու շատ աղախինների պես, երբ սեղանն է սպասարկում... Հա, որտե՞ղ էի հասել։

— Ասում էիք, թե չնայած նրա մի շարք արժանիքների, Բորնին չէիք սիրում։

— Ոչ էլ հիմա եմ սիրում։ Տարօրինակ աղջիկ է, և ինչ-որ բանով տարբերվում է մյուսներից։ Ջափից ավելի է կրթված, կասեի։

— Իսկ ի՞նչ եղավ հետո,— հարցրի ես։

— Առանձնապես ոչինչ։ Ոտջերը ներս մտավ, իսկ ես կարծում էի զբոսանքի էր գնացել։ Հարցրեց, թե ինչ էր նշանակում այդ ամենը, ես էլ պատասխանեցի. «Ոչինչ», պարզապես ներս մտա վերցնելու «Փանչը», և, վերցնելով այն, դուրս եկա։ Բորնը մնաց։ Լսեցի, թե ինչպես խնդրեց Ոտջերին մի րոպե լսել իրեն։ Բարձրացա իմ սենյակ պառկելու։ Շատ էի հուզված։

Տիրեց լռություն։

— Կարծում եմ, մայր Պուարոյին կբացատրեք, այնպես

չէ՞։ Ինքներդ եք տեսնում, թե ինչ չնչին բան է այդ ամենը։ Իսկ նա այնքան խիստ խոսեց փաստերը թաքցնելու մասին, որ ակամա վատ զգացի ինձ։ Երևի բորնը արտատուց մի պատմություն է հորինել այդ ամենի մասին։ Իսկ դուք կբացատրեք իրողությունը, ճիշտ չէ՞։

— Ուրիշ ոչինչ չունե՞ք ասելու,— հարցրի ես։

— Ո՛չ,— վճռականորեն պատասխանեց նա։

Բայց նկատեցի, որ մի պահ վարանեց, և համոզվեցի, որ տակավին ինչ-որ բան էր թաքցնում։ Եվ թերևս մտքի խնդիր մի փայլատակում էր, որ դրդեց ինձ հարցնելու.

— Միսիս Աքրոյդ, այդ դո՞ւք բաց թողեցիք սեղանը։

Հանցանքը գիտակցելուց այնպես կարմրեց, որ շպարն ու դիմափոշին անգամ չթաքցրին այն։

— Որտեղի՞ց գիտեք,— շշնջաց նա։

— Ուրեմն դո՞ւք բաց թողեցիք։

— Այո՛... ես... հասկանում եք... մի երկու հին արծաթեղեն կար, որ շատ հետաքրքրեց ինձ։ Մի հոդված էի կարդացել, որտեղ շատ փոքրիկ մի արծաթե իրի պատկեր կար, և այդ իրը մեծ գումար արժեր։ Ինձ թվաց, թե դա նույն արծաթե իրն էր, որ կար արծաթե սեղանի մեջ։ Մտածեցի, երբ Լոնդոն գնամ, կտանեմ հետս և գնահատել կտամ։ Եթե իրոք թանկարժեք լիներ, պատկերացնո՞ւմ եք, թե ինչ անակնկալ կլիներ Ռոջերի համար։

Միսիս Աքրոյդի պատմածն ընդունեցի ըստ արժանվույն, խուսափելով ամեն տեսակի մեկնաբանություններից։ Նույնիսկ զգուշացա հարցնել, թե ինչ կարիք կար այդպիսի գաղտնի ձևով կատարել իր ցանկությունը։

— Իսկ ինչու՞ կափարիչը բաց թողեցիք,— հարցրի ես։— Մոռացա՞ք։

— Վախեցա։ Սանդղավանդից եկող ոտնաձայներ լսեցի, և շտապ դուրս եկա սենյակից, բարձրացա վերև, նախքան Փարքըրը դուռը կբացեր ձեր առջև։

— Գուցե դա միսս Ռասե՞լն էր,— մտախոհ հարցրեցի ես։

Միսիս Աքրոյդը խիստ հետաքրքիր մի փաստ էր բացահայտել ինձ համար։ Արծաթե իրի նկատմամբ դիտավորությունը ազնիվ էր եղել, եթե ոչ, բոլորովին չէր հետաքրքրում

ինձ։ Ինձ հետաքրքրում էր մի այլ փաստ, որ լուսամուտից հյուրասենյակ էր մտել միսս Ռասելը, և չէի սխալվել, որ ենթադրել էի, թե նա վազելուց էր շնչասպառ եղել։ Որտե՞ղ էր եզել։ Հիշեցի ամառանոցն ու բաուխատի կտորը։

— Մի՞թե միսս Ռասելն օսլայում է իր թաշկինակները,— զուչեցի ես։

Միսիս Աքրոյդը ցնցվեց։ Ես ուշքի եկա և վեր կացա։

— Ի՞նչ եք կարծում, կարո՞ղ եք այդ ամենը բացատրել մայո Պուարոյին,— հուզված հարցրեց նա։

— Օ, իհարկե՛։ Անպայման։

Նա էլի ինչ-որ բաներ ասաց իր վարմունքն արդարացնելու մասին, և վերջապես դուրս եկա սենյակից։

Աղախինը նախասենյակում էր։ Օգնեց հագնել վերարկուս։ Ես ավելի ուշադիր զննեցի նրան, քան մինչ այդ։ Պարզ երևում էր, որ նա լաց էր եղել։

— Ինչո՞ւ,— հարցրեցի ես,— մեզ ասացիք, որ ուրբաթ օրը միստր Աքրոյդն էր կանչել ձեզ իր մոտ։ Հենց նոր լսեցի, որ դուք էիք խնդրել նրան։

Մի պահ աղջիկը գետնին հառեց հայացքը։ Հետո անվստահ ասաց.

— Ուզում էի բոլոր դեպքերում հեռանալ։

Այլևս ոչինչ չասացի։ Նա բացեց շքամուտքի դուռը, և, երբ դուրս էի գալիս, անսպասելիորեն ցածրաձայն ասաց.

— Ներեցեք, սըր, որևէ լուր կա՞ կապիտան Փեյթընից։

Ես բացասաբար շարժեցի գլուխս, հարցականորեն նայելով նրան։

— Նա պարտավոր է վերադառնալ,— ասաց աղջիկը։— Անպայման, անպայման, պարտավոր է վերադառնալ։

Նա աղերսական հայացքով ինձ էր նայում։

— Ոչ ոք չգիտե՞, թե ուր է նա։

— Իսկ դուք գիտե՞ք,— կտրուկ հարցրի ես։

Նա բացասաբար շարժեց գլուխը։

— Ոչ ոք։ Ես էլ ոչինչ չգիտեմ։ Բայց ինչ-որ մեկը, որ նրա բարեկամն է եղել, պիտի ասի նրան, որ պարտավոր է վերադառնալ։

Ես հապաղեցի, մտածելով, որ թերևս աղջիկը էլի ինչ-որ

բան կասի։ Բայց նրա հաջորդ հարցը ապշեցրեց ինձ։

— Նրանց կարծիքով ե՞րբ է կատարվել սպանությունը։ Հենց ժամը տասից առա՞ջ։

— Դա է խնդիրը,— ասացի ես։— Տասի ու տասին տասնհինգ պակասի միջև։

— Ո՞չ ավելի շուտ։ Գուցե ինն անց քառասունհինգից առա՞ջ։

Ուշադիր նայեցի նրան։ Պարզ երևում էր, որ չէր ուզում դրական պատասխան տալ։

— Դա կասկածից դուրս է,— ասացի ես,— միսս Աքրոյդը քեռուն տեսել է ողջ ինն անց քառասունհինգին։

Նա մի կողմ շրջվեց, և թվաց թե ամբողջ մարմինը թուլացավ։

— Գեղեցիկ աղջիկ է,— ասացի ինքս ինձ, երբ մեկնում էի,— շատ գեղեցիկ աղջիկ է։

Կարոլինը տանն էր։ Պուարոն այցելել էր նրան, նա շատ գոհ ու հպարտ էր զգում իրենն։

— Օգնում եմ նրան այդ գործում,— բացատրեց Կարոլինը։

Ես բավական վատ զգացի ինձ։ Նա այնքան էլ լավ չէր պահում իրենն։ Ի՞նչ կատացվեր, եթե խուզարկուի նրա բնազդը խրախուսանքի արժանանար։

— Մտադի՞ր եք գնալ շրջակայքում փնտրելու Ռալֆ Փեյթընի խորհրդավոր ընկերուհուն,— հարցրի ես։

— Ես կարող էի ինքնուրույն էլ անել,— ասաց Կարոլինը։— Կա մի այլ, կարևոր բան, որ միայն Պուարոն ուզում է, որ ես պարզեմ։

— Ի՞նչ,— հարցրի ես։

— Նա ուզում է իմանալ Ռալֆ Փեյթընի կոշիկները սև են եղել, թե՞ շագանակագույն,— ասաց Կարոլինը հանդիսավոր տոնով։

Ակնապիշ նայեցի նրան։ Նոր հասկացա, որ անհավատալի հիմարություն եմ թույլ տվել, որ այդ մասին չեմ մտածել։

— Դրանք շագանակագույն կոշիկներ էին,— ասացի ես,— աչքովս եմ տեսել։

— Ոչ թե կոշիկներ, այլ երկարաճիտ կոշիկներ, Ջեյմս Մայո Պուարոն ուզում է իմանալ, հյուրանոցում Ռալֆի մոտ շագանակագույն կոշիկներ են եղել, թե սև: Շատ բան է կախված դրանից:

Երեխա հաճո է ձեզ, կարող եք բթամիտ համարել ինձ, բայց ոչինչ չհասկացա:

— Ով ինչպե՞ս եք ուզում պարզել այդ բանը,— հարցրի ես:

Կարուլինն ասաց, թե ոչ մի դժվարություն չկա դրանում: Մեր էննիի ամենամոտ ընկերուհին միսս Գաննեթի սպասուհին էր, Կլարան: Ով նա էլ «երեք վարագներից» բերել էր այդ կոշիկները: Դրանից հասարակ բան չկար. միսս Գաննեթը, որ հավատարմորեն գործակցում էր իրենց, իսկույն արձակուրդ էր տվել Կլարային, և հարցը լուծվել էր մեծագույն արագությամբ:

Հետո, երբ նստած նախաճաշում էինք, Կարուլինը շինծու անտարբերությամբ ակնարկեց.

— Ինչ վերաբերում է Ռալֆ Փեյթընի կոշիկների...

— Ի՞նչ նկատի ունես:

— Մայո Պուարոն կարծում էր, որ դրանք շագանակագույն են եղել: Սխալվում էր: Սև են եղել,— ասաց Կարուլինը և գոհունակությամբ մի քանի անգամ շարժեց գլուխը: Հավանաբար նրան թվում էր, թե գերազանցել էր Պուարոյին:

Ոչինչ չասացի: Ջանում էի հասկանալ, թե ինչ կապ ուներ Ռալֆ Փեյթընի կոշիկների գույնը այդ գործին:

Գլուխ 15

ՋԵՈՖՐԻ ՌԱՅՄՈՆԴ

Այդ օրը մի անգամ ևս համոզվեցի, թե որքան խորաթափանց միտք ուներ Պուարոն: Նա լավ գիտեր մարդկային բնությունը: Սարսափն ու սեփական հանցանքի գիտակցումը ստիպել էին միսիս Աքրոյդին խոստովանել ճշմարտությունը, և առաջին հերթին՝ սարսափը:

Այդ կեսօրին, երբ վերադարձա հիվանդներին այցելելուց,

Կարոլինն ասաց, որ Ջեոֆրի Ռայմոնդը քիչ առաջ էր գնացել։

— Ուզում էր տեսնե՞լ ինձ,— հարցրի ես, կախելով վերարկուս։

Կարոլինը պատվում էր շուրջս։

— Մայո Պուարոյին էր ուզում տեսնել,— ասաց նա։— Մայո Պուարոն տանը չէր եղել, և Ռայմոնդը կարծել էր, որ այստեղ է, կամ էլ դու գիտես, թե որտեղ է նա։

— Պատկերացում անգամ չունեմ։

— Փորձեցի պահել նրան,— ասաց Կարոլինը,— բայց ասաց, որ կես ժամից նորից պետք է վերադառնա «Կուեններ», տեսնելու Պուարոյին։ Շատ ափսոս, քանզի մայո Պուարոն նրա գնալուց մի րոպե հետո ներս մտավ։

— Այստե՞ղ։

— Ո՛չ, իր տուն։

— Որտեղի՞ց գիտես։

— Կողքի լուսամուտից տեսա,— պատասխանեց Կարոլինը։ Թվաց, թե հարցն արդեն ապտաված էր։ Կարոլինը մտածում էր այլ կերպ։

— Մտադիր չե՞ս անցնել այնտեղ։

— Ո՞ւր։

— Պուարոյի մոտ, անշուշտ։

— Սիրելի Կարոլին,— ասացի ես,— ինչո՞ւ։

— Միստր Ռայմոնդը շատ էր ուզում տեսնել նրան։ Կարող էիր լսել, թե ինչի մասին են խոսում։

Ես բարձրացրի հոնքերս։

— Ինձ գայթակղող հիմնական բանը հետաքրքրասիրությունը չէ,— նկատեցի ես սառը տոնով։— Ես կարող եմ հանգիստ ապրել առանց ճշգրտորեն իմանալու, թե ինչ են անում ու մտածում հարևաններս։

— Անմտություն է, Ջեյմս։ Դու նույնքան ես ուզում իմանալ, որքան ես։ Պարզապես դու այնքան էլ անկեղծ չես։ Սովորություն ունես միշտ առարկել։

— Իրոք, Կարոլին,— պատասխանեցի ես ու գնացի ընդունարան։

Տասր րոպե հետո Կարոլինը բախեց դուռն ու ներս մտավ։ Ձեռքին կար մի տուփ մուրաբայի պես ինչ-որ բան։

— Ջեյմս, զկեռի այս դոնդողը չէի՞ր տանի մայր Պուարոյին։ Խոստացել եմ։ Տանը պատրաստած զկեռի դոնդողի համը երբեք չի տեսել։

— Իսկ ինչո՞ւ էննին չի տանում,— հարցրի ես։

— Կարկատան է անում, չի կարող։

Մենք նայեցինք իրար։

— Շատ լավ,— ասացի ես և վեր կացա։— Բայց եթե վերցնեմ, ինձ ոչ վայել այդ բանը, միևնույն է, դուռ եմ թողնելու։ Հասկանալի՞ է։

Քույրս բարձրացրեց հոնքերը։

— Բնական է,— ասաց նա։— Իսկ ո՞վ է առաջարկում այլ բան անել։

Կարոլինը մեծ պատվի արժանացրեց ինձ։

— Եթե պատահաբար տեսնես մայր Պուարոյին,— ասաց նա, երբ բացեցի շքամուտքի դուռը,— կարող ես ասել կոշիկների մասին։

Դա դիպուկ «կրակոց» էր։ Ես շատ էի ուզում հասկանալ կոշիկների հետ կապված այդ առեղծվածը։ Երբ բրետոնյան գլխադիրով պառավ լեդին բացեց դուռը, միանգամայն ինքնաբերաբար հարցրի.

— Մայր Պուարոն տա՞նն է։

Պուարոն իսկույն հայտնվեց՝ ամենայն հաճույքով դիմավորելու ինձ։

— Նատեք, բարեկամս,— ասաց նա։— Մե՞ծ բազկաթոռը ուզում, փո՞քրը։ Սենյակում հո շատ շոգ չէ՞։

Ինձ թվաց, թե սենյակում տոթ էր, բայց ոչինչ չասացի այդ մասին։ Լուսամուտները փակ էին և բուխարում թեժ կրակ էր վառվում։

— Անգլիացիները օդը թարմացնելու մոլություն ունեն,— ասաց Պուարոն։— Մաքուր օդը, ուր էլ ուզում է լինի, շատ լավ է։ Ինչո՞ւ այն շնչել տանը։ Բայց եկեք այդպիսի տափակ բաներ չքննարկենք։ Ինչ-որ բա՞ն ունեք ինձ ասելու։

— Երկուսը,— ասացի ես։— Առաջինը՝ սա, քրոջից է։

Ես մեկնեցի զկեռի դոնդողով տուփը։

— Ինչպիսի՞ սիրալիրություն մատնանշել Կարոլինի կողմից։ Չի մոռացել իր խոստումը։ Իսկ երկրո՞րդը։

— Տեղեկության պես մի բան է։

Եվ պատմեցի միսիս Աքրոյդի հետ տեղի ունեցած հանդիպման մասին։ Նա հետաքրքրությամբ, բայց առանց առանձնապես հուզվելու, լսեց։

— Դա պարզորոշ է դարձնում գործը,— մտախոհ ասաց նա,— և որպես տնտեսուհու վկայությունը հաստատող բան, որոշակի արժեք է ներկայացնում։ Հիշո՞ւմ եք, նա ասաց, որ սեղանի կափարիչը բաց էր գտել և անցնելիս փակել էր։

— Իսկ ի՞նչ կասեք նրա այն պնդման մասին, թե մտել էր հյուրասենյակ տեսնելու՝ հո չեն թառամել ծաղիկները։

— Ա՜, իսկ մենք լուրջ չընդունեցինք այդ հանգամանքը, ճիշտ չէ՞, բարեկամս։— Դա բացահայտ պատրվակ էր, արագ հորինված մի կնոջ կողմից, որ ստիպված էր բացատրել իր ներկայությունը, մի զրույցի ընթացքում, որն, ի դեպ, ըստ երևույթին հարցաքննություն չէինք համարում։ Իսկ ես կարծում էի, որ նրա հուզմունքի պատճառը հավանաբար այն փաստն էր, որ ձեռք էր տվել սեղանին։ Բայց հիմա ինձ թվում է, պետք է ուրիշ պատճառ փնտրել։

— Այո՛,— ասացի ես։— Դուրս էր եկել ո՞ւմ հանդիպելու, և ինչո՞ւ։

— Կարծում եք դուրս էր եկել ինչ-որ մեկի՞ն հանդիպելու։

— Այո՛։

Պուարոն գլխով համաձայնության նշան արեց։

— Նույն կարծիքին եմ և ես։

Մի պահ տիրեց լռություն։

— Ի միջի այլոց, բան ունեմ հաղորդելու քրոջս կողմից։ Ռալֆ Փեյթընի կոշիկները սև են եղել, ոչ թե շագանակագույն։

Ուշադիր նայեցի նրան, և ինձ թվաց, թե մի պահ անհանգստություն նշմարվեց նրա դեմքին։

Նա հաստատ համոզվա՞ծ է, որ շագանակագույն չեն։

— Հաստատ։

— Շատ ափսոս։

Երևում էր խիստ հիասթափվեց. բացատրություններ պահանջից և իսկույն փոխեց խոսակցության թեման։

— Տնտեսուհին՝ միսս Ռասելը, որ ուրբաթ օրը եկել էր խորհրդակցելու ձեզ հետ, անհամեստություն չի՞ լինի հարցընել, թե ինչ կատարվեց զրույցի ընթացքում։ Բժշկական մանրամասները նկատի չունեմ։

— Առանձնապես ոչինչ։ Երբ խոսակցության մասնագիտական կողմն ավարտվեց, մի քանի րոպե զրուցեցինք թույների, դրանք դժվարությամբ կամ հեշտությամբ հայտնաբերելու մասին, թմրադեղեր ընդունելու ու թմրամոլների մասին։

— Հատկապես հիշատակելով կոկաի՞նը,— հարցրեց Պուարոն։

— Որտեղի՞ց գիտեք,— հարցրի ես փոքր-ինչ զարմացած։

Պատասխանելու փոխարեն փոքրիկ մարդը վեր կացավ և գնաց սենյակի այն մասը, որտեղ թերթերն էին դրված։ Բերեց սեպտեմբերի 16-ի, ուրբաթ օրվա «Դեյլի բաղջիթի» համարը և ցույց տվեց կոկաինի մաքսանենգության վերաբերյալ մի հոդված։ Դա որոշ չափով զգայացունց հոդված էր, գրված ուժեղ տպավորություն թողնելու միտումով։

— Բարեկամս, ահա թե ինչն է կոկաինի գաղափարը մոցրել նրա գլուխը,— ասաց նա։

Ուզում էի էլի հարցեր տալ, քանի որ այնքան էլ չհասկացա նրա միտքը, բայց այդ պահին դուռը բացվեց և ներկայացրին Ջեոֆրի Ռայմոնդի գալստյան մասին։

Նա ներս մտավ, թարմ տեսքով ու զվարթ, և ողջունեց մեզ։

— Ինչպե՞ս եք, բժիշկ։ Մսյո Պուարո, այս էլ երկրորդ անգամ է, որ գալիս եմ այս առավոտ։ Շատ էի ուզում բրոնացնել ձեզ։

— Թերևս ավելի լավ է, որ գնամ,— ասացի ես բավական անշնորհք կերպով։

— Ինչո՞ւ եք շտապում, բժիշկ,— ասաց Ռայմոնդը, Պուարոյի առաջարկով նստելով մի աթոռի,— խոստովանություն ունեմ անելու։

— En verité?[1]— ասաց Պուարոն բավական սիրալիր։

---

1 Իրո՞ք (ֆր.)։

— Օ՛, էական բան չէ, բայց երեկվանից խիղճս տանջում է ինձ։ Մայո Պուարո, երեկ բոլորիս մեղադրեցիք ինչ-որ բան թաքցնելու մեջ։ Ես մեղավոր եմ ճանաչում ինձ։ Մտքումս մի բան կա և ուզում եմ հայտնել։

— Իսկ ի՞նչ է դա, մայո Ռայմոնդ։

— Ինչպես ասացի, էական բան չէ։ Պարզապես պարտքերի մեջ էի, և ճիշտ ժամանակին մեջտեղ եկավ այդ ժառանգությունը։ Առանց դժվարության հինգ հարյուր ֆունտը կրկին ոտքի կկանգնեցնի ինձ։

— Նա հմայիչ անկեղծությամբ ժպտաց, մի ժպիտ, որ շատ գրավիչ էր դարձնում նրան։

— Ձեզ հայտնի է, թե ինչպիսի կասկածանքով է վերաբերվում ոստիկանությունը, երբ ասում ես փողի կարիքի մեջ ես։ Նրանց դուր չի գալիս դա։ Բայց ես իսկական ալիբի ունեմ և վախենալու բան չունեմ, քանի որ Բլանշն ու ես տասին քսանհինգ պակասից բիլիարդի սենյակում ենք եղել։ Այնուամենայնիվ, երբ այդքան սպառնալից տոնով խոսեցիք փաստերը թաքցնելու մասին, խիղճս տանջեց ինձ և որոշեցի ասել այդ մասին։

Նա վեր կացավ և ժպտալով նայեց մեզ։

— Շատ խելամիտ երիտասարդ եք,— գլխով հավանության նշան անելով ասաց Պուարոն։— Պատկերացնում եք, երբ գիտեմ, որ ինչ-որ մեկը որևէ բան է թաքցնում ինձնից, իսկույն կասկածում եմ, որ շատ վատ բան պիտի որ լինի։ Այնպես որ ճիշտ վարվեցիք։

— Ուրախ եմ, որ ազատվեցի կասկածանքից,— ծիծաղելով ասաց Ռայմոնդը։— Հիմա կարող եմ գնալ։

— Այսպես, ուրեմն,— նկատեցի ես, երբ դուռը փակվեց երիտասարդ քարտուղարի ետևից։

— Այո՛,— համաձայնվեց Պուարոն,— միանգամայն դատարկ բան։ Իսկ եթե նա չի եղել բիլիարդի սենյակում, ո՞վ գիտե։ Վերջիվերջո, շատ հանցագործություններ են կատարվել հինգ հարյուր ֆունտից պակաս գումարի համար։ Այդ ամենը կախված է այն բանից, թե ինչքան գումար է բավարար ազատվելու մի մարդուց։ Հարաբերականության խնդիր է, ճիշտ չէ՞։ Ձեզ չի՞ թվում արդյոք, բարեկամս, որ այդ

ատն շատ բնակիչներ ստքի են ելել օգտվելու Աքրոյդի մահից։ Միսիս Աքրոյդը, միսս Ֆլորան, երիտասարդ Ռայմոնդը, անտեսուհի միսս Ռասելը։ Փաստորեն միայն մեկն է, որ չի խառնվում գործին. մայոր Բլանթը։

Նրա անունը տալիս Պուարոյի ոտնը այնքան տարօրինակ էր, որ շփոթված նայեցի նրան։

— Այնքան էլ չեմ հասկանում ձեզ։

— Մեղադրածս մարդկանցից երկուսն ասացին ճշմարտությունը։

— Կարծում եք, մայոր Բլանթն էլ է ինչ-որ բան թաքցնում։

— Ինչ վերաբերում է դրան,— անտարբեր ասաց Պուարոն,— ասում են, որ անգլիացի տղամարդը թաքցնում է միայն իր սերը, ճի՞շտ է։ Իսկ մայոր Բլանթը, ինձ թվում է, ընդունակ չէ որևէ բան թաքցնելու։

— Երբեմն զարմանում եմ, թե ինչու մի կետի վերաբերյալ եզրակացության չեկանք։

— Ինչի՞ վերաբերյալ։

— Ննջադրում էինք, թե միսիս Ֆերարին շանտաժի ենթարկողը պետք է որ Աքրոյդին սպանողը լինի։ Մի՞թե սխալվել ենք։

Պուարոն եռանդով գլխով արեց։

— Շատ լավ, շատ լավ։ Ինձ հետաքրքրում էր, թե ձեր մտքով կանցնի՞ այդ բանը։ Իհարկե, հնարավոր է դա։ Բայց չպետք է մոռանանք մի բան. նամակն անհետացել էր։ Սակայն, ինչպես դուք եք ասում, դա չի նշանակում, թե մարդասպանն է վերցրել։ Երբ գտաք մարմինը, հնարավոր է, որ Փարքերն աննկատելիորեն արդեն գողացել էր նամակը։

— Փարքե՞րը։

— Այո՛, Փարքերը։ Ես միշտ անդրադառնում եմ Փարքերին, ոչ թե որպես մարդասպանի, ո՛չ, նա չի սպանել. բայց ո՞վ է ավելի նման այն խորհրդավոր սրիկային, քան նա, ով ահաբեկեց միսիս Ֆերարին։ Նա կարող էր տեղեկություն ստանալ միստր Ֆերարի մահվան մասին ինչպես Փադոքի սպասավորներից մեկից։ Համենայն դեպս, ավելի հավանա-

կան է, որ նա կդիմեր այդ քայլին, քան սովորական մի հյուր։ Ինչպիսին է, օրինակ, Բլանթը։

— Փարքըրը հնարավոր է վերցրել էր նամակը, նախքան իմ նկատելը։

— Ե՞րբ։ Բլանթն ու Ռայմոնդը սենյակում գտնվելուց հետո՞, թե առաջ։

— Չեմ հիշում,— ասացի ես։ —Կարծում եմ առաջ, այո՛, առաջ։ Այո՛, գրեթե համոզված եմ, որ դրանից առաջ։

— Դա երից ընդարձակում է գործունեության ոլորտը,— ասաց Պուարոն։— Սակայն նա է ամենահավանական անձնավորությունը։ Մտադիր եմ մի փոքրիկ փորձության ենթարկել Փարքըրին։ Բարեկամս, կուղեկցե՞ք ինձ Ցերնլի։

Ես լուռ համաձայնվեցի, և իսկույն ճամփա ընկանք։ Երբ տեղ հասանք, Պուարոն ասաց, որ ուզում է տեսնել միսս Աքրոյդին։ Շուտով հայտնվեց Ֆլորան։

— Մադմուազել Ֆլորա,— ասաց Պուարոն,— մի փոքրիկ գաղտնիք եմ ուզում վստահել ձեզ։ Դեռ լրիվ համոզված չեմ, որ Փարքըրն անմեղ է։ Մտադիր եմ ձեր օգնությամբ մի փոքր փորձ կատարել։ Ուզում եմ վերականգնել այն գիշեր-վա նրա կատարած որոշ գործողություններ։ Բայց պետք է մի քան մտածենք նրան ասելու համար։ Հա՛, մտածեցի։ Ուզում եմ ստույգ իմանալ՝ արդյո՞ք, դրսից, սանդղավանդում հնարավոր է լսել փոքրիկ միջանցքից եկող ձայները։ Հիմա, բարի եղեք կանչել Փարքըրին։

Շուտով հայտնվեց ծառայապետը, հարգալից, ինչպես միշտ։

— Կանչե՞լ եք, սըր։

— Այո՛, իմ բարի Փարքըր։ Մտադիր եմ մի փոքր փորձ կատարել։ Մայո Բլանթին խնդրել եմ, որ կանգնի սանդղավանդին, աշխատասենյակի լուսամուտի տակ։ Ուզում եմ իմանալ, թե կարո՞ղ էր արդյոք որևէ մեկն այն գիշեր միջանցքում լսել միսս Աքրոյդի և ձեր ձայները։ Ուզում եմ նորից ներկայացնել այդ փոքրիկ տեսարանը։ Թերևս վերցնեք մատուցարանը կամ այնպիսի մի բան, որ այն գիշեր կրում էիք։

Փարքըրը հեռացավ, և մենք ուղղվեցինք դեպի միջանցք՝

աշխատասենյակի դուռը։ Շուտով նախասենյակից զրնգոց լսվեց, և հայտնվեց Փարքըրը՝ ձեռքին մատուցարան, որի վրա դրված էին սիֆոն, վիսկիի մի շիշ ու երկու բաժակ։

— Մի վայրկյան,— ասաց Պուարոն, երևութական անհանգստությամբ բարձրացնելով ձեռքը։— Ամեն ինչ պետք է անենք կարգով, ճիշտ այնպես, ինչպես եղել է։ Դա իմ մեթոդն է։

— Օտար սովորույթ է, սըր,— ասաց Փարքըրը։— Հանցագործության վերականգնում, ինչպես ասում են, չէ՞։

Նա անխռով կանգնած սպասում էր Պուարոյի կարգադրություններին։

— Ահա՜, հարգելի Փարքըրը ինչ-որ բան գիտե,— բացականչեց Պուարոն։— Նա այդպիսի բաների մասին կարդացել է։ Հիմա, խնդրում եմ, ամեն ինչ անել ամենայն ճշտությամբ։ Այսպես, դուք եկաք նախասենյակից։ Մադմուազելը... որտե՞ղ էր։

— Այստեղ,— ասաց Ջլորան, կանգնելով աշխատասենյակի հենց դռան մոտ։

— Միանգամայն ճիշտ է, սըր,— ասաց Փարքըրը։

— Հենց նոր էի փակել դուռը,— շարունակեց Ջլորան։

— Այո՛, միսս։ Ձեր ձեռքը դեռ բռնակին էր, ինչպես հիմա,—լրացրեց Փարքըրը։

— Ուստի allez[1],— ասաց Պուարոն։— Ներկայացրեք այդ կատակերգությունն ինձ համար։

Ջլորան կանգնել էր՝ ձեռքը բռնակին, իսկ Փարքըրը նախասենյակից ներս մտավ մատուցարանը ձեռքին։

Նա կանգնեց հենց դռների մեջ։ Ջլորան ասաց.

— Օ, Փարքըր, միստր Աքրոյդը չի ուզում, որ այս գիշեր նորից անհանգստացնեն իրեն։ Ճիշտ է՞,— ավելացրեց աղջիկը կիսաձայն։

— Որքան հիշում եմ, այո՛, միսս Ջլորա, բայց ինձ թվում է, դուք օգտագործեցիք «երեկո» բառը, «գիշերի» փոխարեն,— ասաց Փարքըրը, հետո, թատերականորեն բարձրաց-

---

1 Սկսենք (Ֆր.)։

նելով ձայնն, ավելացրեց.— Շատ լավ, միսս։ Իսկ հիմա կողպե՞մ դուռը։

— Այո՛, խնդրեմ։

Փարքըրը դուրս եկավ, Ֆլորան հետևեց նրան և բարձրացավ գլխավոր սանդուղքով։

— Հերի՞ք է,— հարցրեց նա ուսի վրայով։

— Հիանալի է,— ասաց փոքրիկ մարդը, շփելով ձեռքերը։— Ի միջի այլոց, Փարքըր, համոզվա՞ծ եք, որ այն երեկո երկու բաժակ կար մատուցարանի վրա։ Ո՞ւմ համար էր երկրորդ բաժակը։

— Միշտ էլ երկու բաժակ եմ բերում, սըր,— պատասխանեց Փարքըրը։— Էլի հարցեր կա՞ն։

— Ո՛չ, շնորհակալություն։

Փարքըրը հեռացավ ամենայն արժանապատվության զգացումով։

Պուարոն մոայլ կանգնել էր նախասրահի մեջտեղը։ Ֆլորան ներքև իջավ և մոտեցավ մեզ։

— Ձեր փորձը հաջո՞ղ անցավ,— հարցրեց նա։— Սմենևին չեմ հասկանում, դուք գիտեիք...

Պուարոն հիացմունքով նայեց նրան։

— Պարտադիր չէ, որ հասկանաք,— ասաց նա։— Սակայն, ասացեք, իրո՞ք երկու բաժակ կար Փարքըրի մատուցարանին այն գիշեր։

Մի պահ Ֆլորան խոժոռեց հոնքերը։

— Ճիշտ չեմ հիշում,— ասաց նա։— Կարծեմ երկուսն էին։ Դ-դ... դա՞ է ձեր փորձի օբյեկտը։

Պուարոն բռնեց նրա ձեռքը և շոյեց։

— Այդպես է հարկավոր,— ասաց նա։— Ինձ միշտ էլ հետաքրքրում է մի բան՝ մարդիկ կասե՞ն ճշմարտությունը։

— Եվ Փարքըրն ասա՞ց ճշմարտությունը։

— Կարծում եմ, որ՝ այո,— մտախոհ պատասխանեց Պուարոն։

Մի քանի րոպե հետո նույն ճանապարհով վերադարձանք գյուղ։

— Ի՞նչ նպատակ էր հետապնդում բաժակներին վերաբերող այդ հարցը։

Պուարոն թոթվեց ուսերը։

— Մարդ ինչ-որ բան պիտի ասի,— նկատեց նա։— Այդ մասնակի հարցը արեց այն, ինչ մյուսները։

Ես զարմացած եայեցի նրան։

— Բոլոր դեպքերում, բարեկամս,— ասաց նա ավելի լրջորեն,— հիմա գիտեմ մի բան, որ ուզում էի իմանալ։ Սոսայժըմ բավարարվենք այսքանով։

Գլուխ 16

ՄԻ ԵՐԵԿՈ ՄԱՀՋՈՆԳ[1] ԽԱՂԻ ՇՈՒՐՋ

Այդ գիշեր մահջոնգ խաղի մի փոքրիկ երեկույթ կազմակերպեցինք։ Այդպիսի սովորական հրավերը շատ տարածված էր Քինգա Աբբոթում։ Հյուրերը գալիս էին կրկնակոշիկներով ու անջրանցիկ վերարկուներով, ճաշից հետո։ Նրանց հյուրասիրում էին սուրճ, իսկ հետո՝ կեքս, սանդվիչ ու թեյ։

Այդ երեկո մեր հյուրերն էին միսս Գանեթն ու գնդապետ Քարթըրը, որ եկեղեցու մոտ էր ապրում։ Այդպիսի երեկոներին շատ էին բամբասում, երբեմն ընդհատելով խաղը։ Սովորաբար բրիջ էինք խաղում, խաղում էինք ու անկաշկանդ շաղակրատում, բայց այս անգամ որոշեցինք մահջոնգ խաղալ, քանի որ ավելի հանգիստ խաղ էր։ Ջնայած այդ խաղի ժամանակ էլ զայրացկոտ բացականչություններ էին լինում, թե, գրողը տանի, իր խաղընկերը անհրաժեշտ խաղաթուղթը չգցեց, ընայած այդ ժամանակ էլ շարունակում էինք քննադատական ակնարկներ անել, բայց մթնոլորտն աստիճանաբար խաղաղվում էր։

— Շատ ցուրտ երեկո է, չէ՞, Շեփարդ,— ասաց գնդապետ Քարթըրը, մոտենալով բուխարուն։ Ի դեպ, այդ պահին Կարոլինը միսս Գանեթին տարել էր իր սենյակ՝ օգնելու նրան,

---

1 Ջինական մոլեխաղ, որպես խաղաթուղթ օգտագործվում են տարաշխարհիկ նշաններով սալիկներ (ծ. թ.)։

որպեսզի գլուխ հաներ իր բազում գաղտնիքներից։— Աֆղանստանի լեռնացքներն է հիշեցնում։

— Մի՞թե,— քաղաքավարի տոնով ասացի ես։

— Շատ խորհրդավոր է խեղճ Աքրոյդի հետ կապված գործը,— շարունակեց գնդապետը, վերցնելով սուրճի գավաթը։— Շատ բան կա դրա տակ թաքնված, ահա թե ինչ կասեի։— Մեր մեջ ասած, Շեփարդ, լսել եմ, որ խոսքը շանտաժի մասին է։— Գնդապետը բազմանշանակալից մի հայացք գցեց վրաս, որ թերևս նշանակում էր. «Մենք հո գիտենք կյանքը»։— Տարակույս չկա, որ կնոջ մատ է խառն այս գործին։ Համոզված եղեք դրանում։

Այդ պահին Կարոլինն ու միսս Գաներթը միացան մեզ։ Միսս Գաներթը սուրճ խմեց, մինչ այդ Կարոլինը հանեց մահճակի տուփը և սեղանին թափեց հախճասալիկները։

— Սալիկները չթրջե՞նք,— կատակով ասաց գնդապետը,— ինչպես սովորաբար անում էին «Շանհայ» ակումբում։

Իսկ իմ ու Կարոլինի կարծիքով գնդապետ Քարթերն իր կյանքում երբեք չէր եղել «Շանհայ» ակումբում։ Սվեվին, երբեք Հեռավոր Արևելքում Հնդկաստանից այն կողմ չէր գնացել, որտեղ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում մի պահածոների և սալորի ու խնձորի ջեմի խարդախ առևտրով էր զբաղվել։ Սակայն գնդապետը երկչոտ զինվորական էր, իսկ Քինգս Աբբոթում մենք թույլ էինք տալիս մարդկանց ազատորեն դրսևորելու իրենց թուլություններն։

— Սկսե՞նք,— հարցրեց Կարոլինը։

Նստեցինք սեղանի շուրջը։ Մի քանի րոպե կատարյալ լռություն տիրեց այն պատճառով, որ հնկայական թաքուն մրցություն կար մեր մեջ, թե ով կարող էր ավելի արագ իր պատը կառուցել։

— Սկսիր, Ջեյմս,— վերջապես ասաց Կարոլինը։— Դու Արևելյան քամին ես։

Ես գցեցի մի սալիկ։ Որոշ ժամանակ լսվում էին միայն միապաղաղ բացականչություններ՝ «երեք բամբուկ», «երկու շրջան», «փանգ», և հաճախ միսս Գաներթի կողմից՝ «օ, ոչ,

փանգ չի», քանի որ սովորություն ուներ վերցնել այն սալիկ-ները, որ իրավունք չուներ վերցնելու։

— Այսօր առավոտյան տեսա Ֆլորա Աքրոյդին,— ասաց միսս Գաներթը։— Փա՜նգ... չէ, չէ փանգ չի։ Սխալվեցի։

— Ջորս շրջան,— ասաց Կարոլինը։— Որտե՞ղ տեսար նրան։

— Բայց նա չտեսավ ինձ,— ասաց միսս Գաներթն այնպիսի կարևորություն տալով դրան, որ կարելի է հանդիպել միայն այնպիսի փոքրիկ ավանում, ինչպիսին մերն է։— Ա՜խ, չոու, — գոչեց Կարոլինը։

— Ինձ թվում է,— ասաց միսս Գաներթը, մի պահ ուշադրությունը շեղելով,— որ ընդունված է ասել՝ «չի», ոչ թե «չոու»։

— Հիմարություն,— ասաց Կարոլինը։— Միշտ էլ «չոու» եմ ասել։

— «Շանհայ» ակումբում,— միջամտեց գնդապետ Քարթերը,— ասում են «չոու»։

Միսս Գաներթը պարտվելով, դիրքերը զիջեց։

— Ինչ-որ բա՞ն էիք ուզում ասել Ֆլորա Աքրոյդի մասին,— հարցրեց Կարոլինը, փոքր-ինչ լուռ խաղալուց հետո։— Մենա՞կ էր։

— Իհարկե,— պատասխանեց միսս Գաներթը։

Երկու լեդիների հայացքները հանդիպեցին, ասես տեղեկություն փոխանակելու։

— Իրո՞ք,— ասաց Կարոլինը կանխակալությամբ։— Ահա թե ինչ։ Դա ամենևին էլ չի զարմացնում ինձ։

— Սպասում ենք, միսս Կարոլին, ձեր հերթն է,— ասաց գնդապետը, որ երբեմն ձևացնում էր, թե տարված է խաղով ու անտարբեր է բամբասանքների նկատմամբ, թեև գիտեր, որ դրանով ոչ ոքի չես հիմարացնի։

— Եթե ինձ հարցնեք...— ասաց միսս Գաներթը։— Այդ բամբո՞ւկն էր, որ գցեցիր, հոգյակս։ Օ՜, ո՛չ, շրջանն էր։ Ինչպես ասացի, եթե ինձ հարցնեք, Ֆլորայի բախտը շատ է բերել, շա՜տ։

— Այդ ինչպե՞ս, միսս Գաներթ,— հարցրեց գնդապետը։

Ինչի՞ց եք եզրակացնում, որ միսս Ֆլորայի բախտը բերել է։ Շատ համայիլ աղջիկ է, որքան գիտեմ։

— Հնարավոր է, որ այնքան էլ գլուխ չեմ հանում հանցագործություններից,— ասաց միսս Գաննեթը ամենագետի տեսք ընդունելով,— բայց մի բան լավ գիտեմ, որ նման դեպքերում առաջին հարցը լինում է՝ «Ո՞վ է հանգուցյալին ողջ տեսել վերջին անգամ»։ Ով նա, ով տեսել է, կասկածելի է։ Այսպիսով, Ֆլորա Աքրոյդն է վերջին անգամ ողջ տեսել իր հորեղբորը։ Դա կարող է շատ վտանգավոր դառնալ նրա համար, շատ վտանգավոր։ Դա իմ կարծիքն է, ուզում եք հավատացեք, ուզում եք՝ ոչ, բայց Ռալֆ Փեյթընը չի երևում հանուն Ֆլորայի, որպեսզի կասկածից զերծ պահի նրան։

— Այդ ինչպե՞ս,— առարկեցի ես,— մի՞թե ուզում եք ասել, որ Ֆլորա Աքրոյդի պես երիտասարդ մի աղջիկ ի վիճակի է սառնասրտորեն դաշունահարել հորեղբորը։

— Ջգիտեմ,— ասաց միսս Գաննեթը։— Հենց վերջերս մի գիրք էի կարդում Փարիզի հատակի մարդկանց մասին և այնտեղ գրված էր, որ ամենաանուղղելի հանցագործների մի մասը հրեշտակային դեմքերով երիտասարդ աղջիկներ են։

— Դա Ֆրանսիայում է,— իսկույն ասաց Կարոլինը։

— Ճիշտ որ,— միջամտեց գնդապետը։— Հիմա ձեզ կպատմեմ շատ հետաքրքիր մի պատմություն, որ տեղի ունեցավ Հնդկաստանում...

Գնդապետի պատմածն անասելի երկար էր և զարմանալիորեն անհետաքրքիր։ Տարիներ առաջ Հնդկաստանում պատահած դեպքը ոչ մի կերպ չէր կարելի համեմատել այն իրադրության հետ, որ տեղի էր ունեցել քինգս Աբբոթում երկու օր առաջ։

Կարոլինի հաջող խաղը պատճառ հանդիսացավ գնդապետի պատմությունն ավարտելու։ Փոքր-ինչ տհաճությունից հետո, որ միշտ պատահում է, երբ Կարոլինի ինչ-որ թվաբանական սխալ եմ ուղղում, նորից սկսեցինք խաղը։

— Արևելյան քամի,— հայտարարեց Կարոլինը։— Ես իմ կարծիքն ունեմ Ռալֆ Փեյթընի մասին։ Բայց առայժմ լռում եմ։

— Մի՞թե, հոգյակս,— ասաց միսս Գանեթը։— Ջոու... ուզում էի ասել՝ փանգ։

— Այո,— վճռականորեն ասաց Կարոլինը։

— Այդ կոշիկների պատմությունը ճի՞շտ էր,— հարցրեց միսս Գանեթը,— այսինքն՝ ան՞ էին։

— Միանգամայն,— պատասխանեց Կարոլինը։

— Իսկ դա որևէ նշանակություն ունի՞, ի՞նչ եք կարծում,— հարցրեց միսս Գանեթը։

Կարոլինը սեղմեց շրթունքներն ու օրորեց գլուխն այնպես, ասես ամեն ինչ գիտեր այդ մասին։

— Փանգ,— ասաց Գանեթը։— Ո՛չ, փանգ չի։ Երևի բժիշկը, որ միշտ Պուարոյի հետ է, գիտե ամեն ինչ։

— Ամենևին,— ասացի ես։

— Ջեյմսը շատ համեստ է,— ասաց Կարոլինը։— Ա, «գաղտնի» քոնգ։

Գնդապետը սուլեց։ Մի պահ բամբասելը մոռացանք։

— Ձեր խաղն է,— ասաց նա։— Դուք վերցրել եք վիշապների երկու փանգ։ Զգույշ պետք է լինել։ Միսս Կարոլինը հաղթանակի է ձգտում։

Մի քանի րոպե խաղացինք առանց գործին վերաբերող որևէ խոսակցության։

— Իսկ այդ մայո Պուարոն իրո՞ք այդքան մեծ խուզարկու է,— հարցրեց գնդապետը։

— Ամենամեծը, որ երբևէ աշխարհը ճանաչել է,— ասաց Կարոլինը հանդիսավոր տոնով։— Նա ստիպված այստեղ է եկել գաղտնի, խուսափելու համար հայտնի դառնալուց։

— Ջոու,— ասաց միսս Գանեթը։— Անտարակույս, միանգամայն զարմանալի է մեր փոքրիկ գյուղի համար։ Ի դեպ, սպասուհիս, Կլարան, Ֆերնլիի սպասուհիներից մեկի, Էլսիի մտերիմ ընկերուհին է։ Եվ ի՞նչ եք կարծում, ի՞նչ է ասել նա Կլարային։ Ասել է, որ մեծ գումար են գողացել, և Էլսիի կարծիքով, աղախինը ինչ-որ կապ ունի դրա հետ։ Ամավա վերջին ազատվում է աշխատանքից և գիշերները շատ է լաց լինում։ Շատ հավանական է, որ կապված է ինչ-որ ավազակախմբի հետ։ Նա միշտ էլ կասկածելի է թվացել, այստեղի աղջիկներից ոչ մեկի հետ ընկերություն չի անում։ Ազատ

օրերը մենակ է անցկացնում, որ շատ անբնական է, կասի ես, և կասկածելի։ Մի անգամ խնդրեցի նրան գալ մեր ընկերուհիների երեկույթին, բայց մերժեց, որից հետո մի քանի հարց տվեցի իր տան ու ընտանիքի մասին։ Նվ պիտի ասեմ, որ շատ անպատկառ պահեց իրեն։ Արտաքուստ շատ քաղաքավարի է թվում, բայց ամենալկտի ձևով բերանս փակեց։

Միսս Գանեթը մի պահ լռեց՝ շունչ առնելու, և գնդապետը, որ ընդհանրապես չէր հետաքրքրվում սպասավորներին վերաբերող հարցերով, նկատեց՝ թե «Շանհայ» ակումբում, որպես կանոն, խաղը աշխույժ էր անցնում։

Նվ մենք խաղացինք աշխույժ։

— Այդ միսս Ռասելը,— ասաց Կարոլինը,— ուրբաթ օրը եկավ այստեղ, ձևացնելով իբր խորհրդակցելու Ջեյմսի հետ։ Իմ կարծիքով, ուզում էր իմանալ, թե որտեղ են պահվում թույները։ Հինգ հիերոգլիֆ։

— Ջոու,— ասաց միսս Գանեթը։— Ինչպիսի արտասովոր միտք։ Հետաքրքիր է, եթե դուք ճիշտ եք։

— Ի դեպ թույների մասին,— ասաց գնդապետը։— Ինչ ասացի՞ք։ Ջե՞մ գցել։ Ա՜խ, ութ բամբուկ։

— Մահջո՞նգ,— ասաց միսս Գանեթը։

Կարոլինը շատ էր անհանգստանում։

— Կարմիր վիշապ,— ախուր ասաց նա։

— Միշտ երկու կարմիր վիշապ է ձեռքիս,— նկատեցի ես։

— Շատ բնորոշ է քեզ, Ջեյմս,— կշտամբանքով ասաց Կարոլինը։— Ոչ մի պատկերացում չունես խաղի մասին։

Իսկ ինքս այն կարծիքին էի, որ բավական խելացի էի խաղում։

Արևելյան քամին անցավ մյուս խաղընկերոջ մոտ, և մենք նորից սկսեցինք լուռ խաղալ։

— Ես ուզում էի որոշ բան ասել ձեզ,— ասաց Կարոլինը։

— Իսկապե՞ս,— հարցրեց միսս Գանեթը խրախուսանքով։

— Իմ կարծիքը Ռալֆ Փեյթընի մասին։

— Դե՛, լսում ենք, հոգյակս,— ասաց միսս Գանեթը, ավելի խրախուսելով նրան։— Ջոո՞ւ։

— Ես կռահում եմ, թե որտեղ կարող է լինել նա։

Մի պահ լուռ հայացքներս հառեցինք նրան։

— Շատ հետաքրքիր է, միսս Կարուլին,— ասաց գնդապետը։— Ինքնե՞րդ կռահեցիք։

— Դե, ոչ այնքան։ Ձեզ կպատմեմ այդ մասին։ Տեսե՞լ եք նախասրահում կախված դքսուհյան մեծ քարտեզը։

Բոլորս ասացինք՝ այո։

— Անցյալ օրը, երբ մայո Պուարոն դուրս էր գալիս, կանգնեց ու նայեց դրան և ինչ-որ ակնարկ արեց Քրանչեսթրի վերաբերյալ։ Կարծեմ ասաց, որ դա միակ մեծ քաղաքն է, որ մոտիկ է մեզ։ Իսկ երբ գնաց, հանկարծ մտքովս անցավ...

— Ի՞նչ։

— Թե ինչ նկատի ուներ նա։ Իհարկե, այն, որ Ռալֆը Քրանչեսթրում է։

Նա գետնին գցեցի հենակը, որի վրա դրել էի խաղաստիկներս։ Քույրս հանդիմանեց ինձ, թեև տարված էր իր տեսակետով։

— Ասում եք, Քրանչեսթրո՞ւմ է, միսս Կարուլին,— հարցըրեց գնդապետը։— Հավանաբար Քրանչեսթրը չէ, դա շատ մոտիկ է։

— Հաստատ,— հաղթականորեն գոչեց Կարուլինը։— Մինչև հիմա միանգամայն պարզ է դարձել, որ նա այստեղից գնացքով չի հեռացել։ Նա պարզապես կարող էր քայլելով գնալ Քրանչեսթր։ Ով հավատացած եմ, որ դեռ այնտեղ է։ Ոչ ոքի մտքով չէր անցնի, որ նա այդքան մոտիկ է։

Նա որոշ առարկություններ արեցի այդ տեսակետի վերաբերյալ, բայց երբ Կարուլինը հաստատ գլուխն է մոցնում մի բան, ոչ մի կերպ հնարավոր չէ համոզել նրան, որ սխալվում է։

— Ով, ձեր կարծիքով, մայո Պուարոն է՞լ նույն մտքին է,— մտախոհ ասաց միսս Գանեթը։— Զարմանալի զուգադիպություն է։ Բայց երբ այսօր զբոսնում էի Քրանչեսթր տանող ճանապարհին, նա անցավ իմ մոտով մի մեքենայով, որ այդ կողմից էր գալիս։

Բոլորս իրար նայեցինք։

— Վա՜յ, վաղուց մահջոնգ է ինձ մոտ, և չեմ նկատել,— հանկարծ գոչեց միսս Գանեթը։

Կարուլինը շեղվեց իր մտքերից և միսս Գանեթին ասաց,

որ նրա ձեռքի խաղաթղթերն ու շատ շուները հազիվ թե հնարավորություն ընձեռեն շարունակելու խաղը։ Միսս Գաննեթը հանգիստ լսեց ու հավաքեց խաղանիշերը։

— Իսկապես, հոգյակս, գիտեմ, թե ինչ նկատի ունես,— ասաց նա։— Բայց նայած թե ինչ խաղաթղթեր ունես ձեռքիդ, ճիշտ չէ՞։

— Երբեք շատ խաղաթուղթ չես վերցնի, եթե չմտադրվես,— պնդեց Կարոլինը։

— Դե, ամեն մարդ իր ձևով պիտի խաղա, այնպես չէ՞,— ասաց միսս Գաննեթը։

Արևելյան քամին փաս հայտարարեց, և մենք վերսկսեցինք խաղը։ Էննին բերեց թեյի պարագաները։ Կարոլինն ու միսս Գաննեթը փոքր-ինչ նյարդայնացած էին, ինչպես դա հաճախ էր պատահում խաղի ժամանակ։

— Մի քիչ արագ չէի՞ր խաղա, հոգյակս,— ասաց Կարոլինը, երբ միսս Գաննեթը հապաղեց քայլն անել։— Ջինացիներն այնքան արագ են դնում հախճասալիկները, որ էրանց ձայները թուչնակների ծլվլոց են հիշեցնում։

Մի քանի րոպե խաղացինք չինացիների պես։

— Դուք էական բան չեք ավելացրել տեղեկություններին, Եփարդ,— ասաց գնդապետ Քարթլրը մտերմիկ տոնով։— Խորամանկն եք, սերտ կապի մեջ եք խուզարկուի հետ և ոչ մի ակնարկ չեք անում գործի վիճակի մասին։

— Ջեյմսը տարօրինակ մարդ է,— պարսավանքով լի մի հայացք գցելով վրաս՝ ասաց Կարոլինը։— Նա պարզապես ի վիճակի չէ որևէ բանի հաղորդակից դարձնել։

— Համաձայնում եմ, որ ոչինչ չգիտեմ,— ասացի ես։— Ուարրոն գաղտնի է պահում իր մտադրությունները։

— Խելացի մարդ է,— քմծիծաղելով ասաց գնդապետը։— Նա չի մատնում իրեն։ Հրաշալի տղաներ են այդ օտարերկրացի խուզարկուները։ Ամեն տեսակի հնարք գիտեն։

— Փա՜նգ,— հաղթական տոնով ասաց միսս Գաննեթը։— Եվ մահջոնգ։

Գրությունը դարձավ ավելի լարված։ Վրդովեցուցիչ էր, որ միսս Գաննեթը երրորդ անգամ էր տանում, և Կարոլինն իր պայրույթն իմ վրա թափեց։

— Շատ տաղտկալի ես, Ջեյմս։ Կոճղի պես անշարժ նստել ես ու ոչինչ չես ուզում ասել։

— Բայց, սիրելիս,— բողոքեցի ես,— իրոք ասելու բան չունեմ, այսինքն այն, ինչ նկատի ունես։

— Հիմարություն,— ասաց Կարոլինը, դասավորելով իր խաղաքարտերը։— Վերջիվերջո ինչ-որ հետաքրքիր բան պիտի որ իմանաս։

Մի պահ չպատասխանեցի։ Հրճվանքը համակել էր ինձ։ Ժամանակին կարդացել էի, որ գոյություն ունի այսպես կոչված կատարյալ հաղթանակ, երբ մահջոնգի բոլոր խաղաքարտերը քո ձեռքում են։ Երբեք հույս չունեի, որ դրանք իմ մոտ կլինեն։

Ջուսպ հրճվանքով ձեռքս դրեց սեղանին։

— Ինչպես «Շանհայ» ակումբում են ասում՝ թին-հօ՝ կատարյալ հաղթանակ։

Ջարմանքից գնդապետի աչքերը ճակատին էին թռել։

— Պատվովս եմ երդվում,— գոչեց նա,— արտակարգ հաջողություն է։ Մինչև հիմա այդպիսի բան չեմ տեսել։

Այնուհետև, Կարոլինի հեգնանքից ու ցուցաբերած անհոհեմությունից դրդված, շարունակեցի.

— Որպես հետաքրքիր փաստ կարող եմ ասել, որ գոյություն ունի թվատված և «Ո-ից» մակագրությամբ ամուսնական մի մատանի։

Ես ուշադրություն չդարձրի այն տեսարանին, որ հաջորդեց իմ խոսքերին։ Ստիպված ստույգ ասացի, թե որտեղ է հայտնաբերվել այդ մատանին և հայտնեցի ամսաթիվը։

— Տասներեքը մարտի,— ասաց Կարոլինը։— Ուղիղ վեց ամիս առաջ։

Բազմաթիվ հուզումնալից առաջարկություններ ու ենթադրություններ անելուց հետո երեք տեսակետ առաջ քաշվեց.

1. Գնդապետ Քարթըրի կարծիքով Ռալֆը գաղտնի ամուսնացել էր Ֆլորայի հետ։ Հարցի առաջին և ամենապարզ լուծումը։

2. Միսս Գաննեթի կարծիքով Ռոջեր Աքրոյդը գաղտնի ամուսնացել էր միսիս Ֆերարի հետ։

— Քրոջս կարծիքով Ռոջեր Աքրոյդը ամուսնացել էր իր տնտեսուհու, միսս Ռասելի հետ։

Ջորջը կամ պերտեսակետը առաջ քաշեց Կարուլինը հետո, երբ վերև բարձրացանք քնելու։

— Հիշիր խոսքերս,— հանկարծ ասաց նա,— ամենևին էլ չեմ զարմանա, եթե պարզվի, որ Ջեոֆրի Ռայմոնդն ու Ֆլորան ամուսնացել են։

— Այդ դեպքում մակագրությունը պիտի լիներ «Ջ-ից», ոչ թե «Ռ-ից»։

— Դժվար է ասել։ Որոշ աղջիկներ տղամարդկանց ազգանուններով են կոչում։ Եվ այսօր երեկոյան լսեցիր, թե ինչ ասաց միսս Գաննեթը Ֆլորայի թեթևամիտ արարքների մասին։

Ճիշտն ասած, այդպիսի բան չէի լսել միսս Գաննեթից, բայց հարգում էի անուղղակի ակնարկները հասկանալու Կարուլինի կարողությունը։

— Իսկ ի՞նչ կասես Հեկտոր Բլանթի մասին,— հարցրի ես։— Եթե որևէ մեկը կա...

— Անմտությո՜ւն է,— ասաց Կարուլինը։— Ինձ թվում է, նա հիացած է նրանով, գուցե և սիրահարված է։ Բայց հավատացած եղիր, որ մի աղջիկ չի կարող սիրահարվել մի տարեց մարդու, որն հայր կապի իրեն, երբ բարեւես մի քարտուղար կա։ Նա կարող է տոն տալ մայոր Բլանթին որպես կույրի։ Աղջիկները շատ հմուտ են այդպիսի գործերում։ Բայց մի բան պիտի ասեմ քեզ, Ջեյմս Շեպարդ, Ֆլորա Աքրոյդը չի համակրում և երբեք էլ չի համակրել Ռալֆ Փեյթընին։ Նկատի ունեցիր։

Ես խոնարհաբար նկատի ունեցա։

Գլուխ 17

ՓԱՐՔԸ

Հաջորդ առավոտյան մոտծեցի, որ թին-հօի կամ կատարյալ հաղթանակի պատճառած հրճվանքի ազդեցության տակ քերևս փոքր-ինչ անխոհեմ քայլ էի արել։ Ճիշտ է, Պուարոն

չէր խնդրել ինձ, որ ոչ ոքի չասեմ, թե մատանին գտնվել էր Մյաւս կողմից, նա ոչինչ չէր ասել այդ մասին Ֆերնլիում եղած ժամանակ, և որքան ինձ հայտնի էր, ես միակ մարդն էի, որ գիտեր մատանին գտնվելու մասին։ Ես պարզապես մեղավոր զգացի ինձ։ Այդ լուրը երևի կայծակի արագությամբ այդ րոպեին տարածված էր ֆինգս Աբբոթով մեկ։ Եվ ամեն վայրկյան սպասում էի Պուարոյի ամեն տեսակի պարտավանքներին։

Միսիս Ֆերարի և Ռոջեր Աքրոյդի միացյալ թաղումը նշանակված էր ժամը տասնմեկին։ Դա մի տխուր ու ճնշող արարողություն էր։ Ֆերնլիի երեկույթի բոլոր մասնակիցներն այնտեղ էին։

Երբ արարողությունը վերջացավ, Պուարոն, որ նույնպես ներկա էր, թևանցուկ արեց ինձ և առաջարկեց ուղեկցել իրեն «Կուեններ»։ Նա շատ մռայլ էր, և վախենում էի, որ իմացել էր նախորդ գիշեր կատարած իմ անխոհեմ քայլի մասին։ Բայց շուտով պարզվեց, որ նրա միտքը զբաղված էր միանգամայն այլ բանով։

— Հասկանում եք,— ասաց նա,— մենք պետք է գործենք։ Ձեր օգնությամբ ուզում եմ հարցաքննել մի վկայի։ Մենք կհարցաքննենք նրան և այնպիսի սարսափ կներշնչենք, որ ճշմարտությունն ինքնին ի հայտ կգա։

— Ո՞ր վկայի մասին է խոսքը,— զարմացած հարցրի ես։

— Փարքըրի,— ասաց Պուարոն։— Խնդրեցի նրան, որ ժամը տասներկուսին իմ տանը լինի։ Հիմա երևի սպասում է մեզ։

— Ի՞նչ եք մտածում,— համարձակվեցի հարցնել՝ հայացքս շրջելով։

— Մի բան գիտեմ, որ գոհ չեմ։

— Ձեր կարծիքով նա՞ է շանտաժի ենթարկել միսիս Ֆերարին։

— Կամ այդ, կամ էլ...

— Ի՞նչ,— հարցրի ես մի երկու րոպե սպասելուց հետո։

— Բարեկամս, ահա թե ինչ կասեմ. կարծում եմ նա է։ Երբ տեղ հասանք, ասացին, որ Փարքըրն արդեն այնտեղ

ապատում է մեզ։ Երբ նեղս մտանք, ծառայապետը հարցրեց վեր կացավ տեղից։

— Բարի օր, Փարքըր,— սիրալիր ասաց Պուարոն։— Մի րոպե, խնդրում եմ։

Նա հանեց վերարկուն ու ձեռնոցները։

— Թույլ տվեք, սըր,— ասաց Փարքըրը և առաջ նետվեց՝ օգնելու նրան։ Փարքըրը դրանք խնամքով դրեց դռան մոտի բազկաթոռին։ Պուարոն հավանություն տվող հայացքով նայում էր նրան։

— Շնորհակալություն, հարգելիս,— ասաց նա։— Նստեցեք, խնդրեմ։ Շատ ժամանակ չեմ խլի ձեզնից։

Փարքըրը նստեց և խոնարհ ձևով գլուխը թեքեց մի կողմ։

— Այսպես. ի՞նչ եք կարծում, ինչի՞ համար եմ խնդրել, որ գաք։

Փարքըրը մաքրեց կոկորդը։

— Ինչպես հասկացա, սըր, ուզում եք մի քանի հարց տալ հանգուցյալ տիրոջս վերաբերյալ։

— Précisément[1],— ժպտալով ասաց Պուարոն։— Հաճա՞խ եք շանտաժով զբաղվել։

— Սը՛ր։

— Մի հուզվեք,— անխռով ասաց Պուարոն։— Վիրավորված, բայց անկեղծ մարդ մի ձևացեք։ Ձեզ ամեն ինչ հայտնի է շանտաժի մասին, ճի՞շտ է։

— Սըր, ինձ... ինձ...

— Առաջ այդպես չեն վիրավորել,— նրա խոսքն ավարտեց Պուարոն։— Ուրեմն, ինչո՞ւ էիք նախորդ երեկոյան, իմ հարգարժան Փարքըր, այդքան ուզում լսել Աքրոյդի աշխատասենյակում տեղի ունեցող խոսակցությունը, այն բանից հետո, երբ ձեր ականջին հասավ «շանտաժ» բառը։

— Ես, ես չէի...

— Ո՞վ էր ձեր նախորդ տերը,— հանկարծ հարցրեց Պուարոն։

— Նախորդ տե՞րս։

---

1 Այսոեզ՝ անպայման (Ֆր.)։

— Այո՛, ում մոտ ծառայում էիք, նախքան Աքրոյդի մոտ գալը:

— Ոմն մայոր էլերբի, սըր...

Պուարոն ասաց այն, ինչ նա էր ուզում ասել:

— Շատ ճիշտ է, մայոր էլերբի: Մայոր էլերբին թմրամոլ էր, ճիշտ չէ՞: Դուք ճանապարհորդել եք նրա հետ: Երբ Բերմուդյան կղզիներում էր, ինչ-որ անախորժ բան պատահեց. մի մարդ սպանվեց: Մայոր էլերբին մասամբ պատասխանատու էր դրա համար: Այդ գործը կոծկվեց, բայց դուք գիտեք այդ մասին: Որքա՞ն վճարեց մայոր էլերբին, որ լռեք:

Փարքերը, բերանը բաց, շվարած նրան էր նայում: Նա պարզապես գլուխը կորցրել էր:

— Ինչպես տեսնում եք, տեղեկություններ եմ հավաքել,— սիրալիր ասաց Պուարոն:— Ասում եմ իրականությունը: Դուք պատկառելի մի գումար շորթեցիք նրանից, և մայոր էլերբին շարունակեց վճարել ձեզ մինչև մահ: Իսկ հիմա ուզում եմ լսել ձեր վերջին փորձի մասին:

Փարքերը հայացքը չէր կտրում նրանից:

— Ժխտելն անօգուտ է: Հերքյուլ Պուարոն գիտի: Ինչ ասաբի մայոր էլերբիի մասին, իրողություն է, ճիշտ չէ՞:

Փարքերն ակամա գլխով համաձայնության շարժում արեց: Նա մեռելի պես գունատ էր:

— Բայց ես միատր Աքրոյդի մազին անգամ չեմ կպել,— ասաց նա ողբաձայն:— Ասված վկա, սըր, չեմ կպել: Միշտ էլ վախենում էի, որ այդպիսի բան է պատահելու: Ով հավատացնում եմ ձեզ, ես չեմ սպանել նրան:

Նրա ձայնը գրեթե ճիչի էր նման:

— Ես հակված եմ հավատալու ձեզ, բարեկամս,— ասաց Պուարոն:— Դուք այդքան արիություն չունեք: Բայց ինձ պետք է ճշմարտությունը:

— Ես կասեմ ձեզ ամեն ինչ, այն ամենն, ինչ ուզում եք: Ճիշտ է, այն գիշեր ուզում էի լսել: Այն երկու բառը, որ լսեցի, զարմանք պատճառեցին ինձ: Իրեն չանհանգստացնելու միտր Աքրոյդի ցանկությունը, բժշկի հետ փակվելը՝ սա է այն ամենն, ինչ ասացի ոստիկանությանը, վկա է աստված: «Շանտաժ» բառը, սըր, լսեցի և...

Նա լռեց։

— Կարծեցիք ձեզ վերաբերող ինչ-որ բան կարող է լինել,— ասաց Պուարոն մեղմորեն։

— Դե... դե, իհարկե, սըր։ Մտածեցի՝ եթե միստր Աբրոյդը շանտաժի է ենթարկվել, ինչո՞ւ ես էլ իմ բաժինը չունենամ։

Տարօրինակ մի արտահայտություն սահեց Պուարոյի դեմքի վրայով։ Նա հակվեց առաջ։

— Որևէ պատճառ ունեի՞ք մինչ այդ գիշեր ենթադրելու, որ միստր Աբրոյդին շանտաժի են ենթարկել։

— Իհարկե ոչ, սըր։ Դա շատ զարմացրեց ինձ։ Իր բոլոր սովորություններում այդքան ճշտապահ մի ջենտլմեն...

— Ինչքա՞ն ժամանակ թաքուն լսեցիք։

— Շատ չլսեցի, սըր։ Ինձ թվաց, թե ինչ-որ դավ կա իմ դեմ։ Իհարկե ես ստիպված էի գնալ բուֆետի սենյակ՝ պարտականություններս կատարելու։ Եվ երբ մի երկու անգամ զաղտագողի մոտեցա աշխատասենյակին, զգացի, որ անօգուտ է։ Առաջին անգամ բժիշկ Շեփարդը դուրս եկավ և համարյա բռնեց ինձ տեղում, մյուս անգամ միստր Ռայմոնդն անցավ կողքովս մեծ սրահում, այնպես որ համոզվեցի, որ անօգուտ էր։ Իսկ երբ գնացի մատուցարանով, միսս Ֆլորան կտրեց ճանապարհս։

Պուարոն երկար ժամանակ սևեռուն նայեց նրան, ասես ստուգելու նրա անկեղծությունը։ Փարքըրը, ի պատասխան, լրջորեն նայեց խուզարկուին։

— Հուսով եմ, սըր, որ հավատում եք ինձ,— ասաց նա։— Ամբողջ ժամանակ վախենում էի, որ ոստիկանությունը կըփորփրի մայոր Էլթրիի հետ կապված այդ հին գործը և, հետևաբար, կկասկածի ինձ։

— Eh bien,— վերջապես ասաց Պուարոն։— Ես տրամադիր եմ հավատալու ձեզ։ Բայց մի բան պիտի խնդրեմ ձեզնից. ցույց տվեք ձեր բանկի գրքույկը։ Դուք բանկի գրքույկ ունեք, այնպես չէ՞։

— Այո, սըր, մոտս է,— պատասխանեց Փարքըրը, և, առանց շփոթվելու, գրպանից հանեց գրքույկը։

Պուարոն վերցրեց նուրբ, կանաչ կազմով գրքույկը և ուշադիր կարդաց գրանցումները։

— Օ՜, ինչպես տեսնում եմ, այս տարի 500 ֆունտի պետական փոխառություն եք գնել։

— Այո՛, սըր։ Արդեն հազար ֆունտից ավելի խնայողություն ունեմ, որ իմ նախկին տիրոջ, մայ... մայոր Էլերբի հետ ունեցած կապերի արդյունքն է։ Բացի այդ, այս տարի փոքր-ինչ ռիսկի դիմեցի ձիարշավի ժամանակ և հաջողություն ունեցա։ Եթե հիշում եք, սըր, ձիարշավում մեկը հոբելյանական մրցանակ շահեց։ Ես քսան ֆունտով գրազ էի եկել, և տարա։

Պուարոն վերադարձրեց գրքույկը։

— Հաջողություն, բարեկամս։ Հավատացած եմ, որ ճըշմարտությունն ասացիք ինձ։ Իսկ եթե ոչ, ավելի վատ ձեզ համար։

Երբ Փարքըրը հեռացավ, Պուարոն վերցրեց վերարկուն։

— Նորից ինչ-որ տեղ եք գնում,— հարցրի ես։

— Այո՛, մի փոքր այցելություն կկատարենք միստր Համոնդին։

— Դուք հավատո՞ւմ եք Փարքըրի պատմածին։

— Արտաքուստ շատ հավանական է։ Հասկանալի է, որ նա, եթե, իհարկե, դերասանություն չի անում, անկեղծորեն հավատում է, թե Աքրոյդն ինքն է շանտաժի զոհը դարձել։ Եթե այդպես է, նա բոլորովին տեղյակ չէ միսիս Ֆերարի գործից։

— Այդ դեպքում ո՞վ...

— Իսկապես՝ ո՞վ։ Սակայն մեր այցը միստր Համոնդին պիտի հասցնի վերջնական մի նպատակի։ Կամ լրիվ կարդարացնի Փարքըրին կամ էլ...

— Ի՞նչ։

— Այսօր վատ սովորություն ունեմ նախադասությունները կիսատ թողնելու,— ասաց Պուարոն ներողություն հայցող տոնով։— Համբերատար պիտի լինեք։

— Ի դեպ,— շփոթված ասացի ես,— մի բան պիտի խոստովանեմ։ Վախենում եմ, որ անզգուշաբար հայտնեցի մատանու գաղտնիքը։

— Ի՞նչ մատանի։

— Որ դուք գտաք լճակում։

— Հա՛, իսկապես, — ասաց Պուարոն, լայն ժպտալով։

— Հուսով եմ, որ չեք զայրանում։ Շատ անխոհեմ գըտնըվեցի։

— Ամենևին էլ ոչ, բարեկամս, ամենևին էլ ոչ։ Ես ոչ մի պարտավորություն չէի դրել ձեզ վրա։ Ցանկության դեպքում դուք ազատ կարող էիք խոսել այդ մասին։ Դա հետաքրքրե՞ց ձեր քրոջը։

— Հարկավ։ Սենսացիա առաջացրեց։

— Բայց և այնպես ամեն ինչ շատ պարզ է ու ակնհայտ։ Ճշմարտությունն իսկույն ուշադրություն է գրավում, այնպես չէ՞։

— Մի՞թե։

Պուարոն ծիծաղեց։

— Ինչպի մարդը իրեն չի վարկաբեկի, այդպես չէ՞։ Բայց մենք տեղ հասանք։

Փաստաբանն իր գրասենյակում էր, և մեզ իսկույն ներս հրավիրեցին։ Համոնդը վեր կացավ և, իրեն հատուկ քծնանքությամբ, սառը տոնով ողջունեց մեզ։

Պուարոն անմիջապես գործի անցավ.

— Ներող, որոշ տեղեկություններ եմ ուզում իմանալ ձեզնից, այսինքն, եթե այնքան սիրալիր գտնվեք, որ չմերժեք։ Որքան գիտեմ, դուք հանգուցյալ միսիս Ֆերրարի հավատարմատարն եք եղել։

Ես նկատեցի, թե ինչպես զարմանքի մի շող ցոլաց փաստաբանի աչքերում, բայց պրոֆեսիոնալ զսպվածությունը հաղթեց, և նրա դեմքը նորից դարձավ անթափանցելի։

— Իհարկե։ Նրա բոլոր գործերը մեր ձեռքով են անցել։

— Շատ լավ։ Նախքան հարց տալը, կցանկանայի, որ լսեք բժիշկ Շեպարդին։ Ձեք առարկում, չէ՞, բարեկամս, կըրկընել ուրթաթ գիշեր միստր Աքրոյդի հետ ունեցած զրույցը։

— Ամենևին,— ասացի ես և իսկույն սկսեցի մանրամասն պատմել այդ խորհրդավոր երեկոյի մասին։

Համոնդը լսում էր ամենայն ուշադրությամբ։

— Այսքանը,— վերջացնելով ասացի ես։

— Շանտաժ,— մտախոհ ասաց փաստաբանը։

— Զարմանո՞ւմ եք,— հարցրեց Պուարոն։

Փաստաբանը հանեց պենսնեն և թաշկինակով փայլեցրեց։

— Ո՛չ,— պատասխանեց նա,— չեմ զարմանում։ Որոշ ժամանակ այդպիսի բան կասկածում էի։

— Դա մեզ հանգեցնում է այն տեղեկությանը, որ ես ուզում եմ խնդրել,— ասաց Պուարոն։— Մեկը կա, որ կարող է ասել մեզ վճարված իսկական գումարի մասին, այդ դուք եք, մսյո։

— Ես ոչ մի պատճառ չեմ տեսնում թաքցնելու իրողությունը,— ասաց Համոնդը փոքր-ինչ մտածելուց հետո։— Անցած տարի միսիս Ֆերարը վաճառեց որոշ արժեքավոր թղթեր և գումարը փոխանցվեց նրա հաշվին։ Քանի որ մեծ եկամուտ ուներ և ամուսնու մահից հետո շատ հանգիստ էր ապրում, անտարակուսելի էր թվում, որ այդ գումարները որոշակի նպատակների էին ծառայում։ Մի անգամ փորձեցի իմանալ այդ մասին, և նա ասաց, որ պարտավոր է պահել ամուսնու մի քանի աղքատ ազգականների։ Ես, իհարկե, կարևորություն չտվի դրան։ Մինչև հիմա ինձ միշտ էլ թվացել է, թե այդ գումարը վճարվել է մի կնոջ, որը պահանջներ է ունեցել Աշլի Ֆերարից։ Մտքովս անգամ չի անցել, որ միսիս Ֆերարն էլ է կապված այդ գործին։

— Իսկ որքա՞ն է կազմում այդ գումարը,— հարցրեց Պուարոն։

— Քսան հազար ֆունտ։

— Քսա՜ն հազար ֆունտ,— գոչեցի ես։— Մի տարո՞ւմ։

— Միսիս Ֆերարը շատ հարուստ կին էր,— չոր ասաց Պուարոն։— Իսկ սպանության համար պատիժ կրելը հաճելի բան չէ։

— Բավարարվա՞ծ եք,— հարցրեց Համոնդը։

— Շնորհակալություն, այո,— ասաց Պուարոն վեր կենալով տեղից։

— Շատ կներեք, որ անհանգստացրինք ձեզ։

Մենք հրաժեշտ տվեցինք ու դուրս եկանք։

— Իսկ հիմա անդրադառնանք մեր բարեկամ Փարքըրին,—

ասաց Պուարոն։— Քսան հազար ֆունտ կանխիկ գումար ունենալով կշարունակի՞ արդյոք ծառայել։ Կարծում եմ, որ ոչ։ Իհարկե, հնարավոր է, որ փողը բանկ է գցել ուրիշի անունով, բայց ավելի շատ հակված եմ հավատալու, որ ճշմարտությունն ասաց մեզ։ Թե սրիկա է, ապա՝ փոքր մասշտաբի, քանզի զուրկ է երևակայությունից։ Այդ դեպքում մնում են Ռայմոնդն ու Բլանթը։

— Միայն թե ոչ Ռայմոնդը,— առարկեցի ես,— քանի որ գիտենք, որ հինգ հարյուր ֆունտի խիստ կարիք ուներ։

— Դա ինքն է ասում։

— Իսկ ինչ վերաբերում է Հեկտոր Բլանթին...

— Ես մի բան կասեմ ձեզ այդ մայոր Բլանթի մասին,— ընդհատեց ինձ Պուարոն։— Տեղեկություններ հավաքելն իմ գործն է, և ես հավաքել եմ այդ տեղեկությունները։ Eh bien, *ժառանգությունը, որի մասին նա խոսում է, պարզվում է, որ կազմում է մոտ քսան հազար ֆունտ։ Ի՞նչ կարծիքի եք։*

Ես այնքան անակնկալի էի եկել, որ դժվարանում էի խոսել։

— Հնարավոր չէ,— վերջապես ասացի ես։— Այդքան հանրահայտ մի մարդ, ինչպիսին է Հեկտոր Բլանթը։

Պուարոն թոթվեց ուսերը։

— Ո՞վ գիտե։ Համենայն դեպս, նա շատ ճարտարամիտ մարդ է։ Խոստովանում եմ, դժվար թե նա շանտաժիստ լինի, բայց կա մի այլ բան, որ դուք նույնիսկ նկատի չեք առել։

— Ի՞նչ։

— Կրակը, բարեկամս։ Գուցե ձեր հեռանալուց հետո Աբրոյդն ինքն էր ոչնչացրել նամակը, կապույտ ծրարը։

— Դժվար թե,— ասացի ես։— Ջնայած հնարավոր է։ Գուցե միտքը փոխել է։

Մենք մոտեցել էինք մեր տանը և վայրկյանի ազդեցության տակ Պուարոյին հրավիրեցի ներս գալ և ճաշել մեզ հետ։ Կարծում էի կարողինը գոհ կմնա ինձնից, բայց դժվար է գոհացնել կանանց։ Պարզվեց, որ նախաճաշին միայն թակովի երկու կոտլետ կար։ Իսկ երեք հոգու առջև դրված երկու կոտլետը բավական անհարմար վիճակ կարող էր ստեղծել։

Սակայն Կարուինը շուտ վհատվողներից չէր։ Նա շինծու անկեղծությամբ բացատրեց Պուարոյին, թե, չնայած Ջեյմսը ծիծաղում է իր վրա, բայց ինքը խիստ հետևում է բանջարեղենով սնվելու կարգին։ Ջմայլված դատողություններ էր անում, թե ինչպիսի բավականություն է պատճառում արախիսը, թեև, համոզված եմ, որ երբեք դրանց համը չէր տեսել, և հաճույքով էր ուտում պանրով տապակած հացն ու խայթիչ դիտողություններ էր անում «լեշերով» սնվելու վերաբերյալ։

Հետո, երբ կրակի մոտ նստած ծխում էինք, Կարուինը ուղղակի հարձակում գործեց Պուարոյի վրա.

— Դեռ չե՞ք գտել Ռալֆ Փեյթընին։

— Որտեղի՞ց պիտի գտնեի, մատմուազել։

— Իսկ ինձ թվում էր, գուցե քրանչեսթրո՞ւմ կգտնեք,— ասաց Կարուինը բազմանշանակալից։

— Քրանչեսթրո՞ւմ։ Իսկ ինչո՞ւ քրանչեսթրում,— զարմացած հարցրեց Պուարոն։

— Երեկ մեր տեղական խուզարկուներից մեկը քրանչեսթրի ճանապարհին տեսել է ձեզ մեքենայի մեջ,— փոքր-ինչ չարությամբ բացատրեցի ես։

— Ահա՛ թե ինչ,— ասաց նա, սրտանց ծիծաղելով։— Պարզապես գնացել էի ատամնաբույժի մոտ։ Ատամս ցավում էր։ Գնացի այնտեղ, և իսկույն անցավ։ Որոշեցի արագ վերադառնալ։ Ատամնաբույժն ասաց՝ ոչ, ավելի լավ է հանենք։ Առարկեցի։ Պնդեց։ Նա էլ իր կարծիքն ուներ։ Այդ կարևոր ատամը։ Այն երբեք էլ չի ցավա։

Կարուինը ծակված փուչիկի նման փուքը թողեց։

Սկսեցինք խոսել Ռալֆ Փեյթընի մասին։

— Թուլակամ է, բայց ոչ արատավոր,— պնդեցի ես։

— Այո,— ասաց Պուարոն,— բայց թուլակամությունը որտե՞ղ է վերջանում։

— Հիրավի,— ասաց Կարուինը։— Օրինակ, Ջեյմսը. բոլորովին կամքի ուժ չունի։ Երեխա ես չինեի...

— Սիրելի Կարուին,— բորբոքված ասացի ես։— Ջե՞ռ կարող խոսել առանց անձնականին կպնելով։

— Թուլակամ ես, Ջեյմս,— անդրդվելիորեն ասաց Կա-

րոլինը։— Ես ութ տարով մեծ եմ քեզնից և ուզում եմ, որ մայո Պուարոն իմանա...

— Երբեք մտքովս չէր անցել, մադմուազել,— հարցալից գլուխ տալով՝ ասաց Պուարոն։

— Ութը տարով մեծ եմ և միշտ էլ իմ պարտքն եմ համարել հոգ տանել քո մասին։ Վատ դաստիարակության դեպքում աստված գիտե, թե ինչ դժբախտության մեջ կարող էիր ընկնել։

— Կարող էի ամուսնացած լինել մի գեղեցիկ արկածախնդրուհու հետ,— մրմնջացի ես, աչքերս հառելով առաստաղին և ծխի օղակներ բաց թողնելով։

— Արկածախնդրուհո՞ւ,— գոչեց Կարոլինը գայրույթից փնչացնելով։— Ծթե խոսքը արկածախնդրուհիներին է վերաբերում...

Նա չավարտեց նախադասությունը։

— Եվ ի՞նչ,— հետաքրքրությամբ հարցրի ես։

— Ոչինչ։ Բայց ես կարող էի մեկի անունը տալ, որը շատ հեռու չէ այստեղից։

Եվ անսպասելիորեն դիմեց Պուարոյին.

— Ջեյմսը պնդում է, որ դուք այն կարծիքին եք, թե սպանությունը կատարել է տնեցիներից մեկը։ Կարող եմ ասել, որ սխալվում եք։

— Չէի ցանկանա սխալվել,— ասաց Պուարոն։— Դա իմ, ինչպե՞ս եք ասում, արվեստը չէ։

— Ես բավական ակնհայտ փաստեր ունեմ,— շարունակեց Կարոլինը, ոչ մի ուշադրություն չդարձնելով Պուարոյի ակնարկին,— որ Ջեյմսն ու մյուսներն են տվել։ Որքան կարող եմ դատել, տան անդամներից միայն երկուսը կարող էին դրա առիթն ունենալ. Ռալֆ Փեյթընն ու Ցլորա Աբրոյդը։

— Սիրելի Կարոլին...

— Դե Ջեյմս, մի՛ ընդհատիր ինձ։ Գիտեմ, թե ինչ եմ ասում։ Փարքերը Ցլորային հանդիպեց դռնից դուրս, այնպես չէ՞։ Նա չլսեց, թե ինչպես հորեղբայրը Ցլորային բարի գիշեր մաղթեց։ Աղջիկը կարող էր սպանած լիներ նրան տեղն ու տեղը։

— Կարոլի՛ն։

— Ես չեմ ասում, թե նա սպանեց, Ջեյմս։ Ասում եմ կարող էր սպանել։ Ճիշտն ասած, թեև Ֆլորան նման է ժամանակակից բոլոր աղջիկներին, որոնք ոչ մի հարգանք չունեն մեծերի նկատմամբ, և, կարծում եմ ավելի լավ գիտեն ամեն ինչ, այնուամենայնիվ չեմ հավատում, որ նա հավի ճուտ կսպանի։ Բայց փաստը մնում է փաստ։ Միստր Ռայմոնդն ու մայոր Բլանթը ալիբի ունեն, միսիս Աքրոյդը՝ նույնպես։ Նույնիսկ կարծես այդ կինը՝ Ռասելն էլ ունի, և նրա գործերն էլ վատ չեն։ Ո՞վ մնաց։ Միայն Ռալֆն ու Ֆլորան։ Ով ինչ ուզում ես ասա, միևնույնն է չեմ հավատում, որ Ռալֆ Փեյթընը մարդասպան է։ Նրան մանկուց գիտենք։

Պուարոն որոշ ժամանակ լուռ հետևում էր իր սիգարետից բարձրացող ծխի գալարներին։ Իսկ երբ վերջապես խոսեց, ձայնը այնքան մեղմ էր ու անսովոր, որ տարօրինակ տպավորություն թողեց։

— Վերցնենք, օրինակ, մի մարդու, շատ սովորական մի մարդու։ Մի մարդ, որ սպանելու միտք անգամ չունի, բայց թուլակամ է։ Երկար ժամանակ այդ թուլակամությունը չի դրսևորվում, թերևս երբեք էլ չի դրսևորվի, և այդ դեպքում նա գերեզման կիջնի որպես հասարակության հարգված անդամ։ Բայց ենթադրենք ինչ-որ բան է պատահում։ Նա դժվարին կացության մեջ է, թերևս ավելին։ Եվ պատահաբար իմանում է մի գաղտնիք, որից կախված է ինչ-որ մեկի կյանքը։ Որպես ազնիվ քաղաքացի, նրա առաջին մղումը կլինի կատարել իր պարտքը։ Եվ ահա բնածին թուլակամությունը դրսևորում է իրեն։ Ահից կա փող ձեռք բերելու, մի մեծ գումար։ Նա փողի կարիք ունի, երազում է այդ մասին, և հանկարծ շատ հեշտ է այն ձեռք բերել։ Նա ոչ մի բան չունի անելու, բացի լռելուց։ Դա սկիզբն է։ Փողի տենչը մեծանում է։ Նա պետք է ավելի ու ավելի շատ ունենա։ Նա արբեցած է իր առջև բացված ոսկու հանքով։ Դառնում է ընչաքաղց, եվ իր ագահության մեջ շատ առաջ է գնում։ Տղամարդուն կարելի է մի բան հարկադրել որքան կամենաս, բայց կնոջը՝ երբեք, քանզի կինը ներքուստ մեծ ցանկություն ունի ճշմարտությունն ասելու։ Իրենց կանանց խաբած ինչքա՜ն տղամարդ է հանգիստ գերեզման իջել, իրենց հետ տանելով իրենց

գաղտնիքը։ Իրենց ամուսիններին խաբած ինչքա՜ն կանայք են կործանվել, ամուսինների դեմքերին շպրտելով ճշմարտությունը։ Նրանք չափից ավելի հարկադրված են եղել։ Հուսահատության պահին (որ հետագայում զղջալու են), նրանք անտեսում են ամեն տեսակի վտանգ ու փրկություն, և, հանուն իրենց ակնթարթային հաճույքի, հայտարարում ճշմարտությունը։ Իմ կարծիքով այդպես է եղել և այս դեպքում։ Ինածին թուլամորթությունը չափազանց մեծ է եղել։ Եվ այսպես տեղի ունեցավ, ինչպես առածն է ասում, մահը մի հավի, որ ոսկե ձվեր էր ածում։ Բայց դա դեռ վերջը չէ։ Դիմակազերծվելու վտանգը ծառացավ նրա դեմ, ում մասին խոսում ենք։ Եվ նա նույն մարդը չէ, ինչպես, ասենք, մի տարի առաջ էր։ Նա բարոյապես բթացել է։ Հուսահատության մեջ է։ Աշխատում է փրկել տանուլ տված ճակատամարտը և պատրաստ է ամեն տեսակի միջոցների դիմել, քանզի ուզում է փրկել վիճակը։ Եվ այսպես, գործում է դաշույնը։

Նա մի պահ լռեց։ Թվաց, թե Պուարոն կախարդել էր բոլորին։ Չեմ կարող նկարագրել այն ազդեցությունը, որ թողեցին նրա խոսքերը։ Ինչ-որ բան կար նրա անողոք անալիզում, զորեղ մի խորաթափանցություն, որ սարսափ ներշնչեց մեզ։

— Դաշույնը հանելուց հետո, նա նորից դառնում է նորմալ, բարյացակամ։ Բայց եթե կարիք լինի, նորից կհարվածի։

Կարոլինը վերջապես սթափվեց։

— Դուք խոսում եք Ռալֆ Փեյթընի մասին,— ասաց նա։— Միգուցե իրավացի եք, գուցե, ոչ, բայց դուք իրավունք չունեք դատապարտել մի մարդու, որին չեք լսել։

Լսվեց հետախուզապանգի սուր ձայնը։ Ես դուրս եկա նախասենյակ և վերցրի լսափողը։

— Ի՞նչ։ Այո՛, բժիշկ Շեփարդը լսում է։

Ես փոքր-ինչ լսեցի և հակիրճ պատասխանեցի։ Լսափողը տեղը դնելով, վերադարձա հյուրասենյակ։

— Պուարո,— ասացի ես,— Լիվերպուլում մի մարդ են բռնել։ Ննջատրում են, որ նա այն անծանոթն է, որ այն գիշեր այցելեց Ֆերնլի։ Ինձ կանչում են Լիվերպուլ՝ հաստատելու նրա անձը։

Գլուխ 18

ՉԱՐԼԶ ՔԵՆԹ

Կես ժամ հետո Պուարոն, ես և տեսուչ Ռագլանը Լիվերպուլ տանող գնացքում էինք։ Տեսուչը հուզված էր երևում։

— Մենք, հավանաբար, տեղեկություններ պիտի հավաքենք շանտաժի վերաբերյալ, եթե ոչ ավելին,— հայտարարեց տեսուչը հաղթական տոնով։— Որքան կարող եմ դատել հեռախոսային խոսակցությունից, փորձված տիպ է երևում։ Ըստ որում և թմրամոլ է։ Պետք է զգույշ լինենք նրանից որևէ բան իմանալիս։ Եթե ամենաչնչին դրդապատճառն իսկ հաստատվի, շատ հավանական է, որ նա է սպանել միստր Աքրոյդին։ Բայց այդ դեպքում ինչո՞ւ է երիտասարդ Փեյթընը հետու պահում իրեն։ Այնուհանդերձ, ամբողջ գործը խճճված է։ Ի դեպ, մսյո Պուարո, միանգամայն իրավացի էիք այդ մատնահետքերի հարցում։ Դրանք միստր Աքրոյդի մատնահետքերն էին։ Ինքս էլ նույն կարծիքին էի, բայց մոածեցի հարիվ թե հավանական է։

Ես ժպտացի։ Ռագլանն ակնհայտորեն չէր ուզում խոստովանել, որ սխալվել էր։

— Ինչ վերաբերում է այդ մարդուն,— ասաց Պուարոն,— նա դեռ ձերբակալված չէ։

— Ո՛չ, կասկածի տակ է։

— Եվ ինչպե՞ս է դրսևորում իրեն։

— Մի քիչ կասկածելի,— քմծիծաղ տալով պատասխանեց տեսուչը։— Շատ շրջահայաց թռչնակ է երևում։ Ավելի շատ հայհոյում է, քան խոսում։

Երբ ժամանեցինք Լիվերպուլ, ինձ զարմանք պատճառեց այն հանդիսավոր ընդունելությունը, որ սպասվում էր Պուարոյին։ Ոստիկանական ավազ սպա Հեյսը, որ ընդունեց մեզ, տարիներ առաջ աշխատել էր Պուարոյի հետ և չափազանց մեծ կարծիք ուներ խուզարկուի ընդունակությունների մասին։

— Այժմ, երբ մսյո Պուարոն այստեղ է, չպետք է հա-

պաղեք,— զվարթորեն ասաց նա։— Ես էլ կարծում էի ֆոշակի ես անցել, մայո։

— Այդպես էլ կա, հարգելի Հեյս, այդպես էլ կա։ Բայց շատ տաղտկալի է մեկուսի կյանքը։ Չեք կարող պատկերացնել, թե ինչպիսի միօրինակությամբ են անցնում օրերս։

— Իսկ դուք, բժիշկ Շեփարդ, ուրեմն եկել եք տեսնելո՞ւ մեր «գոածոն»։ Կարծում եմ կկարողանաք հաստատել նրա անձը, այնպես չէ՞, սըր։

— Այնքան էլ համոզված չեմ,— պատասխանեցի ես տարակուսանքով։

— Ո՞նց բռնեցիք նրան,— հարցրեց Պուարոն։

— Նկարագրությունից ելնելով, թեև այն լրիվ չէր, այդ տղան ամերիկյան առոգանություն ունի, և չի ժխտում, որ այն գիշեր եղել է Քինգս Աբբոթի մոտերքում։ Բայց հարցընում է, թե դա մեր ինչ գործն է, և հայտարարում, որ ավելի շուտ գրողի ծոցը կուղարկի մեզ, քան որևէ հարցի կպատասխանի։

— Ուրյլ կտա՞ք, որ ես էլ տեսնեմ նրան,— հարցրեց Պուարոն։

Ավազ սպան բազմանշանակալից փակեց մի աչքը։

—Շատ ուրախ կլիննենք, սըր։ Կարող եք անել, ինչպես կհաճեք։ Տեսուչ Ջափը՝ Սքոթլանդ Յարդից, անցյալ օրը ձեր մասին էր հարցնում։ Ասաց, թե լսել է, որ ոչ պաշտոնական որևէ գործով։ Որտե՞ղ է կապիտան Փեյթընը, սըր, կարո՞ղ եք ասել։

— Չեմ կարծում, որ խոհեմություն կլինի ներկա իրավիճակում խոսել այդ մասին,— խիստ տոնով ասաց Պուարոն։ Ես հազիվ զսպեցի ժպիտս։

Փոքրիկ մարդը, հիրավի լավ ասաց։

Փոքր-ինչ բանակցելուց հետո մեզ տարան զրուցելու բանտարկյալի հետ։

Նա քսաներկու կամ քսաներեք տարեկան երիտասարդ էր։ Հարձրահասակ էր, նիհար, ձեռքերը թեթևակի դողում էին, և ֆիզիկական կարողություններն ակնհայտորեն նվազել էին։ Մազերը թուխ էին, աչքերը՝ կապույտ ու շարժուն, այնպես որ գրեթե հնարավոր չէր որսալ նրա հայացքը։ Ամբողջ ժա-

մանակ այն պատրանքն էի փայփայում, թե ինչ-որ ծանոթ բան կար այդ մարդու մեջ, բայց թե իրոք նա էր եղել, լրիվ համոզված չէի։ Նա ամենևին էլ իմ ճանաչած մարդկանցից որևէ մեկին նման չէր։

— Դե՛, Քենթ,— ասաց ավագ սպան,— վեր կացեք, մի քանի այցելուներ կան, ովքեր ուզում են տեսնել ձեզ։ Նրանցից որևէ մեկին ճանաչո՞ւմ եք։

Նա մոայլ նայեց մեզ, բայց չպատասխանեց։ Նկատեցի, թե ինչպես նրա մոլոր հայացքը շրջանցեց բոլորին և կանգ առավ ինձ վրա։

— Դե՛, սըր, ի՞նչ կասեք,— դիմեց ինձ ավագ սպան։

— Հասակը նույնն է,— ասացի ես,— իսկ ինչ վերաբերում է ընդհանուր տեսքին, հնարավոր է, որ նա է։ Բացի դրանից, ուրիշ բան չեմ կարող ասել։

— Գրողը տանի, ի՞նչ է նշանակում այս ամենը,— հարցրեց Քենթը։— Ի՞նչ ունեք իմ դեմ։ Շարունակե՛ք, վերջացրե՛ք։ Ձեր կարծիքով ի՞նչ եմ արել։

— Նա է, ձայնը ծանոթ է,— ասացի ես։

— Ձայնը ծանո՞թ է, մի՞թե։ Որտե՞ղ եք լսել։

— Ուրբաթ երեկոյան, Ֆերնլի փարքի դարպասներ չհասած։ Հարցրեցիք ճանապարհը։

— Ե՞ս, իրո՞ք։

— Ընդունո՞ւմ եք, որ այդպես է,— հարցրեց տեսուչը։

— Ոչ մի բան էլ չեմ ընդունում, մինչև որ իմանամ, թե ի՞նչ եք ուզում ինձնից։

— Մի՞թե չեք կարդացել վերջին մի քանի օրվա թերթերը,— հարցրեց Պուարոն, առաջին անգամ դիմելով նրան։

Քենթի աչքերը նեղացան։

— Հենց դա՞ է ձեզ պետք։ Ձա կարդացի, որ մի ծեր ջենտլմենի են սպանել Ֆերնլիում։ Ուզում եք պարզել, ես եմ սպանել, թե ոչ, չէ՞։

— Դուք այնտեղ եղե՞լ եք այն գիշեր,— անխռով ասաց Պուարոն։

— Որտեղից գիտեք, միստր։

— Սրանով։— Պուարոն ինչ-որ բան հանեց գրպանից և ցույց տվեց։

Սագի փետուրի կոթունն էր, որ գտել էինք ամառանոցում։

Տեսնելով կոթունը, Քենթն այլայլվեց։ Նա կիսով չափ մեկնեց ձեռքը։

— Կոկաին,— ասաց Պուարոն։— Ո՛չ, բարեկամս, դատարկ է։ Ընկած էր այնտեղ, որտեղ կորցրել էիք այն գիշեր ամառանոցում։

Չարլզ Քենթը տարակուսանքով նայեց նրան։

— Երևում է շատ բան գիտեք, օտարերկրացի աղվես։ Միգուցե հիշո՞ւմ եք. թերթերում գրված է, որ ծեր չենտլմենին սպանել են ինն անց քառասունհինգի և տասի արամքում։

— Ճիշտ է,— ասաց Պուարոն։

— Հա, բայց իրո՞ք այդպես է եղել։ Ես դա եմ ուզում իմանալ։

— Այս չենտլմենը կասի,— պատասխանեց Պուարոն, ցույց տալով Ռագլանին։

Վերջինս վարանեց, նայեց ավագ սպային, հետո Պուարոյին և վերջապես, ասես հրահանգ ստանալով, ասաց.

— Ճիշտ է, ինն անց քառասունհինգի և տասի միջև։

— Այդ դեպքում ոչ մի պատճառ չունեք ինձ պահելու այստեղ,— ասաց Քենթը։— Ինն անց քառասունհինգի մոտ ես Ֆերնլի փարքից հեռու էի գտնվում։ Կարող եք հարցնել «Շուն ու սուլոցում»։ Դա Ֆերնլիից մոտ մի մղոն հեռու գրտնվող հաշարան է, Քրանչեսթրի ճանապարհին։ Հիշում եմ, մի փոքր տուրուդմբոց սարքեցի այնտեղ։ Դա մոտ տասին տասնհինգ պակաս կլիներ։ Այդ մասին ի՞նչ կասեք։

Ռագլանը ինչ-որ բան նշեց իր ծոցատետրում։

— Դե՛։

— Կատուգենք,— ասաց տեսուչը։— Եթե ճշմարտությունն եք ասել, դժգոհելու բան չեք ունենա։ Այնուամենայնիվ, ի՞նչ էիք անում Ֆերնլիում։

— Գնացել էի մեկին հանդիպելու։

— Ո՞ւմ։

— Դա ձեր գործը չէ։

— Լավ կլինի քաղաքավարի խոսեք, տղաս,— զգուշացրեց ավագ սպան։

— Գրող՞ը տյանի, գնացել էի իմ անձնական գործով և ուրիշ ոչինչ։ Եթե ապանության ժամանակ պարզապես այնտեղ չեմ եղել, ուրիշ էլ ի՞նչ է պետք ոստիկանությանը։

— Ձեր անունը Չարլզ Քե՞նթ է,— ասաց Պուարոն։— Որտե՞ղ եք ծնվել։

Նա ապշած նայեց Պուարոյին, հետո քմծիծաղ տվեց ու ասաց.

— Ես իսկական բրիտանացի եմ։

— Այո՛, ինձ էլ է թվում։ Քենթում եք ծնվել։

Նա զարձյալ ապշած նայեց Պուարոյին։

— Ինչի՞ց եք ենթադրում։ Ազգանունի՞ց։ Ազգանունն ի՞նչ կապ ունի։ Պարտադի՞ր է, որ եթե մեկի ազգանունը Քենթ է, ուրեմն այդ դքսության՞մ պիտի ծնված լինի։

— Որոշակի պայմաններում շատ հնարավոր է,— ասաց Պուարոն ամենայն զգուշությամբ։— Որոշակի պայմաններում, հասկանո՞ւմ եք։

Այնքան արտահայտիչ էր նրա ձայնը, որ զարմացրեց ոստիկանական երկու սպաներին։ Իսկ ինչ վերաբերում է Քենթին, ապա նա աղյուսի պես կարմրեց, և մի պահ ինձ թվաց, թե հարձակվելու է Պուարոյի վրա։ Բայց նա միտքը փոխեց և ծիծաղելով մի կողմ շրջվեց։

Պուարոն, աչես գոհ մնալով, օրորեց գլուխը, և դուրս եկավ։ Շուտով նրան միացանք և մենք։

— Կատուգենք,— նկատեց Ռագլանը,— թեև չեմ կարծում, որ նա սուտ է։ Բայց նա պետք է ապացուցի, թե ինչ էր անում Ցերնլիում։ Երևում է այդ շանտաժիստին անելանելի վիճակի մեջ ենք դրել։ Մյուս կողմից, ընդունելով, որ նրա պատմությունը ճիշտ է, այնուամենայնիվ, չենք կարող հաստատել, թե որևէ առնչություն ունի սպանության հետ։ Ձերբակալելու պահին հինգը ֆունտ է եղել նրա մոտ, պատկառելի մի գումար։ Ինձ թվում է այդ քառասուն ֆունտը նրա ձեռքն է ընկել, թեև համարները չեն բռնում։ Հավանաբար միստր Աբրոյդը փող է տվել նրան, և նա իր ուզածի պես տնօրինել է այդ գումարը։ Իսկ գործի հետ ի՞նչ կապ ունի այն փաստը, որ նա ծնվել է Քենթում։

— Առանձնապես ոչ մի,— մեղմ ասաց Պուարոն։ Դա իմ

հերթական աննշան մոքերից մեկն է։ Չէ որ ես դրանցով եմ հայտնի։

— Իրո՞ք,— հարցրեց Ռապլանը տարակուսանքով։

Ավազ սպան բարձրաձայն ծիծաղեց։

— Տեսուչ Ջափը շատ էր այդ նույն հարցը տալիս։ Մայո Պուարոն և նրա աննշա՜ն մոքերը։ «Ինձ համար անհեթեթ կայելի է,— ասում էր նա, բայց ինչ-որ բան կա դրանց մեջ»։

— Դուք ծաղրում եք ինձ,— ժպտալով ասաց Պուարոն,— բայց ոչինչ։ Հիրավի ծիծաղում է նա, ով վերջինն է ծիծաղում։ Ով լուրջ գլուխ տալով, ուղղվեցի դեպի դուռը։

Երկուսով նախաճաշեցինք հյուրանոցում։ Նոր էի հասկանում, որ ամբողջ գործը միանգամայն պարզ էր նրա համար։ Նրա ձեռքում էր այն հիմնական միջոցը, որ առաջնորդելու էր իրեն դեպի ճշմարտություն։

Բայց այդ ժամանակ ոչ մի կասկած չունեի իրավիճակի մասին։ Գերագնահատում էի նրա ինքնավստահությունը և ինքնին հասկանալի էի համարում, որ այն ամենն ինչ տարակուսանք էր պատճառում ինձ, հավասարապես տարակուսանք պիտի պատճառեր և նրան։

Ինձ հիմնականում շփոթեցնում էր այն հարցը, թե Ջարլզ Քենթը ինչ կարող էր արած լինել Ցերնլիում։ Կրկին ու դարձյալ այդ հարցը տալիս էի ինձ և բավարար պատասխան չէի գտնում։ Վերջապես վճռեցի հարցնել նրան, թե ինչ էր մտածում այդ մասին։ Նա իսկույն պատասխանեց.

— Բարեկամս, ես չեմ մտածում, ես գիտեմ։

— Հիրավի՞։

— Այո՛, իհարկե։ Կարծում եմ, որ անիմաստ կլինի ձեզ համար, եթե ասեմ, որ այն գիշեր նա Ցերնլի էր գնացել միայն այն պատճառով, որ Քենթում էր ծնվել։

Ես ապշած նայեցի նրան։

— Դա իրոք անիմաստ է թվում ինձ համար,— շոր տոնով ասացի ես։

— Ա՛խ,— ափսոսանքով ասած Պուարոն։— Դե լավ, ոչինչ։ Ես տակավին իմ աննշան միտքն ունեմ։

Գլուխ 19

ՖԼՈՐԱ ԱԶՐՈՅԴ

Հաջորդ առավոտյան, երբ վերադառնում էի շրջայցից, տեսուչ Ռագլանը ձայն տվեց։ Կանգնեցրի մեքենան, նա բարձրացավ ոտնատեղին։

— Բարի լույս, բժիշկ Շեփարդ,— ասաց նա։— Ահա թե ինչ։ այդ ալիբին բավական ճիշտ էր։

— Ջարլզ Քենթի՞։

— Ջարլզ Քենթի։ «Շուն և սուլոցի» բարի սպասուհի Սալլի Ջոնսը լավ հիշում է նրան։ Հինգ լուսանկարներից ջոկեց նրա լուսանկարը։ Ուղիղ ինն անց քառասունհինգին մտել էր բար, իսկ բարը ուղիղ մի մղոն հեռու է Ֆերնլի փարքից։ Աղջիկն ասաց, որ նա բավական շատ փող ուներ մոտը. տեսել էր, ինչպես գրպանից մի բուռ բանկնոտ էր հանել։ Նա բավական զարմացել էր, տեսնելով, որ այդ կարգի մի երիտասարդի կոշիկներն այդքան ողբալի վիճակում են։ Ահա թե որտեղ է այդ քառասուն ֆունտը։

— Այդ տղան դեռ հրաժարվո՞ւմ է բացատրություն տալ Ֆերնլի այցելելու մասին։

— Ավանակի պես կամակոր է։ Այսօր առավոտյան հեռախոսով կապվեցի Լիվերպուլ և խոսեցի Հեյսի հետ։

— Հերքյուլ Պուարոն ասում է, որ գիտե, թե ինչու էր այն գիշեր այդ տղան գնացել այնտեղ,— նկատեցի ես։

— Մի՞թե,— եռանդով գոչեց տեսուչը։

— Այո՛,— դիտավորյալ ասացի ես,— քանզի Քենթում է ծնվել։

Ես որոշակի հաճույք զգացի, որ միայն ես չէի անհարմար վիճակի մեջ ընկել։

Ռագլանը, չկռահելով ասածիս իմաստը, զարմացած նայեց ինձ։ Հետո ժպիտ երևաց նրա աչքի դեմքին և, բազմանշանակալից մի շարժումով, թեթևակի խփեց ճակատին։

— Տախտակը պակաս է։ Վաղուց էի կասկածում։ Խեղճ ծերուկ, ահա թե ինչու է ստիպված Քողել աշխատանքը և

եկել այստեղ։ Օրևի ժառանգական թերություն է։ Ջարմիկն էլ է այդպես։

— Պուարո՞յի, հարցրի ես։

— Այո։ Ձեզ չի՞ ասել։ Խելոք է թվում, բայց իրականում խենթի մեկն է։

— Ո՞վ ասաց ձեզ։

Նորից ժպիտ երևաց տեսուչի դեմքին։

— Ձեր քույրը, միսս Շեփարդը, նա ամեն ինչ ասաց։ Հիրավի, կարույնը զարմանալի էակ է։ Օրբեք չէր հանգստանում, մինչև որ մանրամասն չիմանար յուրաքանչյուրի ընտանեկան գաղտնիքները։ Դժբախտաբար, ինձ երբեք չի հաջողվում համոզել նրան, որ պարկեշտ լինի և չխոսի այդ մասին։

— Նստեք, տեսուչ,— ասացի ես, բացելով մեքենայի դուռը։— Միասին գնանք Պուարոյի մոտ և մեր բելգիացի բարեկամին հաղորդենք վերջին լուրերը։

— Կարծում եմ, չի խանգարի։ Վիրջիլերջո, եթե նույնիսկ մի քիչ տախտակը պակաս է, այնուամենայնիվ, նա օգտակար խորհուրդ տվեց մատնահետքերի վերաբերյալ։ Նա խենթացել է այդ քենթի առիթով, սակայն, ով գիտե, միգուցե ինչ-որ բան կա թաքնված դրանում։

Պուարոն, ինչպես միշտ, ընդունեց մեզ սիրալիր ժպտալով։

Նա ուշադիր լսեց մեզ, երբեմն-երբեմն գլխով հավանության նշան անելով։

— Կարծես ամեն ինչ կարգին է, այնպես չէ՞,— բավական մոայլ ասաց տեսուչը։— Մի երիտասարդ չէր կարող միաժամանակ սպանել մեկին և խմել մեկ մղոն հեռու գտնվող բարում։

— Ուզում եք ազատե՞լ նրան։

— Ուրիշ ի՞նչ կարող եք անել։ Մենք չենք կարող պահել նրան՝ անօրենն ձևով մեղադրելով փող շորթելու մեջ։

Տեսուչը զայրացած լուցկին նետեց բուխարու մեջ։ Պուարոն վերցրեց այն և խնամքով դրեց դրա համար նախատեսված փոքրիկ տուփի մեջ։ Նա այդ գործողությունը կատարեց

միանգամայն ակամա նկատեցի, որ նա տարված էր բոլորովին մի այլ բանով։

— Եթե ձեր տեղը լինեի,— վերջապես ասաց նա,— պետք չէի ազատի Չարլզ Քեննթին։

— Դրանով ի՞նչ եք ուզում ասել,— հարցրեց Ռապլանը՝ հայացքը հառելով նրան։

— Ասում եմ՝ պետք չէի ազատի նրան։

— Կարծում եք նա ինչ-որ առնչությո՞ւն ունի սպանությանը։

— Հավանաբար՝ ոչ, բայց պետք ժժվար է համոզված լինել այդ հարցում։

— Մի՞թե հենց նոր չասացի...

Պուարոն, իբրև առարկություն, բարձրացրեց ձեռքը։

— Mais oui, mais oui[1] լսեցի։ Ո՛չ խուլ եմ, ո՛չ էլ հիմար, փառք աստծո։ Բայց հասկանում եք, սխալ եք մոտենում հարցին, սխալ տեսանկյունից։

Տեսուչը մռայլ նայեց նրան։

— Ձեմ հասկանում, ինչի՞ց ելնելով եք ասում դա։ Մեզ հայտնի է, որ ինն անց քառասունհինգին միստր Աբրոյդը ողջ է եղել։ Ընդունո՞ւմ եք դա։

Պուարոն մի պահ նայեց նրան, ապա ժպտալով օրորեց գլուխն ու ասաց.

— Ես չեմ կարող ընդունել մի բան, որ ապացուցված չէ։

Բայց մենք բավական ապացույցներ ունենք. միստր Ֆլորա Աբրոյդի վկայությունը։

— Այն մասին, որ նա բարի գիշե՞ր է մաղթել հորեղբորը։ Ինչ վերաբերում է ինձ, միշտ չէ, որ հավատում եմ երիտասարդ լեդիի ասածներին, ո՛չ, նույնիսկ եթե նա հմայիչ է ու գեղեցիկ։

— Բայց, գրո՞ղը տանի, չէ որ Փարքըրը տեսել է նրան դռնից դուրս գալիս։

— Ո՛չ,— կտրուկ հնչեց Պուարոյի ձայնը։— Բանն էլ հենց այն է, որ նա չի տեսել։ Ես դրանում համոզվեցի անցյալ օրը մի փոքրիկ փորձով, գիշո՞ւմ եք բժիշկ։ Փարքըրը դուռն ետե-

---

1 Դե իհարկե, իհարկե (Ֆր.)։

էում, ձեռքը բռնակին դրած։ Փարքըրը դուրս գալիս չի տեսել նրան։

— Բայց ուրիշ որտե՞ղ կարող էր լինել միսս Ֆլորան։

— Գուցեև աստիճանների վրա։

— Աստիճանների վրա՞։

— Դա է իմ փոքրիկ միտքը, այո՛։

— Բայց այդ աստիճանները տանում եմ միայն միստր Աքրոյդի ննջասենյակ։

Տեսուչը հայացքը չէր կտրում նրանից։

— Կարծում եք Ֆլորան եղել է վերևո՞ւմ, հորեղբոր ննջասենյակո՞ւմ։ Դե, ինչ կա որ։ Ինչո՞ւ չպիտի սուտ խոսի այդ մասին։

— Հարցն էլ հենց դա է։ Նայած թե ի՞նչ էր անում այնտեղ, ճիշտ չէ՞։

— Փո՛ղը նկատի ունեք։ Գրո՛ղը տանի, մի՞թե կարծում եք, որ միսս Աքրոյդն է վերցրել այդ քառասուն ֆունտը։

— Ես ոչինչ չեմ կարծում,— ասաց Պուարոն։— Բայց ուզում եմ ձեզ հիշեցնել մի բան. կյանքը հեշտ չի եղել այդ կնոջ ու իր աղջկա համար։ Նրանք միշտ փողի կարիք են զգացել։ Իսկ Ռոջեր Աքրոյդը առատաձեռն չի եղել։ Գուցե այդ աղջիկը համեստաբար փոքրիկ մի գումարի պատճառով անելանելի վիճակում է եղել։ Ուստի, պատկերացնո՞ւմ եք, թե ինչ կարող էր պատահել։ Նա վերցնում է դրամը, իջնում փոքրիկ սանդուղքով և, աստիճանների կեսին չհասած, լսում է նախասրահից եկող բաժակների զնգոցը։ Նա համոզված է, որ դա Փարքըրն է գալիս դեպի աշխատասենյակ։ Բոլոր դեպքերում նրան չպետք է տեսնեն աստիճանների վրա. Փարքըրը հիշելու էր դա և համարելու էր տարօրինակ։ Եթե փողը կորել է, Փարքըրը անպայման հիշելու է, որ տեսել է նրան աստիճաններից իջնելիս։ Աղջիկը դեռ ժամանակ ուներ արագ ներքև իջնելու և մտնելու աշխատասենյակի դռանը և ձեռքը դնելու բռնակին, ցույց տալու համար իբր հենց նոր է դուրս եկել սենյակից, երբ Փարքըրը հայտնվի դռների մոտ։ Փարքըրին ասում է միտքն ընկած առաջին իսկ բառը, այսինքն՝ կրկնում է երեկոյան դեմ արած Ռոջեր Աքրոյդի կարգադրությունը և բարձրանում իր սենյակ։

— Լավ, բայց հետո պետք է, որ հասկացած լիներ ճըշմարտությունն ասելու ճակատագրական անհրաժեշտությունը, չէ որ ամբողջ գործը կախված է դրանից։

— Հետո դժվարին կացության մեջ է ընկնում մադմուազել Ֆլորան,— չոր տոնով ասաց Պուարոն։— Ջէ որ նրան ասել էին, որ ստիկանությունն այնտեղ է, որ գողություն է կատարվել։ Բնականաբար նա իսկույն եզրակացնում է, որ դրամի գողը հայտնաբերվել է։ Նրան մնում էր միայն համառորեն պնդել իր պատմությունը։ Իսկ երբ իմանում է, որ հրեշտակը մեռած է, խուճապի է մատնվում և ուշաթափվում։ Մեր ժամանակներում, մայո, երիտասարդ կանայք առանց էական պատճառի չեն ուշաթափվում։ Ֆլորան ստիպված է համառորեն պնդել իր պատմությունը, կամ էլ խոստովանել ամեն ինչ։ Իսկ երիտասարդ ու սիրունիկ աղջկան դուր չի գալիս խոստովանել, որ ինքը գող է, հատկապես նրանց առջև, որոնց հարգանքը չի ուզում կորցնել։

Ռափլանը բռունցքով խփեց սեղանին...

— Ջե՛մ հավատում,— ասաց նա։— Դա... դա անհավանական է։ Ով դուք վաղո՞ւց գիտեիք։

— Դրա հավանականությունը սկզբից ևեթ մտքումս է եղել,— ասաց Պուարոն։— Միշտ էլ համոզված եմ եղել, մադմուազել Ֆլորան ինչ-որ բան է թաքցնում մեզնից։ Համոզվելու համար, կատարեցի այն փոքրիկ փորձը բժիշկ Շեփարդի ներկայությամբ։

— Իսկ ինձ ասացիք, որ Փարքըրին եք ստուգում,— փոքր-ինչ դառնացած ասացի ես։

— Բայց, բարեկամս,— ներողություն հայցող տոնով ասաց Պուարոն,— ինչպես այն ժամանակ ասացի, նման դեպքերում ինչ-որ բան պետք է ասել։

Տեսուչը վեր կացավ։

— Միայն մի բան է մնում անել, իսկույն պետք է զբաղվել այդ երիտասարդ լեդիով,— հայտարարեց նա։— Մայո Պուարո, ինձ հետ կգա՞ք Ֆերնլի։

— Հարկավ։ Բժիշկ Շեփարդը մեզ կտանի՞ իր մեքենայով։

Ես հաճույքով համաձայնվեցի։

Միսս Աքրոյդին հարցաքննելու համար մեզ ուղարկեցին բիլիարդի սենյակ։ Ջլորան ու Հեկտոր Բլանթը նստել էին լուսամուտի տակի երկար բազմոցին։

— Բարի լույս, միսս Աքրոյդ,— ասաց տեսուչը։— Կարելի՞ է առանձին խոսել ձեզ հետ։

Բլանթն իսկույն վեր կացավ և ուղղվեց դեպի դուռը։

— Սա ի՞նչ բան է,— բորբոքված հարցրեց Ջլորան։— Մի գնացեք, մայրս Նա կարող է մնալ, այնպես չէ՞,— հարցրեց Ջլորան, դիմելով տեսուչին։

— Ինչպես ուզում եք,— չոր տոնով ասաց տեսուչը։— Մի երկու հարց ունեմ ձեզ տալու, միսս, դա իմ պարտականությունն է, բայց կնախընտրեի դա անել առանձին և կարծում եմ, դուք էլ կնախընտրեիք։

Ջլորան խորաթափանց մի հայացք գցեց նրա վրա։ Նրա դեմքը գունատվեց։ Հետո դիմեց Բլանթին.

— Ուզում եմ, որ մնաք, այո՛, ուզում եմ, որ մնաք։ Ինչ էլ որ տեսուչն ասելու լինի ինձ, ուզում եմ, որ լսեք։

Ռագլանը թոթվեց ուսերը։

— Լավ, եթե այդպես եք կամենում, թող այդպես լինի։ Այսպես, միսս Աքրոյդ, մայո Պուարոն այն կարծիքին է, որ դուք ամենևին էլ աշխատասենյակում չեք եղել այն ուրբաթ գիշեր և չեք տեսել միստր Աքրոյդին՝ բարի գիշեր մաղթելու նրան. որ աշխատասենյակում լինելու փոխարեն ձեր հորեղբոր ննջասենյակ տանող սանդուղքի վրա եք եղել և լսել նախասենյակով եկող Փարքըրի ոտնաձայները։

Ջլորան սևեռուն նայեց Պուարոյին։ Պուարոն պատասխանեց այդ հայացքին։

— Մադմուազել, անցյալ օրը, երբ նստած էինք սեղանի շուրջը, շատ խնդրեցի ձեզ անկեղծ լինել։ Ինչ հայրիկ Պուարոյին չեն ասում, նա ինքն է իմանում։ Ասացեք ճշմարտությունը։ Ես ուզում եմ օգնել ձեզ։ Դո՞ւք եք վերցրել փողը։

— Փո՞ղը,— կտրուկ ասաց Բլանթը։

Տիրեց տևական մի լռություն։

Հետո Ջլորան վեր կացավ ու ասաց.

— Մայո Պուարոն իրավացի է։ Ես եմ վերցրել փողը։ Գողացել եմ, ես գող եմ, այո՛, սովորական, գռեհիկ մի գող։

Հիմա գիտեք, և ուրախ եմ, որ բացահայտվեց։ Վերջին մի քանի օրը մղձավանջ է եղել ինձ համար։

Նա արագ նստեց ու դեմքն առավ ափերի մեջ։

— Գիտեք, թե ինչպիսին է եղել իմ կյանքն այստեղ գալուց ի վեր։ Միշտ այս կամ այն բանի կարիքն եմ զգացել, պլաններ նախատեսել, ստել, խաբել, պարտքերի մեջ եղել, խոստացել, որ կվճարեմ։ Ա՛խ, ատելությամբ եմ համակվում իմ նկատմամբ, երբ մտածում եմ այդ ամենի մասին։ Ես թուլակամ եմ, Ռալֆը նույնպես, և դա է պատճառը, որ մենք մտերմացանք։ Ես հասկանում էի նրան և խղճում, ինքս էլ եմ այդպես։ Մենք չենք կարողանում սեփական ոտքերի վրա կանգնել, մենք ողորմելի, արհամարհանքի արժանի էակներ ենք։— Ջլորան նայեց Բլանթին ու անսպասելիորեն ոտքը խփեց հատակին։— Ինչո՞ւ եք այդպես նայում ինձ, չե՞ք հավատում։ Գուցե ես գող եմ, բայց և այնպես այն եմ, ինչ որ կամ։ Հիմա չեմ ստում, չեմ ձևացնում երիտասարդ, պարզամիտ ու անմեղ մի աղջիկ, ինչպիսին ըստ ձեզ պիտի լինեի։ Ինձ բոլորովին չի մտահոգում, թե կուզենաք կրկին տեսնել ինձ, թե ոչ։ Ես ատում, արհամարհում եմ ինձ, բայց համոզված պիտի լինեք մի բանում. եթե իմանայի, որ ճըշմարտությունն ասելով կփրկեի Ռալֆին, կասեի։ Սակայն չէ որ այդ սուտը չէր վնասում նրան. ես դա տեսնում էի սկզբից ևեթ։

— Ռալֆ,— ասաց Բլանթը,— միշտ՝ Ռալֆ։

— Դուք չեք հասկանում և երբեք էլ չեք հասկանա,— հուսահատ ասաց Ջլորան։ Հետո դիմեց տեսուչին.— Ամեն ինչ խոստովանում եմ։ Ինձ փող էր անհրաժեշտ։ Այն երեկո ճաշից հետո բոլորովին չտեսա հորեղբորը։ Իսկ ինչ վերաբերում է փողին, վարվեք ինձ հետ, ինչպես ուզում եք։ Միևնույն է, ավելի վատ չի լինելու։

Նա այլևս չդիմացավ, ձեռքերով դեմքը ծածկեց և դուրս վազեց սենյակից։

— Դե, ոչինչ չես կարող անել,— անարտահատիչ ձայնով ասաց տեսուչը։ Պարզ երևում էր, որ նա անելանելի դրության մեջ էր և չգիտեր ինչ անել։

Բլանթն առաջ եկավ։

— Տեսուչ Ռաթլան,— հանդիստ ասաց նա,— այդ փողը մեսոր Աքրոյդն ինձ էր տվել հատուկ նպատակով։ Միսս Աքրոյդը ձեռք չի տվել դրան։ Նա ստում է, մտածելով, որ դրանով պաշտպանում է կապիտան Փեյթընին։ Իրականությունն այն է, ինչ ասացի, և պատրաստ եմ երդվելով վկայել դա։

Նա մի տեսակ գլուխը ցնցելով հրաժեշտ տվեց և, կտրուկ շրջվելով, դուրս եկավ սենյակից։

Պուարոն շտապեց նրա ետևից և նախասենյակում բռնեց նրան։

— Մսյո, մի րոպե, խնդրում եմ, եթե կարելի՞ է։

— Լսում եմ, սըր։

Բլանթն ակնհայտորեն անհանգիստ էր զգում իրեն։ Նա կանգնել էր մոայլ՝ հայացքը հառած Պուարոյին։

— Ահա թե ինչ, մսյո,— արագ վրա բերեց Պուարոն,— ձեր քհահաճույքով չեք խաբի ինձ։ Ո՛չ, չեք խաբի։ Իրոք միսս Ֆլորան է վերցրել փողը։ Լավ հորինեցիք այդ բանը, և դա հաճելի է։ Դուք այնպիսի մարդ եք, որ կարողանում եք արագ կողմնորոշվել և գործել։

— Ձեր կարծիքը բոլորովին էլ չի հետաքրքրում ինձ, շնորհակալ եմ,— սառը տոնով ասաց Բլանթը։

Նա փորձեց հեռանալ, բայց Պուարոն, որ բոլորովին էլ վիրավորված չէր զգում իրեն, ձեռքով ետ պահեց նրան։

— Բայց ստիպված եք լսել ինձ։ Ես էլի բան ունեմ ասելու ձեզ։ Անցյալ օրը խոսեցի գաղտնապահության մասին։ Ամբողջ ժամանակ շատ լավ նկատում էի, որ ինչ-որ բան էիք թաքցնում։ Դուք ամբողջ սրտով սիրում եք մադմուազել Ֆլորային, առաջին իսկ հանդիպման պահից, ճի՞շտ է։ Օ, եկեք չառարկենք։ Ինչո՞ւ Անգլիայում որևէ մեկը պիտի կարծի թե սիրո մասին խոսելը անպատվաբեր գաղտնիք է։ Դուք սիրում եք մադմուազել Ֆլորային և աշխատում եք բոլորից թաքցնել այդ փաստը։ Դա, իհարկե, ձեր գործն է։ Բայց Հերքյուլ Պուարոյից ձեզ խորհուրդ՝ մադմուազել Ֆլորայից մի թաքցրեք։

Մինչ Պուարոն խոսում էր, Բլանթն անհանգստության նշաններ էր ցույց տալիս, բայց վերջին խոսքերն ասես իրենց վրա գամեցին նրա ուշադրությունը։

— Ի՞նչ նկատի ունեք— հարցրեց նա։

— Կարծում եք նա սիրում է Ռալֆ Փեյթընին, իսկ ես, Հերքյուլ Պուարոս ասում եմ՝ ոչ։ Մադմուազել Ջլորան համաձայնվեց ամուսնանալ Ռալֆի հետ, որպեսզի գոհացներ հորեղբորը, փրկվեր այստեղի անտանելի կյանքից։ Ռալֆը դուր է գալիս նրան, նրանք համակրում ու հասկանում են իրար, բայց Ջլորան Ռալֆին չէ որ սիրում է։

— Գրողը տանի, դրանով ի՞նչ եք ուզում ասել,— հարցրեց Բլանթը։

Ես նկատեցի, թե ինչպես զայրույթից շառագունեց նրա դեմքը։

— Դուք կույր եք եղել, մսյո, կույր։ Այդ փոքրիկ աղջիկը լոյալ է պահում իրենն։ Ռալֆ Փեյթընը շնորհազրկված է, և նա հարկադրված է հավատարիմ մնալ նրան։

Զգացի, որ միջամտելու ժամանակն է։

— Անցյալ գիշեր քույրս ասաց, որ Ռալֆ Փեյթընը կոպեկի արժեք իսկ չունի Ջլորայի համար, և չի էլ ունենալու։ Իսկ քույրս միշտ էլ իրավացի է այդպիսի հարցերում։

Բլանթն ուշադրություն չդարձրեց լավագույն նկատումներից ելնելով ասված իմ խոսքերին և դիմեց Պուարոյին.

— Դուք իրո՞ք մտածում եք, որ...— սկսեց նա, բայց ընդհատեց իր խոսքը։ Նա մեկն էր այն անհասկանալի մարդկանցից, ովքեր դժվարանում են բառերով արտահայտել իրենց մտքերը։ Պուարոն այդպիսի թերությունից չէր տառապում։

— Եթե ինձ չեք հավատում, ինքներդ հարցրեք Ջլորային։ Բայց գուցե ձեզ այլևս չի հետաքրքրում... փողի հետ կապված այդ միջադեպից հետո։

— Կարծում եք, մեղադրելո՞ւ էի նրան,— բարկացած փնչացրեց Բլանթը։— Ոոջերը միշտ էլ զուսպ էր փողի հարցերում։ Իսկ Ջլորան իրեն կորցրել էր և վախենում էր խոսել այդ մասին։ Խե՜ղճ աղջիկ, խե՜ղճ աղջիկ։

Պուարոն մտախոհ նայեց կողքի դռանը։

— Ինձ թվում է, մադմուազել Ֆլորան գնաց պարտեզ...— ցածրաձայն ասաց նա։

— Ապուշի մեկն եմ եղել,— ասաց Բլանթը։— Տարօրինակ էր մեր խոսակցությունը, կարծես դանիական ինչ-որ պիեսներից մեկում էր տեղի ունենում։ Բայց դուք լավ մարդ եք, Պուարո։ Շնորհակալություն։

Նա բռնեց Պուարոյի ձեռքը ու սեղմեց այնպես, որ սա ցավից կծկվեց։ Հետո լայն քայլերով գնաց դեպի կողքի դուռն ու դուրս եկավ պարտեզ։

— Ապուշի մեկը չես եղել,— մրմնջաց Պուարոն, մեղմ շոյելով ցավացող ձեռքը,— այլ ապուշ սիրահար ես եղել։

Գլուխ 20

ՄԻՍՍ ՌԱՍԵԼ

Տեսուչ Ռագլանը խիստ հարված էր ստացել։ Բլանթի մեծահոգաբար ասած սուտը պակաս մոլորության մեջ չէր գցել նրան, քան մեզ։

Վերադառնալիս անընդհատ բողոքում էր.

— Բայց չէ՞որ դա փոխում է ամեն ինչ, մսյո Պուարո։ Հասկանո՞ւմ եք։

— Ըստ երևույթին փոխում է, այո՛, ըստ երևույթին փոխում է,— ասաց Պուարոն։— Պատկերացնո՞ւմ եք, երբեմն-երբեմն այդ միտքն անցել է գլխովս։

Ռագլանը, որի համար ընդամենը կես ժամ առաջ էր որոշ բան պարզվել, տխուր նայեց Պուարոյին և շարունակեց.

— Այդ ալիբիներն ոչ մի արժեք չունեն, բացարձակապես ոչ մի արժեք։ Ստիպված ես նորից սկսել, պարզել, թե յուրաքանչյուրն ինչով էր զբաղված ժամը ինն անց կեսից հետո։ Ինն անց կես, մի ժամանակ, որից ստիպված ենք կառչել։ Դուք միանգամայն իրավացի էիք այդ քննթի հարցում. որոշ ժամանակ դեռ չենք ազատի նրան։ Նա ինն անց քառասունհինգին եղել է «Շուն և սուրցում»։ Նա կարող էր տասնըհինգ րոպեում հասնել այնտեղ, եթե վազելով գնար։ Շատ

հնարավոր է, որ Դայմոնդը նրա ձայնն էր լսել, երբ ինչ-որ մեկը փող էր խնդրում միստր Աքրոյդից։ Բայց պարզ է մի բան. հետախոսով զանգահարողը նա չի եղել։ Երկաթգծի կայարանը Ֆերնլի փարքից կես մղոն այն կողմ է գտնվում, «Շուն և սուլոցից» մեկ ու կես մղոն, իսկ նա այդ բարում է եղել մինչև տասն անց տասը։ Գրո՞ղի ծոցը այդ հեռախոսազանգը, միշտ էլ դեմ ենք առնում այդ հարցին։

— Իսկապես,— ասաց Պուարոն։— Զարմանալի է։

— Շատ հավանական է, որ կապիտան Փեյթընը մագլցելով մտել է Աքրոյդի սենյակը, սպանված գտել նրան և հետո զանգահարել է։ Զգալով վտանգը, մտածել է, որ կարող են իրեն մեղադրել, ծլկել է։ Մի՞թե հավանական չէ։

— Իսկ ինչո՞ւ պիտի զանգահարեր։ Նրևի մտածել է, որ գուցե ծերուկը դեռ կենդանի է և ցանկացել է արագ բժիշկ կանչել, միաժամանակ չմոռենալով իրեն։ Վատ տեսակետ չէ, չէ՞,— ոգևորված ասաց տեսուչը։ Նա այնքան գոհ էր երևում իրենից, որ որևէ խոսք ասելն ավելորդ էր։

Արդեն հասել էինք տանս մոտ, և ես շտապեցի իմ ընդունարան, որտեղ բավական ժամանակ սպասում էին հիվանդներս։ Պուարոն ու տեսուչը ոտքով գնացին ոստիկանատուն։

Բաց թողնելով վերջին հիվանդին, գնացի տան ետնամասում գտնվող այն փոքրիկ սենյակը, որ արհեստանոց էի կոչում։ Ես բավական հպարտանում եմ իմ ձեռքով սարքած ռադիոընդունիչով։ Կարոլինը տեսնել անգամ չի ուզում իմ արհեստանոցը, որտեղ էննիին արգելված էր մտնել իր ավելով ու փոշեսրբիչներով։ Ես վերանորոգում էի զարթուցիչը, որ տնեցիները անպետք էին համարում, երբ դուռը փոքր-ինչ բացվեց և ճեղքից երևաց Կարոլինի գլուխը։

— Ահա թե որտեղ ես, Ջեյմս,— խիստ դժգոհելով ասաց նա։— Մայո Պուարոն ուզում է տեսնել քեզ։

— Լավ, եթե ուզում է տեսնել ինձ, կարող է այստեղ գալ,— բորբոքված ասացի ես, քանզի նրա անակնկալ հայտնվելը շեղել էր ուշադրությունս և վայր էի գցել այդ նուրբ մեխանիզմի մասերից մեկը։

— Այստե՞ղ։

— Այո՛, ասացի՝ այստե՛ղ։

Կարոլինն արհամարհանքով փնչացրեց ու հեռացավ։ Քիչ հետո նա վերադարձավ, ներս ուղեկցելով Պուարոյին, և կրկին հեռացավ, դուռը շրխկոցով փակելով իր եռևից։

— Ըհը՛, բարեկամս,— ասաց Պուարոն, առաջանալով ու շփելով ձեռքերը,— ինչպես տեսնում եք այնքան էլ հեշտ չէ պրծնել ինձնից։

— Տեսուչի հետ վերջացրի՞ք ձեր գործը,— հարցրի ես։

— Առայժմ՝ այո։ Իսկ դուք, ճանապարհեցի՞ք ձեր բոլոր հիվանդներին։

— Այո՛։

Պուարոն նստեց ու ձվաձև գլուխը մի կողմ թեքելով, նայեց ինձ այնպիսի տեսքով, ասես պատրաստվում էր հաճույքով վայելել հրաշալի մի սրախոսություն։

— Սխալվում եք,— վերջապես ասաց նա,— մի հիվանդ էլ ունեք ընդունելու։

— Ջե՞զ,— զարմացած գոչեցի ես։

— Ա՛խ, ո՛չ, ես հրաշալի առողջություն ունեմ։ Ո՛չ, ճիշտն ասած, դա մի փոքրիկ դավադրություն է իմ կողմից։ Մեկը կա, որին ուզում եմ տեսնել, և միաժամանակ հարկ չկա, որ ամբողջ գյուղը հետաքրքրվի այդ հարցով, հասկանո՛ւմ եք։ Ի՞նչ կարող է պատահել, եթե տեսնեն, որ մի լեդի գալիս է ինձ մոտ, չէ որ նա լեդի է։ Իսկ ձեզ մոտ մի անգամ եկել է որպես հիվանդ։

— Միսս Ռասելի՞ մասին է խոսքը,— բացականչեցի ես։

— Précisément. *Խոսելու շատ բան ունեմ նրա հետ, այնպես որ մի երկտող եմ ուղարկել նրան և տեսակցություն նշանակել ձեր ընդունարանում։ Չե՞ք առարկում։*

— Ընդհակառակը,— ասացի ես։— Իսկ դա հնարավորություն կընձեռի՞ ինձ ներկա գտնվելու հանդիպմանը։

— Բնականաբար, չէ որ ձեր ընդունարանում է կայանալու տեսակցությունը։

— Գիտեք,— ասացի ես, ցած դնելով ձեռքիս ունելին,— շատ հետաքրքիր է այդ ամենը։ Ձեր ամեն մի նոր բացահայտում կալեյդոսկոպի պես ամբողջովին փոխում է պատկերը։ Ինչո՞ւ եք ուզում տեսնել միսս Ռասելին։

Պուարոն բարձրացրեց հոնքերը։

— Համոզվա՞ծ եք, որ ամեն ինչ պարզ է,— մրմնջաց նա։

— Նորից ձեր ասածն եք պնդում,— փնթփնթացի ես,— քան ձեզ ամեն ինչ պարզ է։ Բայց ինձ համար՝ մշուշապատ։

Պուարոն մեղմ օրորեց գլուխը։

— Դուք ծաղրում եք ինձ։ Վերցնենք մադմուազել Ցլորայի հետ պատահած դեպքը։ Տեսուչը զարմացել էր, իսկ դուք... իսկ դուք՝ ոչ։

— Մոքովս անգամ չէր անցնում, որ նա էր գողացել փողը։

— Թերևս։ Բայց ես հետևում էի ձեր դեմքի արտահայտությանը, և դուք ո՛չ վրդովված էիք երևում, ո՛չ էլ տարակուսանքով լի, ինչպես Ռագլանը։

Մի պահ խորհեցի։

— Թերևս իրավացի եք,— վերջապես ասացի ես։— Ամբողջ ժամանակ զգում էի, որ Ցլորան ինչ-որ բան է թաքցընում, այնպես որ ենթագիտակցաբար ակնկալում էի դա։ Այդ իսկ պատճառով էլ անսպասելի չէր ինձ համար, ինչպես խեղճ տեսուչի համար։

— Այո՛, այդ խեղճ մարդը պետք է վերանայի իր բոլոր տեսակետները։ Օգտվեցի նրա շփոթմունքից և ստիպեցի կատարել իմ մի խնդրանքը։— Պուարոն գրպանից հանեց մի թերթիկ և բարձրաձայն կարդաց. «Ոստիկանությունը մի քանի օր փնտրում է կապիտան Ռալֆ Փեյթընին, խորթ որդուն միստր Աքրոյդի, որը մահացավ նախորդ ուրբաթ՝ ողբերգական հանգամանքներում։ Կապիտան Փեյթընը հայտնաբերվել է Լիվերպուլում, որտեղից նա պատրաստվել էր մեկնել Ամերիկա»։

Նա ծալեց թուղթն ու ասաց.

— Սա, բարեկամս, վաղն առավոտյան կհրապարակվի թերթում։

Ես խիստ զարմացած նայեցի նրան։

— Բայց... բայց դա ճիշտ չէ։ Ռալֆը Լիվերպուլում չէ։

Պուարոն, լայն ժպտալով, նայեց ինձ։

— Ինչքա՜ն շուտ հասկացաք։ Ոչ, Ռալֆին Լիվերպուլում չեն ձերբակալել։ Ռագլանը շատ էր դեմ այս փոքրիկ հոդ-

վածն ուղարկելու խմբագրության, հատկապես այն պատճառով, որ չէր վստահում ինձ։ Բայց ես ամենայն լրջությամբ հավատացրի, որ այդ լուրի երևալը մամուլում շատ հետաքրքիր հետևանքներ է ունենալու, այնպես որ համաձայնվեց միայն մի պայմանով, որ ոչ մի դեպքում պատասխանատվությունն իր վրա չի վերցնելու։

Ես զարմացած նայեցի Պուարոյին, իսկ նա ժպտաց։

— Ձեմ հասկանում, դրանով ի՞նչ եք ուզում ինանալ,— հարցրի ես։

— Գործի պիտի դնեք ձեր գորշավուն փոքրիկ բջիջները,— լուրջ տոնով ասաց Պուարոն և վեր կացավ ու մոտեցավ իմ աշխատասեղանին։— Երևում է, որ իրոք սիրում եք մեխանիկայով զբաղվել,— ասաց նա, ամեն ինչ զննելուց հետո։

— Ամեն մարդ իր սիրած զբաղմունքն ունի,— ասացի ես, և իսկույն Պուարոյի ուշադրությունը հրավիրեցի տանը պատրաստած իմ ռադիոընդունիչի վրա։ Տեսնելով, որ նա հետաքրքրություն է ցուցաբերում, ցույց տվեցի իմ գյուտերից մի երկուսը, դատարկ բաներ, իհարկե, բայց տան համար պիտանի։

— Անտարակուսելի է, որ մասնագիտությամբ գյուտարար պիտի լինեիք, ոչ թե բժիշկ,— ասաց Պուարոն։— Բայց կարծեմ զանգի ձայնն է։ Գնանք ընդունարան։

Այդ կնոջ նախկին գեղեցկության հետքերն արդեն մի անգամ ապշեցրել էին ինձ։ Այդ առավոտ կրկին ապշեցրին։ Բարձրահասակ էր, ալացիկ կազմվածքով, հասարակ սև զգեստով, և, ինչպես միշտ, արժանապատվությամբ էր պահում իրեն։ Խոշոր սև աչքերը փայլում էին, գունատ այտերը կարմրել էին։ Այո՛, մոածեցի ես, երիտասարդ հասակում արտակարգ գեղեցիկ աղջիկ է եղել։

— Բարի լույս, մադմուազել,— ասաց Պուարոն։— Նստեք խնդրեմ։ Բժիշկ Շեփարդն այնքան սիրալիր եղավ, որ թույլ տվեց իր ընդունարանում մի քիչ զրուցել ձեզ հետ։

Միսս Ռասելը, պահպանելով իր սովորական սառնասրտությունը, նստեց։ Եթե ներքուստ փոքր-ինչ անհանգիստ էլ լիներ, միևնույն է, ցույց չէր տալիս։

— Թույլ տվեք ասել, որ տարօրինակ է այս ամենը,— նկատեց նա։

— Միսս Ռասել, նորություն ունեմ հաղորդելու ձեզ։

— Մի՞թե։

— Չարլզ Քենթին ձերբակալել են Լիվերպուլում։

Նրա դեմքին ոչ մի մկան չշարժվեց։ Սոսկ փոքր-ինչ ավելի լայն բացվեցին աչքերը, և մարտահրավեր նետելու տոնով ասաց.

— Լավ, հետո ի՞նչ։

Այդ պահին հանկարծ մտքովս անցավ այն նմանությունը, որ ամբողջ ժամանակ հանգիստ չէր տվել ինձ՝ Չարլզ Քենթի մարտական վարքագիծն հիշեցնող ինչ-որ ծանոթ բան։ Երկու ձայնն էլ, մեկը՝ կոշտ ու կոպիտ, մյուսը՝ խիստ կանացի, զարմանալիորեն նույն նրբերանգն ունեին։ Ես հասկացա, որ այն գիշեր Ֆերնլի փարքի դարպասների մոտ հանդիպած անծանոթը միսս Ռասելին էր հիշեցրել։

Հայտնագործությունով համակված, նայեցի Պուարոյին։ Նա թեթևակի գլխով արեց, և, ի պատասխան միսս Ռասելի հարցի, գուտ ֆրանսիական ձևով տարածեց ձեռքերն ու մեղմ ասաց.

— Կարծում էի, թե դա կհետաքրքրի ձեզ, ուրիշ ոչինչ։

— Դե, դա առանձնապես չի հետաքրքրում ինձ,— ասաց միսս Ռասելը։— Ի դեպ, ո՞վ է այդ Չարլզ Քենթը։

— Այն անձնավորությունը, մադմուազել, որ Ֆերնլիում է եղել սպանության գիշերը։

— Իսկապե՞ս։

— Ի բարեբախտություն իրեն, ալիբի ունի։ Տասին տասնըհինգ պակաս այստեղից մի մղոն հեռու գտնվող բարում է եղել։

— Բախտը բերել է,— նկատեց միսս Ռասելը։

— Հայց մենք դեռ չգիտենք, թե նա ինչու էր եկել Ֆերնլի և ում հանդիպելու։

— Վախենում եմ, որ ոչնչով չեմ կարող օգնել ձեզ,— քաղաքավարությամբ ասաց տնտեսուհին։— Ոչ մի բան չեմ լսել այդ մասին։ Եթե այդքանն է...

Միսս Ռասելը փորձեց վեր կենալ, բայց Պուարոն նո պահեց նրան։

— Ոչ բոլորովին,— հանգիստ ասաց Պուարոն։— Այսօր առավոտյան նոր բան է պարզվել։ Ամենայն հավանականությամբ միստր Աքրոյդին սպանել են ոչ թե տասին տասնհինգ պակաս, այլ դրանից առաջ, իննին տաս պակասի և տասին տասնհինգ պակասի միջև, բժիշկ Շեփարդի գնալուց հետո։

Տնտեսուհին մահու չափ գունատվեց։ Նա մի տեսակ ճոճվելով՝ հակվեց առաջ։

— Բայց միսս Աքրոյդն ասաց... միսս Աքրոյդն ասաց...

— Միսս Աքրոյդը խոստովանեց, որ սուտ է։ Այն երեկոյան նա չի եղել աշխատասենյակում։

— Հետևաբա՞ր...

— Հետևաբար, երևում է, որ հենց Չարլզ Քենթն է այն անձնավորությունը, ում փնտրում ենք։ Նա եկել էր Ֆերնլի, բայց ոչ մի բացատրություն չտվեց, թե ինչ էր անում այնտեղ...

— Ես կարող եմ ասել, թե ինչ էր անում։ Նա Աքրոյդի մազին անգամ չի դիպել, աշխատասենյակին չի մոտեցել, ո՛չ, հավատացնում եմ ձեզ։— Նա աստիճանաբար տեղի էր տալիս։ Օրկաթե կամքը վերջապես կոտրվել էր։ Սարսափ ու հուսահատություն կար նրա դեմքին։— Մայր՛ Պուարո, մայր՛ Պուարո, օ՛, հավատացեք ինձ։

Պուարոն վեր կացավ ու մոտեցավ նրան։ Ուսին թփթփացնելով, փորձեց հանգստացնել նրան։

— Այո՛, այո՛, հավատում եմ։ Ես հարկադրված էի ստիպել ձեզ խոսելու։

Մի պահ կասկած փայլատակեց միսս Ռասելի դեմքին։

— Իսկ ինչ ասացիք, ճի՞շտ է։

— Որ Չարլզ Քենթին հանցանքի մե՞ջ են կասկածում։ Այո՛, դա ճիշտ է։ Միայն դուք կարող եք փրկել նրան, եթե անեք, թե ինչու էր եկել Ֆերնլի։

— Եկել էր ինձ տեսնելու,— ասաց նա ցածր ու փութիլոտ ձայնով։— Ես դուրս եկա հանդիպելու նրան...

— Համառանոցում, ճի՞շտ է, ես գիտեմ։

— Որտեղի՞ց գիտեք։

— Մադմուազել, Հերքյուլ Պուարոն պարտավոր է ամեն ինչ իմանալ։ Ես գիտեմ նաև, որ երեկոյան դեմ դուրս եք եկել տնից, որ երկտող եք թողել ամառանոցում, թե երբ եք լինելու այնտեղ։

— Այո՛, ճիշտ է։ Նա ինձ տեղյակ էր պահել, որ գալու է։ Իսկ ես չհամարձակվեցի թույլ տալ, որ տուն գա։ Իր տված հասցեով գրեցի, որ հանդիպելու եմ իրեն ամառանոցում, և նկարագրեցի, թե ինչպես գտնի այն։ Իսկ հետո վախեցա, որ համբերություն չի ունենա սպասել, վազեցի այնտեղ և երկտող թողեցի՝ հայտնելու, որ մոտ ինն անց տասնհինգ կլինեմ այնտեղ։ Չէի ուզում, որ սպասավորները տեսնեն ինձ, այնպես որ դուրս սահեցի հյուրասենյակի պատուհանից։ Երբ վերադարձա, անսպասելիորեն հանդիպեցի բժիշկ Շեփարդին և վախեցա, որ տարօրինակ կարող էր թվալ նրան, թե ինչու էի վազում ու շնչակտուր լինում։ Չգիտեի, որ այդ երեկո ճաշի են հրավիրել նրան։

Նա լռեց։

— Շարունակեք,— ասաց Պուարոն։— Ինն անց տասին գնացիք հանդիպելու նրան։ Ի՞նչ ասացիք իրար։

— Դժվար է ասել... Հասկանում եք...

— Մադմուազել,— ասաց Պուարոն, ընդհատելով նրան,— ինձ ամբողջ ճշմարտությունն է հարկավոր իմանալ։ Ինչ-որ ասելու եք մեզ, այս շորս պատերից դուրս չի գա։ Բժիշկ Շեփարդը զուսպ կլինի, ես՝ նույնպես, հասկանո՞ւմ եք։ Նա կօգնեմ ձեզ. Չարլզ Քենթը ձեր որդի՞ն է։

Նա դրականորեն շարժեց գլուխը։ Այտերը շառագունեցին։

— Ոչ ոք չգիտե այդ մասին։ Շատ վաղուց էր, վաղուց, Քենթում։ Ես ամուսնացած չէի...

— Այնպես որ դքսության անունը ազգանուն դարձրիք նրան։ Հասկանում եմ։

— Աշխատանք գտա։ Վճարում էի նրա դաստիարակության համար։ Նա չգիտեր, որ իր մայրն եմ։ Բայց նա վատ վերշացրեց. խմում էր, իսկ հետո տարվեց թմրադեղերով։ Մի կերպ վճարեցի Կանադա գնալու ճանապարհածախսը։ Մոտ երկու տարի ոչ մի լուր չունեի նրանից։ Հետո ինչ-որ ձևով

իմացել էր, որ իր մայրն եմ և գրեց, որ փող ուղարկեմ։ Վերջապես տեղեկացրեց, որ վերադարձել է։ Ուզում էր գալ Ֆերնելի՝ տեսնել ինձ։ Ես չհամարձակվեցի թույլ տալ նրան, որ տուն գա։ Ինձ միշտ էլ օրինավոր են համարել։ Թե որևէ մեկը թեթևակի կասկած ունենար, տնտեսուհու պաշտոնից կզրկվեի։ Այնպես որ գրեցի նրան այդ երկտողը։

— Եվ առավոտյան եկաք բժիշկ Շեփարդի մո՞տ։

— Այո՛։ Ուզում էի իմանալ, թե որևէ բան հնարավոր չէ անել։ Նա վատ տղա չէր նախքան թմրադեղերն ընդունելը։

— Հասկանալի է,— ասաց Պուարոն։— Այժմ անցնենք այդ պատմության չարունակությանը։ Այն երեկո նա եկա՞վ տաղավար։

— Այո՛, երբ հասա այնտեղ, սպասում էր ինձ։ Նա շատ կոպիտ ու վիրավորական էր պահում իրեն։ Ինձ հետ էի բերել իմ ունեցած ամբողջ փողը և տվեցի նրան։ Քիչ խոսեցինք, հետո հեռացավ։

— Ժամը քանի՞սը կլիներ։

— Երևի ինն անց քսան, քսանհինգ։ Երբ վերադարձա տուն, դեռ անց կես չկար։

— Ո՞ր կողմով գնաց։

— Նույն ճանապարհով, որով եկել էր. այն արահետով, որ ուղիղ միանում է պահատնակի դարպասների մոտ տանող ծառուղուն։

Պուարոն գլխով արեց։

— Իսկ հետո ի՞նչ արեցիք։

— Վերադարձա տուն։ Մայր Բլանթը սանդղավանդով վեր ու վար էր անում ու ծխում, և ես ներս մտա եռևի դռնից։ Ուղիղ ինն անց կեսն էր։

Պուարոն դարձյալ գլխով արեց։ Հետո ինչ-որ նշումներ արեց շատ փոքրիկ ծոցատետրում։

— Կարծում եմ, բավական է,— մտախոհ ասաց նա։

— Անհրաժե՞շտ է, որ այս ամենը պատմեմ տեսուչ Ռագլանին,— վարանելով հարցրեց նա։

— Միգուցե, բայց առայժմ շտապել պետք չէ։ Շարունակենք, հանգիստ, հարկ եղած կարգով ու մեթոդով։ Ջարլզ

Քենթը տակավին պաշտոնապես չի մեղադրվել սպանության մեջ։ Կարող են հանգամանքներ առաջանալ, որոնք ավելորդ կդարձնեն ձեր պատմությունը։

Միսս Ռասելը վեր կացավ։

— Շատ շնորհակալություն, մսյո Պուարո,— ասաց նա։— Դուք շատ, շատ բարյացակամ եղաք։ Դուք... դուք հավատում եք ինձ, այնպես չէ՞, որ Չարլզը ոչ մի առնչություն չունի այդ չարամիտ սպանությանը։

— Թվում է, թե ոչ մի կասկած չկա, որ ժամը հինգ կեսին գրադարանում միստր Աքրոյդի հետ խոսող անձնավորությունը ձեր որդին չի եղել։ Արիացե՛ք, մադմուազել։ Ամեն ինչ լավ կլինի։

Միսս Ռասելը հեռացավ։ Մնացինք Պուարոն և ես։

— Այդպես ուրեմն,— ասացի ես,— ամեն անգամ նորից անդրադառնում ենք Ռալֆ Փեյթընին։ Ինչպե՞ս գուշակեցիք, որ Չարլզ Քենթը եկել էր հանդիպելու միսս Ռասելին։ Նմանությո՞ւն էիք նկատել։

— Ես անմիջական կապ գտա անհայտ անձնավորության ու այդ կնոջ միջև նախքան նրան հանդիպելը։ Հենց որ գտանք այն փետուրը, իսկույն զգացի, որ թմրադեղի հարց կա, և հիշեցի ձեր ասածը միսս Ռասելի ձեզ կատարած այցի մասին։ Հետո առավոտյան թերթում հանդիպեցի կոկաինի վերաբերյալ հոդվածին։ Ամեն ինչ շատ պարզ էր։ Միսս Ռասելն այդ առավոտյան ինչ-որ մեկից լսել էր թմրամոլության մասին, թերթում կարդացել էր այդ հոդվածն ու եկել ձեզ մոտ մի քանի հարցեր պարզելու։ Նա խոսել էր կոկաինի մասին, քանզի հոդվածը կոկաինի վերաբերյալ էր։ Նրբ զգացել էր, որ շատ եք հետաքրքրվում այդ հարցով, արագ փոխել էր թեման և խոսել դետեկտիվ պատմությունների ու չհայտնաբերվող թույների մասին։ Ես իսկույն կասկածեցի, որ այստեղ որդու կամ եղբոր, կամ էլ ինչ-որ արական ճյուղի կապի խընդիր է։ Ա՛, ես պետք է գնամ։ Նախաճաշի ժամն է։

— Մնացեք, միասին կնախաճաշենք,— առաջարկեցի ես։

Պուարոն օրորեց գլուխը։ Թեթևակի փայլ շողաց նրա աչքերում։

— Այսօր՝ ոչ։ Ջեմ ուզում մադմուազել Կարոլինին ստիպել երկու օր իրար հետևից բուսական դիետայի վրա մնալ։

Ոչ մի բան չի վրիպում Հերքյուլ Պուարոյի աչքից, մտածեցի ես։

Գլուխ 21

ՓՈՔՐԻԿ ՀՈԴՎԱԾԸ

Կարոլինն, իհարկե, տեսել էր միսս Ռասելին, երբ սա մտեցել էր ընդունարանի դռանը։ Ես կանխատեսել էի և պատրաստվել էի վարպետորեն մտածված բացատրություն տալ այդ լեդիի ծնկի վիճակի մասին։ Բայց Կարոլինը հարցուփորձ անելու տրամադրություն չուներ։ Նա այն կարծիքին էր, որ իրեն հայտնի էր, թե իրականում ինչի համար էր եկել միսս Ռասելը, իսկ ինձ՝ ոչ։

— Խոսք էր գաշում քեզնից, Ջեյմս,— ասաց քույրս։— Ամենաանամոթ ձևով խոսք էր գաշում քեզնից, դրանում ես չեմ կասկածում։ Համարձակվում եմ ասել, որ պատկերացում անգամ չունեիր այդ մասին։ Տղամարդիկ շատ միամիտ են։ Նա գիտե, որ Պուարոն վստահում է քեզ, և ուզում է իմանալ ամեն ինչ։ Գիտե՞ս, թե ինչ եմ մտածում, Ջեյմս։

— Պատկերացում անգամ չունեմ։ Այնքան արտառոց բաներ ես մտածում։

— Մի հեգնիր, Ջեյմս։ Ինձ թվում է, միսս Ռասելը շատ ավելին գիտե միստր Աքրոյդի մահվան մասին, քան ցույց է տալիս։

Կարոլինը հաղթական տեսքով հենվեց բազկաթոռի թիկնակին։

— Իրո՞ք այդպես ես կարծում,— անտարբեր տոնով հարցրի ես։

— Այսօր շատ անտրամադիր ես, Ջեյմս։ Ոչ մի աշխուժություն չի զգացվում քո մեջ։ Երևի լյարդիցդ է։

Հետո մեր զրույցը զուտ անձնական բնույթ կրեց։

Պուարոյի փոքրիկ հոդվածը ճիշտ ժամանակին՝ հաջորդ

առավոտյան հայտնվեց մեր օրաթերթում։ Ինչ վերաբերում է դրա նպատակին, ես միանգամայն անտեղյակ էի, սակայն դա մեծ ներգործություն ունեցավ Կարոլինի վրա։ Նա ամենաանհիմն ձևով սկսեց հավաստել, թե շարունակ ասել է այդ մասին։ Ես զարմացած բարձրացրի հոնքերս, բայց չառարկեցի։ Սակայն, Կարոլինը, հավանաբար, խղճի խայթ զգաց, քանզի շարունակեց.

— Միգուցե իրականում Լիվերպուլ չեմ ասել, բայց գիտեի, որ նա ուզում էր Ամերիկա գնալ։ Նույն կերպ վարվեց և Քրիփլնը։

— Առանց էական հաջողության,— նկատեցի ես։

— Խեղճ տղա, ուրեմն բռնել են նրան։ Կարծում եմ, Ջեյմս, որ քո պարտքն է հոգ տանել, որ նրան չկախեն։

— Ի՞նչ ես ուզում, որ անեմ։

— Ինչպե՞ս, չէ որ բժիշկ ես։ Փոքր հասակից ճանաչում ես նրան։ Հոգեկան խանգարում ունի՝ ահա թե ինչ պիտի ասեիր։

Սակայն Կարոլինի խոսքերը այլ բան հիշեցրին ինձ։

— Ես երբեք չեմ իմացել, որ Պուարոն տկարամիտ եղբորորդի է ունեցել,— ասացի ես։

— Մի՞թե։ Օ, նա ամեն ինչ պատմեց ինձ։ Խեղճ տղա։ Դա մեծ վիշտ է ընտանիքի համար։ Մինչև հիմա դեռ հիվանդանոց չեն տարել, բայց բանը հասել է նրան, որ ստիպված են այդպես վարվել։

— Երևում է ամեն ինչ գիտես Պուարոյի ընտանիքի մասին,— համբերությունից դուրս գալով՝ ասացի ես։

— Շատ լավ գիտեմ,— ինքնագոհ ասաց Կարոլինը,— մեծ մխիթարություն է մարդկանց համար, երբ իրենց հոգսերը կիսում են ուրիշի հետ։

— Թերևս,— ասացի ես,— եթե դա անում են ինքնակամ։ Այլ բան է, եթե հարկադրում են մարդուն վստահել իր գաղտնիքը։

Կարոլինը նայեց ինձ՝ մարտիրոսություն ըմբռշխնող քրիստոնյա նահատակուհու տեսք ընդունելով։

— Շատ ինքնամփոփ ես, Ջեյմս,— ասաց նա։— Ջես սիրում անկեղծորեն արտահայտվել, կամ իմացածդ տեղեկու-

թյունը հաղորդել ուրիշի, և կարծում ես բոլորն էլ քեզ նման պիտի լինեն։ Ոչ մեկի էլ չեմ սոխպում իր գաղտնիքն ասելու ինձ։ Օրինակ, եթե մայր Պուարոն այսօր գա, ինչպես ինքն ասաց, մտքովս անգամ չի անցնի հարցնել նրան, թե այսօր առավոտյան ով էր եկել իր մոտ։

— Այդքան շո՞ւտ,— զարմացած հարցրի ես։

— Այո՛, առավոտյան շուտ,— ասաց Կարոլինը,— նախքան կարթը կբերեին։ Պատահաբար լուսամուտից դուրս էի նայում։ Վարագույրները չգիտես թե ինչու շարժվում էին։ Բակը աղամարդ էր։ Բակավ փակ մեքենայով և ծպտված էր։ Դեմքը բոլորովին չտեսա։ Բայց, միևնույն է, գիտեմ, թե ով էր։

— Ո՞վ էր։

Կարոլինը խորհրդավոր կերպով իշեցրեց ձայնը.

— Ներքին գործերի մինիստրության մի փորձագետ։

— Ներքին գործերի մինիստրության մի փորձագե՞տ,— ապշած հարցրի ես։— Սիրելի՛ Կարոլին։

— Հիշի՛ր խոսքերս, Ջեյմս, կտեսնես, որ իրավացի եմ։ Այն առավոտ այդ տիկին Ռասելը իզուր չէր հարցնում քեզ թույների մասին։ Այնպես որ Ռոջեր Աքրոյդը շատ հեշտությամբ կարող էր թունավորված լինել աննդից։

— Սա բարձրաձայն ծիծաղեցի։

— Անհեթեթություն,— գոչեցի ես։— Նրան դաշունահարել են ծոծրակից, և դու նույնքան լավ գիտես, որքան ես։

— Մեռնելուց հետո, Ջեյմս,— ասաց Կարոլինը,— որպեսզի մոլորության մեջ գցեն ոստիկանությանը։

— Հարգելի օրիորդ,— ասացի ես,— ես քննել եմ մարմինը և գիտեմ, թե ինչ եմ ասում։ Լավ հիշիր, վերքը չի առաջացել մահվանից հետո, այլ մահվան պատճառ է եղել։

Պատասխանելու փոխարեն Կարոլինը խորհրդավոր տեսք ընդունեց, մի բան, որ այնքան վրդովեցրեց ինձ, որ շարունակեցի.

— Միգուցե ասե՞ս ինձ, Կարոլին, բժշկի կոչում ունե՞մ ես, թե՝ ոչ։

— Դու, իհարկե, բժշկի կոչում ունես, Ջեյմս, այսինքն՝ գիտեմ, որ ունես։ Բայց երևակայությունդ բոլորովին

— Բնությանն առատորեն օժտելով քեզ, ինձ քան չի թողել,— չոր տոնով ասացի ես։

Երբ եկավ Պուարոն, ինձ հիացմունք պատճառեցին Կարոլինի մանևրները։ Առանց ուղղակի հարց տալու, քույրս ամենահնարավոր եղանակներով աշխատում էր շոշափել խորհրդավոր հյուրին վերաբերող թեման։

Պուարոյի աչքերի փայլից նկատեցի, որ նա հասկանում էր Կարոլինի մտադրությունը։ Պուարոն մնում էր անթափանցելի և Կարոլինին այնպիսի հաջողությամբ մոլորեցնում, որ նա ինքը կորցրեց իրեն և չգիտեր ինչպես վերսկսել իր մանևրները։

Այդ փոքրիկ խաղով լուռ զվարճանալուց հետո, նա վեր կացավ և առաջարկեց զբոսնել։

— Ուզում եմ փոքր-ինչ որոշակի դարձնել պատկերը,— բացատրեց նա։— Կգա՞ք ինձ հետ, բժիշկ։ Եվ քիչ ավելի ուշ գուցե միաս Կարոլինը թեյ տա մեզ։

— Հաճույքով,— ասաց Կարոլինը։— Իսկ ձեր հյուրը չի՞ գալու։

— Դուք շատ սիրալիր եք,— ասաց Պուարոն։— Բայց ոչ, բարեկամս հանգստանում է։ Շուտով կծանոթանաք նրա հետ։

— Ինչպես ինձ ասացին, ձեր վաղեմի բարեկամների՞ց է,— մի վերջին հերոսական ճիգ արեց Կարոլինը։

— Մի՞թե,— մրմնջաց Պուարոն։— Դե լավ, մենք պետք է շարժվենք։

Ոտքով գնացինք Ֆերնլիի ուղղությամբ։ Նախապես գլխի էի ընկել, որ այնտեղ էինք գնալու։ Ես սկսել էի հասկանալ Պուարոյի գործելակերպը։ Գործին վերաբերող ամեն մի անհայտ խնդիր կապված էր ամբողջի հետ։

— Մի հանձնարարություն ունեմ ձեզ, բարեկամս,— վերջապես ասաց նա։— Այսօր երեկոյան մի փոքրիկ խորհրդակցություն եմ անցկացնելու իմ տանը։ Կմասնակցեք, այնպես չէ՞։

— Անշուշտ։

— Բարի։ Հրավիրելու եմ նաև բոլոր տնեցիներին. միսիս Աքրոյդին, մադմուազել Ֆլորային, մայոր Բլանթին, միստր

Ռայմոնդին։ Այդ փոքրիկ հավաքույթը նշանակված է ժամը քննին։ Կհրավիրե՞ք նրանց։

— Հաճույքով, իսկ ինչո՞ւ ինքներդ չեք հրավիրում։

— Որովհետև նրանք կարող են հարց տալ՝ ինչո՞ւ, ինչի՞ համար։ Կարող են պահանջել, թե ինչ նպատակ եմ հետապնդում։ Իսկ դուք գիտեք, բարեկամս, որ ես չեմ սիրում ժամանակից շուտ բացատրել իմ մտադրությունները։

Ես ժպտացի։

— Բարեկամս՝ Հաստինգսը, որի մասին ասել եմ ձեզ, ոսոխ էր կոչում ինձ։ Բայց նա իրավացի չէր։ Փաստորեն ես ոչինչ չեմ թաքցնում։ Ամեն ոք իր ուրույն մեկնաբանությունն ունի։

— Ե՞րբ եք ուզում, որ կատարեմ ձեր խնդրանքը։

— Հիմա, եթե դժվար չէ։ Արդեն մոտեցել ենք տանը։

— Ներս մտնելո՞ւ եք։

— Ո՛չ, մի քիչ կզբոսնեմ մոտերքում։ Տասնհինգ րոպեից կմիանամ ձեզ պահառնակի դարպասների մոտ։

Ես գլխով համաձայնության նշան արեցի և գնացի կատարելու հանձնարարությունը։ Միայն միսիս Աքրոյդն էր տանը։ Թեյում էր։ Շատ սիրալիր ընդունեց ինձ։

— Շատ շնորհակալ եմ ձեզնից, բժիշկ,— մեղմ ասաց նա,— որ մյո Պուարոյի հետ պարզեցիք այդ փոքրիկ հարցը։ Բայց անհանգստություններն անպակաս են կյանքում։ Ֆլորայի մասին լսել եք, անշուշտ։

— Կոնկրետ՝ ի՞նչ,— զգուշությամբ հարցրի ես։

— Ֆլորան ու Հեկտոր Բլանթն ամուսնացել են։ Իհարկե, Ռալֆն ավելի համապատասխան զույգ կլիներ։ Բայց առաջին հերթին երջանկությունն է կարևոր։ Ֆլորային պետք էր վըստահելի ու հուսալի մեկը, թեկուզ տարիքով մեծ, և այդ տեսակետից Հեկտորը աչքի է ընկնում։ Այսօրվա թերթում կարդացի՞ք Ռալֆի ձերբակալության մասին։

— Այո՛, կարդացի,— պատասխանեցի ես։

— Սարսափելի է,— միսիս Աքրոյդը փակեց աչքերն ու ցնցվեց։— Ջեոֆրի Ռայմոնդը սարսափելի վիճակում էր։ Ջանգահարեց Լիվերպուլ։ Բայց ոստիկանությունից նման բան չասացին։ Փաստորեն ասացին, որ Ռալֆին չեն ձերբակալել։

Միատր Ռայմոնդը պնդում էր, թե թյուրիմացություն է այդ ամենը, ինչպես ասում են, լրագրային տուտ։ Ի՞նչ սարսափելի խայտառակություն։ Պատկերացնում եք, թե ինչ կըսացվեր, եթե Ֆլորան իրոք ամուսնացած լիներ նրա հետ։

Միսիս Աքրոյդը, վշտալի տեսք ընդունելով, փակեց աչքերը։ Նա սպասում էի, թե վերջապես երբ կկարողանամ հաղորդել Պուարոյի հրավերը, բայց միսիս Աքրոյդը շարունակեց.

— Երեկ դուք այստեղ եք եղել, չէ՞, երբ այդ սարսափելի տեսուչը ստիպել է խեղճ Ֆլորային ասելու, որ ինքն է վերցրել այդ փողը։ Մինչդեռ իրականում ամեն ինչ այլ կերպ է եղել։ Երեխան փողի կարիք է ունեցել, չի ուզեցել անհանգստացնել հորեղբորը, քանի որ ինքն էր այդպես կարգադրել, և իմանալով, թե որտեղ են դրված դրանք, պարզապես պարտք է վերցրել։

— Ֆլորա՞ն ասաց այդպես,— հարցրի ես։

— Հարգելի բժիշկ, ձեզ հայտնի է, թե ինչքան դյուրագաց են ժամանակակից աղջիկները։ Չէ որ տեսուչի արածը հիանուս է եղել. բազմից կրկնել է. «Գողություն՛, գողություն՛», մինչև որ խեղճ երեխայի մոտ արգելակում է առաջացել, թե՝ կոմպլե՞քս,— ես միշտ էլ շփոթում եմ այդ բառերը,— և նա հավատացել է, որ ինքն է գողացել։ Ի դեպ, որոշ առումով գոհ եմ, որ այդ թյուրիմացությունը տեղի ունեցավ, ուզում եմ ասել, որ այն առիթ տվեց Ֆլորային ու Հեկտորին բացատրվելու։ Գիտեք, մի ժամանակ սկսեցի վախենալ, որ ինչ-որ համակրանք կարող էր առաջանալ Ֆլորայի ու Ռայմոնդի միջև։ Պատկերացնում եք,— սարսափի բզզացվեց միսիս Աքրոյդի ձայնում,— ինչ-որ քարտուղար, առանց միջոցների ու հեռանկարների։

— Դաժան հարված կլիներ ձեզ համար,— ասացի ես։— Միսիս Աքրոյդ, մայո Հերքյուլ Պուարոյից հանձնարարություն ունեմ հաղորդելու ձեզ։

— Ի՞նձ,— տագնապով հարցրեց միսիս Աքրոյդը։

Փութացի հանգստացնել նրան և ասացի, թե ինչ էր ուզում Պուարոն։

— Անպատմա՛ն,— բավական տարակուսանքով ասաց

Նա։— Եթե մայր Պուարոն է հրավիրում, ուրեմն պետք է գանք։ Բայց ինչի՞ համար է այդ ամենը։ Ցանկալի է նախապես իմանալ։

Ես հավատացրի նրան, որ ես նույնքան գիտեմ, որքան ինքը։

— Շատ լավ,— բավական դժկամությամբ վերջապես ասաց միսիս Աքրոյդը։— Մյուսներին էլ կասեմ և ժամը լննին կլիննենք այնտեղ։

Ես հրաժեշտ տվեցի նրան և պայմանավորված վայրում հանդիպեցի Պուարոյին։

— Քառորդ ժամից ավելի մնացի,— ասացի ես։— Բայց երբ այդ տիկինը սկսում է շատախոսել, դժվար է որևէ բան ասել։

— Հոգ չէ,— ասաց Պուարոն,— վատ չանցկացրի ժամանակը։ Հրաշալի է այս այգին։

Ուղևորվեցինք տուն։ Երբ տեղ հասանք, ի մեծ զարմանս մեզ, Կարոլինը, որ ակնհայտորեն սպասել էր մեզ, ինքը բացեց դուռը։

Նա, լուրջ տեսք ընդունելով, մատը դրեց շրթունքներին։ Հուզմունքից այտերը շիկնել էին։

— Ուրսուլա Բորնն է եկել, Ֆերնլիից։ Ճաշասենյակում է։ Սարսափելի վիճակում է խեղճ աղջիկը։ Ասում է, որ անպայման ուզում է տեսնել մայր Պուարոյին։ Ինչ-որ կարող էի արեցի՝ նրան հանգստացնելու համար։ Տաք թեյ տվեցի։ Մարդու սիրտ է ճմլվում, երբ մեկին տեսնում ես այդ վիճակում։

— Ճաշասենյակո՞ւմ է,— զարմացած հարցրեց Պուարոն։

— Այս կողմ,— ասացի ես՝ լայն բացելով դուռը։

Ուրսուլա Բորնը նստել էր սեղանի մոտ։ Պարզ երևում էր, որ գլուխը ձեռքին դրած լաց էր եղել. աչքերն արտասվելուց կարմրել էին։

— Ուրսուլա Բորն...— ասացի ես։

Բայց Պուարոն անցավ կողքովս՝ ձեռքերն առաջ մեկնած։

— Ո՛չ,— ասաց նա,— ինձ թվում է, դա այնքան էլ ճիշտ չէ։ Ուրսուլա Բորնը չէ, աղավնյակս, այլ... Ուրսուլա Փեյթլընը, միսիս Փեյթլընը։

Գլուխ 22

ՈՒՐՍՈՒԼԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մի պահ աղջիկը լուռ նայեց Պուարոյին։ Հետո, այլևս չկարողանալով զսպել իրեն, բուռն արտասվեց։

Կարոլինը, մի կողմ հրելով ինձ, մոտեցավ նրան և, գրկելով աղջկան և ուսերին թփթփացնելով, փորձեց հանգստացնել նրան.

— Հանգստացի՛ր, հանգստացի՛ր, հոգյակս, ամեն ինչ լավ կլինի։ Կտեսնես, ամեն ինչ լավ կլինի։

Հետաքրքրասեր ու բամբասասեր լինելով հանդերձ, Կարոլինը միաժամանակ շատ բարի էր։ Մի պահ նույնիսկ Պուարոյի հայտարարությունը կորցրեց իր հետաքրքրությունն աղջկա վշտի առջև։

Շուտով Ուրսուլան ուղղվեց ու սրբեց աչքերը։

— Հիմարություն ու թուլակամություն է իմ կողմից,— ասաց նա։

— Ո՛չ, ո՛չ, զավակս,— բարյացակամությամբ ասաց Պուարոն։— Բոլորս էլ հասկանում ենք այս շաբաթվա ամբողջ լարված վիճակը։

— Դա սոսկալի ծանր մի փորձություն էր,— ասացի ես։

— Հետևապես՝ համոզվելու, որ գիտեիք,— շարունակեց Ուրսուլան։— Ինչպե՞ս իմացաք։ Ո՞վ ասաց ձեզ։

Պուարոն բացասաբար շարժեց գլուխը։

— Գիտեք, թե ինչու եկա ձեզ մոտ այս երեկո,— շարունակեց աղջիկը։— Սա...— Ուրսուլան մեկնեց թերթի ծայրված մի կտոր, և ես ճանաչեցի Պուարոյի փոքրիկ հոդվածը։

— Այստեղ գրված է, որ Ռալֆին ձերբակալել են։ Այնպես որ ամեն ինչ անօգուտ է, և թաքցնելու բան չունեմ։

— Մադմուազել, լրագրային լուրերը միշտ չէ, որ ճիշտ են լինում,— մրմնջաց Պուարոն, փոքր-ինչ ամոթահար։— Այնուամենայնիվ, կարծում եմ, անկեղծորեն կխոստովանեք ամեն ինչ։ Հիմա ճշմարտությունն է պետք մեզ։

Աղջիկը վարանեց, կասկածանքով նայելով նրան։

— Դուք չեք վստահում ինձ,— մեղմ ասաց Պուարոն։— Այդուհանդերձ, եկաք տեսնելու ինձ, ճի՞շտ է։ Իսկ ինչո՞ւ։

— Որովհետև չեմ հավատում, որ Ռալֆն է սպանել,— պատասխանեց աղջիկը շատ ցածր ձայնով։— Ես կարծում եմ, որ դուք խելացի եք, ու կպարզեք ճշմարտությունը։ Ինչպես և...

— Եվ ի՞նչ։

— Որ դուք բարի եք։

— Իհարկե, իհարկե,— հաստատեց Պուարոն,— ես իրոք հավատում եմ, որ ձեր ամուսինն անմեղ է, բայց գործը վատ է ընթանում։ Եթե ես պիտի փրկեմ նրան, ուրեմն պետք է իմանամ ամեն ինչ, նույնիսկ եթե թվա, թե գործն ավելի աղետալի է դառնում նրա համար, քան առաջ։

— Ինչքան լավ եք հասկանում,— ասաց Ուրսուլան։

— Այնպես որ ինձ պետք է պատմեք ամեն ինչ, չէ՞, սկզբից եթե։

— Հուսով եմ, որ չեք վոնդելու ինձ,— ասաց Կարոլինը, հարմար ձևով տեղավորվելով բազկաթոռներից մեկում։— Ինձ հետաքրքրում է միայն մի բան. ինչո՞ւ էր այս փոքրիկը աղախին ձևանում։

— Չևանո՞ւմ,— հարցրի ես։

— Ինչպես լսեցիր։ Ինչո՞ւ էիր ձևանում, փոքրիկս, հանուն ինչի՞։

— Հանուն ապրուստի,— չոր տոնով պատասխանեց Ուրսուլան և սկսեց պատմել իր կյանքը, որ ներկայացնում եմ իմ բառերով։

Ուրսուլա Բորնը եղել էր իռլանդացի աղքատացած ջենտլմենի ընտանիքի յոթերորդ երեխան։ Հոր մահվանից հետո աղջիկները ստիպված էին մտածել մի կտոր հաց վաստակելու մասին։ Ուրսուլային դուր չէր գալիս տնային դաստիարակչուհու, ավելի ճիշտ դայակի մասնագիտությունը (միակ մասնագիտությունը, որ մատչելի էր հատուկ կրթություն չստացած նրա պես մի աղջկա համար), և նա նախընտրեց դառնալ աղախին։ Ավագ քույրը, որ ամուսնացել էր կապիտան Ֆոլիոթի հետ, հանձնարարական տվեց նրան։ Հենց նրան

էր, որ տեսել էի կիրակի օրը, և նրա շփոթմունքի պատճառը հիմա պարզ դարձավ ինձ համար։ Բայց տհաճ կլիներ Ուրսուլայի համար, եթե նրան «օրիորդ-աղախին» կոչեին, առավել ևս, որ աշխատանքի էր անցել քրոջ հանձնարարականով։ Ուզում էր ապացուցել, որ իր տեղը հարմար է իրեն։ Ցերեկվա ինում, չնայած որոշ չափով մեկուսի կյանք էր վարում, որ երբեմն բամբասանքների առիթ էր տալիս, իրեն լավ դրսեվորեց. արագաշարժ էր, բարեխիղճ ու ձեռնհաս։

— Աշխատանքն ինձ դուր է գալիս,— ասաց նա։— Ես բավական ազատ ժամանակ ունեմ։

Իսկ հետո հանդիպեց Ռալֆ Փեյթընին, սիրահարվեցին, որի գագաթնակետը եղավ նրանց գաղտնի ամուսնությունը։ Ռալֆը համոզեց նրան դիմելու այդ քայլին, մասամբ նրա կամքին հակառակ։ Նա հայտարարել էր, թե իր խորթ հայրը լսել անգամ չի ուզենա ընչազուրկ մի աղջկա հետ իր ամուսնանալու մասին։ Ավելի լավ է գաղտնի ամուսնանալ և այդ նորությունը հայտնել նրան ավելի ուշ, ավելի նպաստավոր ժամանակ։

Եվ այսպես Ուրսուլա Բորնը դարձավ Ուրսուլա Փեյթընը։ Ռալֆն ասել էր, թե աշխատանք կգտներ, կփակեր պարտքերը, և երբ ի վիճակի կլիներ պահել նրան ու կախման մեջ չլիներ իր խորթ հորից, իրենց ամուսնության մասին կհայտներ հորը։

Բայց Ռալֆ Փեյթընի նման մի անձնավորության համար ավելի հեշտ էր նոր կյանք սկսել տեսականորեն, քան գործնականում։ Հուսով էր, որ իր խորթ հայրը, քանի դեռ չգիտեր իրենց ամուսնության մասին, թերևս համոզվեր վճարել իր պարտքերը և օգներ նորից ոտքի կանգնելու։ Բայց երբ բահայտվեց Ռալֆի պարտքերի գումարը, դա միայն զայրացրեց Ռոջեր Աքրոյդին, և նա ընդհանրապես հրաժարվեց որևէ բան անել նրա համար։ Ամիսներ հետո Ռալֆին մի անգամ էլ հրավիրեցին Ֆերնլի։ Եվ Ռոջեր Աքրոյդն ուղղակի հայտնեց իր ցանկությունը. Ռալֆը պետք է ամուսնանար Ֆլորայի հետ։

Եվ այստեղ Ռալֆ Փեյթընի բնածին թուլակամությունը դրսևորեց իրեն։ Ինչպես միշտ, նա կառչեց հեշտից, խնդրի

անմիջական լուծումից։ Որքան գիտեմ, ո՛չ Ֆլորան, ո՛չ էլ Ռալֆը սիրո որևէ հավակնություն չունեին։ Երկուսի համար էլ դա զուտ գործնական քայլ էր։ Եվ երբ Ռոջեր Աքրոյդը թելադրեց իր պայմաններն, իսկույն համաձայնվեցին։ Ֆլորան հույս ուներ ձեռք բերել անկախություն, փող, գործունեության լայն հնարավորություն։ Իսկ Ռալֆի վիճակն ավելի բարդ էր։ Նա խրվել էր պարտքերի մեջ և չէր ուզում ոտիթը բաց թողնել. վերջիվերջո պարտքերը կմարեր, և ամեն ինչ կսկսեր նորից։ Նա այն մարդկանցից չէր, ովքեր կարողանում են հեռուն տեսնել, բայց ըստ երևույթին, աղոտ կերպով զգում էր, որ որոշ ժամանակից հետո կայանալու էր իրենց ամուսնությունը։ Ֆլորայի հետ պայմանավորվել էին առայժմ գաղտնի պահել իրենց ամուսնությունը։ Ռալֆը հիմնականում ուզում էր դա գաղտնի պահել Ուրսուլայից։ Նա բնազդաբար զգում էր, թե ինչքան նողկալի կլիներ այդ խաբեությունը այնպիսի մի ազնիվ ու հաստատակամ աղջկա համար, ինչպիսին Ուրսուլան էր։

Այնուհետև եկավ վճռական պահը, երբ Ռոջեր Աքրոյդն իրեն հատուկ քմահաճությամբ որոշեց հայտարարել նշանադրության մասին։ Ռալֆին ոչ մի խոսք չասաց, իսկ անտարբեր Ֆլորան ամեն ինչ ընդունեց առանց առարկելու։ Այդ լուրը շշմեցուցիչ ազդեցություն ունեցավ Ուրսուլայի վրա։ Նա կանչեց Ռալֆին, և սա իսկույն վերադարձավ քաղաքից։ Նրանք հանդիպեցին անտառում, որտեղ և քույրս պատահաբար մասամբ լսեց նրանց խոսակցությունը։ Ռալֆն աղաչել էր նրան որոշ ժամանակ լռել, իսկ Ուրսուլան վճռականապես ուզում էր վերջ տալ գաղտնապահությանը, ասել էր, որ անհապաղ ճշմարտությունը կհայտնի միստր Աքրոյդին։ Եվ այր ու կին բաժանվել էին՝ կծու խոսքեր ասելով իրար։

Համառորեն ձգտելով իր նպատակին, Ուրսուլան ամեն կերպ աշխատեց հանդիպել Ռոջեր Աքրոյդին նույն օրը և բացահայտեց ճշմարտությունը։ Բուռն զրույց տեղի ունեցավ, այդ զրույցն ավելի բուռն կլիներ, եթե Ռոջեր Աքրոյդը տարված չլիներ իր սեփական հոգսերով։ Այնուամենայնիվ, դա էլ բավական էր։ Աքրոյդն այն մարդը չէր, որ ներեր իր նկատմամբ ցուցաբերած նենգությունը։ Սակայն նրա զայրույթը

հիմնականում ուղղված էր Ռալֆին, քանզի Ուրսուլային համարում էր մի աղջիկ, ով դիտավորյալ աշխատել էր «որսալ» մի շատ հարուստ անձնավորության խորթ տղային։ Երկու կողմերից էլ աններելի խոսքեր ասվեցին։

Նույն երեկոյան, գաղտնի դուրս գալով տան կողքի դռնից, Ուրսուլան, ըստ պայմանավորվածության, հանդիպեց Ռալֆին տաղավարում։ Ռալֆը մեղադրեց Ուրսուլային, որ անուղղակիորեն խորտակել էր ապագայի իր պլանները՝ անժամանակ բացահայտելով իրենց գաղտնիքը։ Իսկ Ուրսուլան մեղադրեց Ռալֆին երկդիմության մեջ։

Վերջապես նրանք բաժանվեցին։ Կես ժամից հետո հայտնաբերվեց Ռոջեր Աքրոյդի մարմինը։ Այդ երեկոյից ի վեր Ուրսուլան ո՛չ տեսել էր Ռալֆին, ո՛չ էլ որևէ լուր էր ունեցել նրանից։

Այդ պատմությունն ինքնին բացահայտվելուն զուգընթաց ևս ավելի ու ավելի էի հասկանում, թե իրար հետ կապված փաստերի ինչպիսի անիծյալ շարան էր դա։ Եթե ողջ մնար, Աքրոյդն անպայման կփոխեր իր կտակը. ևս բավական լավ էի ճանաչում նրան, որպեսզի համոզված լինեի, որ նրա առաջին միտքը դա կլիներ։ Նրա մահը ճիշտ ժամանակին եղավ Ռալֆի ու Ուրսուլա Փեյթընի համար։ Այնքան էլ զարմանալի չէ, որ այդ աղջիկը զսպել էր իրեն և այդքան հաստատակամորեն կատարել իր դերը։

Մտքերս ընդհատեց Պուարոյի ձայնը, և նրա լուրջ տոնից հասկացա, որ նա ևս լրիվ հասկանում էր իրավիճակը։

— Մադմուազել, մի հարց պիտի տամ ձեզ և դուք ճիշտ պիտի պատասխանեք, քանզի ամեն ինչ կարող է կախված լինել ձեր պատասխանից։ Ժամը քանիսի՞ն բաժանվեցիք կապիտան Փեյթընից։ Լավ մտածեք, այնպես, որ ձեր պատասխանը ճշգրիտ լինի։

Ուրսուլան քմծիծաղ տվեց։

— Մի՞թե կարծում եք, որ ես կրկին ու դարձյալ չեմ մտածել այդ մասին։ Երբ տնից դուրս եկա հանդիպելու նրան, ուղիղ ինն անց կես էր։ Մայոր Բլանթը սանդղավանդով ետու առաջ էր քայլում, այնպես որ ստիպված զարտուղի ճանապարհով գնացի՝ խուսափելու համար նրանից։ Տասին

քանդոթի պակաս կլիներ, երբ հասա տաղավար։ Ռալֆը ըսպասում էր ինձ։ Մնացի տասը րոպե, ոչ ավելի, որովհետև տասին ուղիղ տասնհինգ էր պակաս, երբ վերադարձա տուն։

Նախորդ օրվա հարցի հաստատումը տեսա նրա խոսքերում։ Եթե միայն հնարավո՞ր լիներ ապացուցել, որ Աքրոյդին սպանել էին տասին տասնհինգ րոպե պակասից առաջ, ոչ թե հետո։

Նույն միտքը զգացվեց Պուարոյի հաջորդ հարցում.

— Առաջինն ո՞վ հեռացավ տաղավարից։

— Ես։

— Ռալֆ Փեյթընին թողնելով ամառանացո՞ւմ։

— Այո՛, բայց չկարծեք թե...

— Մադմուազել, նշանակություն չունի, թե ինչ եմ մտածում ես։ Երբ տուն վերադարձաք, ի՞նչ արեցիք։

— Բարձրացա իմ սենյակ։

— Եվ այնտեղ մնացիք մինչև քանի՞սը։

— Մինչև մոտ ժամը տասը։

— Ո՞վ կարող է ապացուցել։

— Ապացուցել, որ ես իմ սենյակո՞ւմ եմ եղել, դա՞ նկատի ունեք։ Օ՛, ո՛չ։ Բայց հաստատ... Օ՛, հասկանում եմ, կարող են մտածել... կարող են մտածել...

Սարսափի նշաններ երևացին նրա աչքերում։

Պուարոն վերջացրեց նրա խոսքը.

— Որ դո՞ւք եք մտել լուսամուտից և դաշունահարել բալկաթոռին նստած միստր Աքրոյդին։ Այո՛, հենց այդպես էլ կարող են կարծել։

— Միայն ապուշը կարող է այդպիսի բան մտածել,— վրդովված ասաց Կարոլինը, շոյելով Ուրսուլայի ուսը։ Ուրսուլան գլուխը թաղել էր նրա ձեռքերի մեջ։

— Սոսկալի է,— մրմնջաց նա,— սոսկալի է։

— Մի անհանգստանա, հոգյակս,— ասաց նա,— մայր Պուարոն այդպիսի բան չի մտածում։ Իսկ ինչ վերաբերում է ամուսնյակիդ, անկեղծ ասած, առանձնապես մեծ կարծիքի չեմ նրա մասին։ Գլուխն ազատել է և քեզ թողել է մենակ՝ դիմագրավելու բոլոր դժվարություններըւ

— Օ՛, ո՛չ,— ճչաց նա։— Ամենևին էլ այդպես չէ։ Ռալֆը

չիախավ գլուխն ազատելու համար։ Հիմա հասկանում եմ։ Նա էլ կարող էր մտածել, որ ես եմ սպանել իր խորթ հորը։

— Նա այդպիսի բան չէր կարող մտածել,— ասաց Կարուինը։

— Ես շատ խիստ վարվեցի նրա հետ այն գիշեր, շատ խիստ ու դաժան։ Ջլսեցի, թե ինչ է ուզում ասել, չհավատացի, թե իրականում ինչն էր մտահոգում նրան։ Պարզապես կանգնել ու ասում էի այն ամենն, ինչ մտածում էի նրա մասին, ամենադաժան խոսքերը, որ գլուխս էին գալիս, ամեն կերպ աշխատելով խոցել նրան։

— Բոլորովին էլ վատ չես վարվել,— ասաց Կարուինը։— Եթե վիրավորական բան ես ասել տղամարդուն, թող դա չանհանգստացնի քեզ։ Տղամարդիկ այնքան ինքնահավան են, որ երբեք չեն հավատա լուրջ բանի, եթե դա չի շոյում իրենց ինքնասիրությունը։

— Երբ սպանությունը բացահայտվեց և նա չերևաց, սարսափելի վհատվեցի,— հուզված շարունակեց Ուրսուլան։— Մի պահ ապշեցի... բայց հետո համոզվեցի, որ նա չէր կարող այդպիսի բան անել, չէ՞ր կարող... Ջնայած ուզում էի, որ գար և անկեղծորեն ասեր, որ ինքը ոչ մի կապ չունի դրա հետ։ Գիտեի, որ շատ էր կապված բժիշկ Շեպարդին, և ինձ թվաց, թե գուցե նա գիտեր որտեղ էր Ռալֆը։— Նա դիմեց ինձ։— Ահա թե ինչու այն ժամանակ խոսեցի ձեզ հետ։ Մտածեցի, որ գուցե գիտեիք, թե որտեղ էր նա, և կարող էիք այդ լուրը հաղորդել նրան։

— Ե՞ս։

— Ինչո՞ւ Ջեյմսը պիտի իմանար, թե որտեղ էր նա,— կտրուկ հարցրեց Կարուինը։

— Շատ անհավանական էր, գիտեմ,— համաձայնվեց Ուրսուլան,— բայց Ռալֆը հաճախ էր խոսել բժշկի մասին, և ես համոզված էի, որ նա թերևս իր ամենալավ բարեկամն էր համարում նրան Քինգս Աբբոթում։

— Հոգյակս,— ասացի ես,— ամենաչնչին պատկերացումն իսկ չունեմ, թե որտեղ է գտնվում Ռալֆը նույնիսկ հիմա։

— Ճշմարիտ է,— ասաց Պուարոն։

— Բայց...— խոսակցությանը շփոթված միջամտեց Ուրսուլան, մեկնելով լրագրի կտրածոն։

— Ա՜խ, դա,— ասաց Պուարոն, փոքր-ինչ շփոթվելով,— աննշան բան է, մադմուազել։ Ես ամենևին չեմ հավատում, որ Ռալֆ Փեյթընը ձերբակալված է։

— Այդ դեպքում...— դանդաղ սկսեց աղջիկը։

Իսկ Պուարոն արագ շարունակեց.

— Մի բան կուզեի իմանալ. կապիտան Փեյթընը կիսա-կոշի՞կ, թե երկարաճիտ կոշիկ էր հագել այն երեկո։

Ուրսուլան տարակուսանքով շարժեց գլուխը։

— Չեմ հիշում։

— Ափսոս։ Դե լավ, տիկին,— ժպտալով ասաց Պուարոն և ցուցամատը բազմանշանակալից թափ տվեց,— այդ դեպքում, հարցեր չկան։ Մի տանջեք ձեզ, արիացե՛ք և ապավինեք Հերքյուլ Պուարոյին։

Գլուխ 23

ՓՈՔՐԻԿ ՀԱՎԱՔՈՒՅԹ ՊՈՒԱՐՈՅԻ ՄՈՏ

— Իսկ հիմա,— ասաց Կարոլինը վեր կենալով,— աղջիկը պետք է վերև գնա պառկելու։ Մի անհանգստանա, հոգյակս, մայր Պուարոն ամեն հնարավոր բան կանի քեզ համար, դրանում չկասկածես։

— Ես պետք է վերադառնամ Ֆերնլի,— վարանելով ասաց Ուրսուլան։ Բայց Կարոլինը վճռականապես առարկեց.

— Հիմարություն։ Ես քեզ բաց չեմ թողնի։ Համենայն դեպս առայժմ այստեղ ես, այնպես չէ՞, մայր Պուարո։

— Լավագույնը դա կլինի,— համաձայնվեց փոքրիկ բելգիացին։— Կներեք ինձ, բայց կցանկանայի, որ այս երեկո նա էլ մասնակցեր իմ փոքրիկ հավաքույթին։ Ժամը իննին, իմ տանը։ Շատ անհրաժեշտ է, որ նա այնտեղ լինի։

Կարոլինը գլխով արեց և Ուրսուլայի հետ դուրս եկավ ճաշյակից։ Երբ դուռը փակվեց նրանց ետևից, Պուարոն ասաց.

— Այժմ ամեն ինչ լավ է, հանգամանքներն ինքնին պարզվում են։

— Դրանք աստիճանաբար ավելի ու ավելի սպառնալից են դառնում Ռալֆ Փեյթընի համար,— մռայլ նկատեցի ես։

Պուարոն գլխով արեց։

— Այո՛, ճիշտ է։ Բայց դա պետք էր ակնկալել, այնպես չէ՞։

Այդ ակնարկից փոքր-ինչ շփոթված, նայեցի նրան։ Պուարոն, աչքերը կիսախուփ արած, հենվել էր բազկաթոռի թիկնակին, մատների ծայրերը միացրել իրար։ Հանկարծ նա հառաչեց ու ցնցեց գլուխը։

— Ի՞նչ է պատահել,— հարցրի ես։

— Բանն այն է, որ պահեր են լինում, որ շատ եմ զգում իմ բարեկամ Հասթինգսի կարիքը։ Նրա մասին ասել եմ ձեզ։ Այժմ ապրում է Արգենտինայում։ Երբ բարդ գործ էր լինում, միշտ էլ կողքիս էր։ Եվ նա օգնում էր ինձ, այո՛, հաճախ օգնում էր ինձ, քանզի ինչ-որ ձևով պատահաբար դեմ էր առնում ճշմարտությանը, առանց ինքն իսկ նկատելու։ Բացի այդ, սովորություն ուներ իրադարձությունները գրի առնել, և պարզվում էր, որ դա հետաքրքիր էր։

Ես, փոքր-ինչ շփոթվելով, մաքրեցի կոկորդս։

— Ինչ վերաբերում է դրան...— սկսեցի ես, բայց ընդհատեցի խոսքս։

Պուարոն ուղղվեց բազկաթոռի մեջ։ Աչքերը փայլեցին։

— Եվ ի՞նչ, ի՞նչ էիք ուզում ասել։

— Բանն այն է, որ ես կարդացել եմ կապիտան Հասթինգսի պատմվածքներից մի քանիսը, և մտածեցի՝ ինչո՞ւ չփորձել նման մի բան գրել։ Միգուցե սա միակ առիթն է իմ կյանքում...

Չզգացի, որ գնալով լեզուս ավելի ու ավելի էր փաթ ընկնում և խոսքս դառնում էր ավելի ու ավելի անկապ։

Պուարոն վեր ցատկեց բազկաթոռից։ Մի պահ վախեցա, թե պատրաստվում էր համբուրել ինձ իր՝ ֆրանսիական ձևով, բայց նա ողորմածաբար զսպեց իրեն։

— Բայց դա հրաշալի է, ուրեմն դուք գրի՞ եք առել գործի վերաբերյալ ձեր տպավորությունները։

Ես գլխով համաձայնության նշան արեցի։

— Epatant![1],— գոչեց Պուարոն։— Տվեք տեսնեմ, հենց հիմա։

Ես բոլորովին էլ պատրաստ չէի նման անսպասելի պահանջի։ Լարեցի միտքս՝ հիշելու համար որոշակի մանրամասներ։

— Հուսով եմ, որ չեք առարկի,— կմկմալով ասացի ես,— թեև հաճախ մի փոքր անձնական մոտեցում եմ ցուցաբերել։

— Օ, միանգամայն հասկանալի է. ինձ որպես կոմիկ եք ներկայացրել, շատ հաճախ էլ՝ զավեշտական։ Դա ամենևին էլ կարևոր չէ։ Հաստինգան էլ միշտ քաղաքավարի չէր։ Ես վեր եմ կանգնած այդպիսի չնչին բաներից։

Տակավին փոքր-ինչ վարանելով, քրքրեցի գրասեղանիս դարակները և հանեցի ձեռագրի անկանոն մի կույտ և տրվեցի նրան։ Նկատի ունենալով, որ ապագայում հնարավոր է տպագրության հանձնեմ, ձեռագիրը բաժանել էի գլուխների, և նախորդ երեկոյան բարեփոխել էի՝ նկատի ունենալով միսս Ռաաելի երկրորդ այցելությունը։ Այդիսով, Պուարոյի ձեռքում էին քսան գլուխներ։

Ես հրաժեշտ տվեցի նրան։

Բավական հեռու ապրող մի հիվանդ ունեի, որին պետք է այցելեի, և երբ վերադարձա, ուշն անց էր։ Ինձ տաք ճաշ մատուցեցին, և ասացին, որ Պուարոն ու քույրս ընթրել էին միասին յոթն անց կեսին, և բելգիացին գնացել էր իմ արհեստանոց՝ ավարտելու ձեռագրի ընթերցումը։

— Հուսով եմ, Ջեյմս,— ասաց քույրս,— որ իմ մասին գրելիս ուշադիր ես եղել։

Լեզուս կապ ընկավ։ Ամենևին էլ ուշադիր չէի եղել։

— Դա այնքան էլ նշանակություն չունի,— ասաց Կարոլինը, դեմքիս արտահայտությունից կռահելով իսկությունը։— Մայր Պուարոն գլխի կընկնի։ Նա շատ ավելի լավ է հասկանում ինձ, քան դու։

Գնացի արհեստանոց։ Պուարոն նստած էր լուսամուտի

---

1 Ապշեցուցի՞չ է (Ֆր.)։

մոտ։ Ջեռապիրը կոկիկ դարսված էր նրա դիմաց։ Պուարոն ձեռքը դրեց դրա վրա և ասաց.

— Դե, շնորհավորում եմ ձեզ. շատ հմտասուն եք։

— Օ՜,— բավական շփոթված բացականչեցի ես։

— Եվ՝ զսպված,— ավելացրեց նա։— Հաստինգսն այդպես չէր գրում։ Ամեն էջում բազմիցս կրկնվում էր «ես»-ը։ Ինչ էր ինքը մտածում, ինչ էր ինքը անում։ Իսկ դուք, դուք սովերում եք թողել ձեր անձը. միայն մեկ թե երկու անգամ է այն երևում ընտանեկան տեսարաններում։

Ես փոքր-ինչ կարմրեցի։

— Հիրավի, ի՞նչ եք մտածում այդ գործի մասին,— նյարդայնացած հարցրի ես։

— Ուզում եք իմ անկեղծ կարծի՞քն իմանալ։

— Այո՛։

Պուարոն, մի կողմ թողնելով կատակի տոնը, լրջորեն ասաց.

— Շատ մանրակրկիտ ու ճշգրիտ տեղեկություններ են։ Բոլոր փաստերը ներկայացրել եք ազնվորեն ու առույգ կերպով, իսկ ինչ վերաբերում է այդ իրադարձություններին ունեցած ձեր մասնակցությանը, պատշաճ զսպվածությամբ եք ներկայացրել։

— Իսկ դա կօգնի՞ ձեզ։

— Այո՛։ Կարող եմ ասել, որ բավական օգնեց։ Գնանք, մենք պետք է տուն հասնենք և նախապատրաստենք բեմահարթակն իմ փոքրիկ ներկայացման համար։

Կարոլինը նախասենյակում էր։ Ինձ թվաց, թե հույս ուներ, որ իրեն էլ կհրավիրենք։ Պուարոն, վայելուչ տակտով ափսոսանք հայտնելով, ասաց.

— Ես շատ կցանկանայի, որ դուք էլ ներկա լինեք, մատուցել, սակայն տվյալ դեպքում անխոհեմություն կլիներ։ Հասկանում եք, այս երեկո հավաքվող բոլոր անձնավորությունները էլ կասկածի տակ են։ Նրանց մեջ ես պետք է գտնեմ նրան, ով սպանել է Աբրոյդին։

— Դուք իրո՞ք հավատում եք այդ բանին,— թերահավատորեն հարցրի ես։

— Տեսնում եմ, որ դուք չեք հավատում,— սառը տոնով

ասաց Պուարոն։— Դեռևս ըստ արժանվույն չեք գնահատում Հերքյուլ Պուարոյին։

Այդ պահին աստիճաններով ցած իջավ Ուրսուլան։

— Պատրա՞ստ եք, զավակս,— հարցրեց Պուարոն։— Բարի։ Միասին իմ տուն կգնանք։ Մադմուազել Կարոլին, հավատացեք, պատրաստ եմ ամեն տեսակի ծառայություն մատուցելու ձեզ։ Բարի գիշեր։

Մենք դուրս եկանք, թողնելով Կարոլինին, ինչպես մի շան, որին մերժել են զբոսանքի տանել, շքամուտքին կանգնած մեր եռևից նայելիս։

Պուարոյի հյուրասենյակում ամեն ինչ արդեն պատրաստ էր։ Սեղանին դրված էին զանազան մրգահյութեր ու բաժակներ, ինչպես և մի ափսե բիսկվիտ։ Բազմաթիվ աթոռներ էին բերել մյուս սենյակից։

Պուարոն եռ ու առաջ էր վազում, վերադասավորում իրերը, տեղաշարժում էր մի աթոռ այստեղ, փոխում մի լամպի դիրքն այնտեղ, երբեմն-երբեմն կանգ էր առնում ուղեկու հատակին փռված փսիաթներից մեկը։ Շատ էր անհանգստանում հատկապես սենյակի լուսավորության համար։ Լամպերն այնպես էր դասավորված, որպեսզի լավ լուսավորվեր սենյակի այն մասը, որտեղ աթոռներն էին դրված, միաժամանակ սենյակի մյուս մասը, որտեղ, ինչպես ենթադրում էի, Պուարոն էր նստելու, թողնելով կիսախավարում։

Ուրսուլան ու ես դիտում էինք նրան։ Շուտով դռան զանգը հնչեց։

— Գալիս են,— ասաց Պուարոն։— Լավ է, ամեն ինչ պատրաստ է։

Դուռը բացվեց, և Ֆերնլիից եկողները լցվեցին ներս։ Պուարոն ընդառաջ ելաց ու ողջունեց միսիս Աքրոյդին ու Ֆլորային։

— Ձեր կողմից շատ մեծ սիրալիրություն է, որ եկաք,— ասաց Պուարոն,— ինչպես և մյուս բլանթի ու միստր Ռայմոնդի։

Քարտուղարն, ինչպես միշտ, լավ տրամադրության մեջ էր։

— Այդ ի՞նչ մեծ մտահղացում է,— ծիծաղելով հարցրեց նա։— Ինչ-որ գիտական մեխանի՞զմ։ Հաղորդափոկե՞ր ենք

միացնելու մեր դաստակներին, որպեսզի գրանցվեն մեր սրտի խփոցները և դրանով որոշվի մեղադրյալը: Այդպիսի գյուտ կա կարծեմ, ճիշտ չէ՞:

— Այո՛, կարդացել եմ այդ մասին,— ասաց Պուարոն:— Բայց ես պահպանողական եմ, հետևում եմ հին մեթոդներին: Գործի եմ դնում իմ փոքրիկ գորշ բջիջները: Իսկ հիմա եկեք սկսենք. նախ՝ մի հայտարարություն ունեմ անելու բոլորիդ:

Նա բռնեց Ուրսուլայի ձեռքն ու մոտ բերեց նրան:

— Այս լեդին միսիս Ռալֆ Փեյթընն է: Մարտ ամսին ամուսնացել է կապիտան Փեյթընի հետ:

Միսիս Աքրոյդը մի սուր ճիչ արձակեց:

— Ռա՛լֆը: Ամուսնացա՞ծ: Մարտի՞ն: Օ՛, բայց դա անհեթեթություն է: Ինչպե՞ս կարող էր ամուսնանալ:

Նա այնպես էր աչքերը չռել Ուրսուլայի վրա, կարծես նոր էր տեսնում նրան:

— Ամուսնացել է Բորնի՞ հետ: Իսկապե՞ս, մսյո Պուարո, ես չեմ հավատում ձեզ:

Ուրսուլան շիկնեց ու փորձեց խոսել, բայց Ֆլորան կանխեց նրան: Արագ մոտենալով նրան, Ֆլորան գրկեց աղջկան ու ասաց.

— Թող ձեզ չանհանգստացնի, որ մենք զարմանում ենք: Հասկանում եք, մենք ոչ մի պատկերացում չունեինք այդ մասին: Դուք Ռալֆի հետ շատ լավ եք թաքցրել ձեր գաղտնիքը: Եվ ես շատ ուրախ եմ դրա համար:

— Դուք շատ բարի եք, միսս Աքրոյդ,— ցածրաձայն ասաց Ուրսուլան,— և իրավունք ունեք խիստ զայրանալու: Ռալֆը շատ վատ է վարվել հատկապես ձեր նկատմամբ:

— Այդ մասին մի անհանգստացեք,— ասաց Ֆլորան, սփոփանքով շոյելով նրա ձեռքը:— Ռալֆն անելանելի կացության մեջ էր և ընտրեց միակ ելքը: Նրա տեղը ես հավանաբար նույն կերպ կվարվեի: Այնուամենայնիվ, նա կարող էր վստահել ինձ իր գաղտնիքը, ես չէի մատնի նրան:

Պուարոն թեթևակի խփեց սեղանին ու բազմանշանակալից տոնով մաքրեց կոկորդը:

— Խորհրդակցությունն սկսվում է,— ասաց Ֆլորան:— Մսյո Պուարոն ակնարկում է, որ չպետք է շատախոսենք:

Բայց խնդրում եմ մի բան ասել. որտե՞ղ է Իալֆը։ Ձեզանից բացի ոչ ոք չի կարող իմանալ։

— Ջգիտեմ,— լացակումած ճչաց Ուրսուլան։— Իրոք չգիտեմ։

— Մի՞թե Լիվերպուլում չեն ճերբակալել,— հարցրեց Ռայմոնդը։— Թերթում այդպես է գրված։

— Նա Լիվեպուլում չէ,— կտրուկ ասաց Պուարոն։

— Փաստորեն,— նկատեցի ես,— ոչ ոք չգիտե, թե ուր է նա։

— Բացի Հերքյուլ Պուարոյից, այնպես չէ՞,— ասաց Ռայմոնդը։

Ի պատասխան վերջինիս կատակի՝ Պուարոն լրջորեն ասաց.

— Ես ամեն ինչ գիտեմ։ Լավ հիշեք դա։

Ջեոֆրի Ռայմոնդը բարձրացրեց հոնքերը։

— Ամե՞ն ինչ,— շվվացրեց քարտուղարը։— Այ քեզ բան։ Շատ անհավանական է։

— Մի՞թե ուզում եք ասել, որ կռահում եք, թե որտեղ է Ռալֆ Փեյթընը,— թերահավատորեն հարցրի ես։

— Դուք դա կռահել եք կոչում, իսկ ես՝ իմանալ, բարեկամս։

— Քրանչեսթրո՞ւմ է,— համարձակվեցի հարցնել։

— Ո՛չ,— պատասխանեց Պուարոն,— Քրանչեսթրում չէ։

Նա լռեց, և ձեռքի մի շարժումով հավաքվածներին առաջարկեց նստել։ Որից հետո դուրը կրկին բացվեց և երկու այլ մարդ ներս մտան ու նստեցին դռան մոտ։ Փարքըրն ու Ըլսուհին էին։

— Բոլորն այստեղ են,— գոհունակությամբ ասաց Պուարոն, և ես նկատեցի, թե ինչպես անհանգստության արտահայտություն երևաց բոլորի դեմքին։ Այդ ամենը մի տեսակ ծուղակ էր հիշեցնում, որից ելք չկար։

Պուարոն լուրջ տեսքով կարդաց ցուցակում նշված անունները.

— Միսիս Աքրոյդ, միսս Ֆլորա Աքրոյդ, մայոր Բլանթ, միստր Ջեոֆրի Ռայմոնդ, միսիս Ռալֆ Փեյթըն, Ջոն Փարքըր, էլիզաբեթ Ռասել։

Նա թուղթը դրեց սեղանին։

— Ի՞նչ է նշանակում այս ամենը,— ասաց Ռայմոնդը։

— Ցուցակը, որ հենց նոր կարդացի,— ասաց Պուարոն,— կասկածելի մարդկանց ցուցակն է։ Ներկաներից յուրաքանչյուրը հնարավորություն ուներ սպանելու միստր Աքրոյդին։

Միսիս Աքրոյդը, ճիչ արձակելով, վեր թռավ տեղից։

— Ինձ դուր չի գալիս այս ամենը,— ողբաձայն ասաց նա,— դուր չի գալիս։ Ես կնախընտրեի տուն գնալ։

— Տուն չեք կարող գնալ, տիկին,— խիստ ասաց Պուարոն,— մինչև որ չլսեք ինչ որ ասելու եմ։

Նա մի պահ լռեց, հետո, կոկորդը մաքրելով, շարունակեց.

— Սկսենք սկզբից։ Երբ միսս Աքրոյդը խնդրեց ինձ հետաքննել այդ գործը, բժիշկ Շեփարդի հետ գնացինք Ֆերընլի փարք։ Նրա հետ քայլեցինք սանդղավանդի երկարությամբ, որտեղ ինձ ցույց տվեցին լուսամուտի գոգի ոտնահետքերը։ Այնտեղ տեսուչ Ռագլանը ուղեկցեց ինձ մի արահետով, որը տանում է ծառուղի։ Ուշադրություն գրավեց մի փոքրիկ տաղավար և ես մանրամասն ուսումնասիրեցի այն։ Երկու բան գտա. օլայած բատխատի մի կտոր ու մեջը դատարկ սագի մի փետրաձողիկ։ Բատխատի կտորն ինձ իսկույն հիշեցրեց սպասուհու գոգնոց։ Երբ Ռագլանը ցույց տվեց ինձ տան անդամների ցուցակը, իսկույն գլխի ընկա, որ սպասուհիներից մեկը՝ Ուրսուլա Բորնը իսկական ալիբի չունի։ Ըստ նրա պատմածի, ժամը հինն անց կեսից մինչև տասը նա եղել է ննջասենյակում։ Բայց, ենթադրենք, որ նա, ընդհակառակը, այդ ժամին եղել է տաղավարում։ Եթե այդպես է, ուրեմն նա պիտի գնացած լիներ այնտեղ հանդիպելու ինչ-որ մեկին։ Իսկ բժիշկ Շեփարդի տվյալներով գիտենք, որ այն գիշեր դրսից ինչ-որ մեկն է մտեցել տանը, մի անծանոթ, որին նա հանդիպել է հենց դարպասների մոտ։ Առաջին հայացքից թվում է, թե մեր խնդիրը լուծված է, այսինքն՝ անծանոթը գնացել է տաղավար՝ հանդիպելու Ուրսուլա Բորնին։ Միանգամայն անտարակուսելի է, որ նա գնացել է այնտեղ, դրա ապացույցը սագի փետուրն է։ Դա իսկույն հուշեց ինձ, որ թմրամոլ է եղել մի անձնավորություն, որն այդ սովորությունը ձեռք է բերել Ատլանտյան օվկիանոսի մյուս կողմում, որտեղ կոկաին շնչելն ավելի տարածված է, քան այս երկ-

րում։ Այդ մարդը, որին հանդիպել է բժիշկ Շեփարդը, խոսել է ամերիկյան առոգանությամբ, որ համապատասխանում է այդ ենթադրությանը։ Բայց այստեղ ես նկատեցի, որ ժամանակը չէր համապատասխանում։ Ուրսուլա Բորնը, անկասկած, չէր կարող գնալ տաղավար ինն անց կեսից առաջ, մինչդեռ այդ մարդը պետք է, որ այնտեղ հասած լիներ ինն անց մի քանի րոպեին։ Իհարկե, ես կարող էի ենթադրել, որ նա կես ժամ սպասել էր այնտեղ։ Մյուս կողմից, շատ հավանական է, որ այդ երեկո հանդիպում էր կայացել տաղավարում։ Երբ հանգեցի այդ եզրակացությանը, իսկույն ուշադրություն դարձրի մի քանի նշանակալից փաստերի վրա. միսս Ռասելը, տնտեսուհին, առավոտյան այցելել էր բժիշկ Շեփարդին և հետաքրքրություն էր ցուցաբերել թմրամոլությունից բուժվելու հնարավորությունների նկատմամբ։ Ընկատի ունենալով դա և սագի փետրածողիկը, եկա այն եզրակացության, որ այդ անձնավորությունը եկել էր հանդիպելու տնտեսուհուն, ոչ թե Ուրսուլա Բորնին։ Այդ դեպքում ո՞վ էր եկել ժամադրավայր հանդիպելու Ուրսուլա Բորնին։ Կասկածներս շուտով փարատվեցին։ Նախ՝ ես գտա մի մատանի, ամուսնական մատանի, «Ռ-ից» մակագրությամբ։ Հետո իմացա, որ Ռալֆ Փեյթընին տեսել էին տաղավար տանող արահետով գնալիս, ինն անց քսանհինգ րոպեին։ Ով վերջապես լսեցի որոշակի մի խոսակցության մասին, որ տեղի էր ունեցել գյուղամերձ անտառում այդ նույն կեսօրին Ռալֆ Փեյթընի և անհայտ մի աղջկա միջև։ Այսպիսով ես իմի բերեցի բոլոր փաստերը. գաղտնի ամուսնություն, ողբերգության օրը հայտարարված նշանադրություն, բուռն խոսակցություն անտառում, և այդ գիշեր տաղավարում նշանակված հանդիպում։ Այդ հանգամանքը մի բան պարզեց ինձ համար, որ Ռալֆ Փեյթընն ու Ուրսուլա Բորնը (կամ Փեյթընը) հիմնավոր դրդապատճառներ ունեին ցանկանալու միասր Աքրոյդի մահը։ Անսպասելիորեն պարզվեց նաև մի այլ բան. ժամը ինն անց կեսին Ռալֆ Փեյթընը չէր կարող լինել Աքրոյդի աշխատասենյակում։

Այսպիսով մենք մոտենում ենք հանցագործության մի այլ և ամենահետաքրքիր ասպեկտին. ժամը ինն անց կեսին

ո՞վ էր եղել միստր Աքրոյդի աշխատասենյակում. Ռալֆ Փեյթընը չի եղել, քանզի այդ ժամանակ նա եղել է տաղավարում էր կնոջ հետ։ Ոչ էլ Չարլզ Քենթը, որ մինչ այդ հեռացել էր։ Այդ դեպքում՝ ո՞վ է եղել։

Պուարոն հակվեց առաջ ու հաղթականորեն, ասես կրակեց վերջին խոսքերը.

— Ես առաջ քաշեցի իմ ամենախելացի, ամենահանդուգն հարցը. իսկ ընդհանրապես մարդ եղե՞լ էր նրա մոտ։

Հետո Պուարոն ետ քաշվեց մի մարդու տեսքով, որ տվել էր վճռական հարվածը։

Սակայն դա հավանաբար այնքան էլ չազդեց Ռայմոնդի վրա։

— Չեմ հասկանում, մի՞թե աշխատում եք ապացուցել, որ ես սատկոս եմ,— մեղմ բողոքեց նա,— բայց միայն իմ վկայությամբ չի որոշվում։ Մի մոռացեք, որ մայոր Բլանթն էլ էր լսել միստր Աքրոյդի խոսակցությունը հինչ- որ մեկի հետ։ Նա սանդղավանդին է եղել և պարզ չի լսել բառերը, բայց ձայները որոշակիորեն լսել է։

Պուարոն գլխով արեց։

— Ես չեմ մոռացել,— հանգիստ ասաց նա։— Բայց մայոր Բլանթն այն տպավորությունն ուներ, որ ձեզ հետ էր խոսել միստր Աքրոյդը։

Մի պահ թվաց, թե Ռայմոնդը շփոթվեց։ Բայց նա կրկին հավաքեց իրեն։

— Բլանթը հիմա համոզված է, որ սխալվել է,— ասաց նա։

— Միանգամայն ճիշտ է,— հաստատեց մայորը։

— Այնուամենայնիվ, նա պատճառ ուներ այդպես կարծելու,— ասաց Պուարոն մտախոհ։— Օ՜, ո՛չ,— առարկեց նա, բարձրացնելով ձեռքը։— Ես գիտեմ, թե ինչ եք պատճառաբանելու... բայց դա բավարար չէ։ Պատճառը որևէ այլ տեղ պիտի փնտրենք։ Ես այսպես կբացատրեի. գործում սկըբից ևեթ ինձ խիստ զարմացրեց մի բան. միստր Ռայմոնդի լսած խոսքերի բնույթը։ Ինձ զարմացրեց այն, որ ոչ մեկը չմեկնաբանեց դրանք, ոչ մի տարօրինակ բան չնկատեց դրանում։

Նա մի պահ լռեց, ապա հանդիսատ վկայակոչեց այդ խոսքերը. «Վերջերս այնքան հաճախ են դրամ խնդրում ինձնից, որ հնարավոր չէ բավարարել ձեր խնդրանքը»։ Ոչ մի տարօրինակ բան չե՞ք տեսնում այդ խոսքերում։

— Ամենևին,— ասաց Ռայմոնդը։— Նա հաճախ էր թելադրում ինձ նամակներ, օգտագործելով ճիշտ նույն բառերը։

— Հիրավի՞,— գոչեց Պուարոն։— Հենց այդ բանին էլ ուզում եմ հասնել։ Որևէ մեկը կօգտագործե՞ր այդ բառերը ուրիշի հետ խոսելիս։ Անհնարին է, որ դա եղել է իրական խոսակցության մի մասը։ Ուստի, եթե նա նամակ է թելադրելիս եղել...

— Ուզում եք ասել, որ նա բարձրաձայն նամա՞կ է կարդացել,— հանդիսատ ասաց Ռայմոնդը։— Եթե նույնիսկ այդպես է եղել, ապա նա կարդացած պիտի լիներ ինչ-որ մեկի...

— Բայց ինչո՞ւ։ Մենք ոչ մի փաստ չունենք, որ նրանից բացի ինչ-որ մեկն էլ է եղել սենյակում։ Հիշեք. բացի միստր Աքրոյդի ձայնից, ուրիշ ձայն չի լսվել։

— Իհարկե այդ տիպի նամակ մարդ բարձրաձայն չէր կարդա իր համար, եթե խելքը չէր թոցրել։

— Բոլորդ էլ մոռացել եք մի բան. այն անծանոթին, որ եկել էր նախորդ շաբաթ։

Բոլորը զարմացած նայեցին նրան։

— Այո՛, շաբաթ։ Այդ անծանոթ երիտասարդը կարեվորություն չէր ներկայացնում իրենից, բայց ֆիրման, որի ներկայացուցիչն էր նա, շատ հետաքրքրեց ինձ։

— Դիկտոֆոններ արտադրող ընկերությո՞ւնը,— զարմանքով ասաց Ռայմոնդը։— Հիմա հասկանում եմ։ Դիկտոֆոնը, ահա թե ինչի մասին է խոսքը։

Պուարոն գլխով արեց։

— Որքան հիշում եք, Աքրոյդը խոստացել էր մի դիկտոֆոն գնել։ Նա հետաքրքրվեցի, և ընկերությունում ինձ ասացին, որ միստր Աքրոյդը դիկտոֆոն գնել է իրենց ներկայացուցչից։ Իսկ ինչու էր դա թաքցրել ձեզնից, չգիտեմ։

— Երևի ուզում էր զարմացնել ինձ,— քրթմնջաց Ռայմոնդը։— Նա իսկական տղայական հակում ուներ զարմացնելու մարդկանց։ Ուզում էր որոշ ժամանակ պահել իր

մոտ։ Շատ հավանական է, որ խաղում էր դրանով, ինչպես նոր խաղալիքով։ Այո՛, դա համապատասխանում է իրականությանը։ Միանգամայն իրավացի եք, ոչ ոք հենց նույն բառերը չէր օգտագործի պատահական խոսակցության ժամանակ։

— Դա նույնպես վկայում է այն մասին, թե ինչու մայոր Բլանթին թվաց, որ դուք էիք աշխատասենյակում։ Խոսքի այդպիսի պատառիկները, որ հասել էին նրան, թելադրանքի հետևանք էին, և ենթադիտակցաբար նրան թվացել էր, որ ձեզ էին թելադրում։ Առավել ևս, որ նրա միտքը զբաղված էր բոլորովին այլ բանով, այն սպիտակ ֆիգուրայով, որ մի պահ երևացել էր իրենն։ Եվ նրան թվացել էր, որ դա միսս Աքրոյդն էր, թեև իրականում Ուրսուլա Բորնի սպիտակ գոգնոցն էր տեսել։

— Այնուամենայնիվ,— նկատեց Ռայմոնդը սթափվելով,— ձեր պարզաբանումը, որքան էլ այն փայլուն լինի (համոզված եմ, որ երբեք մտքովս չէր անցնի), ոչինչ չի փոխում։ Ժամ ինն անց կեսին միստր Աքրոյդը ողջ էր, քանզի այդ ժամանակ խոսելիս է եղել դիկտոֆոնով։ Պարզ երևում է, որ Չարլզ Քենթը մինչ այդ հեռացել էր տնից։ Իսկ ինչ վերաբերում է Ռալֆ Փեյթընին...

Նա մի պահ վարանեց, հայացքը հառելով Ուրսուլային։

Վրդովմունքից Ուրսուլայի դեմքը շառագունեց, բայց բավական հանգիստ պատասխանեց.

— Մենք բաժանվեցինք նախքան ինն անց քառասունհինգը։ Ռալֆը երբեք տանը չի մտեցել, ես համոզված եմ դրանում։ Եվ մտադրություն էլ չի ունեցել։ Նա բոլորովին էլ չէր ուզում տեսնել իր խորթ հորը, շատ էր վախենում։

— Ոչ մի կասկած չունեմ ձեր ասածների նկատմամբ,— ասաց Ռայմոնդը։— Միշտ էլ միանգամայն համոզված եմ եղել, որ Ռալֆն անմեղ է։ Բայց օրենքի մասին էլ պետք է մտածել, և այն հարցերի, որ տրվելու են դատարանում։ Նա գտնվում է ամենաանբարենպաստ վիճակում, բայց եթե երևար...

— Այդպե՞ս եք կարծում, այո՞,— նրա խոսքն ընդհատեց Պուարոն։— Գտնում եք, որ լավ կլիներ ներկայանա՞ր։

— Հարկավ, եթե գիտեք, թե որտեղ է նա։

— Ջգում եմ, որ չեք հավատում, որ ես գիտեմ, թեև քիչ առաջ ասացի, որ ամեն ինչ գիտեմ։ Գիտեմ, թե ով է զանգահարել հեռախոսով, ում ոտնահետքերն են պատուհանի գոգին, որտեղ է թաքնվել Ռալֆ Փեյթընը...

— Որտե՞ղ է նա,— կտրուկ հարցրեց Բլանթը։

— Այնքան էլ հեռու չէ այստեղից,— ժպտալով ասաց Պուարոն։

— Քրանչեսթրո՞ւմ է,— հարցրի ես։

Պուարոն շրջվեց իմ կողմը։

— Միշտ էլ նույն հարցն եք տալիս ինձ։ Քրանչեսթրը հավանաբար դարձել է ձեր սևեռուն գաղափարը։ Ոչ, Քրանչեսթրում չէ, այստեղ է։

Նա դրամատիկ մի շարժումով մատնացույց արեց դուրը։ Բոլորը գլուխները շրջեցին այդ կողմը։

Ռալֆ Փեյթընը կանգնած էր դռան շեմքին։

Գլուխ 24

ՌԱԼՖ ՓԵՅԹԸՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Շատ անհարմար պահ էր ինձ համար։ Ես գրեթե չհասկացա, թե ինչ կատարվեց հետո, չնայած զարմանքի բացականչություններին ու ճիչերին։ Երբ բավական տիրապետեցի ինձ հասկանալու համար, թե ինչ էր կատարվում, Ռալֆ Փեյթընն արդեն կանգնած էր կնոջ կողքին, նրա ձեռքը բռնած, և սենյակի մյուս ծայրից ժպտում էր ինձ։

Պուարոն ևս ժպտում էր, միաժամանակ մատը պերճախոս կերպով թափ տալով վրաս։

— Մի՞թե բազմից ձեմ ասել ձեզ, որ անօգուտ է ինչ-որ բան թաքցնել Հերքյուլ Պուարոյից,— ասաց նա,— որ նման դեպքում նա պարզում է ամեն ինչ։

Հետո դիմեց մյուսներին.

— Հիշում եք, թե ինչպես մի անգամ փոքրիկ մի խորհրդակցություն անցկացրինք, հենց վեց հոգով։ Ներկաներից հինգին մեղադրեցի, թե ինչ-որ բան են թաքցնում։ Նրանցից

չորսը հայտարարեցին իրենց գաղտնիքը։ Բժիշկ Շեփարդը՝ ոչ։ Բայց ամբողջ ժամանակ ես կասկածում էի։ Այն գիշեր բժիշկ Շեփարդը գնաց «Երեք վարազներ», հույս ունենալով, որ կգտնի Ռալֆին։ Բայց այնտեղ չգտավ։ Ինքս ինձ ասացի՝ միգուցե տուն վերադառնալիս փողոցո՞ւմ հանդիպեց նրան։ Բժիշկ Շեփարդը կապիտան Փեյթընի բարեկամն էր, և եկել էր ուղղակի հանցագործության վայրից։ Նա գիտեր, որ փաստերը նրա դեմ են։ Թերևս ավելին գիտեր, քան մյուսները։

— Այո՛,— ասացի ես,— ինձ թվում է ամեն ինչ պետք է խոստովանեմ։ Ռալֆին հանդիպեցի կեսօրին։ Սկզբում չէր ուզում վստահել ինձ, բայց հետո պատմեց իր ամուսնության ու այն վիճակի մասին, որի մեջ ընկել էր։ Երբ բացահայտվեց սպանությունը, ես իսկույն հասկացա մի բան. հենց որ փաստերը հայտնի դառնան, կասկածանքի կենթարկվի կամ Ռալֆը, կամ էլ այն աղջիկը, որին նա սիրում է։ Երեկոյան նրան ասացի այդ նկատառումները։ Եվ այն միտքը, որ վկայություն տալով կասկածանքի կարող է ենթարկել կնոջը, հարկադրեց նրան...

Ես ընդհատեցի խոսքս, Ռալֆն իմ փոխարեն ավարտեց այն։

— Ջքվել,— կտրուկ ասաց նա։— Հասկանում եք, բաժանվելով ինձնից, Ուրսուլան վերադարձավ տուն։ Մտքովս անցավ, որ նա կարող էր մի անգամ էլ հանդիպել հորս։ Կեսօրին հայրս շատ վիրավորական էր պահել իրեն, և ես մտածեցի, չէ որ նա կարող էր այնպիսի վիճակի հասցնել աղջկան, որ առանց գիտակցելու, թե ինչ է անում Ուրսուլան...

Ռալֆը լռեց։ Ուրսուլան քաշեց ձեռքը և թափով ետ գնաց։

— Եվ դու այդպիսի բան մտածեցիր, Ռալֆ։ Դու իրո՞ք մտածեցիր, որ ես կարող էի սպանել նրան։

— Անդրադառնանք բժիշկ Շեփարդի հանցավոր վարքագծին,— չոր տոնով ասաց Պուարոն։— Բժիշկ Շեփարդը համաձայնվեց հնարավորին չափ օգնել նրան։ Եվ նրան հաջողվեց կապիտան Փեյթընին թաքցնել ոստիկանությունից։

— Որտե՞ղ, իր տա՞նը,— հարցրեց Ռայմոնդը։

— Իհարկե ոչ,— ասաց Պուարոն։— Նույն հարցը ձեզ

պետք է տայիք, ինչպես ես՝ ինձ. եթե հարցելի բժիշկը ուզում էր թաքցնել երիտասարդին, ի՞նչ տեղ պիտի ընտրեր։ Դա անպայման մոտակայքում պետք է լիներ։ Մտքովս անցավ Քրանչեսթրը։ Հյուրանոցո՞ւմ։ Ո՛չ։ Բնակարանո՞ւմ։ Առավել ևս ոչ։ Իսկ որտե՞ղ։ Մասնավոր հիվանդանոցում։ Տկարամիտների հիվանդանոցում։ Ես ստուգեցի իմ տեսակետը։ Հնարեցի հոգեկան խանգարում ունեցող եղբորորդուս վերաբերյալ մի պատմություն, խորհրդակցեցի մադմուազել Շեփարդի հետ՝ նպատակահարմար մի նման հաստատություն գտնելու մասին։ Նա տվեց ինձ Քրանչեսթրին մոտ գտնվող երկու հիվանդանոցների հասցեները, ուր եղբայրն ուղարկում էր իր հիվանդներին։ Տեղեկություններ հավաքեցի։ Պարզվեց, որ դրանցից մեկում շաբաթ օրը վաղ առավոտյան մի հիվանդ է տեղավորել բժիշկը։ Թեև այդ հիվանդը ուրիշ անուն ուներ, դժվար չէր պարզել, որ դա ինքը՝ կապիտան Փեյթընն էր։ Որոշ անհրաժեշտ ձևականություններից հետո, ինձ թույլ տվեցին գուրս բերել նրան։ Երեկ վաղ առավոտյան նա եկավ այստեղ։

Ես տխուր նայեցի նրան։

— Կարոլինի «Ներքին գործերի մինիստրության» փոխձագետը,— մրմնջացի ես։— Երբեք մտքովս չանցավ։

— Այժմ հասկանո՞ւմ եք, թե ինչու ձեր ուշադրությունը հրավիրեցի ձեր ձեռագրի զապվածության վրա,— շշնջաց Պուարոն։— Այն խիստ ճշմարտացի էր, բայց դա բավական չէ, բարեկամս։

Այնքան էի շփոթվել, որ չառարկեցի։

— Բժիշկ Շեփարդն իրեն դրսևորեց որպես իսկական ընկեր,— ասաց Ռալֆը։— Դժբախտության պահին չլքեց ինձ, վարվեց այնպես, ինչպես խիղճը թելադրեց նրան։ Սակայն մայր Պուարոն ապացուցեց, որ նա ճիշտ չի վարվել։ Ես պետք է ներկայանայի, ոչ թե թաքնվեի։ Սակայն հիվանդանոցում ոչ մի թերթ չէինք ստանում, և ես չգիտեի, թե ինչ է կատարվում։

— Բժիշկ Շեփարդն այդ հարցում էլ դրսևորեց իրեն որպես զապվածության մարմնացում,— չոր տոնով ասաց Պուարոն,— իսկ ես հասկանում եմ ամենափոքրիկ զաղտնիքները։ Իմ մասնագիտությունն է դա։ Դա իմ գործն է։

— Հիմա կարո՞ղ ենք իմանալ, թե ինչ պատահեց ձեզ այն գիշեր,— անհամբեր ասաց Ռայմոնդը։

— Ձեզ արդեն հայտնի է ամեն ինչ,— ասաց Ռալֆը։— Ավելացնելու քիչ բան ունեմ։ Տաղավարից հեռացա մոտ ինն անց քառասունհինգին, թափառեցի արահետներով, աշխատելով հավաքել մտքերս ու որոշել, թե ինչ եմ անելու։ Համոզված եմ, որ ոչ մի ալիբի չունեմ, բայց երդվում եմ, որ երբեք աշխատասենյակին չեմ մոտեցել և երբեք չեմ տեսել խորթ հորս, ո՛չ ողջ, ո՛չ էլ մեռած։ Շատ կուզենայի, որ հավատայիք ինձ։

— Ոչ մի ալիբի,— շշնջաց Ռայմոնդը։— Վատ է։ Ես իմ գարկե՛ն, հավատում եմ ձեզ, բայց և այնպես գործերը վատ են։

— Թեև ամեն ինչ պարզ է,— զվարթ տոնով ասաց Պուարոն։— Շատ պարզ է։

Բոլորս հայացքներս հառեցինք նրան։

— Հասկանո՞ւմ եք, թե ինչ նկատի ունեմ։ Ո՞չ։ Հենց այն, որ կապիտան Փեյթընին փրկելու համար իսկական հանցագործը պետք է խոստովանի։— Նա ժպտալով նայեց բոլորիս։— Ես գիտեմ, թե ինչ եմ ասում։ Ինչպես տեսնում եք, Ռագլանին չեմ հրավիրել նիրկա գոնվելու։ Եվ դա իր պատճառն ունի։ Չէի ուզում ասել նրան այն ամենն, ինչ գիտեմ, համենայն դեպս՝ այս երեկո։

Նա հակվեց առաջ, և անսպասելիորեն ամբողջովին փոխվեց, դարձավ ապառնալից։

— Ես գի՛տեմ, որ միստր Աբրոյդին սպանողն այստեղ է, այս սենյակում։ Ես դիմում եմ հանցագործին։ Վաղն առավոտյան տեսուչ Ռագլանը կիմանա ճշմարտությունը։ Հասկանալի՞ է։

Տիրեց լարված լռություն։ Քիչ անց ներս մտավ բրեստցի տարեց կինը՝ մատուցարանին մի հեռագիր։ Պուարոն բացեց այն։ Այդ պահին լսվեց մայոր Բլանթի հնչեղ ձայնը.

— Ասում եք, թե հանցագործը մե՞ր մեջ է։ Իսկ գիտե՞ք, թե ով է։

Հեռագիրը կարդալուց հետո Պուարոն ճմրթեց այն։

— Հիմա գիտեմ,— պատասխանեց Պուարոն, թեթևակի խփելով ճմրթված թղթին։

— Ի՞նչ լուր է,— հարցրեց Ռայմոնդը։

— Ռադիոգրամա Միացյալ Նահանգներ ուղևորված շոգենավից։

Տիրեց քար լռություն։ Պուարոն վեր կացավ տեղից և գլուխ տալով ասաց.

— Պարոնայք և տիկնայք, մեր հավաքույթն ավարտված է։ Հիշեցե՛ք. վաղն առավոտյան տեսուչ Ռագլանը կիմանա ճշմարտությունը։

Գլուխ 25

ԱՄԲՈՂՋ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռքի թեթևակի մի շարժումով Պուարոն պարտադրեց ինձ մնալ։ Ննջարկվեցի և, մոտենալով բուխարու կրակին, կոշիկիս ծայրով մտախոհ խառնեցի խոշոր կոճղերը։

Տարակուսանքի մեջ էի։ Առաջին անգամ էր, որ բացարձակապես չէի հասկանում Պուարոյի մտադրությունը։ Մի պահ տարվեցի այն մտքով, թե քիչ առաջ ներկայացված տեսարանը շինծու էր, ինչպես ինքն էր ասում, «կատակերգություն», որ նա սարքել էր, մտադրություն ունենալով հետաքրքրական ու նշանակալից դարձնել իրենն։ Բայց, ինձնից անկախ, մտածեցի, որ այնուամենայնիվ ինչ-որ ռեալ բան կար թաքնված դրա տակ։ Թեև իսկական սպառնալիք, որոշակի ու անառարկելի անկեղծություն էր զգացվել նրա խոսքերում, բայց և այնպես դեռ չէի կարողանում հավատալ, որ իրոք ճիշտ ճանապարհի վրա է։

Երբ դուռը փակվեց հյուրերից վերջինի ետևից, Պուարոն մոտեցավ բուխարուն։

— Դե՛, բարեկամս,— հանգիստ ասաց նա,— ի՞նչ կարծիքի եք այս ամենի մասին։

— Չգիտեմ ինչ ասել,— անկեղծորեն խոստովանեցի ես։— Ձեր նպատակն ի՞նչ էր։ Մեղսագործին վարպետորեն նախազգուշացնելու փոխարեն ինչո՞ւ ուղղակի չգնացիք տեսուչ Ռագլանի մոտ՝ ճշմարտությունը հայտնելու։

Պուարոն նստեց և հանեց իր ծխախոտատուփը։ Որոշ ժամանակ լուռ ծխեց, հետո ասաց.

— Օգտվեք ձեր գորշավուն փոքրիկ բջիջներից։ Իմ գործողությունները միշտ էլ նպատակ են հետապնդում։

Մի պահ վարանեցի, ապա դանդաղ ասացի.

— Նախ մտածում եմ, որ ինքներդ էլ չգիտեք, թե ով է հանցագործը, բայց համոզված եք, որ այստեղ հավաքվածների մեջ պետք է փնտրել։ Այդ իսկ պատճառով էլ ձեր խոսքերով ուզում էիք անհայտ հանցագործին ստիպել, որ խոստովանի։

Պուարոն գլխով հավանության մի շարժում արեց։

— Խելացի միտք է, բայց ոչ ճիշտ։

— Կամ էլ ուզում էիք համոզել նրան, որ ամեն ինչ հայտնի է ձեզ, և դրանով ստիպել, որ խոստովանի։ Նա կարող է փորձել լռեցնել ձեզ, ինչպես՝ միստր Աբրոյդին, քանի դեռ չեք սկսել գործել։

— Որոգա՞յթ, ես էլ որպես խա՞յծ։ Շնորհակալ եմ, բարեկամս։ Բայց ես այնքան քաջություն չունեմ վտանգի ենթարկելու ինձ։

— Այդ դեպքում չեմ հասկանում ձեզ։ Հանցագործին նախազգուշացնելով՝ վտանգի եք ենթարկում ձեր կյանքը, թույլ եք տալիս նրան խուսափելու պատժից։

— Նա չի կարող խուսափել,— լուրջ տոնով ասաց Պուարոն։— Նա միայն մի ելք ունի, բայց դա փրկության ճանապարհը չէ։

— Եվ դուք իրո՞ք գտնում եք, որ այստեղ հավաքվածներից մեկը մարդասպան է,— թերահավատորեն հարցրի ես։

— Այո՛, բարեկամս։

— Ո՞վ է։

Մի քանի րոպե լռություն տիրեց։ Հետո, սիգարետի մնացուկը նետելով կրակը, Պուարոն հանգիստ ու մտախոհ տոնով ասաց.

— Ես ձեզ կառաջնորդեմ այն ուղով, որով անցել եմ։ Քայլ առ քայլ կհետևեք ինձ և ինքներդ կհամոզվեք, որ բոլոր փաստերը անառարկելիորեն նշում են մեկին։ Սկզբից ևեթ իմ ուշադրությունը գրավեցին երկու փաստեր և ժամա-

Նակի փոքրիկ մի տարբերություն։ Առաջին փաստը հեռախոսազանգն էր։ Բեթե Ռալֆ Փեյթընն էր հանցագործը, այդ դեպքում հեռախոսազանգը անիմաստ ու անհեթեթ էր դառնում, հետևաբար, որոշեցի ես, նա չէր մարդասպանը։

Համոզվեցի նաև, որ այդ ճակատագրական երեկոյին տանը գտնվողներից ոչ մեկը չէր կարող զանգահարել, թեև միաժամանակ վստահ էի, որ նրանց շրջանում պետք է փնտրեի ոճրագործին։ Ուրեմն զանգահարել էր ոմն մեղսակից։ Այդ եզրակացությունը այնքան էլ չգոհացրեց ինձ, բայց ժամանակավորապես կանգ առա դրա վրա։ Հետո սկսեցի փնտրել հեռախոսազանգի դրդապատճառը։ Իսկ դա այնքան էլ հեշտ չէր գտնել։ Ես կարող էի հիմք ընդունել միայն հեռախոսազանգի նպատակը։ Իսկ նպատակը հետևյալն էր. որպեսզի սպանությունը բացահայտվեր հենց նույն երեկոյան, ոչ թե հաջորդ առավոտյան, ինչպես, ըստ երևույթին, պիտի որ լիներ։ Ճիշտ չէ, ի՞նչ եք կարծում։

— Թերևս,— համաձայնվեցի ես փոքր-ինչ տարակուսելով,— միստր Աքրոյդի կարգադրությունից հետո հազիվ թե որևէ մեկը ներս մտներ մինչև առավոտ։

— Très bien[1]. *գործը տեղից շարժվում է, այնպես չէ՞, թեև շատ բան դեռ մնում է մութ։ Ինչո՞ւ էր պետք եկել, որ հանցագործությունը բացահայտվեր ոչ թե հաջորդ առավոտյան, այլ այդ երեկոյան։ Այդ հարցին միայն մի պատասխան կարելի է տալ. անհրաժեշտ էր, որ հանցագործը տեղում լիներ, երբ կոտրեին դուռը կամ էլ՝ աշխատասենյակ մտներ գոնե դրանից անմիջապես հետո։ Իսկ հիմա դառնանք երկրորդ փաստին՝ պատից հետու քաշված բազկաթոռին։ Տեսուչ Ռագլանն անտեսեց այդ փաստը, դատարկ բան համարելով դա, իսկ ես, ընդհակառակը, գտա, որ շատ կարևոր փաստ էր։ Եթե հիմա ձեր ձեռքի տակ լիներ աշխատասենյակի պլանը, որ այդքան ճշգրտորեն գծել եք ձեր ձեռագրում, կտեսնեինք, որ Փարքըրի նշած դիրքով դրված բազկաթոռը գտնվում էր ուղիղ դռան ու լուսամուտի միջև։*

— *Լուսամուտի՞,— ակամա հարցրի ես։*

---

1 *Շատ լավ (Ֆր.)։*

— Այո՛, սկզբում իմ մտքով էլ անցավ, բայց իսկույն հրաժարվեցի դրանից, չէ որ թեև այդ բազկաթոռը բարձր թիկնակ ունի, բայց ծածկում է լուսամուտի միայն ներքևի մասը։ Սակայն մի մոռացեք, բարեկամս, որ հենց լուսամուտի առջև դրված է կլոր սեղան՝ վրան գրքեր ու ամսագրեր։ Այ այդ սեղանն էլ ծածկում էր բազկաթոռը, որը և իսկույն կասկած առաջացրեց իմ մեջ։

Ենթադրենք, որ այդ սեղանին եղել էր մի բան, որ չպետք է տեսնեին։ Մի բան, որ մարդասպանն էր դրել այնտեղ։ Նա դեռ ոչ մի պատկերացում չունեի, թե ինչ կարող էր դա լինել։ Բայց շատ հետաքրքիր փաստեր գիտեի դրա մասին։ Օրինակ, մարդասպանը չէր կարողացել իր հետ վերցնել այն, հանցանքը գործելուց անմիջապես հետո, և միաժամանակ անհրաժեշտ էր, որ հնարավորին չափ շուտ վերացվեր այդ «ինչ-որ» բանը, հենց որ հանցագործությունը բացահայտվեր։ Եվ ահա եղավ հեռախոսազանգը, որը հնարավորություն տվեց մարդասպանին տեղում լինել ճիշտ ժամանակին։

Այնուհետև. մինչև ոստիկանության ժամանելը, հանցանքի վայրում գտնվում էին չորս հոգի. դուք, Փարքըրը, մայրը Բլանթն ու Ռայմոնդը։ Փարքըրին իսկույն բացառեցի, քանի որ անկախ հանցագործությունը բացահայտելու ժամանակից, միակ մարդն էր, որ ամենայն հավանականությամբ եղել էր գործողության վայրում։ Բացի այդ, նա էր, որ ասաց ինձ բազկաթոռը տեղից շարժելու մասին։ Ուստի, Փարքըրը մնում էր կասկածից դուրս, չնայած դեռ մտածում էի՝ հնարավոր է, որ նա էր շանտաժի ենթարկում միսիս Ֆերարին։ Ռայմոնդն ու Բլանթը մնում էին կասկածի տակ, քանզի, եթե սպասուհին առավոտ վաղ գտներ դիակը, երկուսն էլ կարող է չհաջողվեին սեղանի վրա գտնվող իրը թաքցնել։

Ուստի ի՞նչ առարկա էր դա։ Դուք լսեցի՞ք, թե ինչ բացատրություն տվեցի սանդղավանդ հասած խոսակցության։ Միայն ես գիտեի, որ դիկտոֆոններ արտադրող ընկերության ներկայացուցիչ է հրավիրվել, և դիկտոֆոնի գաղափարը արմատավորվեց ուղեղումս։ Լսեցիք չէ՞, թե ինչ ասացի այս սենյակում մոտ կես ժամ առաջ։ Բոլորն էլ համաձայնվեցին իմ տեսակետի հետ, բայց մի շատ կարևոր փաստ թերևս

սպրդեց նրանցից։ Ընդունելով, որ այդ երեկո միստր Աքրոյդը դիկտոֆոն է օգտագործել, ոչ մեկի մտքով չանցավ, թե ինչո՞ւ դիկտոֆոնը չգտնվեց։

— Երբեք չեմ մտածել այդ մասին,— ասացի ես։

— Մեզ հիմա հայտնի է, որ միստր Աքրոյդը դիկտոֆոն է գնել։ Բայց և ոչ մի դիկտոֆոն չգտնվեց նրա իրերի մեջ։ Այսպիսով, եթե որևէ բան էին վերցրել սեղանից, ինչո՞ւ դիկտոֆոնը չպիտի լիներ։ Բայց որոշակի խոչընդոտներ կային այդ հանգամանքը պարզելու ճանապարհին։ Բոլորի ուշադրությունն, իհարկե, բևեռված էր սպանվածի վրա։ Ինձ թվում է, սենյակում գտնվողներից աննկատ ինչ-որ մեկը կարող էր մոտենալ սեղանին։ Բայց դիկտոֆոնը որոշակի ծավալ ունի, այն հնարավոր չէ խոթել գրպանը։ Ինչ-որ տուփ կամ պարկ էր պետք այն տեղավորելու համար։

Տեսնո՞ւմ եք, ինչին եմ մտենում։ Մարդասպանի պատկերը որոշակի է դառնում։ Մի անձնավորություն, որ անմիջապես գործողության վայրում է եղել, բայց կարող էր չինել, եթե հանցագործությունը բացահայտվեր հաջորդ առավոտյան։ Մի անձնավորություն, որն իր հետ ուներ մի պայուսակ, որտեղ կարելի էր տեղավորել դիկտոֆոնը...

Ես ընդհատեցի նրան.

— Բայց ինչո՞ւ պիտի պարտակեր դիկտոֆոնը։ Նպատակն ի՞նչ էր։

— Դուք նման եք Ռայմոնդին։ Անտարակելի եք համարում, որ ժամը ինն անց կեսին դիկտոֆոնով խոսողը միստր Աքրոյդն է եղել, որ նրա ձայնն են լսել։ Բայց մի պահ հաշվի առեք այսպիսի մի հնարամտություն՝ դուք ձայնագրվում եք, ճի՞շտ է, իսկ հետո քարտուղարը կամ մեքենագրուհին միացնում է դիկտոֆոնը, և նորից լսվում է ձեր ձայնը։

— Ուզում եք ասել...

— Այո՛, ուզում եմ ասել, որ ժամը ինն անց կեսին միստր Աֆրոյդն արդեն մեռած էր։ Այդ դիկտոֆոնի ձայնն էր լսվել, ոչ թե ինքն էր խոսել։

— Եվ մարդասպա՞նն էր միացրել այն։ Հետևաբար, նա այդ պահին սենյակո՞ւմ էր եղել։

— Հավանաբար։ Բայց չի բացառվում ինչ-որ մեխանիկական սարք, ժամանակի կասեցուցիչի, նույնիսկ զարթուցիչի պես մի բան օգտագործելու հավանականությունը։ Բայց այդ դեպքում երևակայական մարդասպանի բնութագրին պետք է ավելացնենք երկու հատկանիշ ևս. նախ՝ նա պիտի իմանար, որ Աքրոյդը դիկտոֆոն է գնել, և հետո՝ անհրաժեշտ գիտելիքներ պիտի ունենար մեխանիկայից։ Այդ բանն իմ մտքով անցավ այն ժամանակ, երբ իմացանք պատուհանի քիվի ոտնահետքերի մասին։ Այստեղ երեք բան բացահայտվեց ինձ համար։ Առաջինը, դրանք իրոք կարող էին լինել Ռալֆ Փեյթընի ոտնահետքերը։ Այդ գիշեր նա եղել էր Ֆերնլիում և գուցե լուսամուտից մտել էր աշխատասենյակ և տեսել Աքրոյդին սպանված։ Մի վարկածը դա էր։ Երկրորդ. հրնարավոր է, որ ոտնահետքերը թողել էր մի այլ անձնավորություն, որի կոշիկների ներբաններին պատահաբար նույն տիպի մեխեր են եղել։ Բայց տան բնակիչներն ունեին կաուչուկե ներբաններով կոշիկներ և չէին հավատում, որ դրսից ինչ-որ մեկը նույն տիպի կոշիկներ կարող էր ունենալ։ Ինչպես «Շուն ու սուրճի» բարի մատուցողուհին ասաց, որ Ջարլզ Քենթի երկարաճիտ կոշիկները մաշված էին։ Երրորդ. այդ ոտնահետքերը դիտավորյալ թողել էր ինչ-որ մեկը՝ նպատակ ունենալով կասկած հարուցել Ռալֆ Փեյթընի նկատմամբ։ Այս վերջին եզրահանգումը ճշտելու համար անհրաժեշտ եղավ ստուգել որոշ փաստեր։ Ռալֆի մի զույգ կոշիկ ոստիկանության գտել էր «երեք վարագներում»։ Այդ երեկո ոչ Ռալֆը, ոչ էլ որևէ մեկը կարող էր հագած լինել դրանք, քանի որ սպասավորի մոտ մաքրման են եղել։ Ըստ ոստիկանության, Ռալֆը հագել է մի այլ զույգ, և ես պարզեցի, որ նա իրոք երկու զույգ է ունեցել։ Որպեսզի ապացուցեի իմ տեսակետը, անհրաժեշտ էր ճշտել, որ այդ երեկո մարդասպանը հագել է Ռալֆի կոշիկները։ Այդ դեպքում Ռալֆը պետք է հագած լիներ ինչ-որ երրորդ մի զույգ։ Չէի կարողանում հավատալ, որ Ռալֆը երեք զույգ միանման կոշիկներ է բերել, երրորդ զույգը շատ հավանական է, որ երկարաճիտ է եղել։ Ձեր քրոջը համոզեցի, որ տեղեկություններ հավաքի այդ մասին, հատկապես շեշտելով կոշիկների գույնը, անկեղծ ասած, որ-

պետքի հարցմանս իրական պատճառը մութ մնաս։ Պարզվեց, որ Ռալֆ Փեյթընը մի գույգ երկարաճիտ կոշիկ էր ունեցել իր հետ։ Ուստի, երեկ առավոտյան, երբ նա ինձ մոտեցավ, առաջին հարցս այն եղավ, թե ինչ կոշիկ էր հագել ճակատագրական գիշերը։ Իսկույն պատասխանեց, որ հագել էր երկարաճիտ կոշիկներ, և ցույց տվեց ոտքերը. հագին հենց նույն կոշիկներն էին, քանի որ հնարավորություն չէր ունեցել փոխել դրանք։

Այսպիսով, մի քայլ էլ կատարեցինք մարդասպանի երկարագիրը ամբողջացնելու գործում, մի մարդ, որ պատեհ առիթ ուներ այդ օրը «Երեք վարազներից» վերցնելու Ռալֆ Փեյթընի կոշիկները։

Նա լռեց մի պահ, հետո ձայնը փոքր-ինչ բարձրացնելով՝ ասաց.

— Մի հարց էլ կա։ Մարդասպանը մի մարդ էր, որ հարմար առիթ ուներ դաշույնը գողանալու սեղանից։ Կարող եք առարկել, թե տան անդամներից յուրաքանչյուրն էլ կարող էր նույն բանն անել, բայց չմոռանաք, որ Ջլորա Աքրոյդը պնդում էր, թե դաշույնն իր տեղում չէր գտել։

Նա կրկին լռեց։

— Եկեք ամփոփենք և ընդունենք, որ ամեն ինչ պարզ է։ Մի մարդ, որ այդ օրը վաղ առավոտյան եղել էր «Երեք վարազներում», մի մարդ, որ լավ էր ճանաչել Աքրոյդին, որպեսզի տեղյակ լիներ, որ նա դիկտոֆոն էր գնել, մի մարդ, ով հասկանում էր մեխանիկայից, ով հարմար առիթ ուներ դաշույնը վերցնելու սեղանից նախքան միսս Ջլորայի գալը, ով համապատասխան մի ջութակարան ուներ իր հետ, ասենք՝ սև պայուսակ, դիկտոֆոնը տեղավորելու համար, և վերջապես մի մարդ, որ մի քանի րոպե մենակ էր մնացել աշխատասենյակում, հանցագործությունը բացահայտելուց հետո, երբ Փարքըրը զանգահարում էր ոստիկանություն։ Այդ մարդը փաստորեն եղել է... բժիշկ Շեփա՛րդը։

Գլուխ 26

ԵՎ ՄԻԱՅՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Մի պահ գերեզմանային լռություն տիրեց։ Հետո, ծիծաղելով, ասացի.

— Դուք խելագարվել եք։

— Ո՛չ,— անվրդով ասաց Պուարոն։— Ես չեմ խելագարվել։ Ժամանակի փոքրիկ տարբերությունն էր, որ սկզբից ևեթ ուշադրություն հրավիրեց ձեզ վրա։

— Ժամանակի տարբերությո՞ւնը,— շփոթվելով հարցրի ես։

— Անշուշտ։ Թերևս հիշում եք, որ բոլորը, ինչպես և դուք, համաձայնեցին, որ հինգ րոպե էր պետք պահատնակից մինչև տուն հասնելու համար, ավելի պակաս, եթե ընտրվեր սանդղավանդ տանող ճանապարհը։ Բայց դուք տնից դուրս եկաք իննին տաս պակաս, ինչպես ասացիք դուք և Փարքերը, բայց և այնպես ժամը իննն էր, երբ անցաք պահատնակի դռնով։ Ցուրտ երեկո էր, ոչ այնպիսին, որ մարդ տրամադրված լիներ հանգիստ թրև գալու։ Ինչո՞ւ հինգը րոպեի ճանապարհն անցաք տասը րոպեում։ Ամբողջ ժամանակ ես մտածում էի, որ միայն դուք էիք պնդում, որ աշխատասենյակի լուսամուտը փակված է եղել։ Աքրոյդը հարցրել էր ձեզ այդ մասին, բայց չէր ստուգել։ Իսկ եթե ենթադրենք, թե աշխատասենյակի լուսամուտը բաց է եղել։ Ժամանակ կունենայի՞ք այդ տասը րոպեում վազելով շրջանցել տունը, փոխել ձեր կոշիկները, լուսամուտից ներս մտնել, սպանել Աքրոյդին և ժամը իննին հասնել պահատնակի մոտ։ Ես հրաժարվեցի այդ վարկածից, քանզի, ամենայն հավանականությամբ, նույնիսկ այն նյարդային վիճակում, որ այդ երեկո գտնվում էր Աքրոյդը, կլսեր, որ մարդ է ներս մտնում, և կպաշտպանվեր։ Այլ բան է, եթե դուք սպանել եք Աքրոյդին մինչև նրա մոտից հեռանալը, երբ կանգնած էիք նրա բազկաթոռի մոտ։ Այդ դեպքում դուրս եք եկել շքամուտքից, վազել տաղավար, պայուսակից հանել եք Ռալֆի կոշիկները, հագել ու քայլել ցեխի միջով։ Հետո, հետքեր թողնելով լու-

սամուտի գոգին, մտել եք աշխատասենյակ, ներսից փակել դուռը, վերադարձել եք տաղավար, հագել ձեր կոշիկներն ու վազել դարպասների մոտ։ (Անցյալ օրը, երբ գնացիք այստեղ հրավիրելու միսիս Աքրոյդին, ես կատարեցի նույն գործողությունը. ուղիղ տասը րոպե տևեց)։ Որից հետո՝ տուն։ Ալիբին ապահովված էր, քանզի դիկտոֆոնը լարել էիք ինն անց կեսի վրա։

— Հարգելի Պուարո,— ասացի ես օտարոտի մի ձայնով, որն անբնական հնչեց նույնիսկ իմ ականջներում,— հանուն ինչի՞ պիտի սպանեի Աքրոյդին։

— Հանուն անվտանգության։ Այդ դուք շանտաժի ենթարկեցիք միսիս Ֆերարին։ Էլ ո՞վ կարող էր իմանալ, թե ինչից մահացավ միստր Ֆերարը, եթե ոչ նրան բուժող բժիշկը։ Մեր առաջին հանդիպման ժամանակ ասացիք, որ մի տարի առաջ ժառանգություն եք ստացել։ Ինձ հաջողվեց պարզել, որ ոչ մի ժառանգություն էլ չեք ստացել։ Այդ բանը հորինել էիք, որպեսզի ինչ-որ ձևով բացատրեիք միսիս Ֆերարից ստացած քսան հազար ֆունտի փաստը։ Բայց այդ փողը օգուտ չտվեց ձեզ, քանզի կորցրիք դրա մեծագույն մասը, իսկ հետո խիստ դաժան վարվեցիք, որն ստիպեց միսիս Ֆերարին ելք փնտրել։ Եվ նրա քայլն անակնկալ եղավ ձեզ համար։ Եթե Աքրոյդն իմանար ճշմարտությունը, չէր խնայի ձեզ, և դուք կանանկանայիք ու կվարկաբեկվեիք։

— Իսկ հետախուզապա՞նգը,— հարցրի ես, աշխատելով ուշքի գալ։— Թերևս, դրա ճշմարտանման բացատրությո՞ւնն էլ ունեք։

— Խոստովանում եմ, որ ամենամեծ խոչընդոտը դա էր ինձ համար, մինչև որ պարզեցի, որ իրականում հետախուզանգը եղել է Քինգս Աբբոթի կայարանից։ Սկզբում ինձ թվաց, թե այդ պատմությունը դուք եք հորինել։ Ի դեպ, դա շատ խրատանք քայլ էր։ Դուք պատրվակ պետք է ունենայիք Ֆերնլի գալու՝ մարմինը տեսնելու համար, որից էլ կախված էր ձեր ալիբին։ Շատ աղոտ պատկերացում ունեի, թե այդ ինչպես է կատարվել, երբ առաջին օրը եկա տեսնելու ձեր քրոջը և հարցուփորձ արեցի, թե ինչ հիվանդներ եք ընդունել ուրբաթ առավոտյան։ Այն ժամանակ միտս ոչ մի բան չէր

անցնում։ Նրա այցելությունը պատահական զուգադիպություն էր, քանզի ձեր միտքը շեղեց ինձ հետաքրքրող իսկական օբյեկտից։ Ով ես գտա այն, ինչ փնտրում էի։ Այդ առավոտյան ձեր հիվանդների թվում եղել էր ամերիկյան մի նավի ուղեկցողը, որ երեկոյան ճեպընթացով Լիվերպուլ էր մեկնելու։ Էլ ո՞վ կարող էր ավելի հարմար թեկնածու լինել։ Կզանգահարեր և հետո նա կլիներ բաց ծովում, բավական հեռու։ Տեղեկացա, որ «Օրիոնը» մեկնել էր ուրբաթ օրը, և, իմանալով ուղեկցողի անունը՝ ռադիոգրամով մի հարց ուղղեցի նրան։ Սա նրա պատասխանն է, որ նոր ստացա։

Նա պատասխան հեռագիրը մեկնեց ինձ, որի բովանդակությունը հետևյալն էր.

«Ճիշտ է։ Բժիշկ Շեփարդը խնդրեց ինձ մի երկտող տանել մի հիվանդի և կայարանից զանգահարել պատասխանի մասին։ Ես զանգահարեցի և, ինչպես հանձնարարված էր, ասացի. «Պատասխան չի լինի»։

— Խելացի է մտածված,— ասաց Պուարոն։— Հեռախոսազանգը իրոք եղավ, և ձեր քույրը լսեց ու տեսավ, թե ինչպես մոտեցաք լսափողին։ Բայց թե ինչ ասվեց, այդ մասին տեղեկություն տվեց միայն մի անձնավորություն, դո՛ւք։

Հորանջեցի։

— Այս ամենը,— ասացի ես,— շատ հետաքրքիր է, բայց այնքան էլ համոզիչ չէ։

— Այդպե՞ս եք կարծում։ Հիշեցեք, թե ինչ ասացի՝ վաղն առավոտյան տեսուչ Ռագլանը կիմանա ճշմարտությունը։ Սակայն հանուն ձեր սիրալիր քրոջ, ուզում եմ այլ հնարավորություն տալ ձեզ։ Օրինակ, ընդունել քնաբերի չափազանց մեծ դոզա։ Դուք հասկանո՞ւմ եք ինձ։ Բայց կապիտան Փեյթընը կասկածից դուրս պիտի մնա։ Կառաջարկեի ավարտել ձեր շատ հետաքրքիր ձեռագիրը, իհարկե, հրաժարվելով ձեր նախկին զսպվածությունից։

— Ձեր ենթադրությունները պարզապես վերջ չունեն։ Էլ ի՞նչ ունեք ասելու։

— Լավ է հիշեցրիք։ Իրոք որ մի բան էլ կա։ Մեծ անհամեմատություն կլինի ձեր կողմից, եթե փորձեք լռեցնել ինձ, ինչպես լռեցրիք միստր Աքրոյդին։ Թերևս հասկանում եք, որ

նման բան դժվար թե հաջողվի անել Հերքյուլ Պուարոյի նըկատմամբ։

— Հարգելի Պուարո, ինչպիսին էլ որ լինեմ, համենայն դեպս ապուշ չեմ,— թեթևակի ժպտալով ասացի ես և վեր կացա։— Դե լավ, ես պիտի գնամ։ Շնորհակալություն շատ հետաքրքիր ու ուսանելի երեկո անցկացնելու համար։

Պուարոն ևս վեր կացավ և, երբ դուրս էր գալիս սենյակից, ըստ իր սովորության, քաղաքավարի գլուխ տվեց։

Գլուխ 27

ԱՄՓՈՓՈՒՄ

Առավոտյան ժամը հինգն է։ Շատ հոգնած եմ, բայց աշխատանքս ավարտել եմ։ Գրելուց ձեռքս ցավում է։

Ջեռափրս անսովոր ավարտ ունեցավ։ Ուզում էի, որ մի օր հրատարակվեր որպես Պուարոյի անհաջողություններից մեկի պատմություն։ Սակայն երբեմն հանգամանքները տարօրինակ ընթացք են ստանում։

Այն պահից ի վեր, երբ տեսա Ռալֆ Փեյթընին ու միսիս Ցերարին գլուխ գլխի տված զրուցելիս, անընդհատ ինչ-որ ազետ էի կանխազգում։ Ինձ թվաց, թե միսիս Ցերարը պատմել էր նրան ամեն ինչ, բայց սխալվել էի։ Սակայն այդ միտքը հանգիստ չէր տալիս ինձ այնքան ժամանակ, մինչև որ այն երեկո Աքրոյդն իր աշխատասենյակում ասաց ինձ ճշմարտությունը։

Խեղճ ծերուկ։ Շատ ուրախ եմ, որ հնարավորություն տվեցի նրան և պնդեցի, որ կարդար այդ նամակը, քանի դեռ ուշ չէր։ Ավելի ճիշտ, ենթագիտակցաբար զգացի, որ այնպիսի մի բծամիտ մարդ ինչպիսին նա էր, ավելի լավ էր օգտագործել այդ հարմար առիթը թույլ տալու նրան, որ մինչև վերջ կարդար նամակը։ Իսկ այդ գիշեր նրա նյարդային վիճակը հոգեբանական տեսակետից բավական նպաստավոր էր դրա համար։ Նա զգում էր, վտանգը շատ մոտ էր, բայց ամենևին ինձ չէր կասկածում։

Դաշույնը հետո մտքովս անցավ։ Հետս բերել էի ձեռքիս տակ եղած մի զենք, բայց, երբ սեղանին տեսա դաշույնը,

իսկույն մտածեցի, թե շատ ավելի լավ կլիներ օգտագործել մի զենք, որը բոլորովին էլ չէր առնչվում ինձ։

Ինձ թվում է, սկզբից ևեթ որոշեցի սպանել նրան։ Ով հենց որ իմացա միսիս Ֆերարի մահվան մասին, իսկույն համոզվեցի, որ մեռնելուց առաջ նա երևի ամեն ինչ պատմել էր Աքրոյդին։ Ով երբ հանդիպեցի նրան, այնքան հուզված էր, որ կարծեցի թե նա, հավանաբար, իմացել էր ճշմարտությունը, բայց չէր ուզում հավատալ դրան և ուզում էր հնարավորություն տալ ինձ արդարանալու։ Այնպես որ, գնացի տուն և նախազգուշական միջոցներ ձեռք առա։ Եթե, վերջին-վերջո, պարզվեր, որ այդ անախորժությունը որոշ չափով կապված էր Ռալֆի հետ, առանձնապես վնաս չուներ։ Երկու օր առաջ նա դիկտոֆոնը տվեց ինձ, որ կարգի բերեմ։ Ինչ-որ բան էր խափանվել։ Համոզեցի նրան, որ չուղարկի, այլ տա ինձ՝ նորոգելու։ Ես նորոգեցի այն և վերցրի հետս։

Որպես գրող բավական գոհ եմ ինձնից։ Մի՞թե պարզ չի ձևակերպված թեկուզև հետևյալը.

«Նամակները բերեցին իննին քսան պակաս։ Իննին ուղիղ տաս պակաս դուրս եկա նրա մոտից։ Նամակը դեռ չէր կարդացել։ Ձեռքս դռան բռնակին դրած՝ մի պահ վարանեցի և ետ նայեցի՝ համոզվելու համար, թե որևէ բան անավարտ հո չեմ թողել»։

Ինչպես տեսնում եք, ամեն ինչ ներկայացված է ճշմարտացի։ Բայց, ներեցեք առաջին նախադասությունից հետո ասողանիշեր էի դրել։ Որևէ մեկին հետաքրքրե՞ւ էր արդյոք, թե ինչ արեցի այդ մնացած տասը րոպեում։

Երբ դուրս էի գալիս սենյակից, մի անգամ էլ շրջվեցի և ամեն ինչ հայացքով ստուգելուց հետո գոհ մնացի։ Ամեն ինչ կարգին էր։ Դիկտոֆոնը դրված էր պատուհանի մոտի սեղանին, լարված էր այնպես, որ գործեր ինն անց կեսին (զարթուցիչի սկզբունքով պատրաստված փոքրիկ հարմարանքի մեխանիզմը բավական համառորեն էր տեղադրված), և բազկաթոռը քաշված էր այնպես, որ դռնից չնկատվեր։

Պետք է խոստովանեմ, որ դռնից դուրս գալիս Փարքըրին հանդիպելն անսպասելի հարված էր ինձ համար, որը և ապնըվորեն գրի եմ առել։

Իսկ հետո, երբ մարմինը հայտնաբերվեց և Փարքըրին ուղարկեցի զանգահարելու ոստիկանատուն, ամենայն ողջամտությամբ ինքս ինձ ասացի. «Ես արեցի այն ամենը, ինչ-որ պետք էր անել»: Իսկ դիկտոֆոնը պայուսակս խցկելն ու բազկաթոռն իր տեղը հրելը դատարկ բան էր: Երբեք մտքովս չէր անցել, որ Փարքըրը կարող էր նկատել այդ տեղափոխությունը: Նա, տրամաբանորեն, այնքան պիտի տարվեր սպանվածով, որ շրջապատում ոչինչ չնկատեր: Բայց ես հաշվի չէի առել այսպես կոչված սպասավորի վարժվածության կոմպլեքսը:

Ափսոս, որ նախապես չգիտեի, որ Ֆլորան պնդելու էր, թե հորեղբորը տեսել էր ողջ տասին տասնհինգ պակաս: Եվ դա անասելի ծանր վիճակի մեջ դրեց ինձ: Ի դեպ ամբողջ հետաքննության ընթացքում էլ բաներ էին լինում, որ անհասկանալիորեն ծանր վիճակի մեջ էին գնում ինձ: Ամեն ոք յուրովի միջամտում էր գործին:

Ամենից շատ վախենում էի Կարոլինից: Ինձ թվում էր, թե նա ինչ-որ բան էր կռահում, քանի որ շատ տարօրինակ ձևով արտահայտվեց իմ «ժառանգական թուլակամության» մասին: Համենայն դեպս, նա երբեք չի իմանալու ճշմարտությունը: Ինչպես Պուարոն ասաց, մի ելք է մնում... Ես կարող եմ վստահել նրան: Նա և Ռագլանը կկարողանան ամեն ինչ գաղտնի պահել: Բոլոր դեպքերում չէի ուզենա, որ Կարոլինն իմանար ճշմարտությունը: Նա սիրում է ինձ, և, բացի դրանից, հպարտ է... Իմ մահը, իհարկե, կվշտացնի նրան, բայց վիշտն անցողիկ է...

Երբ վերջացնեմ գրելը, ամբողջ գործը ծրարելու եմ և ուղարկելու եմ Պուարոյին:

Իսկ հետո՞... Հետո ի՞նչ ընտրել: Վերոնա՞լ: Դա մի տեսակ երկնային դատաստան կլինի, ոչ թե նրա համար, որ որևէ պատասխանատվություն եմ զգում միսիս Ֆերարի մահվան համար: Ո՛չ, նրա մահը իր իսկ արարմունքների հետևանքը եղավ: Ես չեմ խղճում նրան, ոչ էլ՝ ինձ:

Ուրեմն վճռված է՝ վերոնա՛լ:

Բայց շատ կուզենայի, որ Հերքյուլ Պուարոն երբեք թոշակի անցած չլիներ և չգար այստեղ՝ դժվիկներ աճեցնելու